ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՇՅԱՆ

ԲԱՌԱՐԱՆ ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ

Հեղինակի մյուս հրապարակումներից են.

Թարգմանչի խոհեր. – Սովետական գրականություն, 1955, թիվ 11:

XI և XII դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից. – Արևելագիտական ժողովածու, II, Երևան, 1964:

Շահ-ի-Արմեններ. – Պատմաբանասիրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ), 1964, թիվ 4:

Սարդարապատի հերոսամարտը, Երևան, «Հայաստան», 1965, 1969 (երկրորդ լրացված հրատարակություն):

Ջրօգտագործման սիստեմը Վասպուրականում. – ՊԲՀ, 1967, թիվ 2-3:

Պահլավունիների վերելքն ու անկումը XI-XIII դարերում. – ՊԲՀ, 1974, թիվ 1:

Սուրհանդակային սպասարկությունը միջնադարյան Արևելքում. – ՊԲՀ, 1978, թիվ 1:

Սարդարապատի թիկունքը (Սարդարապատի հաղթանակի 60-ամյակի առթիվ). – ՊԲՀ, 1978, թիվ 2:

Հուշեր և խոհեր. – Բանբեր Հայաստանի արխիվների, 1990, թիվ 2 և թիվ 3:

Հետսելջուկյան դարաշրջանի իրադարձությունները և «Սասունցի Դավիթ» էպոսը, Երևան, 2013:

Գրքի տպագրությանը ֆինանսապես օժանդակել են

«Վասպուրական» հայրենակցական միությունը

Վարուժան Մուրադյանը

Նշան Փիրումեանը

Երվանդ Հ. Սապոնջյանը

Ռուբեն Գալչյանը

«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ»
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА
ЗЕМЛЯЧЕСКИЙ СОЮЗ «ВАСПУРАКАН»

АРУТЮН ТУРШЯН

СЛОВАРЬ
ВАНСКОГО ДИАЛЕКТА

Редакция и подготовка к печати – АЙКАНУШ МЕСРОПЯН

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE
«VASPURAKAN» COMPATRIOTS' UNION

HARUTYUN TURSHYAN

DICTIONARY
OF VAN DIALECT

Compiled and edited by Dr. HAYKANUSH MESROPYAN

ЕРЕВАН – YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
«GITUTYUN» PUBLISHING HOUSE OF NAS RA
2018

123843Լ 809.198.1

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՇՅԱՆ

ԲԱՌԱՐԱՆ
ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ

Աշխատասիրությամբ
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

ՀՏԴ 81'374:81'282
ԳՄԴ 81.2-4
Թ 986

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Աշխատանքը հրատարակության են երաշխավորել
բանասիրական գիտությունների թեկնածու
Արտակ Վարդանի Վարդանյանը
բանասիրական գիտությունների թեկնածու
Ժաննա Անդրանիկի Միքայելյանը

Թ-ուրշյան Հարություն, Բառարան Վանի բարբառի / Հ. Թ-ուրշյան;
Թ 986 Աշխատասիրությամբ՝ Հայկանուշ Մեսրոպյանի; ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ; ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ; «Վասպուրական» հայրենակցական միություն. – Եր.: «Գիտություն» հրատ., 2018. – 272 էջ:

Վանի բարբառը հայերենի տարածքային տարբերակների բառագանձի բավականին հետաքրքիր, հարուստ, նվիրական և, ցավոք, արդեն կորուսյալ շերտերից է: Վանի բարբառային բառապաշարն ընդգրկող այս բառարանն առաջին տպագիր բառարանն է: Տարբեր ժամանակներում տարբեր վանեցիներ կազմել են մայրենի բարբառի բառարաններ, սակայն տպագրել չեն հաջողել: Տոհմիկ վանեցու՝ բարբառակիր Հարություն Թ-ուրշյանի կազմած այս բառարանը, որը պարունակում է մոտավորապես 6800 բառահոդված, արժեքավոր աղբյուր է կորսված հայրենիքի և այդ տարածքում գործառող լեզվի մասին գաղափար կազմելու համար: Այս աշխատանքում վստահելի աղբյուրից ներկայացված է Վանի բարբառի ողջ բառամթերքը, գլխաբառերին կից առկա են վանեցու առօրյային վերաբերող օրինակներ, բանահյուսական եզակի նմուշներ:

Բառարանն օգտակար կարող է լինել բանասեր-մասնագետներին, ձեռագրագետներին, ազգագրագետներին՝ բարբառագիտական և բանագիտական ուսումնասիրություններ կատարելու, ինչպես նաև ուսուցիչների, Վանով ու Վանի բարբառով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 81'374:81'282
ԳՄԴ 81.2-4

Կազմի դարձերեսին. Թ-ուրշյանների ընտանիքը: Վան, 1908 թ.:

ISBN 978-5-8080-1311-7

© «Վասպուրական» հայրենակցական միություն, 2018
© Գենյա և Իրինա Թուրշաններ, 2018
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2018



Հարություն Թ-ուրշյան
(1900 – 1978)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայկանուշ Մեսրոպյան
Երկու խոսք VII

Համառոտագրություններ XIII

Հարություն Թուրշյան
Առաջաբան XIV

Հարություն Թուրշյան
Բառարան Վանի բարբառի 1

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Ժողովրդական բարբառներից օգտվելը ոչ թե դատապարտելի է, այլ հենց դա է բնական ճանապարհը կայտառ ու կենդանի լեզու ստեղծելու»:

Հովի. Թումանյան

Հայերենի բարբառները մեր մայրենի լեզվի անկապտելի մասն են և նրա հարստությունը: Բարբառների ուսումնասիրությունը հայերենագիտության կարևորագույն ոլորտներից է: Այն խիստ անհրաժեշտ է բանասիրության, հայոց պատմության, ազգագրության, միջնադարյան ձեռագրերի տեքստաբանական վերլուծության տեսակետից: Հայերենի գիտական ուսումնասիրության համար կարևորելով բարբառների մեջ առկա լեզվական իրողությունները՝ իրանագետ Ռ. Աբրահամյանը շուրջ մեկ դար առաջ գրում է. «Ամեն մի ինտելիգենտ անձնաւորութիւն կարիք կը զգայ գաղափար կազմելու իւր մայրենի լեզուի ամբողջութեան մասին. այդ գաղափարը կարելի է կազմել միայն բարբառաբանութեան տուեալներից»:[1]

Քերովբէ Պատկանյանը 1869 թ. «Ուսումնասիրութիւն հայոց լեզուի բարբառների մասին» աշխատության մեջ գանգատվում է, թե բարբառները անհետանում են՝ տեղի տալով Աստրախան-Երևանյան բարբառին, որ գրաբարի բառարաններում տեղ չգտած «հայ բարբառների բառամթերքը նույնպես խիստ արագ նվազում է և սպառնում է անհետ կորչել մոտավոր ապագայում»:[2]

Վերը բերված նկատառումները եզակի չեն, և առհասարակ հայերենի բարբառների գիտական ուսումնասիրության կարևորության մասին տարբեր ժամանակներում եղել են մտահոգված հիշեցումներ, որովհետև գրական լեզվի բուռն զարգացման և առաջընթացի պայմաններում հակադարձաբար թուլանում են բարբառների հետագա գոյատևման հիմքերը, վտանգ է առաջանում դրանց վերանալու և անհետացման:

Այդ մտահոգությամբ էլ հարկ համարեցինք հրատարակության պատրաստել պատմաբան Հարություն Թումրշյանի Վանի բարբառի սույն բառարանը: Նախ համառոտ ներկայացնենք հեղինակին:

---

[1] *Ռուբէն Աբրահամեան*, Ի՞նչ կերպ հնարաւոր է հայերէնի գիտական ուսումնասիրութիւնը. – «Արարատ», 1912, ապրիլ, էջ 364-377:

[2] К. Патканов, Исследование о диалектах армянского языка: филологичесский опыт, СПБ, 1869, с. 22.

Հարություն Գևորգի Թուրշյանը ծնվել է 1900 թ. սեպտեմբերի 29-ին Վանում:[3] 1915 թ. ինքնապաշտպանության օրերին նա եղել է կապավոր՝ Այգեստանի դիրքերից լուրեր տանելով շտաբ և հակառակը: Թուրշյանների ընտանիքը 1915 թ. հուլիսին գաղթում է Արևելյան Հայաստան՝ Էջմիածին, ապա Թիֆլիս: Այստեղ նա ուսումը շարունակում է Ներսիսյան դպրոցում: 1918 թ., լինելով ավարտական դասարանի աշակերտ, պատանի Հարությունն ընդունվում է սպայական դպրոց, ապա մեկնում է ռազմաճակատ՝ պաշտպանելու Հայրենիքը: Նա զինվորական ծառայությունն իրականացնում է Արարատի հարավային և հարավարևմտյան լանջերին: Այստեղ նա վիրավորվում է ոտքից ու տեղափոխվում է Երևան, աշխատում է շտաբում՝ որպես գրագիր: 1920 թ. Հ. Թուրշյանը գերազանց գնահատականներով ավարտում է Ներսիսյան դպրոցը: 1921 թ. մայիսին (մինչև դեկտեմբեր) Թուրշյանն աշխատանքի է անցնում Հայաստանի արտգործժողկոմատի ինֆորմացիոն բաժնում (վարիչի տեղակալ),[4] միաժամանակ աշխատում է հատկապես արևմտահայերի համար լույս տեսնող «Կարմիր օրեր» թերթում՝ որպես պատասխանատու քարտուղար, ապա և՝ խմբագիր: Կարսի պայմանագրի կնքումից հետո դուրս է գալիս Հայկոմկուսի շարքերից, ապա հեռանում է Երևանից և երկու-երեք տարի հայոց լեզու է դասավանդում Սև ծովի ափերին ծվարած համշենահայկական գյուղերում: Թիֆլիս վերադառնալուց հետո կոմկուսի Անդրերկրկոմի քարտուղար Ալ. Մյասնիկյանից առաջարկ է ստանում աշխատանքի անցնել նոր հիմնադրված Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի ուսումնասիրության նոր հիմնադրված գիտական ասոցիացիայում, շարադրել քեմալական շարժման պատմությունը: Մինչ Հարությունը մտմտում էր առաջարկի մասին, զոհվում է Ալ. Մյասնիկյանը: Թուրշյանը մեկնում է Բաքու և ուսումը շարունակում Ադրբեջանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում՝ միաժամանակ հայոց լեզու և գրականություն դասավանդելով Հովի. Թումանյանի անվան հայկական միջնակարգ դպրոցում: Այստեղ նրան աշակերտել են ապագա գրող Գարեգին Սևունցը, հետագայում ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դերենիկ Ալավերդյանը, Հայկ. ՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիկոս Արտաշես Առաքելյանը, Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Սուրեն Մովսիսյանը, ասմունքող Թ-ամարա Դեմուրյանը և այլք: 1931-1954 թթ. Հ. Թուրշյանն աշխատում է Երևանում՝ «Խորհրդային/Սովետական Հայաստան» օրաթերթում, որպես ոճաբան և թարգմանիչ:

---

[3] Կենսագրական տվյալներն ի մի են բերված Հարություն Մարությանի կողմից Հարություն Թուրշյանի «Հետսելջուկյան դարաշրջանի իրադարձությունները և «Սասունցի Դավիթ» էպոսը» (Երևան, 2013) աշխատության առաջաբանում:

[4] Տե՛ս նաև *Համո Սուքիասյան*, ՀՍԽՀ արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի գործունեությունը (1921-1922 թթ.). – Հայոց պատմության հարցեր. գիտական հոդվածների ժողովածու, թիվ 11, Երևան, 2010, էջ 299:

1940-60-ական թվականներին Հարություն Թուրշյանը ձեռնարկում է ռուս դասական մի քանի հեղինակների երկերի թարգմանությունը: Նրա հեղինակությամբ թարգմանաբար լույս են տեսնում Վ. Բելինսկու «Ընտիր երկերը» (1948 թ., 480 էջ), Ա. Գերցենի «Եղելություններ և խոհերը» (մասն Ա, 1952, 630 էջ, մաս Բ, 1953, 390 էջ, մեկ հատորով՝ 1954, 710 էջ), Մ. Գորկու «Գրականագիտական և հրապարակախոսական հոդվածները» (1950 թ., 478 էջ), այլ աշխատանքներ:[5] Հ. Թուրշյանի թարգմանչական արվեստը բարձր է գնահատել Ավետիք Իսահակյանը: 1954 թ. սեպտեմբերին Թուրշյանին ուղղված նամակում նա գրում է. «Սիրելի Հարություն: Այս քանի օր է, մեր տանը լարված կարդում ենք մեծատաղանդ Ա. Գերցենի՝ քո թարգմանած «Եղելություններ և խոհեր» անկրկնելի գործը: Գերցենը դժվար է թարգմանել, սակայն դու հաղթահարել ես: Կենդանի շունչ կա թարգմանությանդ մեջ, հարուստ և արտահայտիչ լեզու: Հայ ընթերցող հասարակությունը պիտի սիրե այս գործը: Ցանկանում եմ ավելի հաջողություն և եռանդ: Ջերմագին բարևներով՝ Ավետ. Իսահակյան»:[6]

Հարություն Թուրշյանը երկար տարիներ ջանասիրությամբ զբաղվել է հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությամբ:[7] 1947 թ. «Հայ-հաբեշական առնչությունները VII դարից մինչև XX դարը» թեմայով ատենախոսություն է պաշտպանում, ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Պատմագիտական պրպտումների արդյունքներից է 1965 թ. լույս տեսած «Սարդարապատի հերոսամարտը» արժեքավոր աշխատությունը, որն իր ժամանակին ըստ ամենայնի գնահատվում է ընթերցող հասարակայնության և մասնագետների կողմից: 1969 թ. ընդառաջելով ընթերցողների մեծ պահանջարկին, «Հայաստան» հրատարակչությունն իրականացնում է գրքի երկրորդ տպագրությունը՝ այս անգամ արդեն 10.000-ի փոխարեն 30.000 տպաքանակով: Երկու հրատարակություններն էլ սպառվում են սրընթացորեն:[8] Ինչպես նկատում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարդ-

---

[5] Մանրամասն տես *Հայկ Խաչատրյան* (կազմող), Գրական տեղեկատու, էջ 254: Համմտ. *Հարություն Թուրշյան*, Թարգմանչի խոհեր. – Սովետական գրականություն, 1955, թիվ 11, էջ 128-135:

[6] *Ավետիք Իսահակյան*, Երկերի ժողովածու վեց հատորով, հատոր վեցերորդ, Երևան, 1979, էջ 387: Տե՛ս նաև *Հարություն Թուրշյան*, Վարպետը. – «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1975, թիվ 6, էջ 11:

[7] Տե՛ս, օրինակ. *Հ. Թուրշյան*, XI և XII դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից. – Արևելագիտական ժողովածու, II, Երևան, 1964, էջ 301-317: *Նույնի*, Շահ-ի-Արմեններ. – «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), 1964, թիվ 4, էջ 117-134: *Նույնի*, Ջրօգտագործման սիստեմը Վասպուրականում. – ՊԲՀ, 1967, թիվ 2-3, էջ 246-253: *Նույնի*, Պահլավունիների վերելքն ու անկումը XI-XIII դարերում. – ՊԲՀ, 1974, թիվ 1, էջ 147-161: *Նույնի*, Սուրհանդակային սպասարկությունը միջնադարյան Արևելքում. – ՊԲՀ, 1978, թիվ 1, էջ 105-114: *Նույնի*, Սարդարապատի թիկունքը (Սարդարապատի հաղթանակի 60-ամյակի առթիվ). – ՊԲՀ, 1978, թիվ 2, էջ 67-73: *Նույնի*, Հետսելջուկյան դարաշրջանի իրադարձությունները և «Սասունցի Դավիթ» էպոսը, Երևան, 2013:

[8] *Վ. Միքայելյան*, Սարդարապատի հերոսամարտի առաջին մեկնաբանը. – «Երկիր», 26 մայիսի 1998 թ.:

գես Միքայելյանը, «Մի կարևոր վերապահում. 1960-ական թվականներին տակավին հնարավոր չէր Սարդարապատի հերոսամարտի մասին (և առհասարակ ազգային թեմաներով) գիրք հրատարակել՝ ոտնահարելով ժամանակի գաղափարական և քաղաքական պահանջները: Անկախ հեղինակի համոզմունքներից՝ նման գրքի լույս աշխարհ գալը հարկադրում էր տուրք տալ այդ պահանջներին: Դա այն ժամանակ նորմ էր, և Թ-ուրշյանը չէր կարող բացառություն կազմել: Հ. Թ-ուրշյանը, հարկավ, չէր կարող 36 տարի առաջ գիրք հրատարակել ժամանակակից դավանանքով: Բայց, բարեբախտաբար, գրքում գլխավորը գաղափարական սայթաքումները չեն, այլ հերոսամարտի այն լայնակտավ և ըստ ամենայնի լուսաբանումը, որի շնորհիվ ցայսօր պահպանվել է մենագրության պատմագիտական կարևորության թարմությունը»:[9] Հ. Թ-ուրշյանը հայ պատմաբանների մեջ թերևս առաջինն էր, որ մատնանշեց հերոսամարտի ժողովրդա-ազատագրական բնույթը: Ինչպես գրքի առաջաբանում նկատում է խմբագիր, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, «Գրքի հեղինակը արձանագրում է այն իրողությունը, որ ըստ էության այդ ճակատամարտը 1918 թվականի թուրք-անդրկովկասյան «պատերազմի» դրվագներից մեկը չէր, այլ ժողովրդա-ազատագրական իսկական պատերազմ, որի շարժիչ ուժը թուրք ջարդարարների դեմ տարերայնորեն ոտքի ելած հայ ժողովուրդն էր»:[10]

Հարություն Թ-ուրշյանը դեռևս 1959 թ. ավարտին է հասցնում «Բառարան Վանի բարբառի» աշխատությունը (ավելի քան 200 էջ ծավալով):[11] Այդ ձեռագիր բառարանը համալրել ենք Վանի բարբառին վերաբերող ձեռագիր նյութերից, որոնք գտնվում են ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում: Գիտական տառադարձման, բազմաթիվ բառերի և բնագրային օրինակների ընտրության հարցում մեզ համար հիմնականում հիմք է ծառայել Վան քաղաքի խոսվածքին նվիրված ձեռագիր աշխատանքը՝ կատարված «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» պահանջներին համապատասխան:[12] Բարբառային միավորը լրացրել է բարբառագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Մառլենա (Մարո) Հայրիկի Մուրադյանը, որի համար բարեբաստիկ կերպով որպես բարբառախոս է հանդես եկել ինքը Հ. Թ-ուրշյանը: Այդ մասին Մ. Մուրադյանը 1977 թ. գրում է. «Վան քաղաքի բառային հատկանիշները լրացնելիս մեզ համար տեղեկատու է եղել Վան քաղաքի նախկին բնակիչ,

---

[9] Նույն տեղում:

[10] *Աշոտ Հովհաննիսյան*, Առաջաբան. – Հարություն Թ-ուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969, էջ 6:

[11] Տե՛ս նաև *Հայկանուշ Մեսրոպյան*, Վանի բարբառային բառագանձի երախտավոր գրառողները. – Հայաստանի մայրաքաղաքները: Գիրք I. Վան: Երևան, 2013, էջ 293-297:

[12] Տե՛ս ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրապահոցի թիվ 7 բարբառային ձեռագիր աշխատանքը:

պատմաբան Հարություն Թ-ուրշյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Ընկեր Թ-ուրշյանը Վանից գաղթել է 1915 թվականին և հիմա պատկառելի ծերունի է: Բառային հատկանիշները լրացնելիս մենք օգտագործել ենք նաև ընկ. Թ-ուրշյանի կազմած Վանի բարբառի բառարանի (ձեռագիր է) տվյալները»:

Պետք է նշել, որ Մ. Մուրադյանի ձեռագիր գրառումները մեզ շատ օգնեցին հատկապես գիտական տառադարձության հարցում, ինչը Հ. Թ-ուրշյանի ձեռագրում արտահայտված չէ: Այս առիթով հարկ ենք համարում նշել, որ բարբառային տառադարձումը վստահելի է և արտահայտում է Վանի բարբառի հնչյունական իրողությունները:[13] Մարո Մուրադյանը, քաջատեղյակ լինելով Վասպուրականի տարածքի բարբառների և խոսվածքների հնչյունափոխական համակարգային օրինաչափություններին, անկասկած ճշգրտորեն է գրառել բարբառակիր Հ. Թ-ուրշյանից լսած բարբառային նյութը: Բարբառագիտական ատլասի ծրագրին համապատասխան լրացված ձեռագիր աշխատանքում կան Հ. Թ-ուրշյանի կողմից կազմված բազմաթիվ բարբառային նախադասություններ, որոնք ընդգրկել ենք սույն բառարանում՝ համապատասխան համառոտագրումով՝ Վն.:

Բառարանը համալրել ենք Վասպուրականի տարածքային տարբերակներին վերաբերող՝ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում առկա այլ ձեռագիր նյութերից ևս: Վան քաղաքի խոսվածքից բացի, ներառել ենք օրինակներ Վանին մերձակա գյուղերի խոսվածքներից՝ Լիմ (Արճակ),[14] Հուռթուկ (Խոշաբ),[15] Բոլորմարգ (Արճեշ),[16] Կոճերեր (Արծկե)՝[17] համապատասխան համառոտագրությամբ:

Վանի բարբառի ընդհանուր բնութագիրը. Բառարանը հրատարակության պատրաստելիս առաջնորդվել ենք նաև Հր. Աճառյանի «Քննություն Վանի բարբառի» աշխատությամբ:

«Վանի բարբառի քննությունը ձեռնարկել եմ Էջմիածնում 1898-1902 թվերին երբ Գևորգյան ճեմարանում տաճկերեն լեզվի ուսուցիչ էի: Ինձ աջակցում էին բարձր լսարանների տասնյակ ուսանողներս, որոնք բոլորը նոր էին գաղթել Վանից և շատ լավ գիտեին իրենց մայրենի բարբառը: ...Լինելով վանեցի՝ Մելիքսեթ Տեր-Ղազարյանը մասնագիտորեն տեղյակ է Վանի բարբառին, որի ընդարձակ և մասնագիտական բառարանն է կազմում»:[18]

---

[13] Բարբառային գիտական տառադարձման մասին տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1977, էջ 19-24:

[14] Տե՛ս ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրապահոցի թիվ 330 բարբառային ձեռագիր աշխատանքը:

[15] Տե՛ս նույն տեղում, թիվ 333 աշխատանքը:

[16] Տե՛ս նույն տեղում, թիվ 348 աշխատանքը:

[17] Տե՛ս նույն տեղում, թիվ 379 աշխատանքը:

[18] *Հ. Աճառյան*, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1953, էջ 5-6:

Վանի բարբառը պատկանում է արևմտյան խմբակցության բարբառների *կը* ճյուղին: Արևմուտքից այն սահմանակից է Մշո և Բաղեշի բարբառին, արևելքից՝ Ուրմիայի, Խոյի և Սալմաստի բարբառներին: Հարավում բնակվում էին քրդախոս և արաբախոս հայեր, որով Վանի բարբառը դառնում էր հայերենի հարավային սահմանապահը: Բարբառի հիմնական հատկանիշներից են. ձայնեղ բաղաձայնները դառնում են խուլեր, նրանց հաջորդող ձայնավորները հիմնականում քմայնանում են: Հ-ն դառնում է *խ*: Բարբառը չունի գրաբարյան հայցականի *զ* նախդիր: Բարբառում առկա են *ա* և *ո* երկբարբառներ, էօ, իւ երկհնչյուններ: Բացառական հոլովը կազմվում է *-ից*-ով:

Սույն բառարանում ընդգրկված են նաև պարսկերենից, արաբերենից և թուրքերենից կատարված բարբառային փոխառություններ: Դրանք հետաքրքիր են միևնույն տարածքում խոսվող լեզուների փոխազդեցության տեսանկյունից: Բառարանում կան նաև արդի գրական և խոսակցական հայերենում գործածվող մի շարք բառեր (*վերջնել, չայ* և այլն), որոնց կից բնագրային օրինակները հետաքրքիր և արժեքավոր են: Բառարանում ներկայացված բնագրային հետաքրքիր օրինակները, առածները և ասացվածքներն առանձնակի արժեք կարող են ներկայացնել ոչ միայն բարբառագետների, այլև ազգագրագետների, հայ ժողովրդի պատմությամբ զբաղվողների, ինչպես նաև Վանով ու վանեցիներով հետաքրքրվողների համար: Ահավասիկ դրանցից մի քանիսը՝

Վա̈նըցու կաղ Հընդըստան ի խասե:
Էրկու ք'ո̈ւրդ մէյ ք'ա̈րվան, էրկու կընիկ մէյ դիվան:
Ք'ա̈րվընջու էթա̈լ-կ'ա̈լը չեն խարցուցի, վատայ կըխարցուցեն:
Ք'ա̈նի կեր, պատանք չըկեր, վոր մեռավ, ք'ումբեթ կապեցին:
Ֆըշնէն իկուց խան թա̈լ տըւս, ֆուկարի վոտ՝ տընից:

Բառարանը տպագրվում է հեղինակի մահից 40 տարի անց: Բառարանը հրատարակության նախապատրաստելու հարցում մեծ նախաձեռնություն ու հետևողականություն են ցուցաբերել ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, «Վասպուրական» հայրենակցական միության հիմնադիրներից Վանում ծնված երջանկահիշատակ Վարազդատ Հարությունյանը (ով հանդես է եկել նաև բարբառակիր խորհրդատուի դերում), Հ. Թուրշյանի քրոջ թոռը՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, «Վասպուրական» միության փոխնախագահ Հարություն Մարությանը:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող,
բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ

Համառոտագրություններ

ած.	ածական
Բմ.	Բոլորմարգ գյուղի բարբառային գրառումների տետրից
բ.	բայ
գ.	գոյական
դ.	դերանուն
թ.	թվական
ծան.	ծանոթություն
ծղր.	ծաղրական
կ.	կապ
կբ.	կրավորական սեռի բայ
Կճ.	Կոճերեր գյուղի բարբառային գրառումների տետրից
հզվդ.	հազվադեպ
Հթ.	Հուռթուկ գյուղի բարբառային գրառումների տետրից
հյհ.	հայհոյական
հոգն.	հոգնակի
ձ.	ձայնարկություն
մկ.	մակբայ
մնկ.	մանկական
նբ.	ներգործական սեռի բայ
նխտ.	նախատական
շ.	շաղկապ
չբ.	չեզոք բեռի բայ
վ.	վերաբերական
Վն.	Վան քաղաքի բարբառային գրառումների տետրից

ԱՌԱՋԱԲԱՆ

Վանի բարբառի բառարան առաջինը կազմել են երեք հմուտ վանեցի՝ Ղևոնդ ծայրագույն վարդապետ Փիրղալեմյանը (1830-1891), Արսեն վարդապետ Թոխմախյանը (1843-1892) և Արիստակես վարդապետ Տևկանցը (1844-1896): Սակայն նրանց կազմած բառարանները, դժբախտաբար, չեն տպագրվել: Հայտնի է միայն, որ Երուսաղեմում վախճանված Ղևոնդ ծայրագույն վարդապետ Փիրղալեմյանի ձեռագրերը Երուսաղեմից ուղարկվել են Թիֆլիս՝ Գյուտ քահանա Աղանյանին, որն սկսել էր լույս ընծայել Դիվան հայոց պատմության արժեքավոր շարքը: Աղանյանի ֆոնդում, որ ներկայումս գտնվում է Գրականության և արվեստի թանգարանի արխիվում, Ղևոնդ Փիրղալեմյանի կազմած բառարանի ձեռագիրը չկա:

Արսեն վարդապետ Թոխմախյանի կազմած բառարանը, ինչպես ասացինք, նույնպես չի տպագրվել: Սակայն հայտնի է, որ նրա թափած ջանքերն օգտագործվել են Սահակ վարդապետ Ամատունու «Հայոց բառ ու բանում»: Ամատունու բառարանի «Յառաջաբանում» (էջ ԺԱ) կարդում ենք. «Բառակոյտ Հայկական լեզուի. ժողովեց Արսէն վարդապետ Թօխմախեան Վանայ կեդրօնական բանդում», ձեռագիր: Բառարանս մեզ ընծայեց մեծապատիւ պ. Խորէն Խրիմեանը, – հանգուցեալ Մկրտիչ կաթուղիկոսի եղբորորդին՝ Տփխիսում, 1909 թուին»: Էջմիածին հասած և օգտագործված այս ձեռագիրը այժմ գտնվում է Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում: Տևկանցի ձեռագրի հետքը չգտանք:

Ղ. ծ. վրդ. Փիրղալեմյանի և Ա. վրդ. Թոխմախյանի գրական գործունեության տարիներին Վանի բարբառի բառարան կազմելու ջանքեր է գործադրել նաև Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձտյանը (1840-1892): Նրա «Համով-հոտով» և «Մանանա» երկերի վերջում զետեղված են Վանի և Մշո բարբառների համառոտ բառարաններ:

Թե՛ Գ. արքեպիսկ. Սրվանձտյանը, թե՛ Ա. վրդ. Թոխմախյանը, ինչպես նաև Փիրղալեմյանը նույն սերնդի գրական գործիչներ են: Նրանք ստեղծագործել են 1860-1890-ական թվականներին, այսինքն՝ այն տասնամյակներին, երբ գրապայքարը վերջանում էր աշխարհաբարի հաղթանակով: Գ. արքեպիսկ. Սրվանձտյանն ու Ա. վրդ. Թոխմախյանը, հավանաբար նաև Ղ. ծ. վրդ. Փիրղալեմյանը, իրենց դիտել են որպես գրապայքարի ջերմ մասնակիցներ և Վանի բարբառի բառարանը կազմելով՝ ցանկացել են այդ բառագանձը փրկել մոռացությունից և ներմուծել աշխարհաբար: Նրանք սրբագրել են բարբառի առանձին բառեր, աշխարհաբարացրել, որպեսզի դրանք, որպես վերականգնված հայերեն բառեր, մտնեն նոր լեզ-

վի մեջ: Օրինակ՝ Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձտյանը գրել է *ակահարթուն, զգաւոյ*, թեև չէր կարող չիմանալ, որ վանեցին այդ բառն արտասանում է «ակյախ»: Արսեն վարդապետ Թոխմախյանը գրում է «ձիւռտել»,[1] այնինչ նրան քաջ հայտնի է եղել, որ վանեցին այդ բառն արտասանում է «ծըվըռթել» (=ծվատել): Արսեն վարդապետ Թոխմախյանին նույնպես քաջ հայտնի էր, որ իր մայրենի բարբառում «ձ» հնչյունը վերածվում է «ծ»-ի, բայց գրում է «ձախիկ», «ձանձրել», երբ պետք է գրեր «ծախիկ», «ծանծրել»: Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձտյանը «զիկ»-ի (=ինձ) փոխարեն գրում է «ծիկ», և հարգելով նրա հեղինակությունը, բոլորն էլ գրում են «ծիկ»: Այս «ծիկ»-ն այնքան է տարածված, որ շփոթում է անգամ Գևորգ Շերենցը, որը երբեմն գործածում է «զիկ» ձևը, երբեմն «ծիկ» տարբերակը:

Ղևոնդ ծայրագույն վարդապետ Փիրղալեմյանից, Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձտյանից և Արսեն վարդապետ Թոխմախյանից մեկմեկուկես տասնամյակ հետո հանդես է եկել Գևորգ Շերենցը (1848-1921): Բնիկ վանեցի այս հեղինակը շրջագայել է գավառից գավառ, գյուղից գյուղ ու արժեքավոր նյութեր է հավաքել իր «Վանա սազ» և «Պանդուխտ վանեցին» ժողովածուների համար: Ժողովածուների վերջում նա զետեղել է բարբառային բառարաններ: Տպագրական որոշ վրիպակներ խաթարում են նրա բառարանների լիարժեքությունը:

Հայ մշակութային զարթոնքի նշված ներկայացուցիչներից զատ Վանի բարբառով մեր [20-րդ – Հ.Մ.] դարում զբաղվել է Հրաչյա Աճառյանը: Ոչ ոք այնպիսի մեծ ծառայություն չի մատուցել Վանի բարբառի ուսումնասիրությանը, որքան մեծ գիտնականը: Ինչ խոսք, Վանի բարբառի ուսումնասիրության գործում մեծ աշխատանք է ներդրել ակադ. Հ. Աճառյանը,[2] սակայն անձամբ Վանը տեսած չլինելու, բարբառը տեղում լսած չլինելու և այդ իսկ պատճառով սոսկ իր աշակերտների կամ պատահական անձանց գիտեցածով բավարարվելու հետևանքով նրա ներդրումը անթերի չէ:

Հ. Աճառյանն իր «Հայերէն գաւառական բառարանի» մեջ, օրինակ, գրում է. «*Շուր(ա)հաւ*, Վն. «գարնանը հասնող մրգի տեսակ, տանձ»:[3] Նախ՝ գարնանը Վանում ոչ մի տեսակի տանձ չի հասնում: Բայց վանեցու բառարանում *շուրահաւ* բարդ բառը ոչ միայն չկար, այլև չէր կարող լինել, որովհետև, ինչպես այդ քաջ հայտնի էր մեծ գիտնականին, վանեցու բառարանում ոչ *շուր* բառը կար, ոչ էլ *հաւ*-ը: *Շուր*-ի փոխարեն վանեցին

---

[1] Տե՛ս «Հայոց բառ ու բան», աշխատասիրեց Սահակ վարդապետ Ամատունի, Վաղարշապատ, 1912, էջ 417:

[2] Տե՛ս, մասնավորապես *Հ. Աճառյան*, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1953:

[3] *Հ. Աճառեան*, Հայերէն գաւառական բառարան. – Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 644:

ասում էր *շուր*, իսկ *հաս*-ի փոխարեն՝ *խաս, խասնել, խասուկ*: Ուրեմն, եթե նման բարդ բառ գոյանար, ապա այն պիտի հնչեր՝ *շուրախաս*: Բայց այդպիսի բառ նույնպես գոյություն չի ունեցել վանեցու բառարանում: Հազվագյուտ կանայք միայն, այն էլ օրիորդաց դպրոցներում սովորածներից, կասեին *շուրախասուկ*. կանանց մեծ մասը ոչ թե կասեր, այլ ասում էր *թեզխասուկ*, իսկ տղամարդիկ (եթե նրանք դեռ արևմտահայ գրական լեզվով չէին խոսում), առանց դես ու դեն ընկնելու՝ ասում էին՝ *թեզլագյան* տանձ: Այս օտար բառը մինչև անգամ դարձել է տանձի վաղահաս տեսակի անուն:

Վանի բարբառով խոսում էր ավելի քան հարյուր հազար մարդ: Քաղաքամերձ գյուղերի, ինչպես նաև Հայոց Ձորի, Արճակի և Թիմարի գավառների հայերը խոսում էին Վանի բարբառով: Այդ բարբառի խոսվածքներով էին խոսում նաև Բերկրու, Արճեշի և Ալջավազի հայերը: Վանի վիլայեթի հարավում՝ Ոստանի, Կարկառի, Գյավաշի, Կարճկանի, Շատախի, Մոկսի ու Ոզմի հայերը խոսում էին Մոկաց բարբառով:

Քաղաքի բառապաշարը տարբերվում էր գյուղերի բառապաշարից: Քաղաքի ներսում էլ տարբեր էին ինչպես հայ բնակչության տարբեր խավերի, այնպես էլ տղամարդկանց ու կանանց բառապաշարները: Այսպես, պաշտոնատար հայերի, ինչպես նաև իրենց զբաղմունքի բերումով կառավարական մարմինների և շուկայի հետ առնչվող հայերի բառարանում գերակշռում էին թուրքերեն բառերը: Ռափայել Պատկանյանի «Մայրաքաղաքում կրթված հայ երիտասարդը և հայ օրիորդը» հանրածանոթ բանաստեղծության մեջ խարազանված ցավը XIX դարում տարածված էր նաև Վանում: Այդ խավերը հայերենը համարում էին «կըեղըցու» լեզու: Նրանց բառապաշարում մնացել էին միայն ընտանեկան կյանքին և կրոնին առնչվող սակավաթիվ հայերեն բառեր: Սակայն աշխատավոր վանեցու բառարանը հարուստ էր հայերեն բառերով, թեև այնտեղ էլ մուտք էր գործել թուրքերենը:

Հատկանշական է, որ հայերենն ավելի անաղարտ էր պահպանվել գյուղերում: Օրինակ, ոռոգման համար նվազ աղբյուրներից ծորացող ջուրը կուտակելու արհեստական ջրամբար-լճակը, մանավանդ Վանից հյուսիս ընկած գյուղերի գյուղացին անվանում էր *վոփ*: Մեծոփա վանք ասելով՝ Արճեշ գավառի հայ գյուղացին հասկանում էր այն վանքը, որի արտերը ոռոգվում էին արհեստական մեծ վոփի (ջրամբարի) ջրերով: Իսկ քաղաքում և քաղաքամերձ վայրերում ոռոգման համար կուտակված արհեստական ջրամբար-լճակներն արդեն կոչվում էին *գյոլ*:

Յուղ բառը Վանի և հարակից այլ վայրերի բառապաշարում պահպանվել էր *ևղ* ձևով: «*Յաղ* թուրքերեն բառը փոխառյալ է հայերեն *ևղ* ձևեն

և հետո իր փոխված ձևով վերադարձված է հայերենին»:[4] Ձվածեղ պատրաստելու և այլ նպատակով քիչ քանակությամբ յուղ հալելու համար Վանում շատ գործածական էր տեղական արտադրության փոքրիկ ամանը, որ կոչվում էր *եղախալ* (յուղ հալել): Այդ տարիներին կարի և այլ փոքրիկ մեքենաներն արդեն հասել էին Վան ու տարածվել: Այդ մեքենաների յուղն արդեն չէր կոչվում *եղ*, այլ թուրքերեն ձևով՝ *յաղ*, իսկ ամանը՝ *յաղդան*:

Ըստ Վանում պահպանված ավանդության՝ Արծրունի իշխանուհիներից մեկը ապարանջանի տրամագծի չափով ջուր էր նվիրել Վարագա վանքին: Այդ աղբյուրը մինչև 1915 թվականը կոչվում էր *Ապարանջան ախպոր*: Ինչպես տեսնում ենք, այս անվան մեջ *աղբյուրը* դարձել է *ախպոր*, իսկ *ապարանջանը* մնացել է անփոփոխ: Գոմ-ախոռները մաքրելու համար ինչպես գյուղերում, այնպես էլ քաղաքում շատ գործածական էր ամուր շիվերից կապված ցախավելը, որի կոթն ամրացվում էր երկու-երեք կապով: Այդ կապերը կոչվում էին *արապընջան*: *Ապարանջան* բառը, ինչպես տեսնում ենք, դարձել է *արապընջան*, իսկ կանանց բազուկին (թուրքերեն՝ *բըղակին*) հագցվող արծաթե կամ ոսկե ապարանջանը, որ պատրաստվում էր միայն հայ ոսկերիչների ձեռքով և՛ գյուղերում, և՛ քաղաքում կոչվում էր *բըղազուկ*:

Հայերենը համեմատաբար անաղարտ էին պահում կանայք: Նրանք տանից հազվադեպ էին դուրս գալիս, չէին շփվում արտաքին աշխարհի հետ, շուկայի երես չէին տեսնում: Ինձ ծանոթ էին օր ծերության հասած պառավ կանայք, որոնք իրենց կյանքում թուրք չէին տեսել, սակայն դուրս ու ներս անող ամուսինների խոսքի ազդեցությամբ թուրքերեն բառեր էին գործածում: Նույն հարկի տակ ապրող տղամարդկանց բառարանում թուրքերեն բառերի քանակը հասնում էր երբեմն 40 տոկոսի, իսկ կանանց բառապաշարում՝ հազիվ 10 տոկոսի:

XIX դարի 50-60-ական թվականների ազգային մշակութային զարթոնքի և ապա 70-80-ական թվականներին սկսված ազգային-ազատագրական շարժման շնորհիվ, երբ սկսվեց ընդլայնվել դպրոցական ցանցը, վանեցու բառարանի մեջ հայերեն բառերն ավելացան, և այն էլ ոչ թե վանեցու առոգանությամբ, այլ արևմտահայ գրական լեզվով: *Կաֆաղար*-ը (գաղափարական, համախոհ) գործածությունից դուրս եկավ՝ տեղը զիջելով *գաղափար* բառին, այն էլ պոլսահայությանը բնորոշ *քաղափար* ձևով: Ազատագրական շարժման նախակարապետները 1870-ական և հատկապես 1880-ական թվականներից շատ էին սիրում հանդես գալ բեմերից,

---

[4] *Հ. Աճառյան*, Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն. – Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Թիֆլիս, 1902, էջ 243:

տեղի-անտեղի դասախոսություններ կարդալ: Դրա հետևանքով վանեցու խոսակցական լեզվում *քեմը* մտավ *փեմ*, իսկ *դասախոսությունը՝ թասախոսություն* պոլսահայ ձևով:

Քսաներորդ դարում դպրոցական ցանցն այնքան էր ընդարձակվել, որ դպրոցներն իրար հետ մրցում, երբեմն էլ ուղղակի կռվում էին ավելի շատ աշակերտ ունենալու համար. իրարից աշակերտ խլելը սովորական երևույթ էր դարձել: Վանում ոչ մի վիճակագրություն չի եղել, և ես չեմ կարող հենվել վիճակագրական որևէ տվյալի վրա: Բայց բավական եմ գտնում ասել, որ ես այժմ յոթանասունյոթ տարեկան եմ և ոչ թե իմ, այլ իմ հոր և մոր տարիքի ոչ մի անգրագետ մարդ չկար Վանում: Դպրոց կար բոլոր քիչ թե շատ մեծ գյուղերում: Վանքերը, որոնց թիվը շատ մեծ էր, գրագիտության օջախներ էին: Վարագն ու Աղթամարը սեփական օրինակելի դպրոցներ ունեին: Քաղաքի 22-25 հազար հայ բնակչությունն արդեն ուներ երեք արական և երկու իգական միջնակարգ դպրոց և մեկ վարժապետանոց. հիմնվել էր ևս երկու միջնակարգ դպրոց, որոնք դեռ շրջանավարտ չէին տվել:[5] Քաղաքում հրատարակվում էր մեկ եռօրյա թերթ, մեկ շաբաթաթերթ և մեկ ամսաթերթ:[6] Գրագիտության և ընթերցասիրության տարածումը վանեցու բարբառից դուրս էր մղում օտար բառերը, օրինակ՝ *ռախխաս*-ը դարձել էր *թվաբանություն*, *ջողրաֆա*-ն՝ *աշխարհագրություն* և այլն: Դպրոցավարտներն արդեն խոսում էին գրական լեզվով, սակայն բարբառը դեռ չէր մեռնում, այլ իր բազմերանգ նրբություններով հարստացնում էր խոսակցական լեզուն:

Վանեցու խոսակցական լեզվի ճոխությունը, բարբառի ճկունությունը ցույց տալու համար բավականանանք միայն մեկ օրինակով: *Մեռնել* բայի համար վանեցին ուներ ավելի քան երկու տասնյակ արտահայտության ձև ու բառ: 1) *Մեռավ* ասվում էր սովորական մարդու մահվան համար, 2) *վիճականվեց* հոգևորականների և լավ մարդկանց համար, 3) *խանգրավ*, 4) *ննջեց*՝ առաքինի մարդկանց համար, 5) *խանգյուրացավ*՝ երկար տառապած մարդկանց համար, 6) *ծեռից կընաց*՝ երբ կարելի էր փրկել, բայց անտերությունից և անփութությունից մահը վրա է հասել, 7) *դան սյունն ընկավ*՝

---

[5] 1903 թ. Վանում կար 25 դպրոց, որից 10-ը՝ հայկական (1680 աշակերտներով), 6-ը՝ ամերիկյան (820 աշակերտներով) և 9-ը՝ ֆրանսիական (817 աշակերտներով): Մանրամասն տե՛ս «Բիւզանդիոն» (օրաթերթ, Կ.Պոլիս), 1903, 15/28 ապրիլ, թիվ 1997: Հղվում է ըստ *Հ. Մ. Պողոսյան*, Վասպուրականի պատմությունից (1850-1900), Երևան, 1988, էջ 320-321: Հեղինակը նշում է նաև (էջ 314), որ «XIX դարի վերջում դպրոցների թիվը ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղերում ավելացավ՝ հասնելով 136-ի, որից 30-ը՝ Վանում»: [Ծան. Հ. Մ.]

[6] 1905-1914 թթ. Վանում լույս էին տեսնում 24 անուն թերթեր: Տե՛ս Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց՝ Մ. Ա. Բաբլոյան, Երևան, 1986, էջ 346-347: [Ծան. Հ. Մ.]

երբ մեռնողը տան կերակրողն էր, 8) *ճըրաք'ը մարեց*՝ երբ մեռնողը տվյալ ընտանիքի վերջին ներկայացուցիչն էր, 9) *պաղեց*, 10) *վոփները փըռեց*, 11) *խոկ'ին պըկեց*, 12) *ճո̈չ ք'ուն ք'ընեց*՝ երբ հայտնողը չէր համակրում մեռնողին, 13) *սատկեց*՝ անասունների, թուրքերի, գող ավազակի և վատ հայի համար, 14) *խապավ*՝ անասունների, թուրքերի և հատկապես քրդերի համար, 15) *դարդավարամ էլա̈վ*՝ վշտից մահացավ, 16) *ճըմեց*՝ մեծահարուստ վատ հայի համար, 17) *շանսատակ էլա̈վ*՝ գող, ավազակի համար, 18) *նագյասպան ընկավ-մեռավ*՝ սովորական մարդու հանկարծամահ լինելու համար, 19) *պըթաց*՝ վատ մարդու հանկարծամահ լինելու համար, 20) *թօշկեց*՝ տեռորի ենթարկվեց և, վերջապես, 21) *Քրիստոս կանչեց*՝ Վանում օրըստօրե շատացող բողոքականների համար:

Այսպես հարուստ են Վանի բարբառի արտահայտչական միջոցները:

Կազմելով սույն բառարանը՝ ես ունեցել եմ միայն մեկ նպատակ:

Իմ ծննդավայրը, որ հազարամյակներ շարունակ շողշողացել է ոչ միայն հայոց պատմության մեջ, այլև դրանից էլ շատ առաջ, այսօր սոսկ երազ ու հուշ է դարձել նրա հարազատ զավակների համար: Նրա լավագույն գրական գոհարները, որոնք ուրույն տեղ են գրավում հայ բանահյուսության մեջ, վանեցու ներկա սերնդին հասկանալի դարձնելու համար լրացուցիչ բացատրության կարիք ունի: Վանեցին այսօր կա ու բազմանում է, և այս բառարանը Վանի հուշարձանն է, այդ ժողովրդի բազմերանգ լեզվի հուշարձանը:

Ֆրանսիայում բարձրագույն կրթություն ստացած, ֆրանսերենին և թուրքերենին հմուտ, 1918 թվականին Բաղդադ ընկած և արաբերեն սովորած, այնուհետև Նոր Ջուղա անցած և պարսկերեն սովորած ուսուցիչ Արմենակ Մաքսապետյանը 1954 թվականին Թեհրանում պրոֆ. Ռուբեն Աբրահամյանի խմբագրությամբ լույս է ընծայել «Ֆարսի և արաբ բառերը Վանի բարբառի մեջ» ուշագրավ աշխատությունը, որտեղ ապացուցում է, որ օտար շատ բառեր ոչ թե թուրքերենից են մտել Վանի բարբառի մեջ, այլ շատ ավելի հին են և Վանի բարբառի մեջ մտել են պարսկերենից ու արաբերենից: Իմ ուժերից վեր համարելով բառերի ծագման մասին խոսելը՝ ես աշխատել եմ տալ միայն Վանի բարբառի լուսանկարչական պատկերը, որ մնացել է իմ մեջ: Գուցե ուրարտերեն և այլ հին լեզուներ իմացողները հնագույն լեզուների վերապրուկներ գտնեն Վանի բարբառի մեջ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՇՅԱՆ

[1977]

Ա

ԱԲ, *գ. Հաբ։* Հէքիմ զիկ կըլոր հաբ տըվեց, աղեյցա։

ԱԲԱ, *գ. Բրդյա հաստ վերարկու։* Վանա խօջէն՝ աբէն վըրէն։

ԱԲԱՍԵԿ, *գ. Տանձի տեսակ։*

ԱԲԱՐ, *ած. Ջարմանք արտահայտող բացականչություն։* Աբար, էդկանդար սուտ կէլնի՞։

ԱԲԵԹ, *գ. Կայծքարից բռնկվող դեղնավուն հատուկ հեղուկով ներկված բամբակ՝ փաթաթված երիզով (զայթանով), որ վանեցին անվանում էր նաև շուկի կավ։*

ԱԲՈՎ, *գ. Հույսով։* Մնացի ինօր աբով, համա պան տուս չէկավ։

ԱԲՈՒԿԱԹ, *գ. Փաստաբան, դատապաշտպան։* Աբուկաթի սարմէն սուտն ի։

ԱԲՈՒՀԱՅԱԹ, *գ. Կենաց ջուր։ Ծան. – Գործ է ածվում* աբուհայաթ սույի *ձևով։ Ոռոգման ցանցի կարևոր առուների հատուկ անուն։*

ԱԲՈՒՂԱ *(նաև՝ Լիմ)*, *գ. Միզափամփուշտ, միզապարկ։* Մարթու շըռապարկ, կօվու աբուղա *(Լիմ)։*

ԱԲՈՒՌ, *գ. 1) Բառացի՝ երեսի ջուր։ 2) փխբ. Պատվի, ամոթի զգացում։*

ԱԲՈՒՌ-ՃԸՊՈՒՌ, *մկ. Վայրիվերո։* Աբուռ-ճըպուռ տուս տալ, *Վայրիվերո, անպատկառ խոսել։*

ԱԳՅԱՐ, *շ. Եթե, որ։*

ԱԴԱԲ, *գ. Հարգանք, պատկառանք։*

ԱԴԱԲՍԸԶ, *ած. Անպատկառ։* Ադաբսըզին մէյն ի, ի՞նչ ասես։

ԱԴԱԹ, *գ. Սովորույթ։*

ԱԴԱՄ, *գ. Մարդ։ Ծան. – Շատ տարածված էր «Ադամ էօլդնարան կուրթալտի, փէնջարադան բախն կաչսրա դուշտի» արտահայտությունը, որ նշանակում է՝ «մարդասպանը պրծավ, ազատվեց, սակայն պատուհանից նայողը՝ անմեղը, փորձանքի մեջ ընկավ»։*

ԱԴԱՇ, *գ. Անվանակից, միևնույն անունն ունեցող։* Մեր տըրկըցի լաճու խետ ես ադաշ եմ։

ԱԴԱՐ, *վ. շ. Եթե որ։* Ադար, կնիկըս ասըլզատա էլնի, էլ էտ պան չանի։

ԱԴՅՈՒՄ, *գ. Քայլ։*

* Ուչ ադյում, *1) Բառացի՝ երեք քայլ։ 2) Տղաների խաղի մի տեսակ, որի մեջ ցատկի սահմանը երեք քայլ էր։*

ԱԴՕ, *գ. Ավետիք անձնանվան կրճատ ձևը։*

ԱՂՕ, *Բմ. գ. Մայր։* Աղօն ուր ճըժին պաքեց *(Բմ.)։*

Ա.ՋԱԲ, *ած. գ. Ամուրի։* Ազբըրներ էկան ու նըստան։

Ա.ՋԱԲԲԱՇԻ, *գ. Հարսանիքի ամուրիների ավագ, որը ղեկավարում է հարսանյաց հանդեսի գեղարվեստական մասը, իսկ ավանդական մասը ղեկավարում է քավորը։*

Ա.ՋԱԹ-Ի-ՔՐԱՄ, *գ. Պատվելը, մեծարելը։*

Ա.ՋԱԹԼԱՄԱ, *գ. Ազատագրություն։* Ազաթլամա տըվին *(բանտից արձակեցին)*։

Ա.ՋԱԼԻ, *գ. Հին տիպի հրացան, որը գնդակի փոխարեն լիցքավորվում էր կապարի մանր գնդիկներով։*

Ա.ՋԱՄԱ, *ած. 1) Շատ մեծ, խոշոր։* Էն ազամա մարթ ի՛նչըխ ինկավ-մեռավ։ *2) Վեհաշուք, վեհ։*

Ա.ՋԱՆ, *գ. Մինարեի գլխից մոլլայի կարդացած աղոթքը։*

Ա.ՋԱՉԻ, *գ. Դեղագործ։*

Ա.ՋԱՐԼԱՄԻՇ ԱՆԵԼ, *Սաստել, հանդիմանել։*

Ա.ՋԱՓ, *գ. Հարսանիքում փեսային շրջապատող ամուրի երիտասարդներ։* Փէսի կօխքին ազափներ էն կայնե *(կճ.)*։

Ա.ՋԲԱՆԸՍՏՈՒՄ, *գ. Հարսանյաց հանդեսի նախօրեին ամուրիների հավաք՝ հարսանեկան պարերը ղեկավարող ազաբբաշի՝ ամուրիների պետ, ընտրելու համար։*

Ա.ՋԲԱՐ ԱՆԵԼ, *1) Անգիր անել։ 2) Հափշտակվել, գլուխը կորցնել։*

Ա.ՋԳ, *հթ. գ.1) Տոհմ։ 2) Գերդաստան։ 3) Ազգական։*

Ա.ՋԻԱԹ, *գ. Նեղություն։* Տո՛ւ ազիաթ միա քյաշի։

Ա.ՋԻՋ, *ած. 1) Հարազատ։ 2) Սուրբ, մաքուր։*

Ա.ՋԻՋ-ՄԱ.ՋԻՋ, *ած. 1) Գեղեցիկ, վայելչատես։ 2) Պատվական, առաքինի։* Փէսէն գոված, ազիզ-մազիզ ջահել ի։

Ա.ՋԻՐ-ՎԱ.ՋԻՐ, *գ. Իշխանության ղեկավարներ, մեծավորներ։*

Ա.ՋԼԸՂ, *գ. Ծխամորճ։*

Ա.ՋՄԻՇ ԷԼՆԵԼ, *Կատաղել, բորբոքվել։* Էտ վոր լսեց, ընկած ազմիշ էլավ։

Ա.ՋՈՒԼԻ, *ած. Կատաղի, վայրագ։*

Ա.ՋՐԱՀԻԼ, *տե՛ս* **Ա.ՋՐԱՅԻԼ**։

Ա.ՋՐԱՅԻԼ, *գ. 1) Մահմեդականների Գաբրիել հրեշտակը, հեթանոս հայերի գրողը, որ մահվան հունձն է կատարում։ 2) Փխբ. անսանձ, անընկճելի, դիվահար։* Ազրայիլ է տարցե մեր կ'ըլխին։

Ա.ՋՔՈՒՏԱԿ, *գ. Ամբողջ տոհմը։* Ազքուտակով խուր ին իկէ։

Ա.ԹԱՄՈՐԹԻ, *գ. Մարդ։*

Ա.ԹԱ.Ք, *գ. Քղանցք, եզր։*

ԱԹԼԱՄԱ, *գ.* *Ցատկելով խաղի տեսակ, ցատկախաղ։*

ԱԹՈՌ-Ք[ց], *գ.* *Կամավոր պաս, որ բարեպաշտ կանայք պահում են օրինական պասի նախորդ շաբաթից։*

ԱԹՐԱՖ, *գ.* *Փեշ, բոլորտիք։*

ԱԹՐԱՖ-ԹԱՐԱՖ, *մկ.* *Շուրջբոլորը։*

ԱԺԴԸՀԱՐ, *ած.* *Աժդահա, վիթխարի։*

ԱԺԵԼ, *չբ.* *Արժել, արժենալ։*

ԱԺՆԱՄԱԿԱՆ, *ած.* *Ժամանակակից, այժմյան։*

ԱԼ, *ած.* *Կարմիր։*

ԱԼԱՋԱՆԴ, *գ.* *Տագնապ, շտապողականություն։*

ԱԼԱԹ, *գ.* *Առտնին անհրաժեշտ պարագաներ՝ գործիքներ, հարմարություններ, իրեր։*

ԱԼԱԼԵԼ, *նբ.* *Տարածել, չար լուրերը ընդհանրացնել։*

ԱԼԱՄ, *գ.* *ժողովուրդ, ընդհանրություն։*

ԱԼԱՄ-ԴԷՍՏԱՆ, *ած.* *Աշխարհին ծաղրելի։* Թակավուրու լաճ զիկ արաց ալամ-դէստան։

ԱԼԱՄ-ԱՇԽԱՐՀԸ, *գ.* *Ամբողջ աշխարհը։*

ԱԼԱՆԴ, *գ.* *1) Տագնապ։ 2) Հոգեվարք։*

* Ալանդ ընկնել, *Տագնապի, հոգեվարքի մեջ ընկնել։*

ԱԼԱՆԻ, *ած.* *Հայտնի, բացահայտ։*

ԱԼԱԾ, *գ.* *Մացառ, որով ծածկում են գերանների վրա շարված մարդակները, ապա հող լցնում վրան, որպեսզի անձրևաջուրը տանիքից ներս չկաթի։*

ԱԼԱԾ-ԿԱԼԱԾ, *ած.* *Վառվռուն, զվարթ, կայտառ։*

ԱԼԱԾ-ՄԱԼԱԾ, *ած.* *Սիրունատես և բարձրահասակ։*

ԱԼԱՊԸՍՏՐԱԿ, *կճ. գ.* *Նապաստակ։*

ԱԼԱՋԱ, *ած.* *1) Խայտաբղետ, գույնզգույն, խայտաճամուկ։ 2) Կիսահաս միրգ։* Ծիրանն ի խասե, խավողն՝ ալաջա։

ԱԼԱՎ, *գ.* *Բոց։*

ԱԼԱՐ, *գ.* *Ծուլություն։*

ԱԼԱՐԵԼ, *չբ.* *Ծուլանալ, հուլանալ։* Ալարեց, տեղից վեր չէլավ, վոր պարև տար։

ԱԼԱՐԿՈՏ, *ած.* *Ծանրաշարժ։*

ԱԼԱՐԿՈՏԵԼ, *չբ.* *Դժվարությամբ, դժկամությամբ շարժվել։*

ԱԼԱՓ, *գ.* *Անասնակեր, եմ։*

ԱԼԱՖՐԱՆԿԱ, *ած.* *Եվրոպական ոճի։*

ԱԼԲԷԱԼ, *մկ.* *Իսկույն, անմիջապես, ձեռաց։* Ախչիկ ալբէալ կիմնա։

ԱԼԴԸՐՄԻՇ ՉԷԼՆԵԼ, *Ականջ չդնել, չլսել։*

ԱԼԲՐՏՈՒՆ, *գ. Ջրաղացի մաս, որտեղ թափվում է աղացված ալյուրը։*

ԱԼԹ-ՈՒՍԹ, *ած. Տակնուվրա, խառնափնթոր։*

ԱԼԸՂԸԾ, *գ. Խառնակութիւն, շփոթ։*

ԱԼԻՇ-ՎԵՐԻՇ, *գ. Առևտուր։*

ԱԼ-ԿԱԲԱՎՈՐ, *Կարմիր կապա հագած. այդպես են հագնված հեքիաթի հերոսները։*

ԱԼՀԱՍԸԼ, *մկ. Վերջապես, կարճ կտրած, ասած։*

ԱԼՄԱՍՏ, *գ. Ադամանդ։* Ալմաստն անտաշ չի պըսպըղա։

ԱԼՆԱԽ, *գ. Թաշկինակ։* Փարեն կըկապի ալնըխի ճոթ։

ԱԼՆԻ, *ած. Անալի։* Ճաշին աղ չես թալե, ալնի ի։

ԱԼՈՃ, *վն. գ. Սնձենու պտուղ։* Ալոճ աշնան կըխասնի *(վն.)։*

ԱԼՈՒՃ, *տե՛ս* **ԱԼՈՃ**։ Էթանք Նավկէն (սրբավայր), ալուճ պէրենք *(կճ.)։*

ԱԼՈՒՉԱ *(նաև՝ Հթ. Լիմ)*, *գ. Սալոր, շլոր։* Տանձ՝ միս, խընձոր՝ թիս, ալուչէն՝ տեռ, ծիրան՝ ցեռ։

ԱԼՓԻ, *գ. Աղբյուրների ալիք առ ալիք հոսելը։* Ապարանջան ախպէր ալփի կաթ։

ԱԼՕ-ԲԸԼՕ, *գ. Վիրավորական արտահայտության մաս։* Նա տոր ինոր ասա ալօ, նա էն քի ասի բըլօ *(ոչ դու նրան անվանիր ալօ, ոչ էլ նա քեզ անվանի բլօ, այսինքն՝ առիթ մի՛ տուր, որ նա քեզ վիրավորի)։*

ԱԼՕՉԱ, *Բմ. գ. Սնձենու պտուղ։* Ալօչան մէշէն կէղէր *(Բմ.)։*

ԱԼՕՋԻ Կ^{ə}ԱԼ, *Անասուններըը սեռական հասունացման հասնել։*

ԱԽ, *վն. Բմ. գ. Երկյուղ։* Ջանըս ախ //վախ ինգայավ *(վն.)։*

ԱԽԱԽՈՐԵԼ, *չբ. Սարսափել, ահաբեկվել։* Ախախորեց, ծէն ինգայավ փոր։

ԱԽԱԽՈՐԵԼ-ՋԱԽԱԽՈՐԵԼ, *տե՛ս* **ԱԽԱԽՈՐԵԼ**։

ԱԽԱՆԵՍ, *գ. Հովհաննես։* Ախանէս աղէն էտ պանից հազ չի անի։

ԱԽԱՎԵԼ, *չբ. Կուշտ ուտելուց հետո ախորժակը փակվել։*

ԱԽԱՐ, *վ. Վերջիվերջո, ոչ ապաքեն, չէ՞ որ։*

ԱԽԲԱԲ, *ած. գ. Մտերիմ, ընկեր, գաղափարակից։* Ինոնք ախբաբ են, քըսան տարվա ախբաբ։

ԱԽԸՆԹԻ, *գ. Հոսանք, ջրի հոսելու թեքություն։*

ԱԽԸՐ, *վ. Վերջիվերջո, ոչ ապաքեն, չէ՞ որ։*

ԱԽԼԱՎԻՆ, *գ. Առաջին կալ։* Ախլավին ցորենը, Աստված օխնի, Աստծուն *(իմա՝ եկեղեցուն, վանքին)*, վորպէվէրուն, եթըմին։

ԱԽԿ^{ə}ԱՏ, *Լիմ, ած. Աղքատ։*

ԱԽԿԸԼ, *գ. Խելք, ուղեղ։*

ԱԽԿԼԱՋՂԵՂ, *ած. Ուշագրավ, հափշտակիչ:* Ընկուն խօրօտ ու անկալատ տըներ շիներ ին, վոր մարթ ախկլազղեղ կէղնի:

ԱԽՄԱԽ, *ած. Հիմար, տխմար:* Էրկէն մարթեր ախմախ կէլնին, կօլօտ մարթեր՝ չախմախ:

ԱԽՇԱՄ, *գ. Իրիկուն:*

ԱԽՇԱՄԼԱՄԻՇ ԱՆԵԼ, *Նստել մինչև երեկո և օրը մթնեցնել պարապաբանությամբ՝ խոսելով, խմելով և այլն:*

ԷԽՈՒ, *գ. Վախից, երկյուղից:* Ախու ծէն չի խանի:

ԱԽՉԱ, *գ. Պլիկ, 1/3 կոպեկի հավասար մանր պղնձադրամ Թուրքիայում:* Ախչէմ տըվինք՝ պէրան պացինք՝, տասը տըվինք՝ չկոծիցինք՝ *(=չփակեցինք):*

ԱԽՉԻԿ, *գ. Աղջիկ:* Ախչըկան վոր թողնեն, կէրթա զուռնաչի կառնի: Ախչըկա տէրը մէյ դարդ ունի, լաճուն՝ էրկու: Ախչիկ օտարի ճըրաք՝ ի:

ԱԽՉԸԿՈՒ ՏԱԿᵊ, *Լիմ, Փիփերթ:* Ախչըկու տակ՝ի սէրմը խաստի պես ի *(Լիմ):*

ԱԽՊՐԱՆՑ ԱՐՈՒՆ, *Շատ կարմիր ծաղկի տեսակ:*

ԷԽՊՈՒՐ, *գ. Աղբյուր:* Մարթ մ՛որ ախպըրէ ճո՛ւր խըմի, ինոր ինէ ք՝ար չըթալէ *(իմա՝ լավություն անողի նկատմամբ ապիրատ չեն լինի):*

ԷԽՏԵՑ, *գ. 1) Հաղթանակ: 2) Աչք դիպչելը, աչք առնելը:* * Ախտէց առավ, *Աչք դիպավ:*

ԱԽՓ, *գ. Աղբ:*

ԱԽՔᵊԱՏ, *գ. Մուրացկան:* Ախք՝ըտի ծեռ կուտըմ տէսան: Ախք՝ըտի վէրէն շոր տէսան, ասին՝ վո՛րտեղից, զանգընի վէրէն շոր տէսան, ասին՝ բարով վայելես: Ախք՝ատն վոր վոսկի պըռնի, խող կըտառնա, զանգինը վոր խող պըռնի, վոսկի կըտառնա: Ախք՝ըտի մախը չեն լա:

ԱԾԱՆ, *ած. Ածող:* Ածան խավ կըչկըչան կէլնի:

ԱԾԻԿ, *գ. Խոնավացրած արմտիք:*

ԱԾԿԱԾ, *ած. Խոնավացրած:*

ԱԾՈՒ, *գ. Մարգ (հոգն.* ածուք՝, ածվըներ*):*

ԱԿ, *գ. 1) Ակունք:* Քյարէզի ակ: *2) Անիվ:* Սայլի ակ, կամրջի ակ *և այլն:*

ԱԿԱԽ, *Բմ. Լիմ, ած. Ագահ:*

ԷԿᵊԷԽ, *ած. 1) Արթուն, զգաստ:* Էրէխէն ակ՝ախ ի, խաւ, վաղոնց ի ակըխէ: *2) Տեղյակ:*

ԱԿԱՆԱՏ, *Լիմ, գ. Սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պատուհան:*

ԱԿԱՆԿԱԼ, *գ. Թոնրի օդանցքը՝ ակը, փակելու շոր, քուրջ:*

ԱԿԱՆՈՒՑ ՑԱՐԱ, *Մաշկի անբուժելի հիվանդություն:*

ԱԿԱՆՋ, *գ. 1) Մարդու կամ կենդանու ականջ: 2) Ծախարակի մասերի, կամուրջի գլխակապի, սայլի լծափայ-*

տի, արորի լուծի համապատասխան մասերի անունները։

ԱԿԱՆՋԿԱԼԷՔ՞, *գ. Բարի լուր բերողի նվեր։*

ԱԿԱՆՋՓՈՐՈՒԿ, *գ. Ականջի մեջ սողոսկող որդ։*

ԱԿԱՆՋՔԱՇՈՒԿ, *գ. 1) Մանկական խաղի տեսակ։ 2) Նորածին տղա ունեցած հոր ականջները քաշելը։*

Ա.Կ՞ԸԽՅԵԼ, *չբ. Զարթնել։*

Վէր մյէ ին ա.կ՝ընխյել աշխարհ ալամով, *Բովանդակ աշխարհ զարթնած մեզ էր նայում։*

ԱԿԸՆՃԿԸԼԱ, ԱԿԸՆՋԿԸԼԱ, *վն. Լիմ, գ. Աչքալուսանք, բարի լուր հաղորդելու վարձատրություն։* Ակընջկըլա ուզեց, տըվին *(Վն.)*։ Ձի ակընջկըլա տոաւ *(Լիմ)*։

ԱԿԸՌԿԵԼ, *չբ. Դեմ առնել, կառչել, խանգարվել։* Փէշս ակըռոկեց ճիչ պիպոին։

ԱԿԸՌՓԻ, *գ. Հյուսիսային կողմից Այգեստանին կպած թրքաբնակ գյուղ։*

ԱԿԸՌՓՈՒ Ք՞ԱՐ, *Ագռավաքար, սուրբ մատուռ, սրբություն։*

Ա.Կ՞Ի, *վն. Լիմ, գ. Հագուստի քղանցք։ Ծան. – Քիչ գործածական է (Վն.)։*

ԱԿԻՅ, *գ. 1) Ագի։ 2) Քղանցքի ծայր։*

ԱԿԻՇ, *վն. գ. Տաշտաքերիկ։* Տաշտի խըմոր ակիշօվ կըք՝երեն *(Վ.)*։

ԱԿԻԶ, *տե՛ս* **ԱԿԻՇ**։

ԱԿԼԱ ՏԸՆԵԼ, *Դարան մտնել հանկարծակի հարձակման համար։* Կատուն ակլա ի տըրէ, վոր մուկ պըռնի։

ԱԿԼԱՏԻԶ, *գ. 1) Փետրազարդ սոխ, որ կախում էին թոնրատան առաստաղից։ Մեծ պասի յոթ շաբաթների հաշիվը ճիշտ պահելու համար սոխի մեջ խրած յոթ փետուրները մեկ-մեկ հանում էին յուրաքանչյուր երկուշաբթի։ 2) Երեխաներին վախեցնելու երևակայական կենդանի։*

ԱԿԼԵ-ԴԸՐԿԼԵ, *ա. Խաղի ընթացքում իրերից ընտրություն կատարելու, վիճակ հանելու կամ որևէ պատմություն անելիս ասվող արտահայտություն.* Ակլե-դըրկլե տընազա, էծիկ-մէծիկ մօղրէզա, խարբաբա, խարբաբա. *և շփոթեցնելու համար մատը տարուբերելով դնում էին զանազան առարկաների վրա։*

ԱԿՆԱՏ, *գ. Թակարդ։* Կ՝ընա տըրկըցից մեր մըկան ակնատն ուզի, մուկ ի իրիվցե։

ԱԿՈԼԵԼ, *նբ. Քանդել։* Աստված ք՝ո տուն չակոլի, ճո՛ւրն իկ՝եր ի, ճաղա՛չն ի տարե, տո՛ւ ինգ՝եր ես, չախչախ կուրոնես։

ԱԿՈՒԿԱ, *գ. 1) Թոնրի ական վրա դրվող կավե շրջանակ, որպեսզի՝ վառելիքը թոնրի օդանցքը՝ ակը չփակի։ 2) Տգեղ աղջկա հասցեին ասվող խոսք։* Աչքերը փոս, քիթն ակուկա, ինչ վոր ասեն, վերէն կուկա։

ԱԿՈՒԱԺԱԺԻԿ, *գ. 1) Մի կտոր ժաժիկ։ 2) փխբ. Չնչին կաշառք։*

ԱԿՐԱՍՏ, ԱԿՈՒԱՍՏ, *Բմ. գ. Նախաճաշ։ Ծան. – Առավոտյան զարթնելուն պես մի թեթև բան էին ուտում. դա կոչվում էր* խաց *կամ* ակրաստ։ *Տնից դուրս գալիս և աշխատանքի գնալուց առաջ ուտում էին տաք կերակուր, որ կոչվում էր* ճաշ։ *Կեսօրին ուտում էին հիմնավորապես. կեսօրվա ճաշը կոչվում էր* խրամենց, *երեկոյան ճաշը կոչվում էր* հընթրիս. *քնելուց առաջ կերած մածունը կամ մածնաբրդոշը կոչվում էր* պաշիվ։

ԱԿՕ, *Վն. գ. Հակոբ։*

ԱՀԱՆ, *վ. Ահա, ահավասիկ։*

ԱՀԱՆՁ, *տե՛ս* ԱՀԱՆ։

ԱՀԴ ԱՆԵԼ, *Ուխտել։*

ԱՀՅԼՕՐ, *Վն. գ. Աքաղաղ։* Ահյլօր խավխուսուն կըկանչի// կըխուսա *(Վն.)։*

ԱՀՎԱԼ, *գ. Վիճակ։* Կընատի ու կըպատմի ուր ահվալն։

ԱՂԱ, *գ. Պարոն, տեր։ Հոգն.՝* Աղեյտեր։

ԱՂԱՂ, *գ. Դաբաղների օգտագործած գխտորի ջուր։*

ԱՂԱՂԻԼ, *նբ. Սրտաշարժ անել։*

ԱՂԱՂԻՆՁ, *Բմ. գ. Խխունջ։* Աղաղինջ կէղնի ճըրէրի մէչ *(Բմ.)։*

ԱՂԱՂՎԵԼ, *գ. Գխտորի ջրի մեջ դրվել (կաշին)։*

* Քիթն աղաղվեց, *Քիթն արյունաշաշաղախ եղավ։*

ԱՂԱ-ՅՕԼԱ, *մկ. ած. Աղային վայել։*

ԱՂԱՆԱԿ, *1) մկ. Աղայավարի։ 2) գ. Որդի տեսակ։*

ԱՂԱՆԱԿ^{3}, *Լիմ, գ. Ծիածան։*

ԱՂԱՆՁ, *գ. Բոված ցորեն։*

ԱՂԱՎԸՂԵԼ, *նբ. 1) Աղավաղել, փոփոխել։ 2) Սրտաշարժ անել։* Վերջ ընչուռ-ընչուռ կուլա, կաղավըղի խօր։

ԱՂԱՎԸՐԵԼ, *չբ. Աղաչել, խնդրել, պաղատել։*

ԱՂԲԱ, *գ. Փոխը, փոխարենը։*

Աղբէն քե էլնի//աղբէն վէրէտ էլնի, *Դու ևս արժանանաս միևնույն լավ բանին։*

ԱՂԷԿ, *ած. Լավ։* Տղեյները խօ խիվանդ չեն, աղէ՞կ են։ Աղեկն ասին վայ ի, կ՚էշն ասին՝ վավելեր ի։ Աղէկ ապրանք՝ վոր էլնէր, խօր տուն չէր մնա։

ԱՂԷԿՆԱԼ, *կճ. չբ. Առողջանալ։*

ԱՂԷԿՆԵՐ, *գ. Ջար ոգիներ։* Աղեկները կուկլան, կըլըցվեն վէր ինոր կ'ըլլխուն։

ԱՂԷՂՆԱԿ, *Բմ. գ. Ծիածան։*

ԱՂԷՅՆԱԼ, *Լիմ, չբ Առողջանալ։*

ԱՂՈՐԹ, *մկ. ած. Ճիշտ, իրավամբ։* Աղո՛րթ ի վարտապետի վախճանվելը։ Ավչին աղորթ կասեր *(Վն.)*։

ԱՂՈՒ, *գ. Թույն։* Կաձար աղու խըմավ, մեռավ *(Վն.)*։

ԱՂՈՒԶ, *Բմ. Լիմ, գ. Դալի փափուկ, ջրալի տեսակ։* Տալ պինդ կըլի, աղուզ՝ կակուղ *(Լիմ)*։

ԱՂՈՒՅՈՏ, *ած. Թունավոր։*

ԱՂՈՒՆ, *գ. Ջրաղաց տարվող մաքրած ցորեն։* Ես աղա, տո՛ւ աղա, հապա մեր աղուն վո՛վ պիտի աղա։

ԱՂՈՒ ՏԱԼ, *Թունավորել։* Ջանդուն թակավորի ախչկան աղու տըվեց *(Վն.)*։

ԱՂՈՒՐ, *գ. Անվահեաք, որ ճանապարհազուրկ երկրում կամաց-կամաց դառնում էր ճանապարհ։*

ԱՂՊՐԱՆՑ, *գ. Դաշտային կարմիր ծաղկի տեսակ։* Աղպրանց արուն մէչ քարերուն։

ԱՂՋԸԿՈՒՏԱԿ, *գ. Սեզի նման մոլախոտ։ Ծան. – Մոլախոտի տեսակներն էին՝* կովաճայտիկ, խապպուկ, կառն, փիփիոթ, իշօուկաթնուկ, կորիստ, մատուկ, փուշ, ամանկոտրուկ, շան գյոզ, ամիրաղխաւմ, պառվու մէզօր, սարի սըխտոր, պառէզ, գէլուկ։

ԱՂՋՈՒՐ, *գ. Սոմախ, սոմախի թուփ։*

ԱՂՎԵՋ, *Բմ. գ. Աղվես։*

ԱՂՎԸՂԵԼ, *չբ. Նստվածք տալով զուլալվել (կերակրի, յուղի մասին)։*

ԱՂՏՈՐԵՆԻ, *գ. Սոմախ, սոմախի թուփ։*

ԱՂՕԱՄ, *գ. Ոչխարի տուրք։*

ԱՂՕԹԱՐԱՆ, *գ. Բողոքականների եկեղեցի։*

ԱՂՕԹՐԱՆ, *գ. 1) Արշալույս, արևի առաջին ճառագայթների երևալը։* Աղօթրան պաՙցվեց։ *2) Արևելք։ 3) Կճ. Վաղ առավոտ։*

ԱՂՕՇ, *գ. Խաղողի որթ, վազ։*

ԱՂՕՐԹ, *Լիմ, ած. մկ. Ճիշտ, իրավացի։*

ԱՃԱՌ, *գ. Արջառ։*

ԱՃԱՐ, *գ. Հաճար։*

ԱՃԸՂՃՎԵԼ, *կբ. Լղոզվել, կեղտոտվել։* Տըղի տայ մաքրիցի, ծեռըս ա՛ճըղճվավ։

ԱՃԸՂ ՏԱԼ, *Աճ տալ, ավելանալ։*

ԱՃԿԵԼ, *Լիմ, չբ. Նայել։*

ԱՃՈՂԵԼ, *Վն.* **ԱՃՕՂԵԼ**, *Հթ. նբ. Հաջողել։*

ԱՃՊԱՏԵՍ, *ած. Շատ տգեղ:* Էն աճպատեսին ի՛նչըխ ի առէ:

ԱՃՕՂՈՒԹԵՆ, *Լիմ, գ. Հաջողություն:*

ԱՄԱԳ, *գ. Երախտիք, ջանք, վաստակ:* Նա վըր զիկ ամագ ունի:

ԱՄԱԳԼԻ, *ած. Վաստակավոր, երախտավոր:*

ԱՄԱԼ, *գ. Գործ, աշխատանք:*

ԱՄԱԼԻԵ, *գ. Աշխատող, բանվոր:*

ԱՄԱԼԻԵ ԹԱԲՈՒՌԻ, *Բանվորական գումարտակ. 1915 թվականի ապրիլյան ինքնապաշտպանության ամրաշեն ջոկատ:*

ԱՄԱ՜Ն, *ձ. Ձանձրույթ, զզվանք, հուսահատություն, կսկիծ արտահայտող, օգնություն հայցող բացականչություն:*

ԱՄԱՆԱԹ, *գ. Ավանդ, ուրիշի պահպանությանը հանձնված իր:* Կ'ամը տըղվին կ'էլուն ամանաթ:

ԱՄԱՆԼԸՎԻԿ, *գ. Շորի կտոր, որով աման են լվանում:*

ԱՄԱՆԿՈՏՐԻԿ, *գ. Բույսի տեսակ:*

ԱՄԱՆ-ՉԱՄԱՆ, *գ. Ամանեղեն:*

ԱՄԲԱԽ-ՋԱՄԲԱԽ, *մկ. Դատարկախոսելով, շաղակրատելով:*

ԱՄԲԱՐ, *գ. Պահեստ, շտեմարան:*

ԱՄԲՐԱԲ, *գ. Արմավ:*

ԱՄԲՐԱՎ, *Լիմ*, **ԱՄԲՐԱՎ**, *Հթ. գ. Արմավ:*

ԱՄԸՅՏԵՐ, ԱՄԸՀ^ըՏԵՐ, *Լիմ, գ. Ամաններ:*

ԱՄԸՆՏԵՂ, *մկ. Աննպատակ:*

ԱՄԸՆՏԵՂ-ՋԱ ՄԸՆՏԵՂ, *տե՛ս* **ԱՄԸՆՏԵՂ**: Ամընտեղ-զամընտեղ միա կ'արտա:

ԱՄԸՌՆՈՒԿ, *գ. Ամառային վաղահաս միրգ:*

ԱՄԸՐ, *գ. Հրաման:*

ԱՄՄԱ, *շ. Բայց, սակայն, թեպետև:*

ԱՄՈԹՈՒ, *գ. Ամոթից:*

ԱՄՈԹՈՒԹԵՆ, *գ. Ամոթ:* Վէրէն շոր չըկա, ամոթութնէ տո՛ւս չէլնե:

ԱՄՈԼ, *գ. Գութանի առաջին լուծը:*

ԱՄՈԼՎԱՐ, *գ. Գութանի առաջին լուծը քշող:*

ԱՄՉԸՆԱԼ, *չբ. Ամաչել:*

ԱՄՉԸԿՈՏ, *ած. Ամոթխած:*

ԱՄՊԱԿԱԼԵԼ, *չբ. 1) Ամպել: 2) փխբ. Տխրել:*

ԱՄՊԵՂ-ՋԱՄՊԵՂ, *ած. մկ. Անմիտ:* Ամպեղ-զամպեղ տո՛ւս միա տա:

ԱՄՊՇՈՂ, *ած. Նոսր ու ցրիվ ամպերով ծածկված:*

ԱՄՊ ՈՒ ՋԱՄՊ, *ած. Ամպամած:*

ԱՆԲԾՈՂ, *ած.* *Ամպամած, բայց լուսավոր ու տաք օր։*

ԱՆԳ՝ԱԼ, *ած.* *1) Ծույլ։ 2) Անդամալույծ։*

ԱՆԳԸՃԿԸԼԱ, *գ.* *Աչքալուսանք։* Անգըճկըլա պէրին Սարքըսին, տոր տըղէն բանակից էկեր ի *(կճ.)*։

ԱՆԳՅՈՒ-ԱՆԳՅՈՒ, *մկ.* *1) Բառացի՝ անկյունից անկյուն։ 2) փխբ. Խաղացնելով, ձեռ առնելով։*

ԱՆԳՅՈՒՄԱՆ, *1) մկ.* *Անսպասելի, անհավանական, հանկարծակի։ 2) ած. Անտեղյակ, անիրազեկ։*

ԱՆԳ՝ՈԹ-Ք՝, *հթ. ած.* *Ագահ։*

ԱՆԴԱՋԱ, *գ.* *1) Երկարության չափ։ 2) Հագուստի ձևվածքը թղթի վրա։*

ԱՆԴԻՕՐ, *գ.* *Ընտանիք, կին։*

ԱՆԵՋԱԿԱՆ ԱՋԸ, *Աստծո ձեռքը։*

ԱՆԵՂ, *գ.* *1) Աղեղ։ 2) Բուրդ ու բամբակ գզող աղեղնաձև գործիք։*

ԱՆԷԱՔ՝, *հթ. գ.* *Անեծք։*

ԱՆԷՐԾԱՔ՝, *վն.*, **ԱՆԵՐԾԱՔ**, *կճ. գ.* *Աներորդի։* Փէսէն աներ-ծաքին կանչեց տուն *(կճ.)*։

ԱՆԸՂՆԱԿ, *կճ.*, **ԱՆԸՂՆԱԿ՝**, *հթ. գ.* *Ծիածան։* Անձրեվ տաթրավ, անըղնակ՝ տուս իկավ *(հթ.)*։

ԱՆԸՅՏԵՐ, *գ.* *Անուններ։*

ԱՆԸՍԿ՝ԱՄ, *ած.* *Անզգամ։*

ԱՆԸՍՊԵՌ *(նաև՝ հթ.)*, *ած.* *Լկտի, լիրբ, անզգամ։*

ԱՆԹԱՐԻ, *գ.* *Լայն քղանցքով կանացի երկար զգեստ։*

ԱՆԹԵՂ, *գ.* *1) Կիսավառ փայտ, փթիր, որ թողնում են մոխրի տակ՝ կրակը հարատև դարձնելու համար։ 2) կճ. Ածուխ։* Անթեղ կըխօրինք, յետո թունիր կըվառինք *(կճ.)*։

ԱՆԹԵՂԵԼ, *նբ.* *Անթեղով կրակը վառ պահել։*

ԱՆԹԻԿԱ, *գ.* *Հնություն։ Ծան. – Վանում հաճախ գործածվում էր ծաղրական իմաստով։* Անթիկայի մէյ։

ԱՆԹԻԿԱՋԻ, *գ.* *Հնություններ հավաքող, գնող։*

ԱՆԹՐՈՑ, *գ.* *Կրակխառնիչ։*

ԱՆԹՕԼԿԵԼ, *նբ.* *Արմունկով հրել։*

ԱՆԺԱԺ, *ած.* *Անշարժ։* Թ՝ուք՝ ու մըրի մէչ մնաք՝ անժաժ։

ԱՆԺԱՄԱԿ, *ած.* *մկ. Ուշ։*

ԱՆԺԵՆԴԸՌ, *տե՛ս* **ԱՆԺԵՌ**։

ԱՆԺԵՌ, *ած.* *Անհամ, անյուղ (կերակուր)։*

ԱՆԺՈՒՌ, *հթ. ած.* *Նիհար։*

ԱՆԼԻ, *բմ. ած.* *Անալի։*

ԱՆԽԱՐԱՄ, *ած.* *Մաքուր, անաբատ։*

ԱՆԽԵՂ, *ած.* *Չխեղաթյուրված, ազնիվ։*

ԱՆԽԸԼԻՍ, *ած. Անհատնում։*

ԱՆԽՈՒՆ, *ած. Անսահման, մեծ։* Տո՛ւ քո անխուն աստված սիրես։

ԱՆԽՈՒՆԱՐ, *ած. Ապաշնորհ։* Անխունար մարդու լեզո՛ւն էրկէն կէ՛նի։

ԱՆԾԵՂ, *գ. Կաչաղակ։* Անծըղան վոր մընա, իր ծաք՛ուց սիրուն չըկա։

ԱՆԿԱԼԱՏ, *1) ած. Կատարյալ անթերի։ 2) գ. Իգական անձնանուն։*

ԱՆԿ՚ԱԽ, *մկ. Ուշ։* Անկ՚ախ տուն կուկ՚ա, խա սարխօշ ի։

ԱՆԿ՚ԱԽ-ԱՆՊԱԽ, *մկ. Անժամանակ։* Մէկէլ տեսար կէ՛նի կուկ՚ա տունըդ, չի ասի անկ՚ախ-անպախ դո՛ր կէրթա՛մ։

ԱՆԿ՚ԱՆ, *մկ. Ուշ։* Մարէն մեռնի իր լաճուն, անկ՚ան ի, տոռւն արե։

ԱՆԿ՚ԷՏ, *ած. Անգրագետ։* Անկ՚էտին քամակս առիցի, ասաց՝ տիր կ՚ետին, վոտք՚ըս կըցավի։

ԱՆԿ՚ԸՆՆԱԼ, *չբ. Ուշանալ։* Մեր լեղին կըկտրի, եփ քո թուղթն *(=նամակ)* անկ՚ընա։

ԱՆԿԸՁԿԸԼԱ, *հթ. գ. Աչքալուսանք։*

ԱՆԿ՚ԻՆ, *գ. Անդունդ։*

ԱՆԿ՚ՈՒԹՔ՚, *ած. Անկուշտ, ագահ, որկրամոլ։* Անկ՚ո՛ւթք՚ին մէյն ի, ինոր կըշտացնել չէ՛նի։

ԱՆԿ՚ՈՒԹՔ՚ՈՒԹԵՆ, *գ. Ագահություն, որկրամոլություն, անկշտություն։*

ԱՆԿՈՒՏ, *վն. ած. 1) Առանց դրամի, անփող։ 2) փխբ. Աղքատ։* Անկուտին մէյն ի։

ԱՆԿՈՒՏԸՆԱՆԿ, *ած. Խեղճ ու աղքատ, թշվառ։*

ԱՆԿՈՒՏ, *ած. Առանց դրամի, աղքատ։* Անկուտին մէյն ի, ինոր վո՛վ ախչիկ կուտա։

ԱՆՀԷՍԱԲ, *ած. Անհաշիվ։* Վոռ կ՚ըլ՚ո՛ւ չիմացող *(=ծայրը ծայրին հասցնել չիմացող)* անհէսաբ մարդ ի։

ԱՆՁ, *գ. Կովի արգանդ։*

ԱՆՁԵՂ, *գ. Կաչաղակ։* Անձղան պոչ էրկէն ի *(վն.)*։ Անձեղի պոչ հէրկէն ի *(կճ.)*։

ԱՆՂԱՆ ԼԱՐ, *1) Աղեղի լար։ 2) Գզրարի գործիքի՝ աղեղի լար։ 3) փխբ. Շատ գեղեցիկ հոնքեր։* Անղան լար ընքվերուտ մեռնեմ։

ԱՆՄԱՐՄԻՆ, *գ. Հրեշտակ։*

ԱՆՈՒՇԻ ԿԱՊԻԼ, *Համաձայնության գալ, հաշտվել։*

ԱՆՉԱՄ, *մկ. Այնքա՞ն շատ։*

ԱՆՉԱՆՔ՚, *տե՛ս* **ԱՆՉԱՄ**։ Անչանք՚ կանչեմ սարեր, լռացուցեմ։

ԱՆՋԱԽ, *մկ. Հազիվ, միայն։* Անջախ քո օղին *(=սենյակ)*, քո քո՛շկն ու սարային *(=պաշտգամբ ու պալատ)* լայեղ ի։

ԱՆՍԸՎԱՂ, *ած. Անոթի, բերանը բան չդրած։*

ԱՆՎԷՐԻ, *ած. Անբնակ, անշեն, ամայի։*

ԱՆՎԵՐՎԵՐԻ, *տե՛ս* **ԱՆՎԵՐԻ**։

ԱՆՏԱԿ, *ած.* *Անհատակ։* Անտակ պըղինձ ի, խա լըցրու, լըցվել չըկա։

ԱՆՏԱՏԱՐ, *ած.* *Անդադար, անհանգիստ, շարունակ աշխատող (մայրիկ)։*

ԱՆՏԱՐ, *ած.* *Անթիվ։*

ԱՆՏԱՐ-ԽԱՋԱՐ, *ած.* *Անթիվ, անհամար։*

ԱՆՏԻՈՐ, *գ.* *Ամուսին, կին։* Ինոր (ղարիբի) անտիորն վո՞վ պախի։

ԱՆՑԱՎԱԼ, *ած.* *Անցավ, չցավացող։* Անցավալ կ՚ըլ՚ըխ ավէտրանի տակ չեն տընի։

ԱՆՈՒՇ, *վն. ած.* *1) Մուրաբա։ 2) Հթ. Քաղցր։ 3) Համեղ։ 4) Հաճելի։*

ԱՆՕԹԻ *(նաև՝ Լիմ), ած.* *Սոված, քաղցած։* Կուշտ նըստանք՝, անօթի վեր կացանք՝։ Անօթի փորը խաբար չի խասկընա։

ԱՆՖԱՅՄ, *ած.* *Ուշ հասկացող։* Ի՞նչ անֆայմ մարթ ես, կիսապէրան հէչ պէն չես խասկընա։

ԱՇ, *գ.* *Պատվաստ։*

ԱՇԱԴԻ ԲԻԼԱ, *Երդում.* աստված վկա, ես իմ աստված։

ԱՇԱՆ, *գ.* *Կալսելու ցորեն, գարի և այլն։*

ԱՇԱՐ, *գ.* *Արմաւիքի տուրք։*

ԱՇԱՐԱ, *գ.* *Նորածիլ ցորեն։* Մեր աշարէն կանաչեր ի։

ԱՇԱՐԻ, *ած.* *ժիր, աշխույժ։*

ԱՇԱՐԻ ՁԻ, *Նժույգ։*

ԱՇԸՂ, *գ.* *Աշուղ, գուսան։*

ԱՇԸՂՑԱՆ, *ած.* *Աշնանացան։*

ԱՇԻՐ, *գ.* *Քրդական աշիրեթի կռվող ուժը։* Աշիրն էկավ։

ԱՇԼԱՄԱ, *գ. ած.* *Պատվաստված ծառ։*

ԱՇԿՅԵՌՏ, *գ.* *Աշկերտ, արհեստավորի աշակերտ։ Ծան. – Դպրոցականին ասում էին միայն* աշակերտ։

ԱՇՁԻ, *գ.* *Խոհարար։*

ԱՇՔ՞ԱՐԱ, *ած.* *Բացահայտ։*

ԱՉԸՂ, *գ.* *Բաց տարածություն, դաշտավայր, հարթություն։*

ԱՉԻՉ ՈՒԼՆԻԿ, *Կապույտ խոշոր հուլունք, որ չար աչքի դեմ ամրացնում էին երեխայի հագուստին (մեծ մասամբ ուսին)։*

ԱՉԽԸՔՈՑԻԿ, *գ.* *Մանկական խաղ։*

ԱՉԽԸՔՈՒԿ, *գ.* *Մանկական խաղ։*

ԱՉԿ, *գ.* *Աչք։ Ծան. –* Աչկ *բառով գործածվում էին հետևյալ հարադրություններըՙ 1)* աչկել, *2)* աչկով անել, *3)* աչկը առնել, *4)* աչկերն ավրել, *5)* աչկը արնակալել, *6)* աչկը կոց *(=գոց), 7)* աչկը տառնալ, *8)* աչկը տո՛ւս, *9)* աչքից էլնել, *10)* աչկին էրէվալ, *11)* աչկից ինկնել, *12)* աչկի լոս, *13)* աչկին լոս տալ, *14)* աչկը լըցվել, *15)* աչկը խաղալ, *16)* աչկը խփել, *17)* աչկը կոխել, *18)* աչկը կուշտ,

19) աչկը կպցնել, *20)* աչկը խանել, *21)* աչկից խանել, *22)* աչկը ճանպխին, *23)* աչկին մազ պուսնել, *24)* աչկը մըտնել, *25)* աչկ ունենալ, *26)* աչկը պաղել, *27)* աչկը պան տիսնել, *28)* աչկը պանալ, *29)* աչկը պաց, *30)* աչկը պացվել, *31)* աչկին վէրէն, *32)* աչկը վէրէն (պախել), *33)* աչկ տալ, *34)* աչկ տնկել, *35)* աչկի փուշ, *36)* աչկից հեռու, մտքից հեռու, *37)* մարթու աչկն էլնի, անունը չէլնի, *38)* աչկերը կոր՝ տեղտիր կուզի։

ԱՉԿԱԼՈՒՍԱՆՔ՞, *գ. Բարի լուր։*

ԱՉԿԱԿԱՊՈՒԿ, *գ. Մանկական խաղ։*

ԱՉԿՊՈՑԻԿ, *մկ. Անմիջապես, մի ակնթարթում։* Աչկպոցիկ կայնից տըռան։

ԱՊԱՂ-ՃԱՊԱՂ ՏԱՐԱԾՎԵԼ, *Օրորվելով, անորոշ շարժումներով քայլել։*

ԱՊԱՀՈՎ Կ՞ԸՆՏԱՍԵՂ, *Փակվող գնդասեղ։*

ԱՊԱՎԱՄԵՌ, *ած. Անեծք. ապավենդ մեռած, հույսդ կտրված։*

ԱՊԵԿԻՆ, *ած. Վերջնեկ։*

ԱՊԼԱՏԱՐԱԿ, *ած. Հայտնի։*

ԱՊԸՌԿԵԼ, *նբ. 1) Ծառը ճղակոտոր անելով միրգ պոկել։ 2) Խոսքով հարձակվել մեկի վրա, նախատել։* Պէրան իպէց ապըռկավ իմ յախէն։

ԱՊԸՌՆԱԿ, *գ. Փոքրիկ գիշատիչ թռչուն։*

ԱՊԸՍՊՐԵԼ, *նբ. Պատվիրել։*

ԱՊԼԱՊՈՒՋ, *կճ. գ. Գլուխկոնծի։* Ճըժեր խոտի վէրէն ապլապուզ կըտան *(կճ.)*։

ԱՊՈՎ, *1) գ. Հույսով։* Մնացիր եմ քո ապով։ *2) կ. Շնորհիվ, պատճառով։*

ԱՊՐԵՄ-ՉԱՊՐԵՄ, *գ. Ծաղկատեսակ, որի թերթերով գուշակութ՞յուն էին անում։*

ԱՋԱԲ, *վ. Արդյոք։*

ԱՋԱԲԱ, *գ. ած. Զարմանալի բան։*

ԱՋԱԼ, *գ. Օրհաս, մահ։* Աջալն իկեր ի։

ԱՋԱԼԱ, *մկ. Հապճեպ, շուտափույթ։* Էն սըհաթին աջալա շոտ խասյէաք։

ԱՋԱՄ, *1) ած. Բացառի՝ օտար։ 2) փխբ. Պարսիկ։ Ծան. – Վանում կային Աջմոնքներ (Աջէմյաններ), Աջամ-Խաչոյաններ, որոնք բոլորն էլ Պարսկաստանից էին եկել Վան։*

ԱՋԱՄԻ, *ած. Օտարոտի, անփորձ։*

ԱՋԱՄՍՏԱՆ, *գ. Պարսկաստան, Իրան։*

ԱՋԱՅԻԲ, *ած. Զարմանալի։*

ԱՋԸՂ, *գ. Ոխ, քեն, վրեժ։*

Աջըղը խանել, *վրեժը լուծել։*

ԱՋԸՂԵԼ, *չբ. 1) Ոխ, քեն պահել։ 2) Սաստիկ զայրանալ։*

ԱՋԼԱՋԱՅԻԲ, *ած. Անճոռնի, այլանդակ, տարօրինակ։*

ԱՋԼԱՋԷԲ, *ած. Անճոռնի, այլանդակ։*

ԱՋՂՈՒՆ, *կ. Ի հեճուկս։*

ԱՋՈՋ-ՄԱՋՈՋ, *գ. Աշխարհի վախճանին ի հայտ եկող մանր ու գաճաճ մարդկային ցեղ։*

ԱՌ, *գ. Ամոթ։*

ԱՌԱԿԱԹԱՆ, *գ. Կերակրատեսակ, որ պատրաստվում էր չորթանից ու ցորենից և համեմվում սխտորով։*

ԱՌԱԿԵԼ, *նբ. Խայտառակել, վարկաբեկել, անվանարկել։*

ԱՌԱԿ-ՋԱՌԱԿ, *ած. Կոտրատվող, սեթևեթող։*

ԱՌԱԿՈՒԹԵՆ, *գ. Խայտառակություն։* Օր ճիճութէն, առակութէն։

ԱՌԱԿՎԵԼ, *կբ. Խայտառակվել, վարկաբեկվել, անվանարկվել։*

ԱՌԱՃ, *վն. մկ. Առջև։* Տըռան առաճ մէյ խալիվոր էր նըստե *(Վն.)։*

ԱՌԱՃՎԱ, *ած. Անցյալ, նախկին։*

ԱՌԱՎՏՄԱՆԵ *(հնչվում է՝ ա-ռավտ-մանէ)*, *գ. Առավոտից, առավոտվանից։*

ԱՌԱՎՏՄԷ, *գ. Առավոտից։* Աղէյ օր առավտմէ, աղէյ տարին կ՚արնանէ։

ԱՌԱՎՏՈՒՆ, *վն. գ. Առավոտ։*

ԱՌԱՏԱՄ, *գ. Խոփը բռնող, պահող փայտ։*

ԱՌԱՏՄԱՆ, *մկ. Առավոտյան, կանուխ։*

ԱՌԱՏՈՒՆ, *վն. կճ. Լիմ, գ. Առավոտ։* Խիվանդ չըքընավ չուր առատուն *(կճ.)։* Առատուն ըլեմ վեր, խըմոր շաղեմ *(Լիմ)։*

ԱՌԶՐՈՒՄ, *գ. Էրզրում։ Ծան. – Սելջուկ թուրքերը* Թեոդոսիա *(Կարին)* *բերդաքաղաքի վրա տարածել էին մոտակա հայկական* Արծն *նշանավոր վաճառաշահ քաղաքի անունը և այն կոչում էին* Արծն-ռում *(հունական* Արծն*), բայց քանի որ թուրքերը ծ հնչյունը չունեն, այդ պատճառով էլ բերդաքաղաքն անվանում էին* Արզրում, Առզրում։ Էրզրումը *գրական ձևն է, ժողովուրդն ասել է և ասում է* Առզրում։

ԱՌԷՋ, *գ. Սայլի մաս, սայլի երկու կողքին ամրացված երկար փայտ։*

ԱՌԷՋՔ[ə], *գ. Գութանի մաս։*

ԱՌԻՔ[ə], *վն. գ. Առաստաղ։* Մըկներ վոր ընցնին, առիքի՚ց (առըք՚ից) խող կըթափէր *(Վն.)։*

ԱՌՕԸԼԻ, *հթ. գ. Ածելի։*

ԱՌՃԵՎ, *մկ. Առջև:* Առճվանց Ավդո, խտվանց Բաղդո:

ԱՌՃԻՆ, *թ. Առաջին:*

ԱՌՃԻՃ, *գ. Կապար:*

ԱՌՃԿԱՆ, *վն. գ. Իլիկ:* Օր պճցվավ թէ չէ (թճ չէ), կէլնի տանիս, առճկան կըմանի, յա տըլտմի սերմ կըչըռթի *(Վն.)*:

ԱՌՃՆԵԿ, *ած. Անդրանիկ:*

ԱՌՆԱԿԱՅԻՆ, *ած. Անառակ, անզուսպ, վայրահաչ:* Էսա առնակային շուն ապըռկվեր ի վէրէս:

ԱՌՆԱՎՈՒԴ, *գ. Ալբանացի:*

ԱՌՆԵԼ[1], *վն. չբ. Դիպչել:* Վոտ առավ քյարին *(Վն.)*:

ԱՌՆԵԼ[2], *վն. նբ. Վերցնել:*

ԱՌՆԵԼ ԿՅԻՐԿ, *Գրկել:* Մէր ուր էրեխէն առավ (առեց) կյիրկ *(Վն.)*:

ԱՌՆՈՍԻԿ, *գ. Փայտյա գործիք, որի վրա փաթաթվում է մանելու բամբակը կամ բուրդը:*

ԱՌՆՎԵԼ, *կբ. 1) Վիրավորվել վշտացնող խոսքից:* Սիրտն առվեր ի: *2) Թթու ուտելիքից ատամների հարվելը:* Ալուչա կերա, ատամս առավ:

ԱՌՈԽՉ, *ած. Առողջ:*

ԱՌՈՒՆ ԹԸՌԱԾ, *Հավատափոխ:*

ԱՌՈՒՆ ԹԸՌՆԵԼ, *Հավատամքը, գաղափարը փոխել:*

ԱՌՉ, *գ. Արջ:*

ԱՌՉԱՊԼՕ, *գ. Երևակայական հրեշ, հեքիաթներում գործող անձ:*

ԱՌՉԿԱՆ, *վն. հթ.*, **ԱՌՋԸԿԱՆ**, *կճ. գ. Թել մանելու գործիք, իլիկ, թեշիկ:* Պառավ առչկան կըմանէր *(Վն.)*: Պառավ առչըկանօվ թել մանեց *(Կճ.)*: Առչկանով պռ̈ութ կը մանեն *(Հթ.)*:

ԱՌՍԸՉ, *ած. Անամոթ:*

ԱՌՎՈՒԽ, *ած. Կատաղած:*

ԱՌՎՈՏ, *գ. Առվույտ:*

ԱՌՏ, *գ. Արտ:*

ԱՌՏԸՍՈՒՆՔ[8], *գ. Արտասուք:*

ԱՌՏՈՒՆ, *վն. գ. Առավոտ:* Խըվանդ չում առտուն չըքյընավ *(Վն.)*:

ԱՌՑՈՒՆՔ[8], *գ. Արցունք:*

ԱՌՓԻՐ, *գ. Ամոթանք, պատիվ:* Լսա՞ր Ջըլբրենց խարսի պերնից տո̈ւս տըվածը, լէզո̈ւն քյանց գյազըմ կա, իրիսի առփիրը կընճցիր ի:

ԱՌՔԻ ՄՈՒՐ, *1) Թոնրատան առաստաղի սև մուր: 2) փխբ. Անախորժ, տգեղ (մարդ):*

ԱՍԸԼ, *ած. Բնիկ, բուն:*

ԱՍԸԼԶԱԴԱ, *ած. Ազնվական, տոհմիկ:* Ինոր մարթ ասըլզադա ի, խին խճլճվ չի խայնի:

ԱՍԻԴԱ, *գ. Հասուդա, բոբով ճաշ:*

ԱՍԼԱՆ, *գ. Առյուծ:* Ասլանին էքյ, վոոց չըկա, ջիգրին՝ լաճ-վախչիկ:

ԱՍՄԱ ՍՈՒԽ, *Կախան սոխ:*

ԱՍՄԱՐ, *ած. Թուխ:*

ԱՍՆԱՖ, *ած. Արհեստակից։*

ԱՍՊ, *գ. Կտավագործական գործիք։*

ԱՍՊԱԾ *(սեռ.՝ Ասսու)*, *գ. Աստված։* Ասպած ծեր սեր ժուռ պախի։

ԱՍՊԱՐԱԾԻՆ, *գ. Աստվածածին, տիրամայր։*

ԱՍՎԱԾԱԾԻՆ, *տե՛ս* ԱՍՊԱՐԱԾԻՆ։

ԱՍՏՎՈՐ, *գ. Այս անցավոր աշխարհը։* Վոր վէր աստվորին ունի մէյ խատ լաճ տղա։

ԱՍՔ[ց], *գ. Ազգ։*

ԱՍՔ[ց]**Ի**, *գ. Տաբատակալ։*

ԱՍՔՅԱՐ, *գ. Թուրքի զինվոր։*

ԱՎ, *գ. Որս։*

ԱՎԱԼ-ԹԱՎԱԼ, *ած. Հողի, փոշու մեջ թավալված, կորած։*

ԱՎԱԼՎԱ, *ած. Հին օրերի, անցյալ։*

Ավալվա տարին, ավալ ժամանակ, *Անցյալում։* Ավալվա տարին էտընկընաւ շոր վո՞վ էր տիսե։

ԱՎԱՀԻ, *1) ած. Շեն։ 2) գ. Շենություն։*

ԱՎԱՆՑ, *գ. Վանա լճի նավահանգստային հայաբնակ գյուղ։*

ԱՎԱՉ, *վ. Ափսոս։*

ԱՎԱՐ, *ա. 1) Օգնության բացականչություն, ինչպես՝* հավա՛ր, ամա՛ն։ *2) Զարմանք արտահայտող ձայնարկություն։*

ԱՎԱՐԱ, *ած. Անբան, դատարկապորտ։* Ավարա-ավարա կըզըվըռնի։

ԱՎԴԱԼ, *ած. Խենթ։* Ես քո սիրուն ավդալ ու ծուռ։

ԱՎԵԼ[1], *գ. Ավել։* Շատն վէր շատին, ավելի կոթ՝ ախքըտին։

ԱՎԵԼ[2], *ած. Շատ, առատ։*

ԱՎԵԼՈՑԻԿ, *գ. Խաղի տեսակ։*

ԱՎԵՏԻԿ, *գ. Առանց քիստի ցորեն, որ լինում է մեծ մասամբ անջրդի, ոստին հողերում։*

ԱՎԶԸՆՈՑ, *գ. Ակռփի գյուղից դեպի Շահբազի տանող ճանապարհին ավազուտ, հարթ տարածություն, որ Վանի ձիարշավարանն էր։*

ԱՎԷՏՐԱՆ, *գ. Ավետարան։* Կէլու կ՚ըլլսուն ավէտրան կարթացին, ասաց, շոաւտ արեք, նախիրը կընաւց։

ԱՎԻԼԵԼ, *նբ. Ավլել, մաքրել։*

ԱՎԻԼՈՐԹ, *ած. Ավելորդ։*

ԱՎԻԼՈՒՑՔ[ց]**, ԱՎԻԼՈՒԾԿ**[ց]**,** *Լիմ, գ. Ավելցուկ, անպետք բաներ, աղբ։*

ԱՎԻՐԵԼ, *նբ. 1) Ավերել, քանդել, ջնջել։* Եզն տաւտի, եզն ուտի, աշխարհ կավիրի։ *2) Անվանարկել։* Ցըռան կով նախրի անուն կավիրի։

ԱՎԻՐՈՒԿ, *ած. Փչացած, նեխած։* Ավիրուկ ժաժիկ։

ԱՎԼԱԴ, *գ. Սերունդ, զավակ։*

ԱՎՈՐ ՉԷ, *Բացի դրանից,*

դրանից հետո։

ԱՎՈՒՋ, *գ. Ավազան։*

ԱՎՉԻ, *գ. Որսորդ։* Ավչին մէյ լապըստրակ զնրկեց *(Վն.)։*

ԱՎՐԵԼ, *տե՛ս* **ԱՎԻՐԵԼ**։

ԱՎՕ, *գ. Ավետիք անձնանվան կրճատ ձևը։*

ԱՏԱՄԱՄՈՒԹ, *կճ. գ. Աղոթարանից՝ վաղ առավոտից առաջ։*

ԱՏԱՄ ԽԱՆԵԼ, *Պատկեր քաշել նկարել։*

ԱՏԱՏՈՐԵԼ, *1) չբ. Արտակարգ ճիգ ու ջանք գործադրել։* Ճիժը բոյը մէյ թիզ, ատաւտորեց, ատաւտորեց, ծանր տուռը պաւցեց։ *2) նբ. Մեկին համառորեն հետապնդել։*

ԱՏԼԱՍ, *գ. Կերպաս։*

ԱՏԼԱՎՈՐ, *ած. Շատ տգեղ, այլանդակ։* Ատլավորին իրիշկա, կիշիր վոր դեմըտ կ'ա, կըզարխուրիս։

ԱՏՄԱՍՕՐԻԿ, *կճ., ԱՏՄԱՍՕՐԻԿ[3], հթ. գ. Խաշած ցորեն, կանեփ և այլ ընդեղեն, որ լցնում են կաթնատամ հանած երեխայի գլխին՝ մյուս ատամների հանելը արագացնելու համար։* Ատմասօրիկ լըցին ատամ խանուկ ճըժու կըլխին *(կճ.)։*

ԱՐԱ, *գ. 1) Ճեղք։ 2) Ընդմիջում։ 3) Ժամանակ։ 4) Հնար։* Թաքավորու լաճ արա չի տա։ Մուկն արա կըփընտռեր, վոր կատվի ճանկից ազատվեր։

ԱՐԱԲԱ, *գ. 1) Կառք։ 2) Սայլ։*

ԱՐԱԼԸՂ, *գ. Մեջտեղ, արանք։*

ԱՐԱԽՉԻ, *գ. Գլխարկի տեսակ։*

ԱՐԱՂ, *գ. Օղի։*

ԱՐԱՊԱ, *գ. Հարթ կտուրի, տանիքի եզրերի պատը։*

ԱՐԱՐՈՏ, *գ. Երեխաների համար պատրաստված հատուկ ալյուր։*

ԱՐԲԱԲ, *գ. 1) Պաշտպան, տեր։ 2) Ընկեր։*

ԱՐԴԱՆ ԲԻՐ, ՀԱՐԴԱՆ ԲԻՐ, *Մերթընդմերթ, երբեմն-երբեմն։*

ԱՐԵՎ, *գ. 1) Արև։ 2) Կյանք։* Արևըդ մեռնի։ Մէր մըտավ մեր արևը։

ԱՐԵՎԻՐԵՍ, *ած. Արևակողմ, բառոժ։*

ԱՐԵՎՄՏՈՑ, *կճ. գ. Իրիկնապահ։*

ԱՐՋ, *գ. Փափագ, իղձ, կարոտ։*

ԱՐՋԱՀԱԼ, *գ. Աղերսագիր, դիմում։*

ԱՐՋՈՒ, *գ. Ցանկություն։*

ԱՐԸՆԽԸՌԵԼ, *վն. չբ. Կատաղել։*

ԱՐԸՆԽՈՒՄ, *ած. Արյունարբու։*

ԱՐԸՆԽՌԱԾ, *ած. Կատաղած, արյունը գլխին խփած։*

ԱՐԸՆԽՌՈՒ, *տե՛ս* **ԱՐԸՆԽՌԱԾ**։

ԱՐԸՆԾՈՎ, *գ. Արյան ծով։*

ԱՐԹ, *գ. Հարդ։* Արթը քոռն չի, խօ ալրթամանը քոռն ի *(առվում է շատակեր մարդուն)։* Կօվու առաճ մէյ պըստիյ կօղօվ ալրթ լըցեց *(Վն.)։*

ԱՐԹԷՆ, *գ. Հարութիյուն։* Արթէն աղա։ Բէզազ Արթէն *(= Հարութիյուն ամիրա Պէզճյան//Բեզճյան)։*

ԱՐԽԱ, *գ. Պաշտպանութիյուն, թիկունք։*

ԱՐԽԱՅԻՆ, *ած. Պաշտպանված, հանգիստ, անվրդով։*

ԱՐԾԸԹԷ, *ած. Արծաթյա։*

ԱՐԾԸԼԻ, *գ. Ածելի։*

ԱՐԿ, *գ. Պեպեն։*

ԱՐԿԸՆՕՏ, *Լիմ, ած. Պեպենոտ։* Իրես արկընոտ ի *(Լիմ)։*

ԱՐԿՕՏ, *տե՛ս* **ԱՐԿԸՆՕՏ**։ Ախչկա իրես արկոտ էր *(Վն.)։*

ԱՐՄԱՂԱՆ, *1) ած. Ջնաշխարհիկ, հեռու տեղից ընծա բերված, նվեր ուղարկված, շատ գեղեցիկ, սքանչելի։ 2) գ. Իգական հատուկ անուն։*

ԱՐՄԻՒՆՔ[ց], *գ. Արարմունք, վարքագիծ։*

ԱՐՆԱԹԸԹԱԽ, *ած. Արյունաթաթաւ, արյունաշաղախ։*

ԱՐՈՒՆ, *գ. Արյուն։* Արուն արնով չեն լըվա։

ԱՐՈՒՆԼԸՎԻԿ, *ած. Արնաշաղախ։* Էկավ, զնրկեց, արունլըվիկ արավ, կընաց։

ԱՐՊԸՆԷԿ, *գ. Արբանյակ։*

ԱՐՊԸՆՋԱՆ, *գ. Ապարանջան։ Ծան. – Ցախավելի կոթի օղակի համար մնացել է հայերեն բառը, իսկ ձեռքի զարդապարանջանի համար գործ է ածվում թուրքերեն* բլազուկ *բառը։*

ԱՐՊԸՇՈՒՄ, *գ. Մետաքս։* Արպըշմէ շալ թալե վէրէն։

ԱՐՋԱԲԼՕ, *գ. Ուրվական, որով վախեցնում էին երեխաներին։*

ԱՐՏԱՄԵՏ, *գ. Խառն բնակչությամբ մեծ գյուղ ծովափին՝ Քաղաքամեջի հարավային կողմում։*

ԱՐՏԱՐ, *ած. Արդար։*

ԱՐՏՈՒՏԻԿ, *գ. Արտույտ։*

ԱՐՑԸԿԵԼ, *նբ. Արձակել։ 2) Լիմ, Քանդել։* Թէլի խանգ[ի]րց արցըկի *(Լիմ)։*

ԱՐՔԱԴԱՇ, *գ. Ընկեր։*

ԱՐՔ[ց]ԱՎՈՒԹԵՆ, *գ. Երկնային արքայություն։*

ԱՐՔԱՏ, *վն. գ. Խաղողի մատերից էտված ճյուղերը, որոնք օգտագործվում են որպես վառելիք։*

ԱՐՕՐ, *գ. Տառեխ որսացող ծովային թռչուն։*

ԱՓԱԼ-ԹԱՓԱԼ, *մկ. Աճապարելով և աղմուկ բարձրացնելով։*

ԱՓԱԽԱՎԱՐ, *ած. Շատ մութ, անտեսանելի։*

ԱՓԱՇՔՅԱՐԱ, *ած. մկ. Ակնհայտ, բացեիբաց։*

ԱՓԵՂՑՓԵՂ ՏՈՒՍ ՏԱԼ, *Անպատկառորեն խոսել։* Աղօթարան պայծվից, փողնից տուն չի կյա չում իրիկուն, ափեղցփեղ տուս տալով ընցնող-տայրցողի վէրէն։

ԱՓԷ ԽԱԹՈՒՆ, *Ֆրանսիական ժեննեվև անունը հայտնի վեպից վենետիկյան Մխիթարյանների թարգմանութեամբ հայ իրականութեան մեջ մտել էր «Գենովափէի պատմութեյուն» ձևով։ Այս նոր անունը Վանում կիսվել էր, աղքատներին ասում էին Գինօ (Քինօ), իսկ ունևորներին՝ Ափէ, Ափէ խաթուն։*

ԱՓԸՄ, *վն. գ. Բուռ։* Մէյ ափըմ ճուր խըմավ //խըմեց *(Վն.)։*

ԱՓԸՌՏԵԼ, *նբ. Ափով խփել։*

ԱՓԼԸՓԵԼ, *նբ. 1) Մթան մեջ կույրի նման շոշափելով գնալ։ 2) Առհասարակ շոշափել որևէ բան։*

ԱՓՆԻ, *գ. Թումբ։*

ԱՓՐԱՂ, *գ. 1) Նաև՝ Լիմ, Տերև։ Ծան. – Գործ է ածվում հատկապես խաղողի տերևի և այդ տերևով պատրաստվող կերակուրի համար։* Ափրաղով տոլմա։ *2) Հթ. Տոլմա։*

ԱՓՍ ԷՐԹԱԼ, *Մանուկները քայլել սկսել, թաթիկներով փորի վրա սողալ։*

ԱՓՍԱԹԱԹԻԿ, *մկ. Թաթիկներով ափս տալով։*

ԱՓՕ, *կճ. գ. Հայր։* Ափօս ուրախ մարթ էր *(Կճ.)։*

Ա-ՔԼՈՐԻԿ, *գ. Բույսի տեսակ։*

Ա-ՖԱՆԴԻ, *գ. 1) Պարոն։ 2) Գրագետ մարդ։*

Ա-Ֆ ԱՆԵԼ, *Ներել։*

Ա-ՖԱՐԻՄ, *ձ. Կեցցե, հիացմունք արտահայտող բացականչություն։*

Ա-ՖՔԱՐ, *գ. 1) Միտք, մտադրություն։ 2) Բարկություն, ցասում։ 3) Վրեժխնդրություն։*

Բ

ԲԱ, *1) վ. Ինչպե՞ս չէ, իհարկե։ 2) ձ. Զարմանք արտահայտող բացականչություն։*

ԲԱ-ԲԱԹ, *ած. 1) Հավասար։ 2) Հասակակից։*

ԲԱԲԱՅԱՂՈՒԹ, *գ. Լարախաղացի՝ փահլևանի օգնական, խեղկատակ, ծաղրածու։*

ԲԱԲԸՌԼԱՄԻՇ ԷԼՆԵԼ, *Գոռազանալ, հոխորտալ։*

ԲԱԲԻԼ, *գ. Փոքր երեխայի ոտնաման։*

ԲԱԲՕ *(նաև՝ Հթ. Լիմ), գ. 1) Հայր։* Բաբօա, տուռ պաաձ *(Լիմ)։ 2) Պապ։ Ծան. – Գործածվում է միայն գյուղերում։*

ԲԱԴԱԼԱԹ, *գ. Փոխարինություն, քրիստոնյաների համար սահմանված զինվորական տուրք (Բեդելի ասքերիե), որ քրիստոնյան վճարելով ազատվում էր զինվորական ծառայությունից։*

ԲԱԴԱՆ, *գ. 1) Մարմին, իրան։ 2) Պարիսպ։* Վանա՝ քաղաք՝ էարտակ բադան ունի։

ԲԱԴԻԱ, *գ. Ջրի մեծ ման՝ հիմնականում կիսատակառի ձևով։*

ԲԱԴՐԱԲՕ, *գ. Կանաչեղեն, համեմ։*

ԲԱՋԱՋ, *գ. Կտավավաճառ։*

ԲԱՋԱՋՏՈՒՆ, *գ. Կտավավաճառի խանութ։*

ԲԱՋԲԱՆԴ, *գ. Բազուկի բանդ, թևնոց։ Ծան. – Գործածվում է ոչ միայն եկեղեցական զգեստավորման, այլև մենամարտի ժամանակ բազուկն ամրացնելու համար։*

ԲԱՋԻ ԲԻՐ, *մկ. Երբեմն, մեկ-մեկ։*

ԲԱՋԻՍԻՆ, *գ. Ոմն, ոմանք։*

ԲԱՋԻ ՎԱԽՏ, *մկ. Երբեմն։*

ԲԱՋՐԳՅԱՆ, *գ. Վաճառական։*

ԲԱԹԱԼ, *ած. Փուչ, անպետք, ընտասված։*

ԲԱԹԱԽՉԻ, *ած. 1) Խարդախ, խաբեբա։ 2) Պարտքը վերադարձնելուց խուսափող։*

ԲԱԹԸԼՄԻԾ ԱՆԵԼ, *Խաբեբայությամբ կործանել։*

ԲԱԹԼԱ, *գ. Կաթված։*

ԲԱԹԼԱՂ, *1) գ. Ճահճուտ։ 2) փխբ. ած. Խարդախ մարդ, պարտքը չվերադարձնող։*

ԲԱԹԼԵԼ, *նբ. Փչացնել։* Խաղվի կըտոր բաթլեց, տըրից մէյ յան։

ԲԱԹՄԻԾ ԷԼՆԵԼ, *Խրվել ճահճուտի մեջ, կործանվել։*

ԲԱԺ, *գ. Հասակ, բոյ։*

ԲԱԺԿԱՏԱՐ, *ած. Փոքր-ինչ գինովցած։*

ԲԱԼ, *գ. Մեղր։*

ԲԱԼԱ, *գ. Որդի, զավակ։*

ԲԱԼԱ, *գ. Փորձանք։* Ցար պըռոնելը ամոթ չի, թաըրկ անելը բալա ի։

ԲԱԼԱԽ, *Լիմ, գ. Գոմեշի ձագ։*

ԲԱԼԱՄ, *գ. Որդյա՛կս, զավա՛կս (կոչական ձև)։*

ԲԱԼԱՍԱՆ, *գ. Դեղ, դարման։*

ԲԱԼԱՔ, *ած. Խայտաճամուկ, սևախառն սպիտակավուն։*

ԲԱԼԱՔՎՈՐՎԵԼ, *կբ. Մաշկը վերքերով ծածկվել, մոլոքոր հիվանդությամբ հիվանդանալ։*

ԲԱԼԷ[1]*, վ. Այո՛։* Բալէ, աֆաանդըմ, բալէ։

ԲԱԼԷ[2]*, վ. Գեթ, գոնե։* Բաալէ տոն կյաս զիկ հէօք *(=օգնես)։*

ԲԱԼԸԷՆ, *գ. Քար*։ Շամիրամա Ծամքՙարի կյանդյոր ճոչ բալըէն տընենք վէր թէփնէրացս, էրթանք չյում էրկու խնճոր մըզըրգաբոյ *(=նիզակ)* տեղ։

ԲԱԼԹԱ, *Լիմ, գ. Կացին*։

ԲԸԼՈԻ, *ած. Հայտնի*։

ԲԸԼՈԻԼ, *գ. Խանձարուր*։

ԲԱԼՈԻԼԵԼ, *նբ. Նորածին երեխային բալուլի՝ խանձարուրի մեջ առնել*։

ԲԸԼՔԻ, *վ. Գուցե, թերևս*։ Բյօլքին ցանիցին, չըպուսավ։

ԲԸԽԻԼ, *գ. Նախանձ*։

ԲԸԽԼԵԼ, *չբ. Նախանձել*։ Ախքՙըտներ կըբյօխըլնան, ինոր փայ կըխըլեն։

ԲԱԽԿԱԼ, *գ. Նպարավաճառ*։

ԲԸԽՏԱԿՈԾՎԵԼ, *չբ. Իր բախտի վրա լաց լինել*։ Շատ կըբյօխտակոծվի վեր ուր հալին։

ԲԸ[3]ՀՉԻ, *գ. Պահակ*։

ԲԸՂ[1], *գ. Այգի*։

ԲԸՂ[2], *գ. Բմ. Տրեխի քուղ*։ Չարխի բյօղեր խօրօտ ի *(Բմ.)*։

ԲԸՂ-ԲԸԽՉԸ, *գ. Այգի, պարտեզ, բանջարանոց*։

ԲԸՂԴԸՇԻ, *գ. մկ. Ծալապատիկ*։ Բյօղդյօշի արաց օդի մէչտեղ։

ԲԱՂՄ, *գ. Կտավատի հարդ*։

ԲԸՂՍ, *գ. Գրազ*։

ԲԸՂՍ ՊԸՌՆԵԼ, *Գրազ գալ*։

ԲԱՅԸԼՄԻՇ ԷԼՆԵԼ, *1) Խելքը թռցնել։ 2) Սաստիկ հափշտակվել*։

ԲԸՅԼԸ *(նաև՝ Լիմ), գ. Բակլա*։

ԲԸՅԼԻ ՃՈՒՐ, *1) Բակլայի ջուր։ 2) փխբ. Անսնունդ ուտելիք*։

ԲԱՅՂՈՒՇ, *գ. Բու*։

ԲԸՆԴ, *գ. Թումբ, կապան*։

ԲԱՆԴԵՐ, *գ. Ձկնորսության համար գետի կապը մի ափից մյուսը*։

ԲԸՆԴԻՄԱՀՈԻ, *գ. Ձկան կապան*։ Բյօնդիմահու կՙետ։

ԲԱՆՋԱՄԱՔ[3], *գ. Նմանվելը*։

ԲԱՆԹՈՂՍ, *գ. Աշխատանքի ավարտ*։

ԲԱՇ, *1) գ. Գլուխ։ 2) ած. Գլխավոր*։

ԲԱՇԱՐԵԼ, *չբ. Գործը գլուխ բերել, կատարել կարողանալ*։

ԲԱՇԻԲՕՋՈԻԿ, *գ. Ապերասան, անկանոն զորք (բառացի՝* գլուխը խառնված*)*։

ԲԱՇԼԱՑԵԼ, *նբ. Սկիզբը դնել, ձեռնարկել*։

ԲԱՇԼԸՂ, *գ. Գլխանոց*։

ԲԱՇԿԱ, *գ. Ուրիշ, այլ*։

ԲԱՋԱՂ[1], *գ. Սրունք*։

ԲԱՋԱՂ[2], *գ. Թղթախաղի վալետը՝ երիտասարդը*։

ԲԱՋԱՂԼԻ, *գ. Թուրքական ոսկեդրամ, որ կանայք գործածում էին որպես զարդ*։

ԲԱՋԱՆԱՂ, *գ. Քենակալ*։ Յոթ բաջանաղ իրար խետ կէրթէն, ասին՝ մէյ մարթ չըկա, խետը խօսէնքՙ։

ԲԱՋԻ, գ. *Ձույր։* Խուռիկ բաջի։

ԲԱՋԻԿ, գ. *Կարմրագույն կոշիկ։*

ԲԱՌԱԴԻ, *1) ած. մկ. Իզուր, ապարդյուն։ 2) մկ. Անփութորեն։*

ԲԱՌՈԺ, *ած. Արևկող։*

ԲԱՍ, *1) մկ. Բնավ։ 2) վ. Հապա։ 3) գ. Լուր։ 4) գ. Ջրույց, պատմություն։*

ԲԱՍ ԱՆԵԼ, *Պատմել, խոսակցել։* Պառվըներ նըստեր ին ալվալ տարվա բաս կանին *(Վն.)*։

ԲԱՍՏՈՆ, գ. *Եվրոպական ձեռնափայտ։*

ԲԱՍՏՈՒՐՄԱ, գ. *Ապուխտ։*

ԲԱՎԱՐ, գ. *Վստահություն։*

ԲԱՐԱ, գ. *Ջափ, առարկայի մեծությունը։* Ես էլա պերթի բարա։

ԲԱՐԱՔՅԱԹ, գ. *Լիություն, առատություն։*

ԲԱՐԲԱՐ, գ. *Սափրիչ, վարսավիր։*

ԲԱՐ-ԲԱՐԽԱՆԱ, գ. *Ամբողջ բեռը։*

ԲԱՐԲԱՐԽԱՆԱ, գ. *Վարսավիրանոց, որտեղ նաև սուրճ և թեյ են մատուցում և թավլու՝ նարդի խաղում։*

ԲԱՐԴԱ, գ. *Հնձված խոտի չափ, երեսուն խրձի դեզ։*

ԲԱՐԴԻՍԱԲԱԽ, գ. *Նարգիզ։*

ԲԱՐԵ(ՅՄ), վ. *Գոնե։*

ԲԱՐԵՄԲԱՐ, *ած. Հավասար։*

ԲԱՐԵՄԲԱՐԱՆԱԼ, *չբ. Հավասարվել։*

ԲԱՐԹԵԼ, *նբ. Դիզել։*

ԲԱՐԻՇԵԼ, *չբ. 1) Սակարկել։* Բարիշեցին տաս կուռուշ։ *2) Հաշտվել։* Արի բարիշենք, միա կենա խըռօվ։

ԲԱՐԻՔՅԱԼԱ, գ. *1) Բառացի՝ Ալլահի բարիքները։ 2) Բարեմաղթանքի արտահայտություն։*

ԲԱՐԽԱՆԱ, գ. *Տունուտեղ, եղած-չեղած։ Բառացի՝ բար (=բեռ)+ խանա (=տուն)։*

ԲԱՐՄԱՂ ԱԼՈՒՉԱ, *Մատի նման երկարուկ և քաղցր սալոր։*

ԲԱՐՈՒԹ, գ. *Վառոդ։*

ԲԱՐՈՒԹՉԻ, գ. *Վառոդագործ։*

ԲԱՐՏԱՍԱԲԱԽ, գ. *Նարգիզ։*

ԲԱՐՖԻԿ, *Հթ. Կճ. գ. Հատուկ թիակ՝ ձյունը կտուրներից ցած թափելու համար։* Փէտէ բարֆիկօվ ծուն կըքէրինք *(Կճ.)*։

ԲԱՔՍԻՄԱԹ, գ. *Ջորացրած հաց զորքի համար, սուխարի։*

ԲԱՖՐԻԿ, *Վն. Հթ. Կճ. գ. 1) Փայտյա կոթավոր գործիք, որով կալսած կալը ժողովում են մի տեղ։* Բաֆրիկ պեա՛, ցորեն ժօղվիա՛, տաար *(Վն.)*։ Բաֆրիկ պեր, կալ ժօղվենք՝ *(Հթ.)*։ *2) Հատուկ թիակ՝ ձյունը կտուրներից ցած թափելու համար։*

ԲԷԱԲՈՒՌ, *ած. Անամոթ, անպատիվ։* Բէաբուռ իսան ի, ինոր խաւմար ամօթ չըկա։

ԲԷԲԱԽՏ, *ած. Անբախտ։*

ԲԷԲԼՈՒ ԱՆԵԼ, *Ծամածռութիւններ անել, կապկել։*

ԲԷԳՅԻՆ, *ած. Անգին, թանկարժեք։*

ԲԷԳՅԻՐ, *գ. Բեռնակիր ձի։*

ԲԷԳՅՈՒՄԱՆ, *ած. Անտեղյակ, անիրազեկ։*

ԲԷԴՅԱՎԱ, *գ. Ջրի աշխատանք, կոռ։* Բեդյավա պանիցինք։

ԲԷԴՈՒՎԱ, *ած. Անեծք. առանց աղոթքի մնալը։*

ԲԷՋԱՐ ԷԼՆԵԼ, *Հոգնել։* Հաչա *(=իրավունքս, վարձս)* ուզելով էլա բէզար։

ԲԷՋՐԵԼ, *չբ. 1) Զանձրանալ։ 2) Հոգնել։* Շատ պանելուց (պանիլուց) բէզրավ *(Վն.)*։

ԲԷԹԱՐ, *ած. Ավելի վատ։* Ջրո թանը ջրից բէթար ի։

ԲԷԽԱԲԱՐ, *ած. Անտեղյակ, անիրազեկ։*

ԲԷԽԵՐ, *ած. Վնասաբեր, անօգուտ։*

ԲԷԿ, *գ. Քրդական ցեղապետի տիտղոս, որ թուրքերը փոխառել և դարձրել են* բեյ։

ԲԷԿՋԱԴԱ, *տե՛ս* ԲԷՅՋԱԴԱ։

ԲԷՀ, *գ. Կանխավճար։*

ԲԷՀՐԵԼ, *նբ. Պախարակել։*

ԲԷՄՈՒՐԱԴ, *ած. Անեծք. զուրկ լինել մարդուն զարդարող իղձից, փափագից։*

ԲԷՄՈՒՐԱԴԱՄԵՌ, *ած. Անեծք. մեռնել առանց փափագած նպատակին հասնելու։*

ԲԷՄՈՒՐԱՋ, *տե՛ս* ԲԷՄՈՒՐԱԴ։

ԲԷՅ, *գ. Էֆենդուց բարձր և փաշայից ցածր տիտղոս։* Ծան. – Բեկ բառի թուրքերեն տարբերակը։

ԲԷՅՋԱԴԱ, *գ. Բեյի որդի, ազնվական։*

ԲԷՅԼԷՐԲԷՅԻ, *գ. Մեծ բեյ։*

ԲԷՅՀՐԵԼ, *վն. չբ. Բամբասել։* Խարս ուր տալոչ կըբէյհրէր *(Վն.)*։

ԲԷՇԻԲԻՐԼԻԿ, *Բմ. գ. Հինգ ոսկուց վզնոց։*

ԲԷՈՒՂՈՒՐ, *ած. Զարաբաստիկ, հաջողություն չբերող (քայլ արարմունք)։* Բէուղուր մարթ իս։

ԲԷՉԱՐԷ[1], *գ. Գերաններից շինված նավ՝ լաստանավ։*

ԲԷՉԱՐԷ[2], *1) վ. Ի՞նչ արած (ճակատագրի դեմ)։ 2) ած. Անճար։*

ԲԷՋԱՐԵԼ, *նբ. Խնամել, հոգ տանել։*

ԲԷՋԸՆՍ, *ած. 1) Անտոհմ։ 2) փխբ. Անտուն, անտեր։*

ԲԷՋԻՆՍ, *տե՛ս* ԲԷՋԸՆՍ։

ԲԷՍԼԱՄԻՇ ԱՆԵԼ, *Մնուցել։*

ԲԷՐ, *գ. Ոչխարների մակաղատեղ։*

ԲԷՐՎՈՐ, գ. *Բէր՝ մակաղատեղ գնացող։*

ԲԷՔՅԱՐ, ած. *1) Ամուրի։ 2) Անպետք մարդ։*

ԲԷՔՅԻՐ, գ. *Պառաված ձի։*

ԲԷՕԲԼԻ ԱՆԵԼ, *Ծամածռութիւններ անել, ծաղրել։*

ԲԷՕԴ, *1) ած. Փուտ, որդնակեր։ 2) գ. Բդօղ որդի կերած փայտեղեն։*

ԲԷՕՋ, ած. *Սևախառն սպիտակ։* Բէօզ եզ։

ԲԷՕԼ, ած. *Առատ։*

ԲԷՕԼՈՒԹԵՆ, գ. *Առատութիւն։*

ԲԷՕԼՈՒԿ, գ. *Գումարտակ։*

ԲԷՕԼՕԼԱՆ, գ. *Երևակայական կենդանի։* Բէօլօլան էրտիսն ի վեր, բէօլօլան մեր տան վիրև։

ԲԷՕԼՕՃ, գ. *Միջատ։*

ԲԷՕԿԼԻԿ, գ. *Երեխաների վզի գոգնոց։*

ԲԸԴՈՏ, գ. *Փայտի, չոր մրգի ցեց։* Փէտի, ամբրիավի բըդոտ *(Վն.)։*

ԲԸԴՐԵԼ, չբ. *Լուսինը երևալ բոլորել և անհետանալ։*

ԲԸԴՐԻ ԼՈՒՍՆԱԿ, *Լիալուսին։*

ԲԸՋԻԿ, գ. *Ծվեն, կտոր։*

ԲԸՋՄԱԽ, գ. *Տնագործական մեխ, որ պատրաստում էին անասուններին պայտելու, նաև կոշիկների տակ խփելու համար, որպեսզի քայլելիս չսահեին։ Ծան. – Բառը հավանաբար առաջացել է* բուզ՝ *«սառույց» և* մեխ *բառերից, իմա՝ «սառույցի մեխ»։*

ԲԸՋԻԿ(Յ)-ԲԸՋԻԿ ԱՆԵԼ, Բզկտել։ Շըներ ինոր փափախ բըզիյ-բըզիկ արին *(Վն.)։*

ԲԸԺՈՏ, ած *Ճպռոտ։*

ԲԸԺՐԿՏԵԼ, նբ. *Բաժան-բաժան անել։*

ԲԸԼԲԸԼԱԼ, չբ. *Արագորեն խոսել։*

ԲԸԼԲԸԼԱՑՆԵԼ, չբ. *Արագորեն ու խառնաշփոթ խոսել, դուրս տալ։*

ԲԸԼԲՈՒԼ, գ. *Սոխակ։*

ԲԸԼԲՈՒԼԻ ԼԷՋՈՒ, *Վանում տարածված ծածկալեզուներից մեկը, որով խոսելիս ամեն մի ձայնավորի վրա ավելացնում էին* լպ *բաղաձայնները։ Ծան. – Վանում կային նաև* ճընճըղկերեն, ագռավերեն (կըռկերեն), գորտերեն *և այլ ծածկալեզուներ։*

ԲԸԼԷՕԼ, գ. *1) Ուլունք։ 2) Հողե սնդուկ։*

ԲԸԼԸՆԴԵԼ, նբ. *Բլանդել, մեծ-մեծ կարել։*

ԲԸԼԹ-ԲԸԼԹԱԼ, չբ. *Եռալ։*

Բ'ԸԼՈՒԼ, *Բմ. Կճ., ԲԸԼՈՒԼ, Լիմ, գ. Սրինգ։* Չօբան բ'ընլուլ կըփընչի *(Կճ.)։*

ԲԸԼՋԵՄ, գ. *Յախու։*

ԲԸԼՕՋ, գ. *Միջատ։*

ԲԼԽԷՐ, *ած.* *Վնասաբեր, անօգուտ։*

ԲԼԽԿԱԼ, *չբ.* *Ծանրաբեռնված ստամոքսի կերածի հոտը բերանից հանել։*

ԲԼԽԿԲԼԽԿԱԼ, *չբ.* *1) Նեղ բերան ունեցող ջրամանից ջուրը խմելիս կամ թափվելիս ձայն լսվել։ 2) Հարբած մարդը խոսել և խոսելիս գինին քթից թափվել։*

ԲԼԽՏՈՐ, *ած.* *Պղտոր։*

ԲԼՂՈՒՂ, *գ.* *Յուղի, մեղրի կավե փոքրիկ աման։* Բղուղըմ եղ պիրեց մյէ։

ԲԼՆԱ, *գ.* *Որմնադիր։*

ԲԼՆԴԻ, *գ.* *Օրորոցի կապ։*

ԲԼՆԴՌԵԼ, *նբ.* *Շուլալել, անկանոն ու մեծ-մեծ կարել։*

Բ'ԸՇՏԵԼ, *Բմ. նբ.* *Կոպտել։*

Բ'ԸՊՈՒԿ, *Բմ. գ.* *Փետուր։*

ԲԸՌ, *գ.* *Հոտից անջատված ոչխարների խումբ։*

ԲԸՌԱԼ, *չբ.* *Կովը բառաչել։*

ԲԸՌԱՆ, *գ. ած.* *Խոշոր և ծեր կատու։*

ԲԸՌԲԸՌԱՆ, *ած.* *Մեծախոս, պոռոտախոս։*

ԲԸՌԲԸՌԹԱՑՆԵԼ, *չբ.* *Մեծ-մեծ խոսել, պոռոտախոսել։*

ԲԸՌԹԲԸՌԹԵԼ, *նբ.* *Հրել, բոթել։*

ԲԸՌԻ, *ած.* *Կոպիտ, անտաշ։* Բըռի մարթուն մըսաֆրի օդան չեն տանե։

ԲԸՌԻԿ, *գ.* *Փշի տեսակ, որ հավաքում են որպես վառելիք։*

ԲԸՌՉԱՄ, *գ.* *Գլխի հետևից թողած մազեր (տղամարդու), ինչպես նաև ձիու, էշի, ջորու վզի մազերը։*

ԲԸՌՕ, *գ.* *Եվրոպական ոճի փայտե շարժական պահարան, բուֆետ։*

ԲԸՍՏՐԵԼ *(նաև՝ Հթ.)*, *նբ.* *Հորինել։* Խառս տալոչ վըրէն պէն ի բըստըրե *(Հթ.)*։ Տո՛ւ շատ կըբըստրես *(Վն.)*։

ԲԸՍՐԱՆՔ՞, *գ.* *Ցնդաբանություն, անկապ խոսակցություն։*

ԲԸՍՐԵԼ *(նաև՝ Լիմ)*, *չբ.* *Զառանցել, անկապ-անկապ դուրս տալ։*

ԲԻԲԸՐ, *գ.* *Պղպեղ։*

ԲԻԹԱՎԻ, *ած.* *Մարմնի մասերը ընդարմացած, փայտացած։* Վիզըս բիթավի ի տաՙրցի։

ԲԻԹՈՒՆ, *մկ.* *Ամբողջը, բոլորը։*

ԲԻԺԻԿ, *գ.* *Շատ փոքր հորթիկ։*

ԲԻԼԱ, *1) վ.* *Մինչև անգամ։ 2) կ. Առանց։* Բիլա քեզ։ Բիլա Աստված տեղ նըստի, բիլա ճո՛ւճ տեղ մի նըստի։

ԲԻԼԱ-ԲԻԼԱ, *մկ.* *Գիտենալով իսկ, կամոք։*

ԲԻԼԱՌԴՕ, *գ.* *Բիլիարդ։*

ԲԻԼԱՔ՞Ի, *շ.* *Թեկուզ, մինչև իսկ։*

ԲԻՆԱԿԴԱԾ, գ. *Դռան կողքին, փողոցում նստարանի տեղ ծառայող մեծ քար։* Խնամին իկեր ի, բինակդաշին նըստեր ի։

ԲԻԶԱՐԱ, *ած. Անճար։* Աշուն չունի, կ՚ուրուն նըխշուն ի, ամառ՝ ամիրա, ձմեռ՝ բիչարա։

ԲԻԶԻՄ, գ. *Ձև։*

ԲԻԶԻՄԼԻ, *ած. Ձևավոր, վայելուչ։*

ԲԻԶԻՄՍԸԶ, *ած. Տձև։*

ԲԻՍԲԻԹՈՒՆ, *մկ. Բոլորովին, ամբողջովին։*

ԲԻՐԱ, գ. *Գարեջուր։*

ԲԻՐԴԱՆ, *մկ. Միանգամից, մեկից, մեկեն։*

ԲԻՐԴԱՆԲԻՐ, *մկ. Հանկարծակի, անսպասելի։*

ԲԻՐԻՆՋԻ, *1) թ. Առաջին։ 2) ած. Առաջնակարգ։* Ծան. – Իքինջի *(=երկրորդ)*, ուչնջի *(=երրորդ)*, դորդնջի *(=չորրորդ)*, բէշնջի *(=հինգերորդ)*, ալթնջի *(=վեցերորդ)*, եդընջի *(=յոթներորդ)*, մյուս դասականները բարբառում չկան։

ԲԻՐԼԱՂՄԱՔ[ʁ], գ. *Միանալը, միավորվելը։*

ԲԼԱԿ, գ. *Դաստակ։*

ԲԼԱԶՈՒԿ, գ. *Ապարանջան։*

ԲՅՈՒԹԱ, գ. *Փունջ։* Առնեմ երթամ վարդի բյութէն։

ԲՆԱԴԱ, գ. *1) Գութանի մեծ շղթան։ 2) Կալի անասուններին բերանի կապ՝ ցորեն չուտելու համար։*

ԲՆԱԿՌԵԼ, չբ. *Որևէ տեղ հաստատվել։* Կըյնացիր-էկար վերչը մի խին տան բնակռեցիր։

ԲՆԱՂՈՒՆ, գ. *Ջրաղաց տանելու մաքուր ցորեն։*

ԲՈՐԱՆԻ, գ. *Բանջարեղենից (ֆասուլյա, կանաչ պոմիդոր և այլն) յուղից ու ձվից պատրաստված կերակուր։*

ԲՈՐՅԱԶ, գ. *Հյուսիսից փչող ցուրտ քամի։* Բորյազ փըչից, ծըմէռն էկավ։

ԲՈՒ, գ. *Մեկ. Ջուր։*

ԲՈՒԴԱԼԱ, *ած. Ապուշ, խենթուկ։* Ինոր չըվանին խուրց չեն տընի, բուդալայի մէյն ի։

ԲՈՒԴ ՏԱԼ, *Կովը յուղով տալ։* Ծան. – *Կովը պահ են տալիս կով չունեցողին, որպեսզի նա օգտվի, բայց տարեկան որոշ քանակությամբ յուղ տա կովատիրոջը։*

ԲՈՒԼԱՄԱ, *ած. Պղտոր։*

ԲՈՒԼԱՆԸԽ, գ. *Պղտոր ջուր։*

ԲՈՒԼԱՇԸՂ, *ած. Խառնակիչ։*

ԲՈՒԼՂՈՒՐ, գ. *Ձավար։*

ԲՈՒԽԱԽ, գ. *Կրկնակզակ։*

ԲՈՒԽԱՐԻԿ, գ. *Ծխնելույզ։*

ԲՈՒԽՏԱՆՔ[ʁ], գ. *Ջրախոսություն, զրպարտություն։*

ԲՈՒԽՈՒՐԴԱՆ, գ. *Խնկաման։*

ԲՈՒՂ, *գ. Շոգի, գոլորշի։* Վոր բուղը ճաշի մեչ մընա, խուփ չըտընիս պուտկի պերան, փըթիր մը տիր։

ԲՈՒՂԱ, *գ. Ցուլ։*

ԲՈՒՆԲԱՐԱՔ[8] **ԷԼՆԻ**, *Բարի վայելում լինի։*

ԲՈՒՆԻԱԹ, *գ. 1) Հիմք։ 2) Ծագում։*

ԲՈՒՆԻԿ, *գ. Կաշեպատ մաղ։* Մըդրըքներն *(գնչուներն)* իկեր են բունիկ կըծախեն։

ԲՈՒՉՈՒԽ, *գ. Կես։*

ԲՈՒՋԱԽ, *Բմ. գ. Անկյուն։*

ԲՈՒՌԿՈՒՆ, *գ. Գայլիկոն, շաղափ։*

ԲՈՒՌՄԱ, *գ. Բրդուճ, լավաշի մեջ փաթաթված ձու, պանիր, միս և այլն։*

ԲՈՒՌՆՈՒԹԻ, *գ. Քթախոտ։* Բուռնութու կութին տար էս յան։

ԲՈՒՍՈՒԼՏ, *գ. Ջև։ Ծան. – Գործ է ածվում* բոյ-բուսուլտ *ձևով։ Նույնիմաստ միացություններ են* բոյ-բուսունտ *և* բոյ-բուսաթ՝ *վայելուչ հասակ։*

ԲՈՒՐՋ, *գ. Բերդ, բերդապարիսպ։ Ծան. – Հեքիաթներում հաճախ հիշատակվում է* Բուրջի բալաք՝ *ձևով, որ գտնվում էր Ջզիրի տանող կամրջի մոտ։*

ԲՐԻՆԴԱՐ, *ած. գ. 1) Վիրավոր։ 2) Նահատակ։*

ԲՐԻՇԱԿ, *ած. գ. Քանդված, ավերակ։*

ԲՐՕՐ, *ած. Պղտոր։*

ԲՐՕՐՎԵԼ, *կբ. Պղտորվել։*

ԲՕՋ, *վն., ԲՕՋ, հթ. ած. Շեկ (կենդանու մասին)։* Բöզ ծի, ճöրի, էշ, յեզ *(վն.)։*

ԲՕՋՄԻՇ ԱՆԵԼ, *Խանգարել փչացնել։* Էն ղարաչին խաղը բօզմիշ արավ ու կընաց։

ԲՕՋՈՒՂՉԻ, *ած. Կռվարար, կարգը խախտող, խաղը խանգարող։*

ԲՕԼ, *ած. Առատ։* Բօ՛լ ի։

ԲՕԼՈՒԹԵՆ, *գ. Առատություն։*

ԲՕԼՕԼԱՆ, *գ. Երևակայական կենդանի։*

ԲՕԼՕՃ, *գ. Միջատ։*

ԲՕԽՉԱ, *գ. Ծրար, մեծ թաշկինակով կապոց։*

ԲՕՂԱՋ, *վն. Հթ. կճ. գ. Կոկորդ։* Ծըկան փուշ մընաց բօղզի մէչ *(վն.)։*

ԲՕՅ, *գ. Հասակ։*

ԲՕՅԱ, *գ. Ներկ։*

ԲՕՅԱԼԻ, *ած. Ներկված։*

ԲՕՅԱԽԱՆԱ, *գ. Ներկատուն։*

ԲՕՅԷԲՕՅ, *մկ. Ամբողջ հասակով մեկ։*

ԲՕՅԼԻ, *ած. Բարձրահասակ։*

ԲՕՅԼԻ-ԲՈՒՍԱԹԼԻ, *ած. Բարձրահասակ ու գեղեցիկ։*

ԲՕՇ, *ած. 1) Առատ, հորդ, Քայրեզի ճöր էս տարի բօշ ի։ 2) Դատարկ։* Ամանը բօշ ի։

ԲՕՇԱ, *գ. Գնչու։* Բօշայից փաշա

չէլնե։ Ծան. – Հայախոս գնչուներին ասում էին բօշա, *իսկ քրդախոս գնչուներին՝* մըդըըբ։

ԲՕՃ-ԲՕՂԱՋ, *ած. Վայրահաչ։*

ԲՕՌԱԼ, *Հթ. չբ. Գոռալ։*

ԲՕՌՈՒ, *գ. Խողովակ, փող։*

ԲՕՌՕՂԱՆ, *գ. Շեփոր, փող։*

ԲՕՌՕՂԱՆՋԻ, *գ. Շեփորահար, փողհար։*

ԲՕՍՏԱՆ, *գ. Սեխի, ձմերուկի, վարունգի արտ։*

ԲՕՏ, *Հթ. գ. Հարմարանք, որով ջրաղացի ջուրը սրընթաց իջնում է։* Ճա̈ղցի բօտ քյարից կըշինէն *(Հթ.)*։

Գ

Գ^{Յ}Ա̈Գ^{Յ}Ո̈Ճ, *ած. 1) Դանդաղաշարժ։ 2) Ծույլ, ալարկոտ։ 3) Ապաշնորհ։*

Գ^{Յ}Ա̈Ձ[1], *Կճ. Կրակ անելու կպչան։* Գյա̈զօվ կըրակ արին *(Կճ.)*։

Գ^{Յ}Ա̈Ձ[2], *գ. Երկարության չափ, արշին։* Քյո գյա̈զով քյե կըտավ չեն տա։

Գ^{Յ}ԱՁԳ^{Յ}ԱՁՈՒԿ^{Յ}, *Հթ.*, **Գ^{Յ}ԱՁԳ^{Յ}ԱՁՕԿ^{Յ}**, *Լիմ, գ. Եղինջ։*

Գ^{Յ}Ա̈ԹԱ̈, *գ. Բաղարջ։* Ամեն օր տէրտէր գյա̈թա̈ չի ուտի։

Գ^{Յ}ԵԺ, *ած. Շշմած, ցնդած։*

Գ^{Յ}ԵԺՌԱՑՆԵԼ, *նբ. Շատ խոսելով մեկի գլուխը տանել, շշմեցնել, թմրեցնել։*

Գ^{Յ}ԵԺՌԻԼ, *չբ. Շշմել, ցնդել, խելռել։*

ԳԵՆՈՎԱՓԷ, *գ. Ժընևեվա անունից առաջացած անձնանուն։ Ծան. – Վանում այդ անունը կիսվել էր. աղքատներին ասում էին* Գինօ, *ունևորներին՝* Ափե, Ափեխաթուն։ *Գյուղերում տարածված էր* Ափէխաթուն *ձևը, որովհետև քաղաք այցելող գյուղացիները, վայելելով ունևոր Ափեխաթունների հյուրընկալությունը, ի նշան երախտագիտության, հաճախ իրենց դուստրերին կոչում էին* Ափէխաթուն։

ԳԷՁԱ̈ԼԻ, *գ. Ծառաստան, զբոսայգի։*

ԳԷՁՄԻՃ ԷԼՆԻ, *Անցած լինի. մխիթարական խոսք։*

ԳԷՋԱԼԸՂ, *գ. Գիշերանոց։*

ԳԷՕ, *վ. Ահա, ահավասիկ։*

ԳԷՕ ԴԱՍ, *Ահա այստեղ է, մոտիկ է։*

ԳԷՕՋԼԻԿ, *գ. Ակնոց։*

ԳԷՕԼ, *գ. Լիճ։*

ԳԷՕՀԱՆ, ԳԷՕՀԱՆՋ, *վ. Ահավասիկ, ահա։*

ԳԷՕՂՎԷՆՔ՞, *գ. Դիզված անկողիններ։* Կատուն վէր գէօղվէնքին, շունը՝ տըռան տակ։

ԳԷՕՄՐՈՒԿ, *գ. Մաքսատուն։* Գէօմրուկ վոր մըտա, զաթի քըրտնած ի, վոր տո՛ւս էկա, շորերըս ճո՛ւր ին տա՛րցի։

ԳԷՕՅԱ, *վ. Իբրև թե։*

ԳԷՕՆՈՒԼԻ, *գ. ած. Կամավոր։*

ԳԷՕՌ, *գ. Թուրքի գերեզման։*

ԳԷՕՌԲԱԳԷՕՌ ԷԼՆԵԼ, *Անեծք. գերեզմանափոխ լինել։*

ԳԷՕՌԵՐ, *գ. Թուրքի գերեզմանատուն։*

ԳԷՕՌՆԱԴԱԲ ԷԼՆԵԼ, *Անեծք. գերեզմանը պատռվել ու դուրս գալով շրջմոլիկ դառնալ։*

ԳԷՕՌՎԵԼ, *կբ. չբ. 1) Թաղվել։ 2) Սուզվել ճահիճի մեջ։ 3) Կորչել, անհետանալ։*

ԳԷՕՏԱՆԱԼ, *չբ. Գոսանալ, չորանալ։*

Գ՞ԸԼԳ՞ԸԼԱԼ, *չբ. Գլգլալ, կարկաչել։*

Գ՞ԸԼԹԱԼ, *չբ. Բերանից փուքս արձակել։*

Գ՞ԸԼՈՒԼ, *գ. Սիսեռի նմանվող պատիճավոր հունդ։*

Գ՚ԸԼՕԽ, *կճ. գ. Գագաթ։* Բ՚ան ցըրցավ սարի գ՚ըլօխ *(կճ.)*։

Գ՞ԸԽՇԱԼ, *չբ. Համարձակվել։*

Գ՞ԸՂԱԼ, *չբ. Խոսել սկսելուց առաջ երեխան ուրախության և տխրության ձայներ հանել։*

Գ՞ԸՄՓԱԼ, *չբ.1) Բարձր տեղից գմփոցով ընկնել։ 2) Լիմ, Բոնկվել (կրակը)։* Կըրակ՝ մէ անքա՛մ գ՚ըմփաց *(Լիմ)*։

Գ՞ԸՄՓՈՑ, *գ. 1) Դղրդոց։ 2) Հրացանաձգություն։*

Գ՞ԸՄՓՈՑ-Գ՞ԸՄԳ՞ԸՄՓՈՑ, *գ. տե՛ս* **Գ՞ԸՄՓՈՑ**։ Գ՚ըմփոց-գ՚ըմգ՚ըմփոց ինգա՛վ Էկէստար։

ԳԸՇԽԵԼ[1], *չբ. Համարձակվել, սիրտ անել։* Չէր գըշխի ինոր օրով։

ԳԸՇԽԵԼ[2], *գ. Խնոցու կարագը հանելուց հետո մնացած հեղուկ։*

ԳԸՇՏՈՒՆ, *գ. Աբեղայացու, մազեղեն քուրջ կամ մորթի (գիշտ) հագած մոնթ։*

ԳԸՌԴԱԲԸՌ, *գ. Մեծ սղոց։ Ծան. – Սղոցը մեկ մարդ է բանեցնում, գըռդաբըռը՝ երկու՝ մեծ մասամբ կոճղեր կտրելու համար. խիզարը նույնպես սղոց է, սակայն առնված քառակուսի շրջանակի մեջ՝ գերաններից տախտակ հանելու համար։*

Գ՞ԸՌԵԽ *(նաև՝ Հթ.)*, **ԳԸՌԵԽ**, *կճ. գ. Թարախ։* Մատիս մէչ գըռեխ կա *(կճ.)*։

Գ՞ԸՌԷԼ, *գ. Աղբ փոխադրող սայլ։*

ԳԸՌԸԽՏԱԼ, *չբ. Բխկալ։*

Գ՚ԸՌԽՕՏԵԼ, *կճ. չբ. Թարախակալել։*

Գ°ԸՌՌՈՏ, *ած. Թարախոտ:*

Գ°ԸՌՌՈՏԵԼ, *Վն. չբ. Թարախակալել:* Յարէն գ°ըռոտեր ի *(Վն.)*:

ԳԸՍՊԼԵԼ, *նբ. Կողոպտել, գրպաններում բան չթողնել:* Քեռին էկավ մեր տուն, թափվանք վէրէն, գսպլեցինք, ջէբերի մէչ պան չթողինք:

Գ՚ԸՐՋԸԿԻ ԾԱՂԻԿ, *Ջնծաղիկ:* Գ՚ըրզըկի ծաղիկ գ՚ա̈րնան հ՚ա̈ռչի ծաղիկ ի *(Կճ.)*:

ԳԸՐԸՄՓԱԼ, *չբ. Աղմուկով ընկնել:* Էրէխէն գըրըմփաց ճօճից:

ԳԸՐԸՄՓՈՑ, *գ. Ընկնելու ձայն:*

ԳԸՐՄԸԽԵԼ, *չբ. Իրար վրա դարսված խոնավ արմտիքը կամ միրգը տաքանալուց փչանալ ու գոլորշի արձակել:*

Գ՚ԻԼՈՒ ԽԱՐՄՆԻՍ, *Կճ. Արև եղանակին բարակ անձրև:*

Գ°ԻՆԱ̈, *մկ. Նորից:* Գ°ինա̈ չէն կանա ոչ մէյ պա̈նըմ խասկնալ:

ԳԻՈԽՏ, *գ. 1) Ուռուցք: 2) Կոշտուկ:*

ԳԻՍ, *գ. Ցորենի քիստ:*

ԳՅԱ̈ԴՈՒԿ, *գ. 1) Լեռնանցք: 2) Եկամուտ:* Խանի օղաբաշխության գյա̈ղուկն առի *(Իջևանատան սեննեկապետությյան եկամուտը գնեցի, այսինքն՝ որոշ գումար տվի և սեննեկապահության իրավունքը գնեցի)*:

ԳՅԱ̈ՋՄԻՇ ԱՆԵԼ, *Պտտել:*

ԳՅԱ̈ԼԱ̈ՋԱ̈, *գ. Ջրույց, շաղակրատանք:* Գյա̈լա̈ջա̈ անել, *Շաղակրատել:* Հէչ չի բէզարե, լուսը պա̈ցվեց, գյա̈լա̈ջի կանի չում իրիկուն:

ԳՅԱ̈ԼՈՒՐ, *գ. Եկամուտ:*

ԳՅԱ̈Մ, *գ. Սանձ:*

ԳՅԱ̈ՄԻ, *գ. Նավ:*

ԳՅԱ̈ՄԸՋԻ, *գ. Նավաստի, նավավար:*

ԳՅԱ̈ՆԱ̈, *գ. Տիզ:*

ԳՅԱ̈ՆՋ, *ած. գ. Երիտասարդ:*

ԳՅԱ̈Վ, *գ. Քայլ:*

ԳՅԱ̈ՎԱ̈ՋԱ̈, *ած. Շատախոս:*

ԳՅԱ̈ՎԴԱ̈, *գ. 1) Մարմին: 2) Հասակ:*

ԳՅԱ̈ՎԴԱ̈ԼԻ, *ած. Բարձրահասակ և թիկնեղ:*

ԳՅԱ̈ՎՈՒՌ, *գ. Մահմեդականները* գյա̈վուռ *են անվանում բոլոր ոչ մահմեդականներին: Թուրքերը վանեցիներին անվանում էին* գյա̈վուռ, օղլի գյա̈վուռ:

ԳՅԱ̈Ֆ, *գ. Սպառնալիք:*

ԳՅԱ̈Ֆ ՏԱԼ, *Սպառնալ:* Լաճը *(=տղամարդը)* գյա̈ֆ տալուց չի վա̈խնա:

ԳՅՈՒԳՅՈՒՄ, *գ. Ջրաման, պղնձե կուժ:*

ԳՅՈՒԽՋՆ ԱՆԵԼ, *Որոշ ժամանակ սուսուփուս, լուռումունջ մնալ:*

ԳՅՈՒԼԱ̈, *գ. Հրազենի գնդակ:*

ԳՅՈՒԼԱ̈Շ, *գ. Ըմբշամարտ:*

ԳՅՈՒԼՆԱՁ, *գ. ած. Վարդի նազանքով:*

ԳՅՈՒՌ[1], *գ. Քարակուռ, երբեմն փայտաշեն փոքրիկ ավազան անասուններին ջրելու համար:*

ԳՅՈՒՌ[2], *Հթ. ած. Թեժ:*

ԳՅՈՒՌ-ԳՅՈՒՌ, *ած. Հորդաբուխ, հորդառատ:*

ԳՅՈՒՌՈՒԼԹԻ, *գ. Աղմուկ, ժխոր:*

ԳՅՈՒՎԱՆՄԻՇ, *չբ. Վստահել:*

ԳՅՕԼ, *Հթ. գ. Լիճ:*

ԳՅՕՆԴ, *գ. Շուրջպար:* Արին չարին չում պօպիկ ոտով գյօնդ խանիցին:

ԳՅՕՆԲԱՇԻ, *գ. Շուրջպարի ղեկավար:*

ԳՅՕՍԹԱՐԻՇ, *գ. Արտաքին տեսք, ցուցադրելիք:*

Գ^{Յ}Ո̈Ձ *(նաև Լիմ), գ. Ընկույզ:* Մէյ ջըվա̈լ գ^{յ}ո̈զ պիրեց//իպե *(Վն.):* Գ^{յ}ո̈զ կըտանի Շատախ ծախ *(այսինքն՝ անմիտ բան, քանի որ Շատախը հարուստ է ընկուզենու անտառներով, այնտեղ ընկույզը շատ էժան է):* Փուչ գ^{յ}ո̈զով խաղմի մէչ մտավ *(այսինքն՝ առանց դրամագլխի արևտուր սկսեց):*

Գ^{Յ}Ո̈ԽՏ, *Վն. գ. Ուռույցք:*

Գ^{Յ}Ո̈ՂՎԵԼ, *Վն. չբ. Ուռել:* Խիվըռնդի ջիգ^{յ}ա̈ր գ^{յ}ո̈ղվիր էր//գ^{յ}ո̈ղվիր ի *(Վն.):*

Գ^{Յ}ՈՄՓ, *գ. Բռունցք:*

Գ^{Յ}ՈՄՓԵԼ, *նբ. Գլխին տալ, զարկել, ծեծել:*

Գ'ՈՒՁ, *Կճ. գ. 1) Ընկույզ:* Պապին մէ ջըվա̈լ գ'ուզ պէրեց *(Կճ.):* *2) Ընկույզի միջուկ:* Գ'ըզի պըճեղ կէրավ *(Կճ.):*

Գ^{Յ}Ո̈ՒԼ[1], *գ. Վարդ,* Ատլաս ջ^{յ}ո̈ւբեն՝ գ^{յ}ո̈ւլեր վէրէն *(=վարդազարդ մետաքսյա վերարկու):*

Գ^{Յ}Ո̈ՒԼ[2], **Գ^{Կ}ՈՒԼ**, *Կճ. ած. Բութ:* Տա̈նա̈կը գ^{յ}ո̈ւլ ի: Տա̈նա̈կ գուլ ա *(Կճ.):*

Գ^{Յ}Ո̈ՒԼՆԱԼ, *չբ. Բթանալ:* Էսա տա̈նա̈կ գ^{յ}ո̈ւլցե:

ԳՈՒՐ^{Ո}ՒՊԱ, *Բմ. գ. Գուլպա:*

Գ^{Յ}Ö, *Բմ. վ. Ահա:*

ԳՕԳՐԱ, *Կճ. գ. Երկար կոթով, սնամեջ գլխով դդմի տեսակ, որ չորացնելուց հետո ծակում և օգտագործում են որպես աման:* Գօգրի մէչ տաքդեղ, աղ կըպախին *(Կճ.):*

Գ^{Յ}ÖՁԼԻԿ[3], *Լիմ,* **ԳÖՁԼԻԿ**, *Կճ.,* **Գ^{Յ}ÖՁԼԻԿ**, *Վն.,* **Գ^{Յ}ՕՁԼԻԿ**[3], *Հթ. Ակնոց:* Գօզլիկով կըկարթէր *(Կճ.):* Գ^{յ}öզլիկով կըկա̈րտա̈ր *(Վն.):*

Գ^{Յ}ՕՂԻՆՔ[3], *Վն. գ. Տան անկյունում, պատի ներս ընկած մասում դրվող անկողնու դարաը:*

Գ^{Յ}ՕՂՎԷՆՔ[3], *Հթ. գ. Անկողին:*

ԳՕՄՓ, *Կճ. գ. Բռունցք:* Գօմփով զա̈րկեց մէշկին *(Կճ.):*

ԳՙՕՍԿՕ, *գ. Ահա այստեղ։* Գօսկօ էկավ քո ուզած մարթը։

ԳՙՕՎԸՆԴ, *գ. Շուրջպար։* Թող ֆըռֆըռա *(=իրեն ցուցադրի)* մէչ գյօվընդին։

ԳՕՎԻԿ, *կճ. գ. Ջագար։* Գօվիկօվ ծէթ լըցինք ճըրաք *(կճ.)*։

ԳՙՕՐՕՄԱՍՏ, *գ. Թան։* Գօրօմաստի կարաս տըռան տակն ի, տախտակն էր վէր պէրնին, թասն էլ վէրէն, ինչքան կուզիս, լըցոռւ, խըմի։

Դ

ԴԱ, *վ. Այնինչ։*

ԴԱԲԱՂ, *գ. Կաշեգործ։* Դըբղենց տուն։ *Ծան. – Սուլթաններից մեկն իր նազիր-վեզիրի հետ ծպտված շրջագայում է մայրաքաղաքում։ Հասնում է դաբաղխանա, որտեղ թոնրանման պուտուկի մեջ, հում կաշու վրա գխտորի ջուր լցրած, մշակում են կաշին։ Թոնրանման մեծ պուտուկի մեջ մտած մարդը, թոնրի շուրթերը բռնած, վեր է ցատկում և ուժգին թափով բոբիկ ոտքերով իջնում է հում կաշու վրա ու տրորում։ Այդ եղանակով մշակում է կաշին՝ անընդհատ կրկնելով միևնույն գործողությունը։*

Սուլթանը նկատում է, որ մի ծերունի դաբաղ շատ դժվարությամբ է կատարում այդ գործողությունը։ Թոնրի շուրթերը բռնած՝ դժվարությամբ բարձրանում է, երկար շունչ քաշում, հանգստանում, ապա թուլացած ընկնում է կաշու վրա։

Սուլթանը խղճահարվում է ու հարցնում.

– Ինչո՞ւ օգնականի մասին ժամանակին չմտածեցիր։

– Մտածեցի, բայց ուրիշներն ուրախացան,– պատասխանում է ծերունի դաբաղը։

– Իսկ ինչո՞ւ սև օրվա մասին չմտածեցիր,– հարցնում է ծպտված սուլթանը։

– Մտածեցի, բայց երեսուներկուսը թույլ չտվին,– պատասխանում է դաբաղը։

– Մի ղազ որ ուղարկեմ, կփետրե՞ս,– հարցնում է ծպտված սուլթանը։

– Միշտ պատրաստ եմ,– պատասխանում է ծերունի դաբաղը՝ գլխի ընկնելով, որ խոսակիցը հասարակ մարդ չէ։

Պալատ վերադարձին սուլթանը դիմում է նազիր-վեզիրին և հարցնում, թե ինքն

ինչ խոսեց ծերունի դաբաղի հետ և ինչ պատասխաններ տվեց նա։ Նկատելով, որ նազիր-վեզիրը գլխի չի ընկել, սուլթանը հրամայաբար ասում է.

– Եթե չպարզես մեր խոսակցության բացատրությունը, ես քեզ նման նազիր-վեզիրի վիզը կկտրեմ։

Նազիր-վեզիրը, այս անգամ արդեն իր պաշտոնական համազգեստով և սուլթանի շքանշանը կրծքից կախած, շտապում է ծերունի դաբաղի մոտ ու հարցնում, թե նա ինչ է խոսել քիչ առաջ իրենց մոտ եկած մարդու հետ։ Ծերունին հրաժարվում է պատասխանելուց։

– Գիտե՞ս նա ով էր։ Նա քո սուլթանն էր, տե՛ս, ես էլ նրա նազիր-վեզիրն եմ։ Դու պարտավոր ես ինձ պատմել ձեր խոսակցությունը։

– Շատ էլ ուրախ եմ, որ մեր սուլթանն էր, որ մեր սուլթանը հետաքրքրվում է խեղճ մարդկանց կյանքով, սակայն ես ինչպես ծախեմ մեր սուլթանին՝ բացահայտելով մեր մտերիմ խոսակցությունը։

Երկար-բարակ սակարկելուց հետո դաբաղը հազար ոսկի է առնում և ասում.

– Հանգիստ գնա՛ք քո սուլթանի մոտ։ Նա այլևս չի բարկանա քեզ վրա։

Նազիր-վեզիրը տխուր-տրտում պալատ է վերադառնում, և սուլթանը նկատելով նրա վշտացած դեմքը, իսկույն հասկանում է, որ ծերունի դաբաղը փետրել է ուղարկված ղազը։

Անցնում է որոշ ժամանակ, նազիր-վեզիրը չի համբերում ու սուլթանից հարցնում է բանի էությունը։

Սուլթանը նազիր-վեզիրին ասում է, որ ինքը հարցրել է, թե ինչու օգնականի մասին դաբաղը չի մտածել ժամանակին։ Նա ասել է, որ մտածել է, սակայն աղջիկ են ծնվել և ուրիշներն են ուրախացել։ Իսկ սև օրվա մասին չմտածելու հարցին պատասխանել է, որ վաստակածը կերել է. երեսուներկու ատամները բան չեն թողել։ Իսկ փետրելու ուղարկված ղազն էլ նազիր-վեզիրն է։

ԴԱԲԱՆ, գ. 1) *Հատակ։* 2) *Ներբան։*

ԴԱԲԴԱԲԱ, ած. գ. *Մեծ, հոյակապ շենք։*

ԴԱԲՕ, գ. *Թիթեղյա աման, նավթաման։*

ԴԱԳ^{ə}ԱՆԱԿ, գ. *Մահակ։*

ԴԱԴՈՒՄ, գ. *Վաստակ։*

ԴԱԹ-ՄԱԴԱԹ, վ. *Մի խոսքով, վերջապես, էլ ինչ՞ ասեմ։*

ԴԱԼԱԼ, գ. *Միջնորդ, մունետիկ։*

ԴԱԼԱՄԱ, գ. *Դեղջրած կաթ՝ պանիր պատրաստելու համար։*

ԴԱԼԱՆԻ, գ. *Արու ձկան փորոտիք։*

ԴԱԼԱՆՍԼԻԿ, գ. ած. *Վանի բուրավետ, ընտիր խնձորի մի տեսակ։* Դալասլիկ խընձոր։

ԴԱԼԻ, ած. *Խենթ։*

ԴԱԼԻ-ԴՕԼԱ, մկ. *Խենթորեն։* Դալի-դոլա պան կանի։

ԴԱԼԻԿԱՆԼԻ, ած. *Խենթ, գիժ երիտասարդ։*

ԴԱԼԿԱ, գ. *Ալիք։*

ԴԱԼԿԱԼԱՆՄԻՇ ԷԼՆԵԼ, *Ալեկոծության ենթարկվել։*

ԴԱԽ, կ. *Դեպի։* Էկավ դախ քի։

ԴԱՀՆԱ, *տե՛ս* ԴԱՅՆԱ։

ԴԱՂ, հզվդ. գ. *Լեռ, սար։*

ԴԱՂԵԼ, նբ. *Խարանել, այրել։*

ԴԱՄ, մկ. *Մի անգամ։* Մէրն էլ օրըմ դամ կուկա, կիրիշկա ։

ԴԱՄԱԹ, գ. *Տրցակ։*

ԴԱՄԲՐՋԻ, գ. *Երկաթագործ։*

ԴԱՄԻՐ, գ. *Երկաթ։*

ԴԱՄԿԱ, գ. *Դրոշմ։*

ԴԱՄԿԱԼԻ, ած. *Դրոշմված։*

ԴԱՄՈՒՆ ԴԱՍՏԻՐ, *Ամեն անգամ, շարունակ. բառացի՝* մեկ պահին տասն անգամ։

ԴԱՄՈՒՐ, գ. *Երկաթ։*

ԴԱՄ ՊԱԽԵԼ, *Զայնակցել։* Վարպետը կըփըչի, նա էլ դամը կըպախի։

ԴԱՅԱՄԻՇ ԷԼՆԵԼ, *Դիմանալ։*

ԴԱՅԻ, գ. *Քեռի։*

ԴԱՅՄԱ, ած. *Պատահական, հազվադեպ։* Իմ մերը զիկ թանգ ի պախե, դայմա մարդու չի ծախե։

ԴԱՅՄԱԴԱ, վ. *Ջեմ կարծում։*

ԴԱՅՄԱՀԱԼՈՎ, մկ. *Հազիվհազ, դժվարությամբ։* Դայմահալով ձեռքից առի։ Դայմահալով մարդու պան չի տա։

ԴԱՅՄԻՇ, գ. *Դիպչելը։*

ԴԱՅՆԱ, գ. *Ակունք։ Ծան.* – Սոֆու դայնէն *Այգեստանի ամենամեծ ակունքն էր։*

ԴԱՆ, *1)* գ. *Ժամանակ, պահ։* Էտ դանին։ *2)* մկ. *Անգամ։* Մէ դան կընացինք ավի *(կճ.)։ 3)* վն. *Բմ. Լիմ, Այնտեղ։* Դան մարթըմ չըկէր *(վն.)։ 4) Դեռ (բառավերջում)։* Չէլաձդան, չտեսաձդան, չասաձդան։ *5)* վ. *Այնինչ։*

ԴԱՆԳ, գ. *Հակ։*

ԴԱՆԴԱԼՕՇ, ած. *Ալարկոտ, դանդաղաշարժ, անմիտ։*

ԴԱՆԴԱԽՈՐԵԼ, չբ.*1) Տատանվել, երերալ։ 2) Ծերությունից ցնդել, ցնորվել։*

ԴԱՆԸՇՄԱՆ, ած. *Հարցուփորձ չանող, իրազեկ, իմաստուն։*

ԴԱՆԹՎԵԼ, չբ. *Իրար վրա շատ շոր հագնել։* Մեր խաթմանեն խաստ կոտիկըմ խակե, դանթվե։

ԴԱՆԿԱԼԱԽ, ած. *Բթամիտ։*

ԴԱԾ, *մկ. Նախևառաջ։* Կըտանեն դաշ թակավուրու մոտ։

ԴԱԾԱԽ, *գ. Ամորձիք։*

ԴԱԾՎԱՆ, *ած. Նախկին, առաջվա։*

ԴԱՋ, *գ. Արմտիքի դեզը դաջելու նախշազարդ գործիք։*

ԴԱՋԵԼ, *նբ. Տասանորդը վերցնելուց առաջ արմտիքի դեզը դաջել, որպեսզի տերն իր արմտիքը չգողանա։*

ԴԱՌԱԲԱ, *կճ. գ. Թախտ։* Ճիժ պախավաղ դառաքբի տակ *(կճ.)*։

ԴԱՍ, *կճ. Լիմ, դ. Այստեղ։*

ԴԱՍՏԱ, *գ. 1) Փունջ, պրակ։ 2) Բմ. Հնձելիս գերանդու բերանից ընկած խոտի, ցորենի յուրաքանչյուր շերտը։*

Դաստալամիշ կանի ծամերը, *Մազերը փունջ արած կբռնի։*

ԴԱՍՏԱԽԱՆԱ, *գ. Սփռոց։*

ԴԱՍՏՈՒՐ, *գ. 1) Իրավունք, արտոնություն, հրաման տալը։ 2) Կառապանների կանչը՝ անցնելու իրավունք պահանջելիս։*

ԴԱՎԱ, *հթ. գ. Ուղտ։*

ԴԱՎԱԹ, *գ. Հրավերք, խնջույք։*

ԴԱՎԶԱՐԱ, *ած. Խելառ։*

ԴԱՎԹԱՐ, *գ. Տետրակ։*

ԴԱՎԻ, *գ. Դատ, վեճ։* Խորաձե, քո դավին ի՞նչ ի։

ԴԱՎՈՒԼ, *գ. Թմբուկ։*

ԴԱՎՐԱՆ, *գ. Ժամանակաշրջան։*

ԴԱՎՐԻԱ, *գ. Գիշերային շրջիկ թուրքական պահակախումբ։*

ԴԱՏ, *Լիմ, դ. Այդտեղ։*

ԴԱՐԱ, *գ. Ձոր, նեղ հովիտ։*

ԴԱՐԱԲԱ, *գ. Փեղկ, հատկապես խանութների վեր ու վար բացվող փեղկը։*

ԴԱՐԱ ՄՏՆԵԼ, *Թաքնվել։*

ԴԱՐԲԱՐ, *մկ. Շուրջը, բոլորտիք։*

ԴԱՐԲԵԴԱՐ, *ած. Թափառական, տարագիր։*

ԴԱՐԲԵԴԱՐ ԱՆԵԼ, *Տնից-տեղից քշել, տարագրել։*

ԴԱՐԳՅԱԽ, *գ. Դարպաս, դուռ։ Ծան. – Թավրիզի դարգյախը Վանի Քաղաքամիջի բերդապարսպի միակ կանգուն մնացած արևելյան դարպասն էր, որով քարավաններըը գնում էին դեպի Թավրիզ, իսկ հարավային դարգյախը ավերակ էր և վերածված էր բացօթյա շուկայի։ Վանեցին դարգյախ ասելով հասկանում էր Քաղաքամիջի այդ շուկան, որն այլ անունով կոչվում էր նաև բիթ (ոջիլի) բազար։ Հայերն այդ կեղտոտ շուկան չէին գնում։ Նրանց շուկան Արարուց Մէյդանն էր (հրապարակը), որտեղ շրջակա հայ գյուղերի գյուղացիները*

ամեն կիրակի վաճառքի էին բերում իրենց արտադրանքը։

ԴԱՐԴ, *գ. Վիշտ։*

ԴԱՐԴԱՐ, *գ. Օրոր։*

ԴԱՐԴԱԺԱՐ ԷԼՆԵԼ, *Անհանգիստ լինել, տանջվել։*

ԴԱՐԴԼՈ, *ած. Վշտահար։*

ԴԱՐԴՍԸՋ, *ած. Անվիշտ։*

ԴԱՐՋԻ, *հթ. գ. Դերձակ։*

ԴԱՐԻԿ, *գ. Ջրի լայնաբերան, միականթ աման։*

ԴԱՐԻՆ, *ած. Խոր։*

ԴԱՐՄԱԴԱՂԱՆ ԱՆԵԼ, *Հիմնահատակ կործանել, ցիրուցան անել։*

ԴԱՐՄԱՆ, *գ. 1) Դեզ։ 2) Հարդ։*

ԴԱՖ, *գ. Կողմ։*

ԴԱՖ ԱՆԵԼ, *Վանել, հեռացնել։*

ԴԱՖԻՆԱ, *գ. Թաղված գանձ։* Դաֆինա ասեմ, թե խազինա *(գանձատուն)։*

ԴԵԽ, *1) հթ. կ. Դեպի 2) Վն. Լիմ, գ. Կողմ։* Վո՛ր դեխ կընա՞ց *(Վն.)։*

ԴԵՂ, *կճ. Թույն։* Դ'եղ խըմեց, մեռավ *(կճ.)։*

Դ'ԵՂԵԼ, *կճ. նբ. Թունավորել։* Կախարտո թաքավորի ախչըկան դ'եղեց *(կճ.)։*

ԴԷԼ[1], *գ. Էգ շուն։*

ԴԷԼ[2], *մկ. Դեռ։* Դէլ կ'ետ չխասած, չեն պօպկընա։ Դէլ չէլէ խավ, կըթըռնի թառ։

ԴԷՄԱՔ[3], *վ. Ասել է թե։*

ԴԷՄԻ, *ած. Անջրդի, ոստին։*

ԴԷՅ-ԴԷՍ, *մկ. Այս ու այն կողմ։*

ԴԷՅԻ, *կ. Համար, փոխարեն։* Նմուշ դէյի *(նմուշի համար)։*

ԴԷՆ, *մկ. Այն կողմ։*

ԴԷՐԷԲԷՅ, *գ. 1) Բառացի՝ ձորի, հովիտի պետ։ 2) Ավատ, ֆեոդալ։ Ծան. – Արևելքում լեռները, հավանաբար, չէին ենթարկվում ավատներին։ Նրանց իշխանությունը տարածվում էր միայն հովիտների վրա։*

ԴԸԲԱԽԱՆԱ, *գ. Կաշի դաբաղելու արհեստանոց։*

ԴԸԲԱՂ, *գ. Կաշեգործ, դաբաղ։*

ԴԸԲՂԵԼ[1], *նբ. Դաբաղել։*

ԴԸԲՂԵԼ[2], *չբ. Լվանալուց հետո կեղտի հետքեր մնալ շորի վրա։*

ԴԸԼԷ, *գ. Սիրտ։* Դըլէ յաման *(սիրտս այրվում է)։*

ԴԸԼՅՈՒՋ, *գ. Մետաղադրամ հավաքելու խեցեղեն կլոր աման։*

ԴԸԽԱԾ, *գ. Խցան։*

ԴԸԽԴԸԽԿԱԼ, *չբ Լավ չքայլող ձիու գավակին երկաթե շրջանակ ունեցող անիվներով կառքի մեջ անհանգիստ լինել, վեր-վար թռչելուց ցնցվելով գնալ։*

ԴԸԽԻՆ ՏԸՆԵԼ, *Շատ պնդելով, ձանձրացնելով հասնել*

իր ասածին։ Դըխին տրեց, չում իր ուզածն արեց։

ԴԸԽԿԱԼ, *չբ. Խուլ ձայն հանել։* Մեյ տուն մըտի, նոր դըխկա *(տուն մտի՛ր, հետո խոսի՛ր)։*

ԴԸՂԴԸՂԱԿ, *Բմ. գ. Կոկորդ։*

ԴԸՂԴԸՂԵԿ, *գ. ած. Տանձի տեսակ։*

ԴԸՂԵՋ, *գ. 1) Դեղնակարմիր մեղու։ 2) փխբ. Օսմանյան ոսկի լիրա։*

ԴԸՄԲԼԻԿ[ց]**,** *Լիմ, ած. Թմբլիկ։*

ԴԸՄԲՈՒՋ, *գ. Բռունցք։*

ԴԸՄԲՐԵԼ, *չբ. Թմրել։*

ԴԸՄԴԸՄՓՈՑ, *գ. 1) Անախորժ ձայն։ 2) Կրակոց։*

ԴԸՄԸՇԿԵԼ *(նաև՝ կճ.), նբ. Հրել։* Էրեխուն դըմըշկեց, թալեց տակ *(Վն.)։*

ԴԸՄՓԻԿ, *գ. Աթոռի վրա դրվող փոքրիկ ներքնակ։*

ԴԸՄՓԿԱԿԸՌԻՎ, *գ. Դմփիկով կռիվ։ Ծան. – Դպրոցում յուրաքանչյուր աշակերտ իր դըմփիկն ուներ. ազատ ժամին դըմփիկով զարկում էին միմյանց և փոշով լցնում դասարանը։*

ԴԸՄՓՌԱՆ, *ած. Հասուլիկ։*

ԴԸՆԴԱԼ, *չբ. Կամացուկ մի քիչ շարժվել նստած տեղում։* Ինչ վոր կանի, ինչ վոր չանի, տո՛ւ քո՛ տեղից չըդընդաս։

ԴԸՆԴԸՂԿՏԱԼ, *չբ. 1) Ջուրը վեռվեռալ։ 2) Գեր մարդու մսերը, ոչխարի դմակը շարժվել։ 3) Մարդը դանդաղ շարժվել։* Հաջ աղի բուխախը կըդընդըղկտէր։

ԴԸՆԴԸՆԱՑՆԵԼ, *չբ. Քթի տակ կամացուկ երգել։*

ԴԸՆԴՈՋ, *գ. Ծովի ալիք, ծփանք։*

ԴԸՆԴՈՇ, *ած. Ցնդած, խենթ։*

ԴԸՆԹԵԼ, *նբ. 1) Բոթել, քնած մարդուն արթնացնելու համար։ 2) Փաթաթել և թևի տակ դնել, տանել։*

ԴԸՆԹԸՌՆԵԼ, *չբ. Ջարմանալ, ապշել։*

ԴԸՆԿ, *գ. Սանդի թակ։*

ԴԸՆՋԱՆԱԼ, *չբ. Հանգստանալ։*

ԴԸՌԻ, *ած. Քաջառողջ։*

ԴԸՌԻԿ-ԴԸՌԻԿ ԽԱՂԱՑՆԵԼ, *Ջարչարել։*

ԴԸՌՓ, *կճ. մկ. Անգամ։* Էս էլ քանի դըռփ քօ բախտ կըպէրա *(կճ.)։*

ԴԸՐԲ, *գ. Ջարկ, հարված։*

ԴԸՐԳ[ց]**ԱՆ,** *կճ. գ. Եղան։* Դըրգ՛ան իրեք կամ չորս մատ ունէր *(կճ.)։*

ԴԸՐԸՄԲՈՑ, *գ. Ընկնելու ձայն։*

ԴԸՐԸՄՓ, *տե՛ս* **ԴԸՐԸՄԲՈՑ։**

ԴԸՐԸՄՓԱԼ, *չբ. Ընկնել։* Էրեխեն դըրըմփաց կ՛ետին։

ԴԸՐԸՆԿ, *գ. Հապաղում։*

ԴԸՐՍԻ ՏՈՒՆ, *Աղթամար և Լիմ-Կտուց կղզիների հանդիպակաց տները լճափին, որտեղ նստում էին Աղթամարա կաթողիկոսները և Լիմ անապատի վանահայրերը, որպեսզի ոչ միայն անմիջական կապ պահպանեին հայ գյուղերի հետ, այլև այդտեղ ընդունեին ու պատվեին անախորժ հյուրերին՝ նրանց առաջ փակ պահելով կղզիներն ու վանքերը:*

ԴԻԱՐԻ, *գ. Պանդխտություն:* Կօրօխկեմ յարոչ դիարի:

ԴԻԴԱՐ, *գ. Դեմք, երես:*

ԴԻՋԿԻՆ, *գ. Սանձ:*

ԴԻԼ, *գ. Լեզու:*

ԴԻԼԱՆԱՄԱԶ, *ած. 1) Բառացի՝ լեզու չհասկացող: 2) Անհասկացող, հաստակող:*

ԴԻԼԱՆՉԻ, *ած. Աղքատ, մուրացկան, աղերսող:*

ԴԻԼԱՔՅ, *գ. Խնդիրք:*

ԴԻԼԻՄ, *գ. Շերտ (հատկապես մրգի):*

ԴԻՆԶ, *ած. Հանգիստ:*

ԴԻԿ, *կճ. գ. Աքաղաղ:* Դիկ կըխօսա աղօթրանին *(Կճ.):*

ԴԻՇ, *գ. Ատամ:*

ԴԻՇՔՐԱՍԻ, *գ. Ատամի վարձ: Ծան. – Երբ մահմեդական պաշտոնյան հյուրասիրվում էր քրիստոնյայի տանը, նրանից պահանջում էր առանձին դրամական վարձատրություն՝ իր ատամները հոգնեցրած լինելու համար: Դա կոչվում էր ատամի հոգնության վարձ: Խորամանկ Համիդի հյուրասիրությունը վայելած եվրոպական արևելագետները ճիշտ չեն բացատրել* դիշքրասի *բառի իմաստը:*

ԴԻՎԱՆ, *գ. 1) Խորհրդարան: 2) Ատյան: 3) Արխիվ:*

ԴԻՎԱՆԱ, *ած. Խենթ:* Տու̈ ծո՛ւռ ես, թէ դիվանա:

ԴԻՎԱՆԽԱՆԱ, *գ. Կառավարչատուն:*

ԴԻՐԱ̈Գ, *գ. Սյուն, գերան, հենասյուն:*

ԴԻՔ, *գ. Վերելք:*

ԴՅՈՒԺԻՆ, *գ. Դյուժին, տասներկու հատ:*

ԴՅՈՒԼԱԿ, *գ. Աշնանը ցուրտը վրա տալու պատճառով չհասունացած սեխ, որ թթու էր դրվում:*

ԴՅՕ̈ԽՄԴՅՕ̈ԽԶ, *ած. Բոլորովին հարթ:*

ԴՕ̈՞Ր *(նաև՝ Հթ. Կճ.), գ. Ո՞ւր:* Դո̈՞ր կէրթա̈ս էսք՚ան անկ՚ա̈խ սըհաթին:

ԴՈՐՄ, *գ. Մի պահ:*

ԴՅՕ̈ԽՇՄԱՆ, ԴՈՒԽՇՄԱՆ *(նաև՝ Հթ.), գ. Թշնամի:* Դուշմընի արուն խալալ, մալն ի խարամ: Դուշմընի դըռնով ընցա ճիգրիս խաթեր խա̈մմա̈ր:

ԴՅՈ̈ՒՇՈՒՄԻՇ ԱՆԵԼ, *Մտածել, մտմտալ, խորհել:*

ԴՅՈ̈ՒՐԱՆ, ԴՈՒՐԱՆ, *գ. Հարթավայր, դաշտավայր:*

ԴՅՈ̈ՒՐԲԱԽ, ԴՈՒՐԲԱԽ, *ած. Ապուշ, հիմար:*

ԴՅՈ̈ՒՐԳԱՐ, ԴՈՒՐԳԱՐ, *գ. Հյուսն:*

ԴՅՈ̈ՒՐԴԱՆԱ, *գ. 1) Կաքավող, պարող: 2) Իգական անձնանուն:*

ԴՅՈ̈ՒՑ, *դ. Այնտեղից:*

ԴՅՈՒՔՅԱՆ, *գ. Խանութ:* Դույի-նի տո̈ւն:

ԴՅՈՒՖ, *գ. Դափ:*

ԴՐԱՄԴԱՇ, *գ. Ծանրության կշռի չափ, պետական օխկա, որ փոքր-ինչ պակաս էր կիլոգրամից:*

ԴՐՈՋ *գ. Միջերկրական ծովի արևելյան ափին՝ Լիբանանում, Սիրիայում, Պաղեստինում ապրող ժողովուրդ:*

ԴՈՒԴՈՒ, *գ. Կանանց դիմելու հարգական բառ:* Դուդու Հայկանուշ *կամ՝* Հայկանուշ դուդուն: *Ծան. – Բոլոր հորեղբոր կանայք* դուդու *էին կոչվում մյուս տեգոր կանանց և տեգրերի որդիների կողմից:*

ԴՈՒԴՈՒԿ, *գ. Փող, սրինգ:*

ԴՈ̈ՒԶ, *ած. մկ. Իրավ, ճիշտ:*

ԴՈՒԶԱԽ, *գ. Ծուղակ, որոգայթ:*

ԴՈՒԶԳՅՈՒՆ, *մկ. ած. Իրավամբ, կարգին:*

ԴՈՒԼԱԿ, *գ. Մանր ու խակ սեխ, որ թթու էին դնում:*

ԴՈՒԼԻԿ, *գ. Դդումից շինված սափոր:*

ԴՈՒՂԱ, *գ. Աղոթք:*

ԴՈՒՆՅԱ, *գ. Աշխարհ:*

ԴՈՒՆՅԱԴԱ, *գ. Ողջ աշխարհում:* Դունյադա ինչքյան մարդ, էնքյան դարդ:

ԴՈՒՌՋԻ, *գ. Ժողովուրդ Միջերկրական ծովի արևելյան ափին. Լիբանանում, Սիրիայում, Պաղեստինում: Թուրքերն իրար հայհոյած լինելու համար ասում էին՝* դուռզի օղլի դուռզի:

ԴՈՒՍԱՂ, *գ. Բանտարկյալ:*

ԴՕԼԲԻՆ *գ. Հեռադիտակ:*

ԴՕԼՎԱԹ, *գ. 1) Պետություն: 2) Հարստություն, կարողություն:*

ԴՕ̈ԼՉԱ̈Կ, *գ. Ջրաղացի այն արկղը, որից ցորենը թափվում է աղորիքի մեջ:*

ԴՕԽ, *Կճ. տե՛ս* **ԴՕ̈ԼՉԱ̈Կ**: Ճա̈խցի դօխի մէչ ցօրէն լիա̈ց *(Կճ.)*:

ԴՕԽՍԱՆ, *թ. Իննսուն:*

ԴՕՂ *գ. Անիվի երկաթե շրջանակ:*

ԴՕՂԻԿ, *գ. 1) Հացի տեսակ՝ ձվաձև, մեջը ծակ: 2) հթ. Բոկեղ, կլոր կամ մանեկաձև*

փափուկ հաց, յուղով կամ ռուպով պատրաստված, որ թխում են կաղանդին և պահում են մինչև Տյառնընդառաջի օրը և այդ օրը բաժանում։

ԴՕՂՐԻ, *մկ.* *Ուղղակի։* Դօղրի կէյնի վիրին քյոշկ։

ԴՕՄԲԱԼԱ, *գ.* *Գետնասունկի տեսակ։*

ԴՕՄԲԱԼԱ ՏԱԼ, *Գլուխկոնծի տալ։*

ԴՕՆ, *գ.* *Վարտիք։*

ԴՕՆԱՄԱ, *գ.* *1) Հրավառություն։ 2) Հանդես։ 3) Հոբելյան։*

ԴՕՆԴՈՒՐՄԱ, *գ.* *Պաղպաղակ։*

ԴՕՇ, *գ.* *Լանջ։*

ԴՕՇԱԿ, *գ.* *Ներքնակ։*

ԴՕՍՏ, *գ.* *Բարեկամ։*

ԴՕՎԼԱԹ *գ.* *1) Պետություն։ 2) Հարստություն, կարողություն։*

ԴՕՎՐ, *գ.* *Շրջան։*

ԴՕՐԴԸՆՋԻ, *թ.* *Զորրորդ։*

ԴՕՐԷԴՕՐ, *մկ.* *Հերթով։*

ԴՕՐԹՆԱԼ, *գ.* *1) Բառացի՝ չորս պայտ։ 2) Քառատրոփ վազք, վարգ։*

ԴՕՐՄ ՉԷ ԴՕՐՄ, *Ժամանակ առ ժամանակ։* Դօրմ չէ դօրմ կաչկի, օր կընիկ ուր խաւմար խաց պիրի։

ԴՕՔ^{ə}Ա, *Լիմ, գ.* *Խնոցի։*

ԴՕՔԹՕՐ, *գ.* *Եվրոպական ուսում ստացած բժիշկ։*

Ե

ԵԶԱՆ ԼԷՋՈՒ, *Դեղախոտ, որի տերևները դնում են խոցի վրա։*

ԵԶԱՆՇԸՌԻԿ, *գ.* *Ջիգզագաձև բանվածք, կար։*

ԵԶՐԱՀԱՆ, *գ.* *Ռանդայի տեսակ, որ ուղղում, հարթում է փայտերի եզերքը։*

ԵԶՐԱՆՑ, *մկ.* *Եզերքով։*

ԵԼ, *գ.* *Ջառիվեր։*

ԵԼԱԳ, *գ.* *Ժիլետ, անթև հագուստ։*

ԵԼՔ^{ə}Ա՛Ն, *գ.* *Առագաստ։*

ԵԿԱ, *գ.* *Առագաստանավի ղեկ։*

ԵՂ, *գ.* *Յուղ։*

ԵՂԱ՛, *գ.* *Նյութեղեն։* Ի՞նչ եղա ի, պըղընձեղե՞ն ի, արծաթեղե՞ն ի։

ԵՂԱ[2], *գ.* *Բալյոսութ. կաթնահամ, դեռ չպնդացած ցորենի աղանձ, որ պատրաստում էին կիսահասունացած ցորենը փնջելով և քիստերն այրելով։*

ԵՂԱԽԱԼ, *գ.* *Յուղ հալելու աման։*

ԵՂԵՂԷՆ, *գ. Յուղով պատրաստված անմիս կերակուր։*

ԵՂԸՐՋԱ, *գ. Բույսի տեսակ։*

ԵՂԻՐՃ, *գ. Ձյան պնդացած մակերես, որի վրայով քայլելիս ձյան մեջ չեն մխրճվում։*

ԵՂՈՒՆԻԿ, *գ. Աղաձնի։*

ԵՂՈՒՐՋ, *գ. տե՛ս* ԵՂԻՐՃ։ *Ծան. – Վանում ձմռանը, երբ ձյուն չէր գալիս, միշտ պայծառ արև էր լինում։ Ձյան մակերեսը հալվում էր, գիշերը սառչում ու հաջորդ օրը սառած մնում։ Ասում էին* ծո՛ւնը եղուրջ ի կապե *ու վստահ քայլում էին ձյան վրայով՝ կրճատելով ճանապարհը։*

ԵՄ, *գ. Անասունի կեր։*

ԵՌ[1], *գ. Մարմնի քորվելը, արյան եռալը եռանդի շատությունից։*

ԵՌ[2], *գ. Գիծ, եզիդիների կախարդական շրջագիծ։*

ԵՌԿԾԱԼ, *չբ. Քիչ-միչ շարժվել։* Պրոնատան եռկծալու տեղ չըկա, պիտի կայնես վոտաց վէրէն։

ԵՌ ԿՑԱԼ, *Սկսել եռալ։*

ԵՌՄԱՆ, *ած. Շատ տաք ջուր, կերակուր։*

ԵՌՔՈՐ, *գ. Բորոտություն։*

ԵՍԻՐ, *գ. Գերի։* Իա, խավալախա, ես եսիր եմ ինկեր իմ խօր խարսի ծեռ։

ԵՐԵՍՈՒՆ, *գ. Կերակուրի երեսի յուղով տապակած կանաչեղեն։*

ԵՐԵՐՄՈՒԿ, *գ. Ամոլ, անծին մատակ գոմեշ։*

ԵՐԻՇ ՔԱՇԵԼ, *Հարձակում գործելու համար թափ առնել։*

ԵՐՈՒՍԱՂՄԱ ՑՈՐԵՆ, *գ. Եգիպտացորեն։*

ԵՐԵՍՈՑ *գ. Կանանց երեսի ոսկյա կամ արծաթյա զարդ։*

ԵՓ, *դ. Ե՛րբ։*

Զ

ԶԸ, *գ. Ինչ-որ բան։*

ԶԱԲԹ ԱՆԵԼ, *չբ. Ջավթել, բռնագրավել, տիրանալ։*

ԶԱԲԹԻԱ, *գ. Ժանդարմ, գյուղական հեծյալ ոստիկան։*

ԶԱԲԻԹ, *մկ. Ապա։*

ԶԸԲՈՒՆ, *ած. Նիհար, մասնավորաբար՝ նվազ անասուն։* Ձաբուն կօվ ծախիր եմ *(Վն.)։*

Ձաբուն հայվընի միս անխամ կէնի *(Վն.)։*

ԶԱԹԻ, *մկ. Արդեն։*

ԶԸԻՖ, *Վն. ած. Նվազ (մարդ)։* Ձաիֆ մարթըմ իրե *(Վն.)։*

ԶԸԼԶԸԼԱ, *գ. Երկրաշարժ։*

ԶԱԼԸՄ, *ած. Կատաղի, դաժան, անողորմ։*

ԶԸԽԱԽՈՐԵԼ, *չբ. Զարհուրել։*

ՋԱԽԱՆԴԵԼ, *չբ. Սարսափել, դողալ։*

ՋԱԽՄ, *ած. Ջորեղ։*

ՋԱԽՄԱԹ *գ. Աշխատանք, որ անաշխատ տիրողնիի՝ երեցկնոջ համար հավասար է նեղության։* Ջախմաթ մի քաշե։

ՋԱԽՐ ՋԸԽԿՈՒՄ ՈՒՏԻՍ, *Անեծք. դժոխքի ծառի (չխկումի) ծաղկի թույնը ուտես։*

ՋԱԿՕԼ, *ած. Ագահ, որկրամոլ։* Կաձար շատ ծակաչկ// անկուշտ// զակօլ// լաքոշ մարթ ի *(Վն.)*։

ՋԱՀԼԱ ՏԱՆԵԼ, *Ջանձրացնել։*

ՋԱՀՐՈՒՄԱՐ *Քե Անեծք. օձի թույնը քեզ լինի։*

ՋԱՄԲ *(նաև՝ Հթ.), գ. Ջրաղացքարի շուրջը նստած ալյուրի փոշի, որից լակ են պատրաստում շների համար։* Ջամբօվ լակ կըշինեն, շըներաց կուտան *(Վն.)*։ Ջամբի ալուր կըմընա ճաղացպանին *(Հթ.)*։

ՋԱՄԲԱՐԱ, *գ. Ջսպանակ։*

ՋԱՄԲԵՋ, *գ. 1) Ծաղկի տեսակ։ 2) Ծեծած կտավատի աման։*

ՋԱՄԲԻԼ, *Լիմ,* **ՋԱՄԲԸԼԱ**, *կճ. գ. Ջամբյուղ։* Ջամբըլի մէչ խավող, ծիրան կա *(կճ.)*։

ՋԱՄՋԱՄԻ, *գ. Մահմեդականների սրբազան աղբյուր Մեքքայի մոտ։*

ՋԱՄՓԱՐԱ, *ած. Իգասեր, կնամոլ։*

ՋԱՑ ԱՆԵԼ, *նբ. Փչացնել, ոչնչացնել։* Էսա անիրավ զիկ տանի, զայ անի։

ՋԱՅԻԿ, *վ. Մի՞թե, այդպե՞ս էր։*

ՋԱՅԻՖ, *ած. Նիհար (հատկապես մարդ)։* Մեր խարս շատ զայիֆ ի։

ՋԱՆ ԱՆԵԼ, *Կարծել, ենթադրել։* Ջան արի, վոր էտ պէն էտպես չէլլե։

ՋԱՆԳԻՆ, *ած. Հարուստ։* Ջանգին վոր ախքընտնա, չում խարիր տարի ինոր վէրից զանգընի խոտ կուկյա, ամա վոր ախքատ զանգընընա, չում խարիր տարի ինոր վէրից ախքընտի խոտ կուկյա։

ՋԱՆԳՅԸՌ, *մկ. Սաստիկ։*

ՋԱՆԵԼ *(նաև՝ Լիմ), նբ. Խփել, հարվածել։* Մի խատ վոր զանի, թոզ կընխանի։

ՋԱՆՋԱՖԻԼ, *գ. Համեմունքի տեսակ, իմբիր։*

ՋԱՌ, *ած. Ոսկեթել։*

ՋԱՌԱԲ, *գ. Դրամահատ։*

ՋԱՌԱԲԽԱՆԱ, *գ. Փողերի տեղ, փողանոց։*

ՋԱՌԱՏԻԿ, *գ. Ոսկերչական գործիք։*

ՋԱՎԱԼՈՒ, *ած. Խեղճ, թշվառ։*

ՋԱՎՋԱԿ, *ած. Շատախոս։* Ջավզակին մէյն ի, ինոր ասածին վո՞վ ականջ կըտընի։

ՋԱՎԹԵԼ, *նբ. Յուրացնել, գրավել։*

ՋԱՏ *(նաև՝ Հթ.), 1) ած. Իրարից անջատ, հեռու։ 2) գ. Բան, որևէ իր։* Ասքյարներն իկեր են թաղ, էն զաւտը *(հրացանը, ատրճանակը)* լավ պախեք։ Որ կուկյաս, մէյ զաւտըմ բեր խետըդ։ Զաւտըմ չունի, անկուտի մէյն ի։ Ինոր զաւտը շատ զօռբա կէլնի։

ՋԱՏԱՄԱՆՑ, *մկ. Հեռվից։*

ՋԱՏԱՆԱԼ, *Հթ. չբ. Հեռանալ։*

ՋԱՏԱՑՈՒՑԵԼ, *Լիմ, նբ. Հեռացնել։*

ՋԱՏԻԿ, *գ. Հարության տոնը։*

Պըսատիկ զաւտիկ, *Քրիստոսի ծննդյան տոնը։*

Ճիչ զաւտիկ, *Քրիստոսի հարության տոնը։*

ՋԱՏԻՑ/Կ², *գ. Կարմիր միջատ, որ գարնանային զատկի օրերին առաջինն է երևան գալիս միջատների մեջ։* Զաւտիյ կարմիր, պուտ-պուտ բօլօճ ի *(Վն.)։*

ՋԱՏՈ, *մկ. Հեռուստ։*

ՋԱՏՈՒՑԵԼ, *Վն. նբ. Անջատել։* Ինոնց իրարմէ զաւտուցին *(Վն.)։*

ՋԱՐ, *գ. Նարդու ոսկորիկ։*

ՋԱՐԱՐ, *գ. Վնաս։*

ՋԱՐԱՐ ՏԱԼ, *Լիմ, Վնասել։*

ՋԱՐԱՖԱԹ, *գ. Կատակ։*

ՋԱՐԲԱՖ, *գ. Ոսկեփայլ մետաքսեղեն գործվածք։* Բոնթոյն զարբաֆ կու մաշիշ, վէրէն կ'ըլօխ փէլսկուտէր։

ՋԱՐՋԱՄԻՆ, *գ. Ձեղնահարկի ընդարձակ ու զով սենյակ, որն օգտագործվում էր որպես ամառային մառան։*

ՋԱՐՋԱՎԱԹ, *գ. Այենք, կերակուրի կանաչեղեն։*

ՋԱՐՋԸՆԴԵԼ, *չբ. Սարսափել, վախենալ։*

ՋԱՐԸՆՋԻ, *ած. Քնատ, գիշերն անքուն անցկացրած։*

ՋԱՐԿԵԼ[1], *նբ. 1) Հարվածել։* Կըռանօվ իզար(կ) քարին *(Վն.)։ 2) Գնդակահար անել։*

ՋԱՐԿԵԼ[2], *կճ. 1) չբ. Նվագել։* Սազ կըզարկա *(կճ.)։ 2) նբ. Խայթել։* Ընձի օց զարկեց *(կճ.)։*

ՋԱՐԿՎԵԼ, *կբ. Գնդակահար լինել։*

ՋԱՐՏԸՐԵԼ, *Վն. նբ. Զարդարել։* Թաժա խարսին զարտըրիցին *(Վն.)։*

ՋԱՐՏԸՐՈՒԿ, *նբ. ած. Զարդարված։* Զարուն-զարտըրուկ գյուղնազ ախչիկ կէր։

ՋԱՐՏԸՐՎԵԼ, *կբ. Շատ զարդարվել։* Խաթուն մաման զարտըրվեց, զարտըրվեց, վոր ժամ էրթա։ Չում Շուշան զարտըրվի, ժամեր կարձըկվին։

ՋԱՖԹԻԱ, *գ. Գյուղական հեծյալ ոստիկան, ժանդարմ։*

ՋԷՀԻՐ, *գ. Թույն։*

ՋԷՄՆԱՐ, *գ. Ապառաժ մեծ քարեր։*

ՋԷՅԹՈՒՆ, *գ. Ձիթապտուղ։*

ՋԷՅԹՈՒՆՅԱՂԻ, *գ. Ձիթապտղի յուղ։*

ՋԷՐՋԱՄԲ, գ. *Մթութեան մէջ սարսափազդու մեծ թոնրատուն կամ մառան։*

ՋԸՋՎԱԼ, չբ. *Զզվել։*

ՋԸԹՆԱ, կ. *Հակառակի պես, ի հեճուկս։*

ՋԸԼԲԱՂԻ, *Բմ. գ. Վզից կախվող արծաթեայ զարդարանք։*

ՋԸԼԵԼ, *1) չբ. Բարձր ձայնով երգել։ 2) նբ. Թոկն ամուր ձգելով կապել։*

ՋԸԼԻՖ, գ. *Ծիլ։* Ջըլիֆի թել-թել խանեցիր։

ՋԸԽԿՎԵԼ, չբ. *նախ. Ուտել (ավելորդ տեղը)։* Խացըդ զըխկվիա՛ ու գնա՛։

ՋԸԽՏԸԿՎԵԼ, չբ. *նախ. Անվայելուչ ձևով ուտել։*

ՋԸՂՋԸՂԱԼ, չբ. *1) Ջեփյուռը փչել։ 2) Վճիտ ջուրը ախորժելի ձայնով սահել։*

ՋԸՂՋԸՂՈՒՆ, գ. *Ջուլալ ջրի կարկաչյունը։*

ՋԸՂՋԻԿ, գ. *1) Խխունջ։ 2) Ջարդված խեցեղենի կտորտանք։*

ՋԸՂՔ^ՑԻԿ, գ. *Խցան։ Ծան. – Ազալի հրացանը լցնելիս մրոշի բերանի կողմից լցնում էին վառոդ՝ սէզմա, ապա հատուկ շշով ամրացնում էին լաթ-խցանով։*

ՋԸՄԷՆ, գ. *Ամենը, բոլորը, ամբողջը։*

ՋԸՄՐՈՒԹ, գ. *Ջմրուխտ։*

ՋԸՄՓ-ՋԸՄՓ, գ. *Արձագանք քարայրում։ Ծան. – Այս բառից է առաջացել Այգեստանի հյուսիսային կողմում գտնվող Ուրարտական թագավորների նստավայր-քարայրի անունը՝ Ջըմփ-ջըմփ Մաղարա։*

ՋԸՄՓՋԸՄՓԱԼ, չբ. *Հորդաբուխ ջրի ձայն հանել։*

ՋԸՄՓՈ, ած. գ. *Խոշոր, աժդահա մարդ։*

ՋԸՅՆՋԸՆԳԱԼ, չբ. *Ջնգզնգալ։*

ՋԸՆԱՐ, գ. *Ապառաժ։*

ՋԸՆԳ^ՑԱ, գ. *Փոքր ճահճուտ։*

ՋԸՆԳԸՌԹԱ, *Լիմ,* **ՋԸՆԳԸՌԹԻ**, *Բմ. գ. Խաղողի մի քանի հատիկներից բաղկացած ողկուզիկ։*

ՋԸՆԳԸՌՏԱԼ, չբ. *Ցրտից սարսռել։*

ՋԸՆԳՅՈՒՌ, գ. *Խաղողի փոքր ողկույզ։*

ՋԸՆԴԱՆ, գ. *1) Դարբնոցի պողպատե սալ։ 2) Բանտախուց։*

ՋԸՆՋԱՆ, գ. *Ծովափնյա ժայռ։*

ՋԸՆԿ^ՑԱ, գ. *Մանր ճահճախոտ։*

ՋԸՆԿԸՌ-ՄԸՆԿԸՌ, ած. *Փոքր-մոքր։*

ՋԸՆՋԻԼ, գ. *Շղթա։*

ՋԸՊՈՒՆ, գ. *Երկար քղանցքով հագուստ։*

ՋԸՌ, ած. *1) Կոշտ ու կոպիտ։ 2) Լոկ։*

ԶԸՌԱՆ, *ած. Խաղի ժամանակ անտեղի բողոքավոր, խաղաղրուժ։*

ԶԸՌ ԳՕՐՕՄԱՍՏ, *Լոկ թթու թան։*

ԶԸՌԸԽ, *գ. Զրահ։*

ԶԸՌԸԽԼԻ, *ած. Զրահավոր։*

ԶԸՌԹ ՀԱՑ ԶԸՌԹ, *Պարծենկոտի հասցեին ուղղված ծաղրական արտահայտություն։*

ԶԸՌՆԵԽ, *գ. Ջառիկ, արսեն։*

ԶԸՌՆԹԻ, *ած. գ. Անպետք, ավելորդ իրեր։*

ԶԸՎԸՌՆԵԼ, *չբ. Թափառել, անմտորեն պտտվել։*

ԶԸՐԸԽԿԱԼ, *չբ. Թափով ընկնել։*

ԶԸՐԸՄՓԱԼ, *չբ. Թափով ընկնել։*

ԶԸՐՈՑ, *Լիմ, գ. Զրույց։*

ԶԸՐՎԱՆԴԱՆՑ, *գ. Թրքաբնակ գյուղ Այգեստանից դեպի արևելք՝ Արճակ տանող ճանապարհին։*

ԶԻԱԴԱ, *մկ. Ավելի։*

ԶԻԱՆ, *գ. Վնաս։*

ԶԻԱՆ ՏԱԼ, *Վնասել։*

ԶԻԱՆ-ՔՅԱՐ, *ած. Վնաս հասցնող։*

ԶԻԲԻԼ, *Վն. գ. Տան աղբ։* Տուն ավլեց, զիբիլ խանեց տարավ տո՛ւս *(Վն.)։*

ԶԻԶՆԻՑ, *դ. Ինձնից։*

ԶԻԼՖԻՍ, *ած. Ոսկեմազ։* Դաստէմ կապեմ զիլֆիս թելով։

ԶԻԿ, *դ. Ինձ։*

ԶԻՆԱԹ, *գ. Զարդեղեն, պաճուճանք։*

ԶԻՆԵԼ, *նբ. Մորթել։*

ԶԻՖԱԼ, *չբ. Զզվել։* Տատըս մըկնից կըզիֆար *(Վն.)։*

ԶԻՖԱԼՈՑ, *ած. Ալերգիկ։*

ԶՅՈՒԲԱՐ, *գ. Առվույտի և կորնգանի ծաղիկ։*

ԶՅՈՒԲԱՐԱ, *գ. 1) Օլամ, աշխատանք տիրոջ կամ պետության համար, կոլեկտիվ աշխատանք։ 2) Մթերանոց։* Աղվէս մըտէ մեր գյուբարէն։

ԶՈՒԳՍ, *գ. Կանացի ոսկյա և արծաթյա զարդեղեն։*

ԶՈՒԼԱ, *Կճ. գ. Հենակ, որ դրվում է պտուղներով ծանրաբեռնված ճյուղի տակ։* Զուլա կըտընկինք՝ ծառի տակ։

ԶՈՒԼԱԼ, *ած. Վճիտ։*

ԶՈՒԼՈՒՄ, *գ. 1) Աղետ, փորձանք։ 2) Արհավիրքով լի համակարգ։*

ԶՈՒԼՈՒՄԱԹ, *գ. 1) Աղետ, փորձանք։ 2) Արհավիրքով լի համակարգ։*

ԶՈՒՐՑԱԼ, *Բմ. չբ. Խոսել։*

ԶՕՋԱՆ, *գ. ած. Հովասուն վայր։*

ԶՕՋԱՆԱՎՈՐ, *գ. Ոչխարների հետ ամռանը զովասուն սարերը բարձրացող։*

ԶՕՌ, *ած. Դժվար։*

ՋՕՌԲԱ, *ած. գ. Ֆիզիկապես ուժեղ։*

ՋՕՌԲԵՅՏԵՐ, *գ. Ջօռբաներ։*

ՋՕՌՈՎ, *մկ. Դժվարությամբ։*

ՋՕՐՔ³ՈՎ, *ած. Ներքին ուժով։* Էտա խաչ շատ զօրքով ի։

Է

ԷԺՆԵԼ, *վն. չբ. Իջնել։*

ԷԼԵՐ, *դ. Ուրիշներ։* Էլեր կուտեն ծեր անուշ կաթ։

ԷԼԷՍԱՆ, *գ. Ալեքսան։*

ԷԼԷՍԱՆԵՆՑ ՓՈՂԱՆ, *Ալեքսանյանների փողոց։*

ԷԼԸՄ *(նաև՝ Հթ.)*, *մկ. Նորից, դարձյալ։* Էլըմ էկար, վոր կ'ըլխիս ավէտարան կ'արտաս։ Վաղ էլըմ ծո՛ւն կիկ՛ա *(Հթ.)*։

ԷԼՄԱՆ, *կճ. մկ. Դարձյալ։*

ԷԼՄԷՆ, *մկ. Նորից։* Էլմէն պո՛ւսար աչկիս։

ԷԼՆԵԼ[1], *չբ. Լինել։* Էտ պա՛ն էտպէս չելնէ։

ԷԼՆԵԼ[2], *չբ. 1) Վեր կենալ զարթնել։ 2) Ելնել, դուրս գալ։* Մարթու աչկն էլնի, մարթու անուն չէլնի։ *3) Բարձրանալ։* Էլա՛ վեր։ Զարթնեցի, էլա՛ ծառ։

ԷԼՎԷՃ, *գ. Ելևէջ։*

ԷԼՈՒԿ, *գ. Կտրված ծառի բնից ծլած շիվեր։*

ԷԾ, *գ. Այծ։* Էծն ինչ էծ ի, ուր տեղը կըքիրի, ապա կընըստի։

ԷԿԷՅՍԱՐ, *գ. Այգեստան։*

ԷՀԷ՛-ԷՀԷ՛, *ձ. Այծ, ոչխար քշելու ձայնարկություն։*

ԷՃՆԵԼ, *չբ. Իջնել։* Էլ չեմ էճնե ես Վա՛րակ՛ա սարից։

ԷՆ, *դ. Այն։* Էն շուն էն շընէն, էրկու մէյ տընէն։

ԷՆԱ, *դ. Այն, նա։*

ԷՆԱՏԵՂ, *վն. Հթ. դ. Այնտեղ։*

ԷՆԴԵԽ, *դ. Այն կողմ։*

ԷՆԸՍԿԸՆԱ՛, *դ. Այնպես։*

ԷՆԿԱՆԴԱՐ, *դ. Այնքան։*

ԷՆԿԸՆԱ՛, *Լիմ, դ. Այնպես։*

ԷՆՄԱ՛Լ, *կճ. դ. Այնպես։*

ԷՆՏԵՂ, *վն. դ. Այնտեղ։*

ԷՇ, *գ. Ավանակ։*

* Էշ ներկող, *Խաբեբա։*

* Էշ նահատակ, *Անտեղի զոհված։*

* Քո՛ իշուն վո՛վ ի չու ասե, *Ո՞վ է քեզ նկատողություն արել, ո՞վ է քեզ հակառակվել։*

* Իշու տե՛ղ ես տըրե զիկ, *Ինձ հիմարի մե՞կն ես կարծել։*

* Ուշ էշը քըշել, *Համառել, հաստակողություն անել։*

* Կաղ իշով քյարվան մտնել, *Իր ուժից վեր գործ ձեռնարկել։*

ԷՇԱԳ, *գ. Էշ։*

ԷՇԽԸՐՏՈՒԿ, *գ. Մի տեսակ միջատ։*

ԷՇԿՅԱ, *գ. Ավազակ։ Ծան. – Թուրքերն այդպես էին անվանում հայ հայդուկներին։*

ԷՋԻ Կ՚ԻՆԻ, *գ. Հնձանում իրար վրա թափված խաղողի կույտից ինքնաբերաբար, առանց ճզմելու գոյացող գինի, որ առավել ընտիր է լինում։* Էրկու կուռիկ էլ էջի կինի կոնծեցի։

ԷՋՂԵԼ, *չբ. Հոգնել, տաղտկանալ։*

ԷՍ, *դ. Այս։*

ԷՍԱՆ, *գ. Հեսան։*

ԷՍԱՏԵՂ, *վն. դ. Այստեղ։*

ԷՍԸՍԿԸՆԱ, *դ. Այսպես։* Էսըսկընաա պան կէնի՞ *(Վն.)։*

ԷՍԿԱՆԴԱՐ, *դ. Այսքան։*

ԷՍՄԱԼ, *կճ. դ. Այսպես։*

ԷՍՊԷՍ, *վն. դ. Այսպես։*

ԷՍՏԵՂ, *վն. դ. Այստեղ։*

ԷՎԱԼԼԱ, *վ. 1) Բառացի՝ մնաք բարով։ 2) Շատ շնորհակալ եմ։*

ԷՎԱՐ, *գ. Իրիկնաժամ, իրիկնապահ։*

ԷՏ, *դ. Այդ։*

ԷՏ ԱՆԵԼ, *Խաղողի ավելորդ մատերը կտրատել։*

ԷՏԱՊԷՍ, *Հթ. դ. Այսպես։*

ԷՏԱՏԵՂ *(նաև՝ Հթ.)*, *դ. 1) Այստեղ։ 2) Այդտեղ։*

ԷՏԵՂ, *կճ. դ. Այդտեղ։*

ԷՏԸՍԿԸՆԱ, *դ. Այդպես։*

ԷՏԿԱՆԴԱՐ, *դ. Այդքան։*

ԷՏՄԱԼ, *կճ. դ. Այդպես։*

ԷՏՏԵՂ, *վն. դ. Այդտեղ։*

Է՚Ր, *դ. Ինչո՞ւ։* Է՚ր կարիք ճամբխիցի, ծամեր ճերմկավ, ճամպախ աչկեցի։

ԷՐԱՋ, *գ. Երազ։*

ԷՐԱՋԱԽԱՆ, *գ. 1) Երազահան։ 2) Եփրեմվերդի (Էֆիմերիտ) գիրքը։*

ԷՐԱԿ, *գ. Երակ։*

ԷՐԱՆ, *գ. Մեղմ քամի, որի ժամանակ ցորեն են մաքրում։*

ԷՐԱՆ-ԷՐԱՆ, *մկ. Մեղմորեն։* Քամին էկավ էրան-էրան։

ԷՐԱՆ ԱՆԵԼ, *Հացահատիկը էրանով անջատել։*

ԷՐԱՆԵԼ, *նբ. Ծեծածը եղանով (քյառեշտով) քամուն տալ՝ ցորենը հարդից բաժանելու համար։*

ԷՐԱՆԷԿ, ԷՐԱՆԷԿ[ə], *Լիմ, վ. Երանի։*

ԷՐԷԹԻԼ, *գ. Էկզեմա։*

ԷՐԷԺՆԱԿ, *գ. Վայրի բույսի տեսակ, որ թթու են դնում, նաև հում վիճակում միջուկն ուտում են որպես միրգ։*

ԷՐԷԽԱ, *գ. Երեխա։* Էրէխին պանի տիար, խետն արաա։

ԷՐԷԿ, *գ. մկ. Երեկ։*

ԷՐԷՆՋԻԿ, ԷՐԷՆՋԻԿ[ə], *գ. Երինջ։*

ԷՐԷՎԱԼ, *չբ. Երևալ։*

ԷՐԷՐԱԼ, *չբ. Դանդաղ շարժվել։*

ԷՐԷՐԿԸՏԱԼ, *չբ.* *Դանդաղ շարժվել։*

ԷՐԸՆՋԱԿ, *գ.* *Բույսի տեսակ, որ ուտում են մաշկահան անելով, նաև թթու են դնում։*

ԷՐԸՆՋԻԿ[ց], *հթ. գ.* *Երինջ։*

ԷՐԹԱԼ, *չբ.* *Երթալ, գնալ։* Կէրթա՛ խարսնիս *(Վն.)*։

ԷՐԿԱԹ, *գ.* *Երկաթ։*

ԷՐԿԱՆՔ, *գ.* *Երկանաքար։*

ԷՐԿԷՆ, *ած.* *Երկար։*

ԷՐԿԷՆՎԻՋ, *ած.* *Երկարավիզ։*

ԷՐԿԸՆՆԱԼ, *չբ.* *Երկարել։*

ԷՐԿԸՆՎԵԼ, *չբ.* *Պառկել։* Ի՞նչ ես էրկընվե օդի մէչտեղ։ Էրկընվավ տախտին, վոր քըննի *(Վն.)*։

ԷՐԿՆԱԽԼՈՒՆՁ, *ած.* *Երկնամերձ։*

ԷՐԿՆԱՈՒՄԲՐ, *ած.* *Երկարակյաց։*

ԷՐԿՏԱԿ, *ած.* *Երկտակ։*

ԷՐԿՈՒՄԱՏ, *Բմ. գ.* *Եղան։* Էրկումատօվ խոտ կըպա՛նենք սէլին *(Բմ.)*։

ԷՐՄՈՒՆԳ, *կճ.*, **ԷՐՄՈՒՆԳ**[ց], *Լիմ, գ.* *Արմունկ։*

ԷՐՈՑԿ, *Վն.*, **ԷՐՈՑՔ**, *կճ. գ.* *1) Մարմնի ջերմություն։* Էրեխէն էրոցկից կըչա՛րչըրվի *(Վն.)*։ Ճիժ էրոցքի մէչ ա *(կճ.)*։ *2) Տենդ, մալարիա։*

ԷՐՈՒԾՔ[ց], *գ.* *1) Արյան գիծ։ 2) Թռչունների երամ։* Կիրիշկեր էրկ՛ինք՛-կ՛ետին, էրուծք՛ թըռչունք՛։

ԷՐՈՒՍԱՂԵՄ, *գ.* *Եգիպտացորեն։* Էրուսաղեմ կըպցվեմ *(Բմ.)*։

ԷՐՎԵԼ, *չբ. կբ.* *Այրվել։*

ԷՐՏԻՍ, *գ.* *Երդիկ։* Կո՛ղն վոր տընէն էլնի, եզն էրտըսից կըխանի։ Էրտըսից պա՛լան-պա՛լան ծուխ կէլնէր *(Վն.)*։

ԷՓԵՅԻ, *մկ.* *Բավական։*

ԷՓԷՋԱ, *մկ.* *Բավականին։*

Է-Ք[ց], *գ.* *Էգ գոմեշ։*

Է-ՔԻ, *կճ. գ.* *Այգի։*

Է-ՔՆԱԽՈՂ, *կճ. գ.* *Այգողք։*

Է-ՔՊԱՐԵՎ, *գ.* *Այգեբարև։ Ծան. – Նորապսակները նվագողների հետ միասին առավոտյան կտուր են բարձրանում՝ ծագող արևին այգեբարև տալու։*

ԷՕԴԱ, *գ.* *1) Բառացի՝ սենյակ։ 2) Գյուղերում ախոռների մի անկյունում շինված բարձրություն՝ սաքու՝ գյուղական ակումբ, որտեղ ձմռան երկար գիշերներին հավաքվում էին գյուղացիները և լսում աշուղների երգն ու նվագը, հեքիաթասացների կամ քաղաքից եկած մարդկանց պատմությունները։*

ԷՖԵՆԴԻ, *գ.* *1) Պարոն։ 2) Գրագետ մարդ։*

Ը

ԸԽԹԱՋ, *ած. Կարոտ, կարիք ունեցող։*

ԸԽԹՅԱՐ, *ած. Ծեր։* Տին ըխթյար ես *(Վն.)։ Ծան. – Բառը գործածվում էր ծերացած մարդու խեղճությունը կամ հարգանքի արժանի լինելը շեշտելիս։ Օրհնելիս ասում էին՝* բարով ծերանաս, *իսկ նզովելիս՝* ոչ ծերանաս։

ԸԽԹՅՈՐ, *գ. 1) Հարգ, հարգանք։ 2) Երախտագիտություն։ 3) Արժեք։ 4) Փորձառություն։*

ԸԽՏԱՏԵՂՐԱՑՆՔᵋ, *գ. Ուխտատեղիներ։*

ԸՂԲԱԼ, *գ. 1) Բախտ։ 2) Բախտավորություն։*

ԸՂԵՂ, *Բմ. գ. Ուղեղ։*

ԸՂԻ *(նաև՝ Հթ. Բմ. Կճ.), ած. Հղի։* Ըղի կով *(Կճ.)։*

ԸՂՐԻ ՍԱՊՈՆ, *Հալեպից բերվող լվացքի ընտիր օճառ։*

ԸՂՐՈՒԿ, *գ. Դեղին բույս։*

ԸՂՈՒՂ, *Հթ. գ. Ուղեղ։*

ԸՆԹԵԼ, *նբ. Ընթով վերցնել։*

ԸՆԿԵՑ, *գ. Անասունների վիժելը։*

ԸՆՉԱՆՔᵋ, *1) դ. Այնչափ, այնքան։ 2) կ. Մինչև։*

ԸՆՉՈՒՔ, *Բմ. կ. Մինչև։*

ԸՆՍ-ՋԸՆՍ, *գ. Մարդ արարած։*

ԸՆՏՐԱԾՈՒՐԻԿ, *ած. 1) Ընտրված։ 2) Ընտիր։*

ԸՆՏՐՈՒԿ, *նբ. ած. Ընտրված, լավը։*

ԸՆՑԿՈՒՆ, *դ. Այնպես։*

ԸՆՑՆԵԼ, *չբ. 1) Անցնել։* Լանոից ընցավ։ Շան մոտէն կընցնես, փետը հազըր պախի։ *2) Մարել։* Ճրաքʲըն ընցոաւ։

ԸՆՑՈՒՑԵԼ, *վն. Հթ. Լիմ, նբ. Հանգցնել։* Ճրաքʲ ընցուցի *(Հթ.)։* Կըրակ ընցուց *(Վն.)։*

ԸՆՔՎԵՐ, *գ. Հոնքեր։*

ԸՆՔᵋՈՒՍ-ԸՆՔᵋՈՒՍ, *մկ. 1) Հեկեկալով։ 2) Հորդորանք թափելով։*

ԸՌԱՋԻ, *ած. Գոհ։*

ԸՌԱԽԻ, *գ. Արաղ, օղի։*

ԸՌԱԽԿԱՄ, *գ. Թիվ, հաշիվ։*

ԸՌԱՍՏ ԻԿᵋԱԼ, *Հթ. Հանդիպել։* Կընաացի Վան, ճամբէխ ըռաստ էկա իմ ախպոր *(Հթ.)։*

ԸՌԱՎԱԹ, *ած. Ընթացիկ։*

ԸՌԱՖ, *գ. Թարեկ։*

ԸՌԲԱՄԱՆ, *գ. Ռուպի՝ դոշաբի աման։*

ԸՌԲԷ ՃԱՇ, *վն. Ալյուրով և ռուպով կերակուր։*

ԸՌՉԿԵԼ, *չբ. 1) Խոռվ մնալ քեն պահել։ 2) Նեղանալ, վիրավորվել։* Ըռըկեր ի, էլ մեր տուն չի կա։ Ըմէն տաոտակ պանից կըըռըկէր, խետ զիկ չէր խօսե(ա) *(Վն.)։*

ԸՌԸՀԱ, *գ. Գրավ։*

ԸՌԸՀԱՆ, *կճ. գ. Ռեհան։*

ԸՌԸՇՆԵԼ, *կճ. չբ. Երեսը կարմրել։* Խիվընդի էրես ըռըշնէ *(կճ.)։*

ԸՌԸՋԱ, *գ. Աղաչանք, աղերսանք։*

ԸՌՀԱԹԵԼ, *չբ. Հանգստանալ։*

ԸՌՀԱՆ, *գ. Ռեհան։*

ԸՌՈՒԲ *(նաև՝ Հթ.)*, *գ. Դոշաբ։* Ըռուբ խավողի շիրայից կիփեն *(Վն.)։ Ծան. – Վանում թթից դոշաբ չեն եփել։*

ԸՌՕՃԻԿ[8], *Հթ. գ. Ռոճիկ։*

ԸՍԸՍԿՆԱ, *դ. Այսպես։*

ԸՍԹԱ, *գ. Վարպետ, ուստա։*

ԸՍԹԱՄԲՕԼ, *գ. Կոստանդնուպոլիս, Ստամբուլ։*

ԸՍԿԸՆԱ, *ԸՍԿԸՆԱ, Լիմ, դ. Այսպես։*

ԸՍԿԻ, *մկ. Բնավ։*

ԸՍԿՆԷՄ, *դ. Այնքան։*

ԸՍԿՈՒՄ, *դ. Այնքան։* Ըսկում լըցվավ ջըվալս, լըցվավ, վոր կ'ախն էր ճոռթվէր։

ԸՍԿՈՒՆ[1], *մկ. Իսկույն։*

ԸՍԿՈՒՆ[2], *Լիմ, 1) դ. Այսպես։ 2) դ. Այդպես, նույնպես։ 3) վ. Նույնիսկ։*

Ըսկուն ի, *Եթե այդպես է։*

ԸՍՆԱ, *Լիմ, դ. Այսպես։*

ԸՍՊԱԹ, *գ. Ապացույց։*

ԸՍՊԱՐՄԱՃԵՏ, *գ. Պարաֆին, բնաճարպ։* Ժաամտուն մեղրեմոմ կըվառեն, կաղանդին՝ ըսպարմաճետ ա։

ԸՍՊԻՐԹՈ, *գ. Սպիրտ։*

ԸՍՏԵՐՃ, *Լիմ, ած. Ստերջ։*

ԸՍՏԵՓ, *մկ. Հետո-հետո։ Ծան. – Մի բան պատմելիս ունկնդիրը շարունակ ասում է՝* ըստեփ-ըստեփ։

ԸՍՏՐԹՈՒՍ, *մկ. Այս անգամ։*

ԸՍՏՈՒՑ, *գ. Այստեղից։*

Ըստուց դէն, *1) Այստեղից այն կողմ։ 2) Սրանից հետո։*

ԸՏԿԸՆԱ, *Լիմ, դ. Այդպես։*

Թ

Թ-Ա, *շ. Թե։*

ԹԱԲԱՂ, *գ. Սկուտեղ, մատուցարան։*

ԹԱԲԱՂԱ, *գ. Թղթի թերթ։* Մէյ թաբաղա թուխտ տաաիս։

ԹԱՓԱՅՈՒՔ[8], *ած. Հազվագյուտ, չնաշխարհիկ։ Գործածվում է գլխավորապես բացասական իմաստով։*

ԹԱԲԻ, *գ. Կալվածագիր, հպատակություն։*

ԹԱԲԻԱԹ, *գ. Բնույթ, բնավորություն։*

ԹԱԲԼԱ, *գ. Փայտե սինի։*

ԹԱԴԱՐԷՔ՞, *գ. 1) Նախապատրաստություն։ 2) Պարենի կուտակում։*

ԹԱԴԲԻՐ, *գ. Խնջույքի, տոնակատարության, հարսանիքի հրավերքի պատրաստություն։*

ԹԱՁԱ, *տե՛ս* **ԹԱԺԱ**։

ԹԱՁԱԴԱՆ, *մկ. Նորից։*

ԹԱՁԻ, *գ. Որսորդական շուն։*

ԹԱԹ, *գ. 1) Ձեռքի թաթ։ 2) Գուլպա (նաև՝ Հթ.)։* Թաթի տակ, թաթպան իրես, ժանգոտ մախաթ, քե վո՞վ ի խասրաթ։

ԹԱԹԱՃՈՐ, *գ. Խանձարուրի երեխայի թևերը կապելու շոր։*

ԹԱԹԱՐԻ, *ած. Կիսաեփ։*

ԹԱԹԱՐ ՅԱԽՆԻ, *Կիսաեփ մսի արգանակ։ Ծան. – Երբ սելջուկները Հայաստան եկան, միսը չէին եփում։ Ոչխարը մորթելուց ու փորոտիքը մաքրելուց հետո դնում էին ձիու գավակին, համեմի տակ ու շարունակում իրենց արշավանքը։ Ձիու մարմնի տաքությունից ոչխարի միսը մի քիչ եփվում էր և դառնում ուտելի։ Հայերը, այդ նկատի ունենալով, կիսաեփ մսի հյութից պատրաստված ապուրը կոչվում էին թաթար յախնի, իսկ կիսաեփ միսը՝ թաթարի։*

ԹԱԹԽԵԼ, *նբ. Թաթախել։*

ԹԱԹՊԱՆ *(նաև՝ Բմ.),* **ԹԱԹՊԱՆ**, *Հթ. Լիմ, գ. Ձեռնոց* Սըռ էր, թաթպան խակ՚ավ *(Վն.)։*

ԹԱԹՎԱՆ, *Կճ. գ. Ձեռնոց։* Թաթվան տըրեց ծեռներ *(Կճ.)։*

ԹԱԺԱ, *ած. Նոր, թարմ։* Թաժա խացի խոտ կուկ՚ա։

ԹԱԺԱԽԱՑ, *գ. Նոր թխված հաց, որ սիրում էին տաք-տաք ուտել առանց պանրի, ժաժկի և այլն։* Շէն տան տղեն՝ թաժախացի կարո՞տ։ Խացըմ կերա, խաց էր, խացըմ էլ կերա, թաժախաց էր, ք՚աք՚ մեռըլի կիսուր չէկավ, վոր նըստինք, խաց ուտինք։

ԹԱԼԱԼԵԼ, *չբ. Նորածինը ուշաթափվել։* Էրէխէն թալալեց, պէրնից ճո՚ւր կընաց։

ԹԱԼԱԼՈՍԻ ԿԻՐԱԿԻ, *Մեծ պասի առաջին կիրակին։*

ԹԱԼԱԼՈՑ, *գ. Երեխաների նյարդային հիվանդություն, որի ախտանիշը կարկամելն է։*

ԹԱԼԱՖ ՏԱԼ, *Ջոհ տալ, կոտորվել։*

ԹԱԼԵԼ, *նբ. 1) Նետել, շպրտել։* Քար թալեց (իսկեց) փոսի մէչ (փոս ինե) *(Վն.)։ 2) Վառել։* Կրակ էթալ տուն։ *3) Լիմ, Կոնծել։* Արի մէչ թաս արաղ թալինք՚։

ԹԱԼԹԼՎԵԼ, *չբ. 1) Ուշագնաց լինել։ 2) Լեզուն կապվել։* Կըթալթըլվի, էլ չի կանա մէչ պան ջուղապ տա ախչըկան։

ԹԱԼԻՄ, *գ. Զինվորական վարժություն, մարզանք:*

ԹԱԼԻՄԼԻ, *ած. 1) Մարզված: 2) Կրթված:*

ԹԱ̈ԼԻՃՔ^{ց}, *Բմ. գ. Հալած յուղի տականք:*

ԹԱԼՆԵԼ, *նբ. Կողոպտել, թալանել:*

ԹԱԼՆԸՎԵԼ, *կբ. Կողոպտվել, թալանվել:*

ԹԱԼՎԱՋԱՆ, *գ. Սկյուռանման կենդանի:*

ԹԱ̈ԼՑԸՆԵԼ, *չբ. 1) Լուսնոտել, բերանը փրփրել, երեսն ու շրթունքները կապտել: 2) Հթ. Ուշաթափվել:*

ԹԱԽԸՄ, *գ. 1) Խումբ: 2) Ընտանիք: 3) Գործիքների ամբողջություն:* Կ'ուլթնի թախըմ նըմուշ-նըմուշ:

ԹԱԽԹԱԲԻԹԻ, *գ. Փայտոջիլ, մլիկ:*

ԹԱԽԹՐԱՎԱՆ, *գ. Գահավորակ:*

ԹԱԽԹԸՓԵԼ, *նբ. Թափ տալ: Ծան. – Ծառը թախթըփել՝ պտուղը ցած թափելու համար, շորը թախթըփել՝ փոշին թափելու համար:*

ԹԱԽԼԱ ՏԱԼ, *Թավալգլոր լինել, գլուխկոնծի տալ:* Էրէխեք' խոտի վէրէն թախլա կուտէն *(Վն.):*

ԹԱ̈ԽԿԵԼ, *Հթ. չբ. Թնձկալ:*

ԹԱ̈ԽԿԷՆ, *գ. Րոպե:*

ԹԱԽՏ *(նաև՝ Հթ.), գ. Գահ:* Թակավորն ինգ'ավ թախտից:

ԹԱԽՏԱԲԻՆԱ, *ած. Փայտաշեն:*

ԹԱԽՔ^{ց}ԵԼ, *չբ. Կեղտից մազերը խառնվել:* Նաղանի մայրիկ կընա̈ց Երուսաղէմ, չուզեց մէխք'երի թողութէն, ուզեց թախք'ած մազի, խառնած կաժի իստըկութէն:

ԹԱԿ̂ԱԼԱ, *Բմ. գ. Գլուխկոնծի:*

ԹԱԿԱՎԻՏ, *գ. Կենսաթոշակառու:*

ԹԱԿԱՎՈՐ, *գ. 1) Արքա: 2) Հարսանիքի փեսան:*

ԹԱԿՈՒՀԻ, *գ. 1) Թագուհի: 2) Հարսանիքի հարսը:*

ԹԱ̈ՀԼԻԼԴԱՐ, *գ. Հարկահավաք:*

ԹԱՀԼԻՔ^{ց}ԱԼԻ, *ած. Վտանգավոր:*

ԹԱՀՄԻՆ, *գ. Կարծիք, ենթադրություն:* Էն թաhմին կանի:

ԹԱՂԹԷԿ, *ած. 1) Կեղևը դեռ չամրապնդված: 2) Վիժած, ժամանակից շուտ ածած ձու:*

ԹԱՂԻՍ, *գ. Թաղիք:*

ԹԱՂՔ^{ց}ԱՎՈՏ, *ած. Ծուռումուռ քայլող:* Տո̈ւ էլ մեռնես, ք'ո թախք'ավոտ մարդն էլ վէրէն:

ԹԱՃ, *գ. Կանացի մարգարտյա գլխազարդ:*

ԹԱՃԻՐ, *գ. Ալյուր պահելու համար ընկույզի փայտից շինված մեծ պահարան:*

ԹԱՄԱԼՍԸՋ, *ած.* *Անհիմն։*

ԹԱՄԱԽ, *գ.* *Ընչաքաղցություն։*

– Թամախ անել, *Ցանկանալ ունենալ։*

ԹԱՄԱՂԱ, *գ.* *Կանացի արծաթյա գլխազարդ։*

ԹԱՄԱՄ, *ած.* *1) Լրիվ։ 2) Կատարյալ։*

ԹԱՄԱՆԱ, *գ.* *Խնդրանք։*

ԹԱՄԱՆԴԱ, *գ.* *Բարև, ողջույն։*

ԹԱՄԱՉԱ, *գ.* *Տեսարան, հանդես։*

ԹԱՄԱՉԱ ԱՆԵԼ, *վն.* *Նայել։*

ԹԱՄԱՍՅՈՒԳ, *գ.* *Մուրհակ։*

ԹԱՄԱՐՋՈՒ, *գ.* *Որևէ բանի, հատկապես իրենց այգում չեղած մրգի, իրենց տանը սովորաբար չեփվող կերակուրի հանդեպ կարոտ։* Շեն տան խարս՝ շուրվի թամարզու։

ԹԱՄԲԱԼ *(նաև՝ Կճ.),* *ած.* *Ծույլ։* Էն շատ թամբալ// անգյալ// գյագյոշ// թօթխար մարթ էր *(Վն.)։* Ավար-ավար, քյա սև կապիմ, կապոտ կապիմ, կընիկն էլ ըսկընա // ըսըսկընա թամբալ կէյնի։

ԹԱՄԲԱՔ^{ə}Ի, *գ.* *Կըլկըլակի՝ նարգիլեի ծխախոտ։*

ԹԱՄԲԽԵԼ, *նբ.* *Պատվիրել։* Աշակերտաց թամբեխ արեց, ուր խետ նըստեն օրն փառաց։

ԹԱՄԻՋ, ԹԱՄԻՋ, *Լիմ, ած.* *Մաքուր։*

ԹԱՄՈՒՋ, ԹԱՄՈՒՋ, *Կճ. ած.* *Մաքուր։*

ԹԱՄՔ^{ə}, *գ.* *Թամբ, համետ։*

ԹԱՄՔ^{ə}ԵԼ, *նբ.* *Թամբել։*

ԹԱՅ, *գ.* *Ջույգի մեկը։* Թաթպընի մէկէլ թայը չընկա, չեմ կընտնե։

ԹԱՅԳ^{ə}ՈՋ, *ած.* *Տարբեր գույնի աչքերով։*

ԹԱՅԻՆ, *գ.* *Օրապահիկ, թոշակ։* Օր մէյ խավու ծո՛ւ թային կանեն։

ԹԱՅԼԱ, *վ.* *Երանի թե։*

ԹԱՅԼԻԿ, *գ.* *Մահուդի տաք հողաթափ, մուճակ։*

ԹԱՅԼԻՖ, *գ.* *1) Առաջարկ։ 2) Հանձնարարություն։ 3) Ձևականություն։*

ԹԱՅԼԻՖՍԸՋ, *մկ.* *Առանց ձևականությունների, մտերմաբար։*

ԹԱՅՄԻՆ, *տե՛ս* **ԹԱՀՄԻՆ**։

ԹԱՅՆԱ, *գ.* *Որմնադիրի համար շաղախ բարձրացնելու տաշտակ։* Թայնա կրողն անկընցավ։

ԹԱՅՐԱՐԵԼ, *նբ.* *1) Կրկնել։ 2) Պատվիրել։* Ախչըկաս թայրարիցի, վոր խարսի պես պէրան փակ պահի, չըպոռա։

***ԹԱՆ**, գ.* *Թանապուր։* Թան կիփին գ֊օրօմաստից կամ մածնից, կամ էլ չորթընից՝ կորկոտօվ, յա // կամ պըրընձօվ *(Վն.)։*

ԹԱՆՈՎ ԱՊՈՒՐ, *Հթ.* *Թանապուր։* Մարէն թանօվ ապուր ի իփե *(Հթ.)։*

ԹԱՆԱ, գ. *Հատ։* Քանի՛ թանա էլավ։

ԹԱՆԱԶՈՒՐ, գ. *Ջիջում։* Ընկոտրվեց, թանազուր չարաց իսկի։

ԹԱՆԳ-ՄԱՆԳ, *ած. Թանկ։*

– Թանգ-մանգ էլնել, *Իր գինն իմանալ, իրեն թանկ ծախել։*

ԹԱՆԶԻՖ, գ. *Շատ բարակ բամբակյա կտոր, մառլյա։* Յարէն թանզիֆով կապեցին։

ԹԱՆԷՊԱՍ, *Բմ. գ. Թանապուր։* Թանէպաս կըշիքին թանից, ծավարից *(Բմ.)։*

ԹԱՆԹԱՆԱ, գ. *Հանդիսավորություն։*

ԹԱՆԹԱՆԱԼԻ, *ած. Աղմուկով, հանդիսավորությամբ։*

ԹԱՆԹԱՆԱՍԻ, *ած. Խենթուկ, ծալը պակաս, տախտակը պակաս։*

ԹԱՆԻՔ՞Ա, գ. *Թիթեղ։*

ԹԱՆԻՔ՞ԱՋԻ, գ. *Թիթեղագործ։*

ԹԱՆԽԱ, գ. *Մենավայր, սակավամարդ վայր։*

ԹԱՆԽԱԾ, գ. *Թանից և ալյուրից պատրաստված ճաշ, որ ուտում են՝ վրան յուղ լցնելով։*

ԹԱՆԽՅՈՒՍ, գ. *Թանխաշի՝ թանից և ալյուրից պատրաստված ճաշի մի տեսակ։*

ԹԱՆՔ՞ ԴՆԵԼ, *Նոր գործած կտավը հարթելու համար ծանրության տակ դնել։*

ԹԱՇՏ *(նաև՝ Լիմ)*, գ. *Լվացքի տաշտ (խմորի տաշտին ասում են՝* տաշտ*)։*

ԹԱՋԻՐ, գ. *Ալյուրի մեծ պահարան՝ շինված կաղնու փայտից։*

ԹԱՌ, *1)* գ. *Հավի թառ։ 2)* գ. *Նորածնի բերանի ջուր։ 3) ած. Թարմ, նոր։*

ԹԱՌԼԱՆ, *ած. Ազնվական։*

ԹԱՌՄԱ, գ. *Եկեղեցու մեջ կանանց հատկացված վերնահարկ։*

ԹԱՍ, գ. *1) Բաժակ։ 2) Աղջիկների արծաթե գլխազարդ։ 3) Վն. Պղնձե գավաթ։* Թաս (քասէն) տըրուկ ի գլօրօմաստի ամնի վէրէն *(Վն.)։ 4) Հթ. Ջուր խմելու կավե կամ պղնձե գավաթ։*

ԹԱՍԼԱ ՏԱԼ, *Գլուխկոնծի տալ։*

ԹԱՍԼԱԽ, *ած. Կոպիտ, հաստ։*

ԹԱՍԼԻՄ ԷԼՆԵԼ, *Անձնատուր լինել։*

ԹԱՍՔՅԱՐԱ, գ. *Անցաթուղթ, որ Թուրքիայի բնակիչներին տալիս էին միայն օտար երկիր մեկնելու ժամանակ։*

ԹԱՎԱ, գ. *Տապակ։*

ԹԱՎԱՆ, գ. *Առաստաղ։*

ԹԱՎԱՔՅԱԼԻ, *ած. Պարզամիտ, միամիտ։*

ԹԱՎԼԱ, գ. *Ախոռ։*

ԹԱՎԼՈՒ, գ. *Նարդի։ Ծան. – Նարդու քարերի անունները*

Վանում խառն էին՝ Թուրքերեն, քրդերեն և պարսկերեն: Այսպես՝ հափ եկ *(բոլորը մեկ)*, իքի բիր *(երկու և մեկ)*, դյուբարա *(երկու-երկու)*, սեբադու *(երեք և երկու)*, դու սե *(երկու-երեք)*, սե չիար *(երեք և չորս)*, դորթ չիար *(չորս-չորս)*, դորթ բեշ *(չորս և հինգ)*, դու բեշ *(երկու հինգ)*, շաշ բեշ *(վեց և հինգ)*, դու շաշ *(երկու վեց)*, շաշ եկ *(վեց և մեկ)*, շաշ դու *(վեց և երկու)*, շաշ սե *(վեց և երեք)*, շաշ չիար *(վեց և չորս)*, փենջ սե *(հինգ և երեք)*, փենջ դու *(հինգ և երկու)*, փենջ եկ *(հինգ և մեկ)*, չիար դու *(չորս և երկու)*, չիար եկ *(չորս և մեկ)*, սե բիր *(երեք և մեկ)*: *Թավլու խաղում էին մեծ մասամբ վարսավիրանոցներում՝ միաժամանակ թեյ, սուրճ կամ արաղ խմելով:*

ԹԱՎՈՒՐ, *գ. Տեսակ:* Իմ խէրանց իկ՚ին վարդ խմզըր թավուր:

ԹԻՐԻՁԻ, *գ. Կշեռք:*

* Թիրիզուն զարկել, *Պատ շարելիս թելից կախված ծանր կշռաքարով պատի ուղիղ կամ թեք լինելը որոշել:*

ԹԱՐԱԽԼՈՒ, *Լիմ, ած. Թերխաշ:*

ԹԻՐԻՂԻՄ, *գ. Փողոցի այն հատվածը, որն ընկած էր տվյալ տան առջև, մինչև առվի ափը, որը մաքրելն ու խնամելը, ծառ տնկելը տանտիրոջ պարտականությունն էր:*

ԹԻՐԻՆՋԻ, *գ. Սանդուղք:*

ԹԻՐԻՖ *(նաև՝ Լիմ)*, *գ. Կողմ:*

ԹԻՐԲԻՈՒԼԻ, *ած. Կիրթ, դաստիարակված:*

ԹԻՐԳԵԼ, *Հթ. չբ. Ձեռք քաշել:*

ԹԱՐԵՔ[3], *գ. Պատին ամրացված տախտակ՝ վրան մանր իրեր շարելու համար:*

ԹԻՐՋԻ, *գ. Դերձակ:*

ԹԻՐՋԻԲԱՇՅԱՆ, *գ. Դերձակապետյան:*

ԹԻՐԹԻԽԸՄ, *գ. Յուրայիններ:* Թիրթիխըմով կընացին խարսնիս:

ԹԻՐԹԻՓ, *Հթ.*, **ԹԱՐԹԱՓ**, *Կճ. գ. Արտևանունք:* Ինոր թիրթիփ թափիր էր *(Վն.)*: Աշկի թարթափներ թափեր ա *(Կճ.)*:

ԹԻՐԻԲԻ, *գ. Կրթություն, դաստիարակություն:*

ԹԻՐ-ԹԻՄՈՒԶ, *ած. Շատ մաքուր:* Խարսն էսըսկընա թիր-թիմուզ կըպախի ուր տուն:

ԹԻՐԻՖ, *գ. Բացատրություն:*

ԹԻՐԿԵԼ, *չբ. Հրաժարվել, վերջ տալ:*

ԹԻՐԿ ՏԱԼ, *Վն. տե՛ս* **ԹԻՐԿԵԼ**: Էտ(ա) պյանին թիրկ տու *(Վն.)*: Չըկարա ք՚աշելուն թիրկ ի տըվե:

ԹԻՐՋԸՄԱՆ, *գ. Թարգմանիչ:*

ԹԻՐՍ, *ած. Հակառակ:*

ԹԱՐՍԸՆԱ, *մկ. Հակառակի պես։*

ԹԱՐՍԼԱՄԻՇ ԷԼՆԵԼ, *Հակառակվել, զայրանալ, կատաղել։*

ԹԱՐՔ^{3}, *գ. Գավակ։*

ԹԱՐՔ^{3} **ՋԱՐԿԵԼ**, *Նոր կառուցվելիք քյահրիզի ական (ակունքի՛) տեղը նախօրոք որոշել, որ կատարում էին վարպետ քանքանները միասին «թարք՛ զա՛րկելով»։ Նրանք չափում էին առաջին հորի խորությունը, ապա այդ հորաբերանին պառկած նայում էին ապագա ական կողմը՝ որևէ առարկա կամ ծառ ընդունելով որպես կողմնորոշիչ։ Չափում էին այդ ծառի բարձրությունն այն կետից, որ հավասար էր իրենց պառկած տեղին։ Ապա ջրի հոսանքը ապահովելու համար անհրաժեշտ թեքությամբ փորում էին և համարյա անսխալ որոշում կառուցվելիք քյահրիզի ական տեղը։*

ԹԱՑ ՏԵՂ ՆՍՏԵԼ, *Իր օգուտը չհասկանալ։* Էն թաց տեղ նըստող չի։

ԹԱՑԱՆ, *գ. Կաթնեղեն։*

ԹԱՑԵԼ, *նբ. Թրջել։*

ԹԱՓԱ, *գ. Բլուր։*

ԹԱՓԱՆ, *գ. Փորոտիք։*

ԹԱՓԱՌԵՋ, *գ. 1) Բառացի՝ բլրակույտ։ 2) Վանից Իգդիր տանող ճանապարհի վրա գտնվող ամենաբարձր լեռնանցքի անունը. քրդերեն՝ Բարձր դար։*

ԹԱՓ-ԹԱՋԱ, *ած. Շատ նոր։*

ԹԱՓ-ԹԱՓ, *մկ. Արագ-արագ։*

ԹԱՓԹԱՓԱ, *գ. Պարսկական լավաշ՝ փիդէ։*

ԹԱՓԹԸՓԵԼ, *նբ. Բազմիցս թափ տալ։*

ԹԱՓՍԻ, *գ. 1) Ափսե։ 2) Մատուցարան։*

ԹԱՓՈՒՑՔ^{3}, *գ. 1) Թափված որդնակեր պտուղ։ 2) փխբ. Հիվանդոտ մարդ։*

ԹԱՔ^{3}, *1) ած. Մեկ հատ, կենտ։ 2) մկ. Միայն թե։*

ԹԱՔԻ, *մկ. Միայն։* Թակավուրու քյավոր էստեղ պիտի ելնէր, վոր թաքի դէօք քյաշեր։

ԹԱՔՅԱՌ, *գ. Անիվ։*

ԹԱՖ, *Լիմ, գ. Տերև։*

ԹԵԹԿԵԼ, *չբ. Ջուգավորվել (թռչունների)։*

ԹԵԹՎԱԽՈԿ^{3}**Ի**, *ած. Ներողամիտ, անհիշաչար։* Վեր կըթռնեմ, ծաղիկ եմ, թեթվախոկի ախչիկ եմ։

ԹԵԼՔ^{3}**ԱԾ**, *գ. Տափակաշուրթ աքցան։*

ԹԵԽ, *Լիմ, կ. Դեպի։* Խարս վա՛զավ թեխ տուն *(Լիմ)։*

ԹԵԽՍ, *գ. Գրգիռ, նյարդայնություն։* Խէրըս մէյ դեխէն թեխս կուտա, տո՛ւ մէյ դեխէն։

ԹԵՂ, *Բմ. կ. Դեպի։*

ԹԵՂԵԼ, *նբ. Հավաքել, ժողովել (հատկապես կալը)։*

ԹԵՇՏԱԿ, *Լիմ, գ. Լվացքի տաշտ։*

ԹԵՌ, *գ. 1) Հարդի, բամբակի մեծ պարկ, բարդան։ 2) Երկկողմանի գրպան ունեցող խուրջինանման պարկ՝ էշը, ձին բարձելու համար։*

ԹԵՎԹԸՐ, ԹԵՎՏԸՐ, *Լիմ, ած. Թեթև։*

ԹԵՐ, *Հթ. գ. Ջրացած կանաչեղեն։*

ԹԵՐԱՍԱՆ, *գ. Դերասան։*

ԹԵՐԹԵՐՈՒՆՔ[8], *գ. Հացի, խմորեղենի փշրտուք։*

ԹԷԲՌԵԼ, *չբ. Շշմել, զարմանալ։* ԸՍտամբօլա բօղազ մըտանք, թէբռանք, մընացինք։

ԹԷԹՎԱԽԵԼՔ[8], *Հթ. ած. Թեթևամիտ, թեթևսոլիկ։*

ԹԷԹՎԱՍԸԼԻԿ[8], *Հթ. ած. Թեթևամիտ, թեթևսոլիկ։*

ԹԷՇՏ, *գ. Լվացքի տաշտ։*

ԹԷՐԱՄԱՇ, *1) ած. Կիսով չափ մաշված և անպետքացած։ 2) փխբ. գ. Ամեն մի տհաճ բան, անձ։* Թէրամաշը վրա տըվեց։

ԹԷՐԱՄԵՌ, *ած. Նախատական խոսք, թերամաշ։*

ԹԷՐՅԱՔԻ, *ած. 1) Նեղսիրտ։ 2) Շատ բծախնդիր։ 3) Մի բանով տարված։*

ԹԷՔԱԼԻՖԷ ՀԱՐԲԻԷ, *Պատերազմական պետքեր։ Ծան. – 1914 թվականին, պատերազմի մեջ մտնելուց առաջ Թուրքական կառավարությունն այս անվան տակ կողոպտեց կայսրության հատկապես քրիստոնյա բնակչությանը՝ նրանցից առանց վճարի հավաքելով անասուններ, արմտիք, փոխադրամիջոցներ, զանազան իրեր, մինչև անգամ փայտե գդալներ։*

ԹԷՔՔ[8]**Է**, *գ. Մահմեդականների վանք։*

ԹԷՕԼ, *գ. Փոխհատուցում, վրեժ։*

Թէօլ խանել, *Վրիժառու լինել, վրեժը լուծել։*

ԹԷՕՐԹԻԿ, *գ. Կարասին կպած գինու դիրտը։*

ԹԷՖԱՐԻԿ, *գ. Օծանելիքի տեսակ։*

ԹԸԲԸՂ, *գ. ած. Կին, որ երեխա չի ունենում և ունեցածն էլ անմիջապես կորցնում է։*

ԹԸՋԲԵՂ, ԹԸՋԲԷԽ, *Վն., ԹԸՋԲԵԽ, Կճ. գ. Համրիչ։* Պապին թըզբեխ կըք'աշի *(Կճ.)։* Պապիկ թըզբէխ կ°ք'աշէր, մըտաց մէչ կասէր՝ «Խէր, շառ, Աստված» *(Վն.)։*

ԹԸԹԽԿԻՉ, *գ. Ջախջախ։*

ԹԸԹՈՒՇ, *Բմ. գ. Թռչունների*

նախաստամոքսը, ստամոքս-պարկը, քարճիկը, որտեղ հավաքվում է կերած կուտը։

ԹԸԹՒԻՑ *(նաև՝ Լիմ)*, *տե՛ս* **ԹԸԹՌՒԾ**։ Շատ կուտ ուտելուց թըխսըմօր թըթռւց կըլցվի, կուռի։ Տանակ աւռ, թըթռւց ճըղի *(Վն.)*։ Խավու թըթռւց ի՛ըլլին ի *(Լիմ)*։

ԹԸԼԷՕԼ, *ած. Թոթով*։ Թըլէօլ Տավիթ։

ԹԸԼԸՍՄԱԹ, *գ. Թալիսման, բախտ, ճակատագիր*։ Էտ իմ թըլըսմաթն էր։

ԹԸԼԹ, *Լիմ, գ. Հալած յուղի տականք*։

ԹԸԼԻԿ, *ած. Թլվատ*։

ԹԸԼՕԼ, *վն., ԹԸԼՕԼ, կճ. Լիմ, ած. Թլվատ*։ Քո ինգ՚եր լիզվից թըլիկ //թըլռւլ էր, թըլիկ-թըլիկ կըխօսէր *(Վն.)*։

– Թըլռւլ զըրռւցել, *կակազել*։ Վախից լէզռւն թըլռւլ կըզըրռւցա *(Կճ.)*։

ԹԸԼՖԵԼ, *չբ. Սաստիկ հոգնել, ուժասպառ լինել*։ Էրկէն ճաւմբաւխ ինկ՚ե, թըլֆե, ինգ՚ե։

ԹԸԽԹԸՄՈՐ, *վն. գ. Թթխմոր*։ Թըխթըմորօվ շաղուկ խըմոր լավ խաց կէյնի, լավաշ լէն կըպաւցվի *(Վն.)*։

ԹԸԽԹԸՄՈՐԱՄԱ, *գ. Թրծած և լաքած փոքրիկ աման, թթխմոր պահելու համար*։

ԹԸԽԿԵԼ, *նբ. Թակել*։ Տռւռ թըխկացրի։

ԹԸԽՍԸՄԷՐ *(նաև՝ Հթ.)*, **ԹԸԽՍԱՄԷՐ**, *վն. գ. Թուխս*։ Թըխսամէր ուր ճըտեր առավ ուր թիվի տակ *(Վն.)*։

ԹԸԽՏԸՄՈՐ, *Հթ. կճ. Լիմ, գ. Թթխմոր*։ Թըխտըմորօվ խաց թըխին *(Կճ.)*։

ԹԸՄԱԽ, *գ. Ագահութիւն, աչքածակութիւն, ժլատութիւն*։

ԹԸՄԱԽՉԱՌ, *Հթ. ած. Ժլատ*։

ԹԸՄԱԽՔ՟ԱՌ, ԹԸՄԱԽՔ՟ԱՌ, *Լիմ, ած. 1) Ագահ։ 2) Ժլատ*։

ԹԸՄԲԼԻԿ, *ած. Գեր (երեխա)*։

ԹԸՄԲՐԵԼ, *չբ. Թմրել*։

ԹԸՄԸՄԵԼ, *նբ. Լրացնել*։

ԹԸՄԹՌԵԼ, *չբ. Ուռչել*։

ԹԸՄԹՌՈՒԿ, *ած. 1) Շատ գեր, վատառողջ մարդ։ 2) Շատ հասած ու փչացած միրգ*։

ԹԸՅԿԸԹՆԿԱԼ, *չբ. Կեղծ հեկեկալ*։

ԹԸՆԹՈՑ, *գ. Հարիսա խառնելու փայտ*։

ԹԸՆԹՈՒԽ, *ած. Փափլիկ*։ Թընթուխ թըշեր։

ԹԸՆԿԹԸՆԿԱԼ, *չբ. Երեխան անճայն լալ*։

ԹԸՆՉԿԱՑՆԵԼ, *նբ. Տեռորի ենթարկելով սպանել*։

ԹԸՆՉԿԵԼ, *չբ. Մնալ իր տեղում*։ Թընչկիա՛, տեղդ նըստիա՛։

ԹԸՆՉԿՌԵԼ, *չբ. Հանկարծամահ լինել (ասվում է վատ հայի մասին)*։

ԹԸԸ, *վ. Ափսոս։*

ԹԸԸԱԼ, *չբ. Եռալու ձայն հանել։*

ԹԸԸ-ՎԸԸ, *գ. Ախ, հեծեծեանք։*

ԹԸԸՎԸԸԱԼ, *չբ. Ափսոսալ։*

ԹԸՊԸՏՈՒՆ, *ած. Անհամբեր։*

ԹԸՊՂՈՏԵԼ, *չբ. Հնութիւնից գույնը կորցնել։* Շորը թըպղոտել ի։

ԹԸՋԿԱՑՆԵԼ, *նբ. Սատկեցնել, սպանել։*

ԹԸՌԸՇՆԵԼ, *վն. չբ. Երեսը կամրել, մանավանդ հիվանդութիւնից։* Էրոցկից իրեսներ թըռըշնիր էր *(վն.)*։

ԹԸՌԸՍԿԵԼ, *չբ. Միրգը, ընդեղենը փափկել ու փչանալ։*

ԹԸՌԸՍՈՒԿ, *չբ. ած. Թռսկած միրգ, ընդեղէն։* Թըռըսուկ տանձ։

ԹԸՌԹԸԿԵԼ, *նբ. Խաղի (կումարի) ընթացքում ամբողջ ունեցածը տանել, կողոպտել։*

ԹԸՌԹԸՌՆԷԿ, *գ. Թիթեռնակ։*

ԹԸՌԻՎԸՌԻ, *վն. ած. Թեթևսոլիկ։* Էն շատ թըռիվըռի, սէրվէրիկ մարթ ի *(վն.)*։

ԹԸՌՆՈՒԿ, *գ. Թռչուն։*

ԹԸՌՎԸՌԻԿ, *ած. Թեթևսոլիկ։*

ԹԸՌՎԸՌՈՒՆ, *ած. Թռչկոտող, աշխույժ, ուրախ։*

ԹԸՌՈՒՆՉԿ, ԹԸՌՈՒՆՑԿ, *վն. գ. Պանրի որդ։*

ԹԸՌՕ, *ած. Թեթևսոլիկ։*

ԹԸՍՍԱԼ, *չբ. Թաց փայտը վառվելիս ձայն հանել։*

ԹԸՍ-ՎԸՍ, *գ. Դանդաղկոտութիւն, ծանրաշարժութիւն։* Արե իսոնց թըս-վըսը տար։

ԹԸՍՎԸՍԱԼ, *չբ. 1) Անվճռական լինել։ 2) Գործն արագ չկատարել։*

ԹԸՍՏԱՆ, *ած. Թիս արձակող։*

ԹԸՍՏԱՆ Կ՚ԱՋ, *Կպչան կ՚ազի թույլ տեսակը։*

ԹԸՎԱՆՔ՚, *գ. Հրացան։*

ԹԸՐԱԾ, *գ. Ածիլվելը։* Թըրաշտ անուշ։

ԹԸՐԱԾ-ԹԸՐԱԾ, *ած. մկ. Շերտ-շերտ։* Փախլավեն թըրաշ-թըրաշ պիտի էլնի։

ԹԸՐԹԸԾՆԵԼ, *չբ. Երեսն ուռչել ու կարմրել։*

ԹԸՐԹԸՓԱԼ, *չբ. Մորթված թռչունը հոգեվարք ապրել։*

ԹԸՐԻՔ՚ *(նաև՝ Հթ.)*, *գ. Ձիու, էշի, ջորու կղկղանք։* Ճիրու թըրիք՚ տեղ ի *(վն.)*։ Ծիյան թըրիք՚ կուի խետ կը խառնեն, կը վառեն *(Հթ.)*։

ԹԸՐՋՈՑ ԴՆԵԼ, *Լվացքը թրջել ու որոշ ժամանակ թողնել։*

ԹԸՓԵԼ, *Լիմ, նբ. 1) Ծեծել։ 2) Ջաղկել։* Կարէկին Արշակին աղէյ թըփեց *(Լիմ)*։

ԹԸՓԹԸՓԱԼ, *չբ. Սիրտը տրոփել։*

ԹԻԱԿ, *գ. Փոքր թի (սեռ. թիյ-կի)։* Լէզվընիս փայխի թիյկի պէս թանձրացեր, չորցեր ու կըպեր ի մեր պէրնի առիք։

ԹԻՋԼԻՆԿ, *գ. 1) Թևեր։ 2) Լորձունք, փսլինք։*

ԹԻԹԻՋ, *ած. 1) Թեթևսոլիկ։ 2) Բծախնդիր։*

ԹԻԹԽՈՏ, *ած. Ջայրացկոտ։* Քո թիթխոտ ու պակազրած կ'իրըտ կ'արտըցի։

ԹԻԹԿԵԼ, *նբ. Աքաղաղը և հավերը սեռական հարաբերութիւն ունենալ։*

ԹԻՄԱՐԵԼ, *նբ. Անասունի մարմինը մաժել, քորել, խնամել։*

ԹԻՄԱՐԽԱՆԻ ԱՊՐԱՆՔՓ, *Նախատական խոսք. անասուն։*

ԹԻՅՆԵԼ, *չբ. Թիկնել։*

ԹԻՅ ՏԱԼ, *Վն. տե՛ս* **ԹԻՅՆԵԼ**։

ԹԻՆԱՇՈՐ, *գ. Խանձարուրի երեխայի թիկունքին դրվող շոր։*

ԹԻՆԳԸՆԵԼ, *Բմ. տե՛ս* **ԹԻՅՆԵԼ**։

ԹԻՆԵԼ, *Վն. Լիմ, տե՛ս* **ԹԻՅՆԵԼ**։ Թինիր եմ պ'արցին *(Լիմ)։*

ԹԻՎՆՈՑ, *գ. Թևնոց, որ գլխավորապես հագնում են հացթուխները և կանայք աման լվանալիս։*

ԹԼԸՍՄ ԱՆԵԼ, *Կախարդել։*

ԹՆՔՓ, *ած. Կենտ։*

ԹՈՂ, *Վն. գ. Կարճ պարան, կենդանի կապելու, պարկի բերանը կապելու։*

ԹՈՂՋ, *կ. Բացի։* Թօղզ արաբէն, ես քե ծառա։ Թողզ քե վոչ մէկ չունեմ *(Վն.)։*

ԹՈՆՔՓԱԼ, *չբ. Հևալ։*

ԹՈՌՄԵԼ, *չբ. Թառամել։* Ծաղկըներ թոռմիր են։

ԹՈՐԹ, *Վն.*, **ԹՕՐԹԱ**, *Կճ. գ. Հալած յուղի տականք։* Խաւրս, թորթ միա թաւփե *(Վն.)։* Ցեղ խալին, թօրթէն թաւփին *(Կճ.)։*

ԹՈՐԹՐԱԼ, *չբ. Ձյունը հատհատ գալ։* Ծո՛ւնը կըթորթրա, հալա շուտ չի պըոծնի։

ԹՈՐՎԱՆ ՊԱՍ, *Վն. Ոսպնաթան։*

ԹՈՒՋ, *գ. Թուզ։*

ԹՓՈՒԹՒԱ, *գ. Արուրաքար։*

ԹՓԻԹՓԻՆ, *գ. Ծխախոտ։* Շամզիրանա տեղին թո՛ւթո՛ւն մէչ իմ կութուն։

ԹՓԻԹՓԻՆՋԻ, *գ. Ծխախոտագործ։*

ԹʸՈ̈ՒԹʸՈ̈ՒՆՋՅԱՆ, *գ. Ծխախոտագործյան:*

ԹʸՈ̈ՒԼ, *գ. Շղարշ:*

ԹՈՒԼԱ, *գ. Շան լակոտ:*

ԹʸՈ̈ՒԼԲԱՆԴ, *ած. Շատ նուրբ շղարշ:*

ԹՈՒԼՈՒՄ, *գ. Երկար քղանցքներով հագուստ:*

ԹՈՒԼՈՒՄԲԱ, *գ. 1) Ջրհան պոմպ: 2) Խմորեղենի տեսակ:*

ԹՈՒԼՈՒՄԲԱՋԻ, *գ. Հրշեջ:*

ԹՈՒՂՐԱ, *գ. Թուրքական պետական զինանշան:*

ԹՈ̈ՒՄԲԱ̈Ն, *Կճ. Հթ. գ. Վարտիք:* Թո̈ւմբընով մէ մարթ տո̈ւս էկավ տընից *(Կճ.)*: Մըկներ կախվան թո̈ւմբընի փօղէն *(Հթ.)*:

ԹՈՒՅԻ, *ած. Փետուրե:* Թույի պա̈նց:

ԹʸՈ̈ՒՅՍԸՋ, *ած. Անմազ, անմորուք:*

ԹՈՒՇ, *գ. Այտ:*

ԹՈՒՇԱԿ, *գ. Ծիսակատարություն:* Իտին թուշակին արժան չէլնես:

ԹʸՈ̈ՒՋԱՐ, *գ. Վաճառական:*

ԹՈՒՐԼՈՒ, *գ. Տեսակ:*

ԹՈՒՐԼՈՒ-ԹՈՒՐԼՈՒ, *ած. Զանազան, տեսակ-տեսակ:*

ԹՈՒՐՇԻ, *Վն. գ. Թթու:* Կըլըմբոզի պա̈շեր թուրշի կըտընեն *(Վն.)*:

ԹʸՈ̈ՒՐՎԱՆԴԱ, *ած. Թարմ:* Թյուրվանդա խիար:

ԹՈՒՓ, *Կճ.*, **ԹՈ̈ՒՓ**, *Հթ. գ. Տերև:* Ծառի թուփ, խավողի թուփ *(Կճ.)*:

ԹՈՒՔՈՒՄՈՒՐ ՈՒՏԵՍ, *Նախատական խոսք:*

ԹՈՒՖԱԼ, *գ. Շատ փոքր, անլեզու երեխա:*

ԹՈՒՖԱՖ, *ած. Տարօրինակ:*

ԹՕԲԱ, *վ. Մեղա, հրաժարիմք:* Տըտոան վոռին թօբա չըկա: *Ծան. – Գործածվում է նաև* թօբա թե *ձևով:*

ԹՕՋ, *գ. Փոշի:*

ԹՕԹԽԱՐ, *ած. Ծույլ, անփույթ, պղերգ:*

ԹՕԽԿԱ, *գ. 1) Հանգույց, օղակ: 2) Օղակով գոտի:*

ԹՕԽՄԱԽ, *գ. Թակ:*

ԹՕԽՈՒՄ, *գ. Սերմ:*

ԹՕՄԱՌԻ, *ած. Մեծաքանակ:*

ԹՕ̈ՄԲԱ̈Ն, *Վն. գ. Վարտիք:* Թօ̈մբնի ծալք'եր լէն ի *(Վն.)*:

ԹՕՅԼԸՆԿԻ, *գ. Փողոցային, սրիկա:*

ԹՕՆԲԱՆ, *տե՛ս* **ԹՕ̈ՄԲԱ̈Ն**:

ԹՕՆԷՐ, *գ. Թոնիր (սեռ.՝ թօրվան):* Վոտը կախիցի թօրվան մէչ, չորթըընէ թան խըմա ու խէք'աթ ասի չում իրիկուն, խըռընցածն ընցավ:

ԹՕՆՐԱՏՈՒՆ, *գ. Բարձր առաստաղով ընդարձակ սենյակ առաջին հարկում, որտեղ վառվում էր թոնիրը:*

ԹՕՌ, *գ. Ուռկան: Ծան.* – Թօռ *բառը գործածական չէր, որովհետև տառեխի որս ծո-*

վի մեջ չէր կատարվում, այլ գետերում, որտեղ բանդ էին կապում՝ ձուկ որսալու համար: Ամենաձկնառատ գետը կոչվում էր Բանդիմահու, որ պարսկերեն նշանակում է «ձկան կապան»:

ԹՕՌԹ, *գ. Դիրտ:*

ԹՕՌՄԸՌԵԼ, *Կճ. չբ. Թառամել:*

ԹՕՌՕՄԵԼ, *Լիմ, տե՛ս* **ԹՕՌՄԸՌԵԼ**: Ծախկըներ թօռօմիր են *(Լիմ):*

ԹՕՍՈՒՆ, *ած. 1) Առույգ: 2) Կորիճ:*

ԹՕՐԿԵԼ *(նաև՝ Կճ.), նբ. Թողնել, լքել:* Հապա ընչի ենք թօրկե մեր խին վաթանը:

ԹՕՐՎԱՆ ԱԿ, *Վն.*, **ԹՕՐՎԱ ԱԿ**, *Բմ. Լիմ,* **ԹՕՐՎԸՆԻ ԱԿ**, *Կճ. Թոնրի օդանցք:* Թօրվան ակ պյäցէքյ, կըրայ պյöրպըքյվի *(Վն.):* Թօրվընի ակ պօäց, թօ կըրակ շըլշըլա *(Կճ.):*

ԹՕՓ, *գ. 1) Թնդանոթ: 2) Խաղալու գնդակ: 3) Կտորեղենի ծրար:*

ԹՕՓ ԱՆԵԼ, *Հավաքել, կիտել:*

ԹՕՓԱԼ *(նաև՝ Հթ. Կճ.), ած. Կաղ:*

ԹՕՓԼԱՅԵԼ, *նբ. Հավաքել:*

ԹՕՓԼԻ, *գ. Գնդասեղ:*

ԹՕՓԼԻԿ, *Բմ. ած. Թմբլիկ:*

ԹՕՓԽԱՆԱ, *գ. Թնդանոթաբան:*

ԹՕՓՈՒՋ, *գ. Լախտ:*

ԹՕՔՅÜԼ, *Լիմ, չբ. Հևալ:* Շուն լեզüն խանե, կըթօքյü *(Լիմ):*

ԹՕՔՄԱՋԻ, *գ. Թիթեղագործ:*

Ժ

ԺÜԺ, *գ. Երկրաշարժ*

ԺÜԺ-ԺԵԽ, *գ. Կրակ անելու կպչան:*

ԺÜԺԱԼ *(նաև՝ Հթ.), չբ. Շարժվել:*

ԺÜԺԻԿ, *գ. Առավել տարածված ուտելիքը Վանում. եփած և քամած պինդ թան, որին կանաչեղեն էին խառնում:* Աստված ժäժիկ ուտողին ժäժիկ կուտա, փըլավ ուտողին՝ փըլավ: Պաս ուտեմ, ժäժի՛կ ուտեմ:

ԺÜԺ ՏԱԼ, *Վն. Շարժել:* Քար ուր տեղից ժäժ տըվին *(Վն.):*

ԺÜԺՔՅ, *գ. Երկրաշարժ:* Ժäժքի տարվա տըղէն ի, օրապակաս ծընվեց:

ԺÜԽ, *գ. 1) Բույսի տեսակ: 2) Կրակ անելու կպչան (Վն.):*

ԺÜՄ *(նաև՝ Կճ.), գ. Եկեղեցի:*

– Ժամ անել, *Ժամասացություն կատարել։*

ԺԱՄՋԱՐԿՈՑ, *գ. Իրիկնային ժամերգության ժամը։*

ԺԱՄԽԱՐ, *գ. Ժամհար, ժամկոչ։* Ժամխար վոր չէլնի, չում կէսօր կըք՚ընի։

ԺԱՄՏՈՒՆ *(նաև՝ կճ.), գ. Եկեղեցի։* Ժամտնից կուկ՚ա, օրինյա աստված չի ասե։ Տէրտէր մըտավ ժամ//ժամտուն *(վն.)։*

ԺԱՆԳ, *գ. Ցորենի հիվանդություն։*

ԺԱՆԳԱՌ, *գ. Ներկ, կապույտի և կանաչի խառնուրդ։*

ԺԱՆԳՈՒՈՑ, *ած. 1) Ժանգոտ։ 2) փխբ. Ոչ համակրելի մարդ։*

ԺԱՆԴԵՌՔ[ց], *գ. 1) Կերակրի երեսի յուղը։ 2) Բուրդ գզելու ժանիքավոր գործիք։*

– Ժանդեռք՚ խառնել, *Դեմքը թթվեցնել։*

ԺԱՐ, *ած. 1) կճ. Նվազ։ 2) Լիմ, Նիհար։*

ԺԱՐ-ԺԵԽ, *գ. Կրակ անելու կպչան։*

ԺԵԽ, *գ. 1) Աղբ (կճ.)։* Ժեխ թափինք բախչէն *(կճ.)։ 2) վն. Շինարարական աղբ։ Ծան. – Այգեստանում աղբանոց չի եղել։ Աղբը հավաքել ու վառել են, առաջացած մոխիրը լցրել արտաքնոցի երկու կողմերը, որ հետո բահով լցնեն կեղտի վրա։*

ԺԵՆԴԸՌ, *ած. գ. Բոլորովին անյուղ (միս)։* Ժենդըռ մսով ճաշ կիփվի՞։

ԺԵՌ-Ք[ց]ԱՐ, *գ. Ապառաժ։*

ԺԸԺԱՆ, *գ. ած. Խոիվ։*

ԺԸԺՆԵԼ, *նբ. Խառնել։*

ԺԸԺՆԸՎԵԼ, *վն. հթ. կբ. Խճճվել։* Կրծկի թել ժըժնըվե *(վն.)։*

ԺԸԺՎԱԾՔ[ց], *գ. Գզած բրդի անպետք մնացորդը։* Ժըժվածք՚ մընացե սանդերք՚ի վէրէն։

ԺԸՂՈՒԼ, *գ. Խորհուրդ։*

ԺԸՂԼԵԼ, *չբ. Խորհրդածել։*

ԺԸՄՏԱԼ, *չբ. Ժպտալ։*

ԺԸՊԸՌՏՈՒԿ, *ած. գ. Շատ խակ ու թթու միրգ։* Ժըպըռտուկ ծիրան, ալուչա։

ԺԸՌՃԻՒՐ, *գ. Խակ, թթու խաղողից պատրաստված թթվաշ հեղուկ՝ կերակուրների մեջ օգտագործելու համար։*

ԺԸՐԵԼ *(նաև՝ հթ. Բմ. Լիմ), չբ. 1) Առողջանալ, ապաքինվել։ 2) Աշխուժանալ։* Խիվանդ ժըրավ *(վն.)։*

ԺԸՐՎՕՐԵԼ, *հթ. չբ. Առողջանալ։*

ԺԸՐՈՒԿ, *ած. 1) Ապաքինված։ 2) Կենդանացած։ 3) Աշխուժացած։*

ԺԻՊՈՒԿ, *ած. գ. Դեղնած, դժգույն, հիվանդ մարդ։*

ԺՈՒՄ, *գ. Պահ, անգամ, միջոց։* Մէյ ժում։

ԺՈՒՄԷԺՈՒՄ, *մկ. Հերթով, հաջորդաբար։* Խուր կընաւլու մէյ շորըմ ունին, ժումէժում կըխայնին, կէյնեն տո՛ւս։

ԺՈՒՌ, *ած. 1) Խակ։ 2) փխբ. Տհաս։*

ԺՈՒՌ-ՄՈՒՌ, *տե՛ս* **ԺՈՒՌ**։

ԺՈՒՌԺՈՒՌԱՄԵՌ, *ած. Անեծք. վաղամեռիկ։*

ԺՈՒՌԿՈՒՃՈՓ ԱՆԵԼ, *Ծառից խակ միրգ պոկոտել։*

ԺՕՂԿՐԱՆ, *Բմ. գ. Մուրացկան։* Ժօղկրան էկէ, խաց կուզի *(Բմ.)*։

ԺՕՂՎԱՐԱՐ, *Հթ. գ. Մուրացկան։* Ժօղվարար մէ տօպրակ¹ խաց խավաքեց *(Հթ.)*։

ԺՕՂՎԵԼ, *նբ. Հավաքել։* Կըրակի խաւմար ցախ ժօղվինք¹ *(Կճ.)*։

ԺՕՂՕՎԿԱՐԱՆ, *Լիմ, գ. Մուրացկան։* Ժօղօվկարան ժամի պատի տայ ժօղօվք¹ կանի *(Լիմ)*։

Ի

Ի, *բ. Է օժանդակ բայ։*

ԻԲՐԵՋ, *գ. Գուգումից ձևով տարբերվող պղնձե ջրաման։*

ԻԴԱՄ, *գ. Մահապատիժ։* Խայու խաւմար իդամից ազատվելու ճար չըկա։

ԻՋ, *գ. Հետք։* Կ՚ողը փախել ի, ամա իզ ի թողե իր իտվանց։

ԻՋԻՆ, *գ. 1) Հրաման, կարգադրություն։ 2) Արտոնություն, թույլտվություն։* Տո՛ւ զիկ իզին տու, ես ինոր հախից էնպես կ՚ամ, վոր դէ տո՛ւ խասկըցի։

ԻՋԿՈՒՐՈՒՍ, *գ. Հետքը կորցնելը, անհետանալը։* Իզկուրուս էլավ։

ԻԹԱԼ, *նբ. Նետեց։* Ուր իթալ ճո՛ւր։

ԻԹ ՄԱՄԱՍԻ, *1) Բառացի՝ շան ատինք։ 2) Թևատակի մանր չիբաններ՝ պալարներ։*

ԻԼԱԼ, *չբ. Լալ, ողբալ։* Իլաց, չուր ոտները փըրռեց-մեռավ։

ԻԼԱՄ, *գ. Դատավճիռ։*

ԻԼԱՋ, *գ. Դեղ-դարման։* Իլաջ արեք¹, չըմեռնի։

ԻԼԱՔ[3], *մկ. Անպայման։* Իլաք¹ պիտի կ՚ա՛ս։

ԻԼԵ, *Լիմ, չբ. Եղել։*

ԻԼԻԹՄԱ, *Բմ. ած. Թերխաշ։*

ԻԼԻԿ, *գ. Ճախարակի այն մասը, որի վրա հավաքվում է թելը, մանածը կծկելու գործիք։*

ԻԼԻՆ, *ած. Լիքը, լեցուն։* Ճըրթվ իլին աման ի *(Վն.)*։ Աման իլին ճո՛ւր ի *(Վն.)*։ Ջըվա՛լ իլին ցորեն ի *(Վն.)*։

ԻԼԻՆԹԻ, *գ. Ժամանակավոր կար շուլալելով, բլնդելով։*

ԻԼԼԱՀԻ, *վ. Մանավանդ, մասնավորապես։* Հատուկ էն փայխից տո՛ւս չէլնե, իլլահի ուր տերը։

ԻԾԱՊՏՈՒԿ, գ. *Երևանի ալախիկին նմանվող խաղողի տեսակ։ Վանում կոչվում էր նաև* խիզանի, *հավանաբար Խիզան գավառակից բերված լինելու համար։*

ԻԿՅԻ[1], գ. *Այգի։* Մարթ մարթում իկյիմ կուտա, մարթ մարթու ճութըմ խավող չի տա։

ԻԿՅԻ[2], չբ. *Եկել է, հասունացել է։* Խմորն իկյի։

ԻԿՅՈՒԿ, չբ. ած. *Եկած, թթված խմորի մասին։* Խըմորն իկյո՛ւկ ի։

ԻՆ, Բմ. թ. *Ինը։*

ԻՄԱԼ, կճ. դ. *Ինչպե՞ս։*

ԻՄԱՄ, գ. *Մահմեդական բարձրաստիճան կրոնավոր։*

ԻՄԱՄ ԲԱՅԸԼԴԻ, *1) Բառացի՝* իմամը հիացավ։ *2) Բուսական յուղի մեջ տապակված բադրիջանի շերտիկներ։* Ծան. – *Այս անունով տարածված ուտելիք կար ոչ միայն Արևմտահայաստանում, այլև Փոքր Ասիայում, Բալկանյան թերակղզում և Կովկասում։ Արևելքի կիսաանապատներից եկած թուրքերին անծանոթ էին այդ և այլ համեղ կերակուրներ։ Դրանք առաջին անգամ նրանք տեսնում են հպատակ ժողովուրդների մոտ։*

ԻՄԱՑ ԱՆԵԼ, վն. *Հայտնել։* Ինոր իմաց արին, վոր տըղէն կուկյա *(վն.)։*

ԻՄԴԱԴ, գ. *1) Օգնություն։ 2) Օգնական, սատար։* Շախեմ-պախեմ ճի՛չընա, իմդադ կայնի իմ տըղուն։

ԻՄԿԸՆԻ, ած. *Անխելք, անմիտ։* Իմկընի հարիֆ, իմկընի տանձօ։

ԻՄՈՆՔՅ, գ. *Իմ կողմնակիցները, իմ բարեկամները։* Իմոնքյ վոր էկան, իմ մէչքը կայիմ կէլնի։

ԻՄՔՅԱՆ, գ. *Կարելիություն, հնարավորություն։* Իմքյան չկա ու չէլնե, վոր մենք բարիշենք։

ԻՅՆԵԼ, չբ. *Ընկնել։* Եզըն վոր իյնի, տանա՛կ կըշատնա։

ԻՆԱՆ, շ. *Եվ (շաղկապ)։* Ես ինան տո՛ւ ախպերացանք։

ԻՆԱՏ, հթ. գ. *Խռով։*

ԻՆԱՏ ԱՆԵԼ *(նաև՝ հթ.)*, **ԻՆԱԴ ԱՆԵԼ**, Բմ. *Խռովել, համառել։* Ինատ կանես, ինատ արա, տեսնանքյ վո՛վ կըփօշմանի։

ԻՆԱՏՈՒ, մկ. *Ի հեճուկս, թշնամությունից ելնելով։* Քյո ինատուն ես ինոր խետ կէրթա՛մ։

ԻՆԳՅԵՐ[1], գ. *Ընկեր։*

ԻՆԳՅԵՐ[2], վն. հթ. գ. *Ընկերք։* Վորթիկ տո՛ւս էր իկյե, ամա ինգյեր մընաՙցիր էր *(վն.)։*

ԻՆԳՅԸՐՏԱՆՔՅ, գ. *Ընկերներ։* Ինգյընրանքյով կընաՙցինքյ Վիրին Վաՙրակ, Ապարանջան ախպո՛ւրի մոտ խաց կէրանքյ, ախպըրի անմախական ճո՛ւրը խըմանքյ ու էլանքյ, կընաՙցինք չում Աստղանպերթ ու Քալիլէա *(Վարագա լեռան երկու գագաթները)։*

ԻՆԳՑՆԱՎՈՐ, *ած. գ. Ընկնավոր։*

ԻՆԳՑՆԵԼ *(նաև՝ Հթ.)*, *չբ. Ընկնել։* Ծառից էրկու խընձոր ինգյավ տակ *(Վն.)*։

ԻՆԵ *(նաև՝ Լիմ)*, *կ. Ներս, մեջ։* Ինե ի։ Խավս էրազ ինե ուր մէչ կյարու արտին կըտիսնա։

ԻՆԵԼ, *Վն. չբ. Ընկնել։*

ԻՆՇԱԼԼԱՀ, *վ. Հուսադրական բացականչություն. Աստված օգնական։*

ԻՆՈՆՔՑ *(նաև՝ Լիմ)*, *գ. Նրանք։* Ինոնք ուրանց կուզեն *(Լիմ)*։

ԻՆՈՐ, *գ. Նրա։* Ինոր աբով ես պըռնեցի էտ կյոռծը։ Ինոր վոր խարցնես, մածուն առանց ծամելու կուլ կուտա։

ԻՆՈՐԻՑ, *գ. Նրանից։* Ինորից խէր չըկա։

ԻՆՈՐՄԷ, *գ. Նրանից։*

ԻՆՉԿԱՆԴԱՐ *(նաև՝ Հթ.)*, *գ. Ինչքա՞ն։*

Ի՞ՆՉԸԽ *(նաև՝ Հթ.)*, **Ի՞ՆՉԻՍ**, *գ. Ինչպե՞ս։*

ԻՆՉ-ՎԻՆՉ, *գ. Որևէ բան։* Քո սիրտ ինչ-վինչ վոր կուզի։

ԻՆՔՑԱ, *գ. Ուրացում, հրաժարում։*

ԻՇԱԼԼԱՀ, *վ. Իցիվ թե, տա Աստված։*

ԻՇԱՏԱԿ, *Վն. գ. Հիշատակ։*

ԻՇԱՐ, *ած. Արթուն։*

ԻՇԱՐԱԹ, *գ. Նշմար, աչքովունքով մի կերպ իմաց տալը։*

ԻՇ ԱՐԱՐ, *գ. Օրոր։*

ԻՇԹԱԽ, *գ. Ախորժակ։* Իշթախ տեղն ի, ինչ տաս, հըմէն կուտի։

ԻՇԻԿԱԹՆՈՒԿ, *գ. Խոտի տեսակ, որ չորացնում են որպես վառելիք։*

ԻՇԼԻԿ, *գ. Ջմռանը շապիկի վրա հագնելու տաք շոր։*

ԻՇԽԸՆԱԼ, *Բմ. չբ. Համաձակվել։*

ԻՇԿԱԼ, *Լիմ*, **ԻՇԿԵԼ**, *կճ. նբ. Նայել։*

ԻՇՄԱՐ ԱՆԵԼ, *Ակնարկել, աչքով-ունքով իմաց տալ։*

ԻՇՎԱՆՔՑ, *գ. Էշեր։* Տըրախտը վոր իմ չի, թող իշվանք թավալեն ինե։

ԻՇՏԱ, *վ. Ահա, ահավասիկ։*

ԻՇՈՒՆՑ, *գ. Հայհոյանք։*

ԻՇՈՒՆՑ ՏԱԼ, *Վն. Հայհոյել։* Պապիկ իշունց իտուր *(Վն.)*։ Մարթ չի ինգյեր թենարշչի, մէնակ իշունց տալով քե յարդըմ կըխասնի։ Կաձար ճիչ իշունցըմ իտուր *(Վն.)*։

ԻՉԿԻ, *գ. Ոգելից ըմպելիք։* Իչկու ինգյած ի *(սիրում է խմել)*։

ԻՊԵ, *նբ. Բերեց։* Մարինեն պառկեց, ի՞նչ իպե։ Մարինեն պառկեց, տըղա պիրեց։

ԻՋԱՐԱ, *գ. Վարձակալություն։*

ԻՍԱԼ, *գ. Լուծ, փորհարինք։*

ԻՍԱՆ, *գ. Մարդ։*

ԻՍԹԻՆԴԱԿ, *գ. Հարցաքննություն։*

ԻՍԿԵԼ *(նաև՝ Լիմ), նբ.* ***Ջեռքից գցել:*** Իրեք՝ ծըմերռուկ տըվին ծեռըս, մէյն իսկիցի:

ԻՍՈՆՔ, ԻՍՈՆՔ[ց], Լիմ, դ. ***Սրանք:***

ԻՍՈՐ, դ. ***Սրա:***

ԻՍՍՈՒՆ, թ. ***Հիսուն:***

ԻՍՏԱԿ *(նաև՝ կճ.), ած.* ***Մաքուր:*** Իստակ տեղաշոր, յաթաղ:

ԻՍՏԸԿԵԼ, *նբ. 1)* ***Մաքրել, ջոկել, ընտրել:*** *2) Լիմ,* ***կեղևել:*** Փաթաթէզ իստըկի *(Լիմ)*:

ԻՍՏԸԿՃԸՐԵԼ, *հթ. նբ.* ***Պարզաջրել:***

ԻՍՏԸԿՈՒԿ, *նբ. ած.* ***Մաքրված, հատակված:*** Աղունի *(ջրաղաց տարվող)* ցորենն իստըկուկ ի:

ԻՏԵՎ, *հթ., մկ.* ***Ետ:***

ԻՏԻՆ, *ած.* ***Վերջին:*** – Իտին տիր, – ասաց ու կընաց: Խայու իտին խելք:

ԻՏՈՐ, *դ.* ***Դրան:***

ԻՏՈՐԻՑ, *դ.* ***Դրանից:***

ԻՏՈՐՄԷ, *տե՛ս* **ԻՏՈՐԻՑ:**

ԻՏՈՒ, *նբ.* ***Տվեց:***

ԻՏՎԱՆՑ, *կ.* ***Ետևից:*** Իտվանց կըպըռնի ինոր մազերաց:

ԻՐԱՐ, *դ.* ***Միմյանց:***

–Իրար զարկվան, *1)* ***Կռվեցին:*** *2)* ***Դեմ դիմաց եկան ու դիպան իրար:***

ԻՐԱՐ ՏԱԼ, *վն.* ***Շարժել:*** Քար իրար տըվին: Քամին պաշըր իրար տըվեց *(վն.)*:

ԻՐԵՑՆՈՑ, *գ.* ***Երեքանոց:***

ԻՐԵՍ, *գ.* ***Երես:*** Ուզողին մէյ իրես, չըտըվողին՝ էրկու:

* Իրես առնել, ***Շփանալ:***

* Իրես-բիրես անել, ***Առերեսում անել, դեմ դիմաց բերել մի բան պարզելու համար:*** Իրես-բիրես արին, պէն տուս չէկավ, էրկուսն էլ էրթումով էտ կայնան ասոճի խօսքից: ***Ծան. – Ուշագրավ է, որ բ-ն Վանի բարբառում դառնում է պ, բայց այս դեպքում բ-ն պահպանվում է:***

* Իրես իրես չի, կիմշի կաշի ի, ***Անամոթ, պնդերեսի մեկն է:***

* Իրես իրեսի պիրել, ***Առերեսում անել:***

* Իրես տաղոցուցի, ***Այլևս չի համակրում:***

* Իրեսը թըթվեր ի, ***Դժգոհել է:***

* Իրեսըտ խաաչ խան, ***Երդվի՛ր:***

* Իրեսը պաց, ***Անամոթ:***

* Իրեսը պըռնել, ***Համարձակվել չքաշվել:***

* Իրեսը սև, ***Մեղավոր:***

* Իրիսի կինը կընաց, ***Երեսի գույնը գցել է (վախից, հիվանդությունից և այլն):***

* Իրեսից ինգե, ***Հարգ ու պատիվը կորցրել է:***

* Իրիսով տալ, ***Նախատել, հանդիմանել:***

ԻՐԻԿ *(նաև՝ կճ.),* **ԻՐԻԿ[ց],** *հթ. գ.* ***Ամուսին:*** Իրիկ ուր կընգնան կըպասէր *(վն.)*: Իրիկ կընգան տըփեց *(կճ.)*:

ԻՐԵՑՆՈՒԿ, *Բմ.*, **ԻՐԷՑՆՈՒԿ**[ց], *տե՛ս* **ԻՐԵՔՆՈՒԿ**։

ԻՐԵՔՆՈՒԿ, *կճ. գ. Երեքնուկ ծաղիկ*։

ԻՐԻԿՆՈՎ[1], *գ. ած. Ամուսին ունեցող կին, արամբի*։ Իրիկնով կընիկ ի, ինոր թարս աչքով չիրիշկաս։

ԻՐԻԿՆՈՎ[2], *մկ. Երեկոյան, մթնով*։ Իրիկնով իկ՝եք՝ մեր տուն։

ԻՐԻՀ՝ՆՈՒԿ, *վն. գ. Երեքնուկ ծաղիկ*։ Իրիհ՝նուկի կոթի վէրէն իրեյ խաւտ պաշ կէլնի, մէկէլ գընդըլիկ(-յ) ծաղիկ *(վն.)*։ Իրիհ՝նուկից չայ կանին *(վն.)*։

ԻՐԻՇԿԱԼ, *վն. Լիմ*, **ԻՐԻՇԿԵԼ**, *չբ. Նայել*։ Խալէն ինչ խավ ի, վոր ճո՛ւր խըմի, դեխ աստված կիրիշկա։ Կիրիշկամ շան թուլեքին *(Լիմ)*։ Ցազմի տակից իրիշկաց։

ԻՐԻՍԱՆՑ, *մկ. Առերես, երեսանց*։

ԻՐԻՎՆԱԼ, *չբ. Երևալ, հայտնվել*։

ԻՐԻՑԵԼ *(նաև՝ Լիմ Հթ.)*, *նբ. Այրել*։ Կ՝ատէն իրիցիր ի *(Լիմ)*։

ԻՐԻՑՈՒԿ[1], *նբ. ած. Այրված*։

ԻՐԻՑՈՒԿ[2], *գ. Ծաղկատեսակ, որի թերթերից պատրաստված թեյը դադարեցնում էր հազը*։

ԻՑՈՒՆ, *Հթ. թ. Հիսուն*։

ԻՓԵԼ, *նբ. Եփել*։

ԻՓԵՔ[ց], *գ. Մետաքս*։

ԻՓՈՒԿ, *նբ. ած. Եփված*։ Ճաշն իփուկ ի։

Ի՝ՔՑԱՆ, *մկ. Միջոցին*։ Կ՝արտ՝ալու ի՝քյան ք՝ուն տարավ։

Ի՝ՔԻՆՋԻ, *թ. Երկրորդ*։

Ի՝ՔՐԱՄ, *գ. Պատիվ հրամցնելը*։ Ի՝քրամ արի, պ՝ան չըկէրավ։

ԻՖԹԻՐԱ, *գ. Զրպարտություն*։

ԻՖԹԻՐԱՋԻ, *գ. Զրպարտիչ*։

Լ

ԼԱԲԼԱԲԻ, *գ. Սիսեռ*։

ԼԱԳՑԱՆ, *գ. Կոնք*։

ԼԱՋԱԹ, *գ. Համ, ճաշակ*։

ԼԱՋԸՄ, *ած. Պիտանի*։

ԼԱԼ[1] *(նաև՝ կճ.)*, *ած. Համր*։ Կ՝ասեն ուրենց խարս լալ ի։

ԼԱԼ[2], *գ. Թանկագին քար*։

ԼԱԼԱ, *գ. 1) Դաշտային կակաչ։ 2) Թագավորի մանկլավիկ*։

ԼԱԼԿԱԹԸՆԵԼ, *չբ. Սկսել լաց լինել*։

ԼԱԼԿԸՎԵԼ, *չբ. Համբանալ*։

ԼԱԼՈՇ, *ած. 1) Դանդալոշ։ 2) Ապուշ, անմիտ։ 2) Անլեզու*։

ԼԱԽ, *ած. Փուտ, փչացած*։ Լախ ծո՛ւն։

ԼԱԽԼԱԽ, *ած. Խախուտ, թույլ երերուն*։ Լախլախ թարանջա *(սանդուղք)*։

ԼԱԿ, *գ. Շան կերակուր, որ ստացվում էր մի քանի կերակուրների ավելցուկից։*

ԼԱԿԱԾ, *գ. ած. 1) Պատառոտված հին կոշիկ։ 2) փխբ. Մեծաբերան, շատախոս, պոռոտախոս։* Լակաշի մէյն ի, ինոր վո՛վ կըխավատա։

ԼԱԿՈՏ, *գ. 1) Շան լակոտ։ 2) փխբ. Ջարաճճի տղա։*

* Լակոտ-լուկուտներ, *Անառակ տղաներ։*

ԼԱՀՆԱԹ, *գ. Անեծք։*

ԼԱՂԱՅ, *գ. ած. Ցեղակից։* Էլըմ չունեմ, լաղայ չունեմ, խեղճ, ախքյատ մարթ եմ։

ԼԱՂԸՄ, *գ. Գետնուղի։*

ԼԱՂՄ, *Լիմ, գ. Ազգ։* Տո՛ւ վի՛ր լաղմից ես *(Լիմ)։*

ԼԱՃ *(նաև՝ Բմ.)*, **ԼԱՃ**, *Հթ. գ. Արու զավակ։* Ի՞նչ ունես՝ տըղա՞ //լա՞ճ, թէ՞ ախչիկ *(Վն.)։*

ԼԱՃԱՆԱԿ, *մկ. Տղայի պես, տղայավարի։*

ԼԱՄ, *գ. Մսի կուտակում գեր մարդու երեսին։*

ԼԱՄԲԵՔ[ց], *գ. Գեր ծեր մարդու երեսի կախված մասերը։*

ԼԱՄԵՋ, *գ. Ալյուրե ճաշի չորացած մնացորդները պուտուկի պատերին, երբ ճաշը շատ է եփվում և խյուս դառնում։*

ԼԱՄԵՐ, *գ. Կրկնակզակ։*

ԼԱՄԷԼԱՄ, *ած. Պռնկեպռունկ լեցուն։*

ԼԱՄԸԱԽԱՎ, *Վն. գ. Մեծ, մսատու հավ։*

ԼԱՂԸՄՋԻ, *գ. Գետնուղի փորող քյանքյան։*

ԼԱՄԼԸՄԵԼ, *նբ. Լնդերով ծամծմել։*

ԼԱՄՈՒԿ, *գ. Թուրքի տղա։*

ԼԱՄՊԱ, *գ. Քարյուղի ճրագ, լապտեր։*

ԼԱՄՍ, *ած. 1) Մսատու։* Լամս խավ։ *2) Մարմնեղ։*

ԼԱՅԵՂ, *ած. Արժանի, վայել։*

ԼԱՅԼԱԳ, *գ. Արագիլ։*

ԼԱՅԼԱՋ, *վ. Ինչևիցե, վերջացնենք անմիտ խոսակցությունը։*

ԼԱՆԳ[ց], *ած. Կաղ։ Ծան. – Առածներում գործածական է նաև «կաղ» բառը (Վն.)։* Վանըցու կաղ Հընդըստան ի խասե *(Վն.)։*

ԼԱՆԳ[ց]**Ա**, *գ. Աքացի։*

ԼԱՆԳ[ց]**ԱՌԻԿ**, *գ. Հարթ մեծ ափսե։*

ԼԱՆԳ[ց]**ՈՒ-ԼԱՆԳ**[ց]**ՈՒ**, *մկ. Կաղեկաղ։*

ԼԱՆԳ[ց] **ՈՒ ԼԱՎԱԾ**, *ած. Կաղ ու նիհար։*

ԼԱՆԿԼԱՎԱՋ, *գ. Փողոցային սրիկա, անպետք մարդ։*

ԼԱԾ, *գ. Փայտե ամուր լծակ, ջրաղացի գործիքներից մեկը։*

ԼԱՉԱԿ, ԼԱՉԻԿ, գ. *Կանացի գլխաշոր*։ Կէլնի ինոր լաչիկ կըճոռի, կըճոռթի։

ԼԱՊԸՋՏՐԱԿ, ԼԱՊԸՍՏՐԱԿ, գ. *Նապաստակ*։

ԼԱՋՎԱՐԴ, *ած. Լուրթ*։

ԼԱՍ, *կճ.*, **ԼԱՍՏ**, *Բմ. գ. Հնձելիս գերանդու բերանից ընկած խոտի, ցորենի յուրաքանչյուր շերտը*։

ԼԱՍՏԻԿ, գ. *Ռետին, ռեզին*։

ԼԱՍՏԻԿԼԻ, *ած. Առաձգական*։

ԼԱՎԱԾ-ՄԱՎԱԾ, *ած. Շատ նիհար*։

ԼԱՎԸՍԹՎԵԼ, *վն. կբ. Լղոզվել, կպչել*։ Մարթըմ լավըսթվավ վէրէս *(վն.)*։

ԼԱՎՈՍԹԵԼ, *նբ. Քսել, քսմսել մածուցիկ նյութով կեղտոտել որևէ բան*։ Էսա կընիկ էլէ կեռթէ ծամոն, լավոսթե վէրէս։

ԼԱՐԱՆ, գ. *Մազե թել՝ ջվալների բերանը կարելու համար*։

ԼԱՐԱՏԵԼ, *նբ. Հետապնդել հալածել, փախցնել*։ Քարով, փետով կըլարատին օցուն։

ԼԱՐԵԼ, ԼԱՌԵԼ, *կճ. Լիմ, նբ. Վռնդել, փախցնել*։ Սարխօշին լարեց տընէն *(կճ.)*։

ԼԱՐ ԷՐԹԱԼ, *Ծովային տերմին. Վանա ծովակի վրա քամու հակառակ ուղղությամբ նավարկելիս առագաստները եռանկյունաձև դարձնել*։

ԼԱՓԱ, գ. *Շներին կերակրելու թանձր խյուս*։

ԼԱՓԼԸՓՈՐԵԼ, *նբ. Ագահաբար, արագ-արագ ուտել*։

ԼԱՓԸՌՏԵԼ, *նբ. Անշնորհք ձևով ուտել*։

ԼԱՔ^{ə}, գ. *Մայր թռչուն*։ Աստված տի տա իր լաքʼուն, վոր նա տա իր ծաքʼուն։

ԼԱՔ^{ə}**ԱԹԱ**, *ած. գ. Բերանբաց, շատախոս, անպարկեշտ կին*։

ԼԱՔ^{ə}**ԱՌՈՇ**, *ած. Մեծ, անհեթեթ*։

ԼԱՔ^{ə}**ՈՇ**, *ած. 1) Ագահ, շատակեր։ 2) Լայնաբերան։ 3) Տգեղ*։

ԼԵԽԵԼ, *նբ. Ջարդել, փշրել*։ Կըլօխ լեխեց։

ԼԵԽՈՏԵԼ, *նբ. Քարով ջարդել ու փշրել*։

ԼԵԽՈՏՎԵԼ, *կբ. Ծեծկռտվել, ջարդոտվել*։

ԼԵԽՎԵԼ, *կբ. Ծեծվել, ջարդվել*։

ԼԵՂԻ, *վն. գ. Թույն*։ Ինոր խաց խօ խաց չի, լեղի ի *(վն.)*։

ԼԵՍԿ, գ. *Հայաբնակ գյուղ Բերդից փոքր-ինչ դեպի հյուսիս, Խորենացու Լէզքը*։

ԼԵՐԹ, գ. *Լյարդ*։

ԼԵՐՃ, *1) ած. Պինդ (քարի վերաբերյալ)։ 2) գ. Քարաժայռ*։

ԼԷՋՈՒ, գ. *Լեզու*։

– Լէզուն էրկընցեր ի, *Իրավունքներ է բանեցնում*։

* Լէզուն քոր կուկա, *Չի կարող չխոսել, չմիջամտել*։

– Լէզո՛ւտ քո՛ւ քաշի, քե պախի, *Սանձահարի՛ր քեզ, մի՛ խոսիր, մի՛ նախատիր։*

– Լէզվի տակ մնացող չի, *Պատրաստախոս է։*

– Ինոր լէզո՛ւն վոր չէլնի, կըոկըներն աչկերն կըխանեն, *Նա շատ ճարտար լեզու ունի։*

– Ինոր լէզո՛ւն տան մէչ կարճ ի, *Տանը նրա իրավունքները սահմանափակ են։*

ԼԷՋՎԱՆԻ, *ած.* *Պերճախոս։*

ԼԷԹԻ, *ած.* *հյհ.* *Անպարկեշտ, լկտված (աղջկա վերաբերյալ)։*

ԼԷԹՎԵԼ, *չբ.* *Լկտվել։*

ԼԷԼԱԼ, *չբ.* *կբ.* *Շարժվել, երերալ (ատամը, սյունը)։*

ԼԷԼԱՉ, *գ.* *Եղրևանի, յասաման։*

ԼԷԿ, *գ.* *Այծի և ոչխարի չմշակված կաշի։*

ԼԷՀԷՄ, *գ.* *Մետաղների զոդման սոսինձ։*

ԼԷՅԹԻ, *տե՛ս* ԼԷԹԻ։

ԼԷՆ, *ած.* *Լայն։*

ԼԷՇ, *գ.* *Դիակ։*

ԼԷՌԹ, *Լիմ, գ.* *Լյարդ։*

ԼԷՎԷԼ, *նբ.* *Վայելել։*

ԼԸԲԱԼ, *չբ.* *Թթու մրգի վրա ջուր խմելիս բերանում տհաճություն զգալ։*

ԼԸԲԼԸԲԱՑՆԵԼ, *չբ.* *Արագ ու անհասկանալի խոսել, դուրս տալ։*

ԼԸԼԸԽԿԱԼ, *չբ.* *Ինքնաբերաբար շարժվել։*

ԼԸԼԸԽԿԵԼ, *չբ.* *Ցնցվելով շարժվել։*

ԼԸԼԿԸՎԵԼ, *չբ.* *Պապանձվել։*

ԼԸԽԷՖ, *գ.* *Վերմակ։*

ԼԸԽԼԸԽԿԱԼ, *տե՛ս* ԼԸԼԸԽԿԵԼ։

ԼԸԽԿԱԼ, *տե՛ս* ԼԸԼԸԽԿԵԼ։

ԼԸԽԿԵԼ, *չբ.* *1) Պտուղները ջուր կտրել։ 2) Անձրևի տակ մնալ և սաստիկ թրջվել։*

ԼԸԽՃՈՐ, *ած.* *Կեղտոտ։*

ԼԸԽՃՈՐԵԼ, *վն.* *նբ.* *Ճզմել։* Կարմիր պա՛տղնջա՛ն պըոան մէչ լըխճորեց *(Վն.)։*

ԼԸԽՊՈՐ, *ած.* *Շատ հասունացած, կակղացած։* Տանձը լըխպորել ի։ Միսը լըխպոր-լըխպոր կախվե իրիսից։

ԼԸԽՏԻԿ, *կճ.* *ած.* *Թմբլիկ։*

ԼԸԽՓ, *գ.* *Մեծ կոշիկ հագնելու ձայնը։* Վոտըս լըխփ մըտավ սօլը։

ԼԸԽՔ^{ə}ԵԼ, *նբ.* *Հուպ տալ։*

ԼԸԾԱՌ, *գ.* *Պարանոցի լուծ վերցնող հատվածը։ Ծան. – Պոլսում սևագործություն կատարող վանեցի պանդուխտը գանգատվում է՝ «Տառթ կապեր ի մեր լըծառ»։*

ԼԸԾԵԼԾԷ, *գ.* *Շատ փոքրիկ թռչուն։*

ԼԸԿԵԼ, *1) նբ.* *Խմել ու հարբել։ 2) չբ.* *Տաքանալով սառած*

նյութերը փափկել։ 3) Լիմ, նբ. Լակել։

ԼԸԿԸՍՏԵԼ, նբ. *1) Երես տալ։ 2) Լիզել։* Մեղրոտ մատը կըլըկըստեն։

ԼԸԿԸՍՏՎԵԼ, չբ. *Երես առնել, աներես դառնալ։*

ԼԸՀԱՆԱ, գ. *Կաղամբ։*

ԼԸՀԷՄ, գ. *Մետաղները զոդելու սոսինձ։*

ԼԸՀԷՄԵԼ, նբ. *Զոդել։*

ԼԸՂՋԵԼ, նբ. *Կորիզը քարին քսելով հարթեցնել, ողորկել՝ ծակելու և վեգ պատրաստելու նպատակով։*

ԼԸՂԿԵՑՆԵԼ, նբ. *Թրջոց դնելով՝ կաշին փափկեցնել։*

ԼԸՂՃՈՐԵԼ, նբ. *Ճմլել, տրորել։* Խասուկ տանձը լափլըփեց, լըղճորեց, թալեց։

ԼԸՂՄՈՐ, ած. *Շատ փափուկ, տհաճության հասնող փափուկ։* Լըղմոր ծիրան *(Վն.)*։

ԼԸՂՈՋԵԼ, նբ. *Քսելով ապականել, կեղտոտել։*

ԼԸՂՊՈՐՈՒԿ, ած. *1) Շատ գեր (մարդ)։ 2) Շատ հասած (միրգ)։*

ԼԸՄՋՈՐԵԼ, նբ. *Տրորելով քսել։*

ԼԸՄԸՋԵԼ, *Անշնորհք կերպով քսոտել, կեղտոտել։* Էրեխէն մաճուն լըմըզիր էր իրես *(Վն.)*։

ԼԸՄԼԸՄԵԼ, նբ. *Լնդերով ծամել ու ծամծմել։*

ԼԸՄԿԵԼ, նբ. *1) Տրորել, չարչարել, խոշտանգել։ 2) Թաղիք պատրաստելիս բուրդը տրորել։*

ԼԸՆԿԱԼ, չբ. *Կաղալ։*

ԼԸՆԿԸՌՏԵԼ, նբ. *Ձեռնարկած գործը անշնորհքությունից փչացնել։*

ԼԸՊ, *Լիմ*, գ. *Բուռ։* Մէ լըպ ճո՛ւր *(Լիմ)*։

ԼԸՊՋՈՐԵԼ, նբ. *Մաշկը, մորթը վրայից հանել։* Ծիրան կըլըպզորե՛ս։

ԼԸՊՋՈՐՎԵԼ, կբ. *Մաշկը քերթվել։*

ԼԸՊԸՋՏՐՈՒԿ, ած. *Երես առած, անպատկառ, լիրբ։*

ԼԸՊԸՍՏՐԱԼ *(նաև՝ Բմ. Լիմ)*, չբ. *Սայթաքել։* Խոտ լըպըստրաց, ինգա՛մ ցածր *(Լիմ)*։

ԼԸՊՏԱԼ, չբ. *Շարժվել։* Էլ տեղես չեմ լըպտա։

ԼԸՌԿՎԵԼ, չբ. *Պապանձվել։*

ԼԸՌՃԵԼ, չբ. *Աներեսություն անել։*

ԼԸՌՃՎԵԼ, վն. չբ. *Երես առնել։* Էրէխէն շատ ի լըռճվե *(Վն.)*։

ԼԸՌՃՈՒԿ, ած. *Հյհ. Աներես, պնդերես։*

ԼԸՎԸՋԻԿ(ᵃ), վն. ած. *Նիհար։* Լըվըզիկ մարթըմ իրե *(Վն.)*։

ԼԸՎԼԸՎԱԼ, չբ. *1) Ապրել առատության մեջ։ 2) Անհանգիստ լինել։*

ԼԸՎՈՋԵԼ, *նբ. Քսելով ապականել, կեղտոտել։*

ԼԸՎՕՋԻԿ, *ած. Նիհար, բարակիկ։*

ԼԸՑԿՈՒՆ, *ած. Լցված։*

ԼԸՑՈՒԿ, *նբ. ած. Լցված։* Ամանը եղով լըցուկ ի։

ԼԸՑՈՒՆ, *ած. Լիքը։*

ԼԸՓ, *գ. Բուռ։* Մէյ լըփ ցորեն վիրցուց *(Վն.)*։

ԼԸՓԸՌՏԵԼ, *Հթ. նբ. Լափել։*

ԼԸՓԼԸՓԱԼ, *չբ. Սիրտը արագարագ խփել։*

ԼԸՓՈՇ, *ած. Շատ լայն քղանցքով (հագուստ)։*

ԼԸՖԻԿ, *գ. Լողանալու ժամանակ մարմինը մաքրելու հատուկ շոր, քիսա։*

ԼԻԼ, *գ. Դիրտ, տիղմ։*

ԼԻԼԿԻ, *գ. Թունավոր պտուղ տվող ծառատեսակ։*

ԼԻԶ, *գ. Երկամյա գոմեշ։*

ԼԻՊՕՋ, *ած. Լպիրշ։* Սատանի լիպօզ կընիկ։

ԼԻՍ, *գ. Լույս։ Ծան. – Վանի գյուղերում ասում էին* լիս, *իսկ քաղաքում՝* լիս։

ԼԻՐԱ, *գ. Դրամի միավոր (իտալական, թուրքական)։*

Լ^əՈՒԼԱ[1], *գ. Հրացանի խողովակ։*

Լ^əՈՒԼԱ[2], *գ. Կտուրից կախված սառույց։*

Լ^əՈՒՄ, *գ. Մեկ լուռ։* Քիթէն-մըռթէն վոր լ^əում իյնէր, խաւզար պըրտոնճ կէլնէր։

Լ^əՈՒՍՏՐԱՋԻ, *գ. Փայլեցնող։*

ԼՈՂ, *գ. Գլանաձև քար, որ գլորելով ամրացնում էին կտուրի հողը։* Լող տանըսի վէրէն ի *(Վն.)*։

ԼՈՒՍ, *գ. Լույս։*

ԼՈՒԲԻԱ, *գ. Լոբի։*

ԼՈՒԼԱԽ, *գ. Անձրևախառն մանր կարկուտ կամ մեծ փաթիլներով ձյուն, որն անմիջապես հալվում է։*

ԼՈՒԼԻԿ^ə, *Լիմ, գ. Օրորոցից մեզը դուրս բերող փայտե խողովակ։*

ԼՈՒԼՈՒ, *գ. Երեխայի միզելը, ճուլիկ։*

ԼՈՒԼՈՒ ԱՆԵԼ, *վն. մեկ. Միզել։*

ԼՈՒՍ, *Հթ. գ. Առավոտ։* Խիվանդ չունր լուս չըքընավ *(Հթ.)*։

ԼՈՒՍԱԹԸԹԱԽ, *մկ. Լուսաթաթավ, առավոտ շատ կանուխ, մութնուլուսուն։*

ԼՕԹ, *գ. Մսի չուտվող մասերը, որ գցում էին շներին։*

ԼՕԹՈՒԿ, *ած. Ուտող-խմող։*

ԼՕԹՐԱՆ, *տե՛ս* **ԼՕԹՈՒԿ**։

ԼՕԽԿԸՆԱԼ *(նաև՝ Լիմ), չբ. Լողանալ։* Ծըմեռ կէտ կըլօխկընէր *(Լիմ)*։

ԼՕՂԱԼ, *Բմ. չբ. Սայթաքել։*

ԼՕՂԿԸՆԱԼ, *հթ. տե՛ս* **ԼՕԽԿԸՆԱԼ**։

ԼՕՂՕՋԵԼ, *նբ. Անշնորհք կերպով քսել, կեղտոտել։* Մածուն լողոզեց ուր քիթ-մըռութ *(կճ.)*։

ԼՕՊԿԵԼ, *վն. կճ. Լիմ, նբ. Պլոկել։* Ծառի կոռճ լօպկեց *(Լիմ)*։

ԼՕՐ, *գ. Պանրաջրի մնացուկ։*

ԼՕՐԻԿ, *տե՛ս* **ԼՕՐ**։

Խ

ԽԱ[1], *մկ. Միշտ, շարունակ։* Աստված էրկնուց խա մանանա չի թափե։

ԽԱ[2], *վ. Այո։* Խազար դան ասի խա, ասի խա, պան տուս չէկավ։

ԽԱ[3], *Լիմ, գ. Հատ։* Ճամխօվ մէ խա(տ) մարթ կընցնէր *(Լիմ)*։

ԽԱԲԱՐ, *գ. 1) Լուր։ 2) Զրույց։*

ԽԱԲԱՐ ԱՆԵԼ *(նաև՝ Հթ.), 1) Հայտնել, լուր տալ։ 2) Զրուցել։* Էրկու կընիկ օրնիպուն խաբար կուտան, պրծնել չկա։

ԽԱԲԱՐԲԱԶԱՆ, *ած. Լուրը տեղ հասցնող, մատնիչ։*

ԽԱԲԼԱՊՈՒՋԻ, *ած. Խաբված։*

ԽԱԲՐԱՊԵՐ, *գ. ած. Լուր բերող։* Խաբրապերի պես աշխըրէ աշխար կըթըռնեմ։

ԽԱԴԱՐ, *կ. Զափ։*

ԽԱԶԱԴԱՐՕՆ, *ած. Անխառն։*

ԽԱԶԱԼ[1], *չբ. Հազալ։* Պաղ ի առե, կըխազա։

ԽԱԶԱԼ[2], *կճ. գ. Ծառերից թափված աշնան դեղին տերևներ։* Խազալ ժողվեց, վառեց *(կճ.)*։

ԽԱԶԱՐ, *թ. Հազար։*

ԽԱԶԱՐՇԱՊԿԷՆ, *գ. Բույսի տեսակ։*

ԽԱԶԻՆԱ, *գ. Գանձ։* Հէրի մէչ խազինա են կընդե։

ԽԱԶՆԱԴԱՐ, *գ. Գանձապետ։* Թուրք վոր էլնի խազնադար, հա կուտի, խազինէն կուտ չի մընա։

ԽԱԶՆԱԴԱՐՈՒԹԵՆ, *գ. Գանձապետություն։* Թուրքն իր պան կիտի, խազնադարութէն մէնակ խայու կուտա։

ԽԱԶՆԱՌԱՋ, *գ. Գութանի հինգերորդ լուծը։*

ԽԱԶՈՒՐԱ, *հթ. գ. Սնձենու պտուղը։*

ԽԱԹԱ, *գ. Սխալ, փորձանք։* Խաթա ի պիրե իր կ'ըլօխ։

ԽԱԹԱԼԻ, *ած. Վտանգավոր, փորձանքով լի։* Խա տուն ասա, որ խաթալի պանից ծեռ քաշի։

ԽԱԹԸՐ, *գ. Հարգ, ակնածություն։* Շան վոր չզանեն, տիրոջ խաթըր կանեն։

ԽԱԹՄԱՄԱ, *գ. Խաթուն մայրիկ, մեծ մայրիկ, տատ։* Խաթմամէն ժամից տուս չի կա։

ԽԱԹՈՒՆ, *գ. Տիկին, հարգարժան կին։*

ԽԱԹՈՒՆԱՆԱԿ, *ած. Խաթունի պես ծանրաշարժ։*

ԽԱԹ[ə]ՈՒՆԵՐԱՑ, *գ. Խաթունների։*

ԽԱԹՐԻՆ ՏԷՊՆԵԼ, *վն. Կոպտել։* Նաիհախ տեղ խաթրին տէպար *(Վն.)*։

ԽԱԺՈՒԺ, *գ. Կաթ չունեցող մոր երեխաների համար պատրաստված կերակուր։*

ԽԱԼԱԼ, *ած. Արդար, հավասար։* Խալալ կիսի։ Աստված խալալին կուտա, խարամից կառնի։

ԽԱԼԱԼԷՐ, *ա. Երգերի մեջ հաճախ ենք հանդիպում «խալալէր»։*

ԽԱԼԱԼՈՒԹԵՆ, *գ. Արդարություն։*

ԽԱԼԱՂԱ, *գ. Դռան շղթա։* Տըռան խալաղեն թալի՞ր ես։

ԽԱԼԱՂԵԼ, *նբ. Խալաղայով դուռը փակել։*

ԽԱԼԱՅԵՂ, *գ. Սպասուհի, աղախին։*

ԽԱԼԱՎ *(նաև՝ Հթ.)*, *գ. Բացի ներքնազգեստից ամեն կարգի հագուստ, նաև՝ վերարկու։* Թաժա խալավ, վոր տիսնան, զանգ[ə]ընին կասին պաորով վայելես, ախք[ə]ըտին՝ վո՞րտեղից։

ԽԱԼԵԼ, *չբ. Հալել։* Եղը խալավ, շուտըմ աման պեր։

ԽԱԼԹ, *ած. Անմիտ գործ, անհեթեթություն։*

ԽԱԼԻ, *գ. Գորգ։*

ԽԱԼԻՉՔ[ʒ], *Հթ. գ. Հալած յուղի տականք։*

ԽԱԼԻՍ, *ած. Զուտ, անխառն։* Մըկա էլ ի՞նչ խալիս պան։

ԽԱԼԻՎՈՐ *(նաև՝ Կճ.)*, **ԽԱԼԻՎՈՐ**, *Հթ. Բմ.*, **ԽԱԼԻՒՈՐ**, *Լիմ*, *գ. Ծերունի։* Խալիվոր մարթ ի, շատ պան ի տիսե, ականջ տըրէք[ʲ] իր խօսքին։ Խալիվոր ծէն իտուր// տըվեց ուր կընգ[ə]ան *(Վն.)*։ Խալիւոր ուր կընգան ծէն իտուր *(Լիմ)*։ Խալիվոր նըսե պատի տակ *(Կճ.)*։

ԽԱԼԻՎՈՐԻԿ, *գ. Մանր պաչարներով կաթնահան բույս։*

ԽԱԼԻՎՕՐՆԱԼ *(նաև՝ Լիմ)*, *չբ. Ծերանալ։*

ԽԱԼԽ, *գ. Ժողովուրդ։ Ծան. – Վանի բարբառում առավելապես օտարների, կողմնակի մարդկանց մասին է ասվում։*

ԽԱԼԽԱԼ, *1) ած. Շերտավոր։ 2) գ. Օղակաձև խաղալիք։ 3) ած. Բծավոր, բիծ-բիծ։*

ԽԱԼՈՒԿ, *չբ. ած. Հալված։* Յէղը խալուկ ի։

ԽԱԼՎԱԹ, *ած. Սակավամարդ։*

ԽԱԽԱՄ, *գ. Հրեական ռաբի (ռավի)։*

ԽԱԽԱՄԲԱՇԻ, *գ. Խախամապետ, Օսմանյան կայսրության սահմաններում հրեաների գլխավոր կրոնապետ։*

ԽԱԽԱՆԴ *(նաև՝ Հթ.)*, *ած.* *Խաղաղ, հանգիստ:*

ԽԱԽԸՆԴԵԼ, *չբ.* *Հանդարտվել, խաղաղվել:* Էրէխէն լ՚ըց էլ՚ավ, լ՚ըց էլ՚ավ, խախըընդվեց:

ԽԱԽԻՋԸ, *գ.* *Հալած դմակից մնացած կտորները:* Պըստիյ կ՚ա՛խ յեռ խախիզի խ՚ըմ՚ար մեռած ի *(Վն.)*:

ԽԱԽՔՑ-ԽԱՅՏԱՌԱԿ ԷԼՆԵԼ, *Սաստիկ խայտառակվել:* Մըտանք ինոնց կըռվի մէչ, խախք՚-խայտառակ էլ՚անք:

ԽԱԽՔՑՈՒԹԵՆ, *գ.* *Խայտառակություն:*

ԽԱԾԱՆ, *ած.* *Կծան:* Մեր շունը խածան ի, յավաշ:

ԽԱԾԼԱՆ, *ած.* *1) Կծան: 2) փխբ. Կանանց և աղջիկների բնորոշող խոսք, խածան լեզու ունեցող:*

ԽԱԿԱՌ, *ած.* *Հակառակ, համառ:*

ԽԱԿԱՌ ԻՆԳՑՆԵԼ, *Հակառակվել:* Նա վոր խակառ ինգ՚ավ, էլ յետ տ՚ըռցի:

ԽԱԿԸՌԿԵԼ, *չբ.* *1) Հակառակվել: 2) Դեմ առնել, խճճվել:* Կաժն ինգ՚ավ, թելեր խառնվան, խակըռկան:

ԽԱԿՑՈՒԿ, *նբ. ած.* *Հագնված:*

ԽԱԿՑՈՒԿ-ԿԱՊՈՒԿ, *ած.* *Հագնված-պատրաստված:*

ԽԸՀԻԾ, *գ.* *Կամք:*

ԽԱՂ *(նաև՝ Հթ.)*, *գ.* *1) Խաղ: 2) Երգ: 3) Պար:* Ախչըյներ էլ՚ան խաղի *(Վն.)*: *4) Հող:*

ԽԱՃԵԼ, *Վն.*, **ԽԱՃԱԼ**, *Լիմ*, *չբ.* *Հաչել:*

ԽԱՄ[1], *գ.* *Համ:*

ԽԱՄ[2], *1) ած. գ.* *Չհերկված հող, խոպան: 2) ած. Անփորձ (մարդ):*

ԽԱՄԱԼԻԿ, *գ.* *Մեծ ջրաման, կուժ:* Խամալիկ տըռան տակ տըրած ի, թասն էլ խետ, անցնողտ՚ըռցող ճ՚իր կըխըմի:

ԽԱՄԱՀԱՆԵՍ, *գ.* *Ձմռան փակված և խամացած անասուններին գարնանը առաջին անգամ փորձնական վարի դուրս բերելը:*

ԽԸՄԸՐ, *կ.* *Համար:* Ջի, ք՚ե, ախպօր խ՚ըմ՚ար *(Վն.)*:

ԽԱՄԲԱՐՔՑ *(նաև՝ Հթ.)*, *գ.* *Հաշիվ:*

ԽԱՄԲԷԿ, *գ.* *Համասփյուռ անձնանունը:*

ԽԱՄԲՈՒՌ, *մկ.* *Խումբ-խումբ: Պանդուխտը Պոլսից գրում է՝* Խամբուռ-խամբուռ ընկերով ուխտի կընաձեք Վ՚արակ՚ ու իմ ծարծըրված սիրտն էլ տըրէք՚ ծեր ծոց, տարէք՚ խետ ծ՚ե:

ԽԱՄԲՐԵԼ *(նաև՝ Բմ.)*, **ԽԱՄԲԸՐԵԼ**, *Հթ.* *նբ.* *Հաշվել:* Խամբրել չըկիտի, էլե մեյդան առուտուր կանի: Փարէն խամբրեց *(Վն.)*:

ԽԱՄԲՐԻՍ, *Լիմ, գ.* Համարք։

ԽԱՄԵՄ, *Կճ. գ. Ուրց։* Խամեմ բարեր կեղնի *(Կճ.)*։

ԽԱՄԸԼՎԵԼ, *չբ. Զարդարվել նոր շորերով ու զարդեղենով։*

ԽԱՄՈՒՂ, *գ. Արմտիքի առաջին ջուրը։*

ԽԱՄՓ^{ə}ՈՒՐԵԼ, *նբ.* Համբուրել։ *Ծան. – Գործ է ածվում միայն եկեղեցական անոթները համբուրելու իմաստով։* Յոթ տակ ծունդըր տըրեց, խամփ^{ə}ուրեց խաչը։

ԽԱՅ, *գ.* Հայ։

ԽԱՅԱՆ, *գ. 1) Կիսաածեծ կալ։ 2) Լինգ։*

ԽԱՅԹՈՒԿ, *նբ. ած. Խայթված։*

ԽԱՅԻԼ-ՄԱՅԻԼ, *հթ. գ. Բավականություն։*

ԽԱՅԻՆ-ԽԻԱՆԱԹ, *ած. Նենգ, դավաճան, մատնիչ։*

ԽԱՅԼԻԿ, ԽԱՅԼԻ, *Բմ.,* **ԽԱՅԼԻԿ^{ə}, ԽԱՅԼԻՔ^{ə}**, *Լիմ, հթ. գ.* Հայելի։ *Ծան. – Վանում խայլիկ բառի հոգնակին՝ խայլիք^{ə} (Վն.)։*

ԽԱՅՆԵԼ *(նաև՝ հթ. Լիմ), չբ.* Հագնել։ Մըկըա թաւզա֊ ֆըստան խայնեմ, էթամ խարսնիս *(հթ.)*։

ԽԱՅՆՎԵԼ, *չբ.* Հագնվել։ Խայնըվե, հազըրվե, վոր խուր էրթա։

ԽԱՆ[1], *գ.* Նահանգապետ։

ԽԱՆ[2], *գ. Իջևանատուն։* Խանասոր՝ կարմիր խան, կարմիր պանդոկ։

ԽԱՆԳ, *գ.* Շունչ։

ԽԱՆԳ^{ə}ԱԼ, *գ. 1) Ոչխարների և այծերի երկարած ու կախված բուրդը։ 2) Կանանց կախովի զարդերը։*

ԽԱՆԳ^{ə}ԵԼ, *չբ. 1) Հանգչել։ 2) փխբ. Մեռնել։*

ԽԱՆԳ^{ə}ԸՌԵԼ, *նբ.* Հանգուցել։

ԽԱՆԳ^{ə}ԸՍՏԱՆԱԼ, *չբ. 1) Հանգստանալ։ 2) Երկար տանջվելուց հետո մեռնել։*

ԽԱՆԳ^{ə}ԸՍՏԱՐԱՆ, *գ. Գերեզմանատուն։* Խեղճ կընիկ, մարդը խանգ^{ə}ըստացավ խողի տակ, համա ինքը խանգ^{ə}ըստարանից տուն չի կ^{ə}ա, կըճենճըռթա պ^{ə}ըրկ արևի տակ։

ԽԱՆԳ^{ə}ԻՍՏ, *գ. ած. Հանգիստ։*

ԽԱՆԳ^{ə}Ո՞ՒՑ, *հթ. գ.* Հանգույց։

ԽԱՆԳ^{ə}Ո՞ՒՑ ԱՆԵԼ, *Վն. Թելը հանգուցել։* Թելի ծէր խանգ^{ə}ոց արաա *(Վն.)*։

ԽԱՆԳ^{ə}Ո՞ՒՑԵԼ, *Վն. նբ. Թելը հանգուցել։*

ԽԱՆԳ^{ə}ՈՒՐՑ, *հթ. գ.* Հանգույց։

ԽԱՆԳ^{ə}ՈՒՐՑԵԼ, *հթ. նբ. Թելը հանգուցել։*

ԽԱ՛ՆԴԱ՛Կ, *գ. Փոս։ Ծան. – Վանի Քաղաքամեջի պարիսպը շրջապատված էր խանդակով, որով ջուր էր հոսում դեպի ծովափնյա ճահճուտ եղեգնուտները։*

ԽԱՆԴ-ԽԱՆԴԱՆԱ, *ած. Ուրախալի։*

ԽԱՆԵԼ, *նբ. 1) Հանել։ 2) Բմ. Հորինել։*

–Խանել տո՛ւս, *կճ.*, *Հորինել*։ Էնա մարթ իրանից շատ պա՛ներ կըխանա տո՛ւս *(կճ.)*։

ԽԱՆԵԼՈՒԿ, *գ. Հանելուկ։*

ԽԱՆԷԴԱՆ, *գ. ած. Ազնվական։*

ԽԱՆԷՋԱՆ, *գ. ած. Ազնվական։*

ԽԱ՛ՆԿԱԼ, *գ. Երեսի մետաքսյա քող։*

ԽԱՆՁԸՐԵԼ, *չբ. Խանձվել։* Ճաշը խանձըրե, խանձըրախամ ի, էլ չուտվի։

ԽԱՆՁՐԱԽԱՄ, *գ. Խանձրվելուց առաջացած տհաճ համ։*

ԽԱՆՁՐԱԽՈՏ, *գ. Խանձված տհաճ հոտ։* Խանձրախոտը պըրնե տանտուն։

ԽԱՆՈՒՄ-ԽԱԹՈՒՆ, *գ. ած. Տիկին, տան մեծ կինը։*

ԽԱ՛ՆՉԱԼ, *գ. Դաշույն։* Խանչըլի յարէն կըսաղանա, լէզվին չի սաղանա։

ԽԱՆՋԻ, *գ. Իջևանատեր։*

ԽԱՆՎԵԼ, *չբ. Հանվել։* Խանվե, մօրէ չըլուտ կայնե մեր առաջ։

ԽԱՆՔՅԱՆԴԱՋ, *գ. Աղբանոթ, աղբը հավաքելու գոգավոր թիակ, ֆառաջխանա։*

ԽԱԾԸՆԾՈՒՌ, *գ. Պաս օրվա կերակրատեսակ։*

ԽԱՇԼԱՄԱ, *գ. Խաշած միս։*

ԽԱՇԿ *(նաև՝ Բմ. կճ. Լիմ)*, **ԽԱ՛ՇԿ**, *հթ. գ. Հասկ։* Ցորնի խաշկեր կըթա՛փեն *(Վն.)*։ Ցօրնի խա՛շկ խա՛շկեր ի *(Հթ.)*։

ԽԱՇՓԸՌԹՈՒԿ, *ած. Հիվանդագին կարմրած և ուռած (դեմք)*։ Խաշփըրթուկ իրեսներ։

ԽԱՋ, *գ. Վանք, եկեղեցի։* Անզոր խաչին յա խունկ ծըխի, յա փըթիր։

ԽԱՋԱԼ, *հթ. չբ.Հաչել։*

ԽԱՋԵՐ, *հթ. Լիմ, գ. Գերեզմանատուն։* Կիխտեր *(=կանայք)* կընա՛ցին խաչեր *(Հթ.)*։

ԽԱՋԷ, *գ. Այոն և ոչը, անորոշ պատասխան։* Ինոր խաչէից պա՛ն չըխասկըցա։

ԽԱՋԽԱՄԲՈՒՐ, *գ. Քահանայի մեկնած խաչը համբուրելուց հետո եկեղեցու օգտին տրվող գումարը։*

ԽԱՋՕԽՆԷՔ[8], *գ. Եկեղեցուն կամ քահանային տրվող դրամը։*

ԽԱՊԵԼ, *նբ. Խաբել։*

ԽԱՊԼԸՊԵԼ, *նբ. Հեշտությամբ քանիցս խաբել։* Էկավ խապլըպեց, իր ուզածն առավ, տարավ։

ԽԱՊՈՒԿ, *նբ. ած. Խաբված։* Տո՛ւ էն կ'ըլխից խապուկ ես։

ԽԱՊՊՈՒԿ, *գ. Բույսի տեսակ։*

ԽԱ՛ՋԱԹ, *գ. Գործիք։* Ուսթեն ուր խաջաթ իր խետ կըպիրի։

ԽԱՌԱ, *գ. ած. Ծաղկանկար։* Խակ'ել էր ատլաս ֆըստան խառայով։

ԽԱՌԱԽՈՒՐԴԱ, *գ. ած. 1) Անպետք և ավելորդ իրեր: 2) փխբ. Ապիկար մարդ:*

ԽԱՌԿԸՏԵԼ, *նբ. Խառնել, տրորել:* Ծեր ծուռ կով մըտավ մեր ճըրուկ ածուն, խըրեղեն կ'ինծ ինան կարօս կոխըռճեց, խ'ե չամուռին խառնկըտեց, տափսաղաղ արավ, տէնցավ տըռճիկ տալօվ մըտավ ծեր ք'արով-ք'արատակ խարաբէն:

ԽԱՌԾԷԿԱԹ, *գ. Խաչերկաթ, ամանները շարելու համար թոնրի բերանին դրվող խաչաձև երկաթ:*

ԽԱՌՆԱՎԸՋՏԻԿ, *ած. Խառնիխուռն:*

ԽԱՌՆԱՎԸՌԾԻ, *ած. Խառնիխուռն:*

ԽԱՌՆԸՇԿԸՏԵԼ, *նբ. Խառնել, խառնշտել մի բան որոնելիս:*

ԽԱՌՆԸՇՏԸԿԵԼ, *տե՛ս* **ԽԱՌՆԸՇԿԸՏԵԼ**:

ԽԱՌՆԻՍ, *Բմ. գ. Հարսանիք:*

ԽԱՌՋ, *գ. Հարկ, տուրք:*

ԽԱՌՋԵԼ, *նբ. Ծախսել:* Էսօր ք'անի՞ փարա ես վաստըկե, ք'անի՞ փարա խառջե:

ԽԱՌՋԼԸՂ, *գ. Ծախսելու հատկացված դրամը:* Տարին ք'առսուն վոսկի խառջլըղ ունին:

ԽԱՌՍՆԻՍ, *Լիմ, գ. Հարսանիք:*

ԽԱՌՑՈՒՑԵԼ, *Լիմ, չբ. Հարցնել:*

ԽԱՍ, *ած. Բարձրորակ:*

ԽԱՍ ԲԱԽՉԵՆ, *Թագավորական պարտեզ:* Ինչ կանդար խօրօտ ախչիկ կա, թող կյան թակավուրու խասս բախչէն:

ԽԱՍԽԱՆ, *գ. Թոնրից հացը հանելու կեռ ձող, ակիշ:*

ԽԱՍԿԸՆԱԼ, *նբ. Հասկանալ:*

ԽԱՍՆԵԼ, *չբ. Հասնել:* Խաց տըրին, խասավ, պ'ան տըրին, փախավ:

ԽԱՍՈՂ, *Լիմ, գ. Խաղողի ողկույզ:* Մէ ճութ խասող տու *(Լիմ)*:

ԽԱՍՈՒԿ, *չբ. ած. Հասուն, հասած:* Տանձը խասուկ ի:

ԽԱՍՏ, *ած. Հաստ:* Խաստ ու պ'ըրձ մէջ կ'ին ի:

ԽԱՍՏԱԽԱՆ, *գ. Հացի մեծ սփռոց:* Խաստախան փըռե, սեղան զ'ըրտըրե:

ԽԱՍՏԱԽԱՆԱ, *գ. Հիվանդանոց:* Ինոր ոտ խաստախանի տունն ի:

ԽԱՍՏԱՆԱԼ, *չբ. Հաստանալ:*

ԽԱՍՐԱԹ, *գ. Կարոտ:* Էկա տէսա, խասրաթըս առի: Օրվա խացի խասրաթ ի:

ԽԱՎ, *գ. Հավ:*

–Խավ չունի, ծեռտ կըժողվի,
Մաքրում է ուրիշի կեղտոտածը:

ԽԱՎԱԼԱԽԱ, *վ. Այո՛, Աստված վկա:* Խավալախա, ես սուտ չեմ ասե:

ԽԱՎԱՆ, *գ. 1) Հավանգ: 2) Հավան:* Լաճը խավան կըմընա թակավորու խօսքին:

ԽԱՎԱՍ, գ. *Փափագ, սեր, ցանկություն։*

–Խավասլամիշ էլնել, *Փափագել։*

ԽԱՎԱՍՈՒՐ, գ. *Հայոց ձոր գավառակի պաշտոնական անունը։*

ԽԱՎԸՌԾԻԼ, գ. *Բույս, որի ցողունի թթվաշ միջուկն ուտվում է։*

ԽԱՎԻԾ, գ. *Յուղով և ալյուրով պատրաստված կերակուր, հատկապես մանուկների և անատամ ծերունիների համար։ Խավիծից գրկված պապիկը հարսին խաբած լինելու և խավիծի արժանանալու համար ասում է՝* Խավիծ, խավլավիծ, պապիկն ուտի, իյնի վոտից, թան, թըթո՛ւ թան, պապիկն ուտի, էրթա՛ւ կ՚ութան։

ԽԱՎԽՈՒՍՈՑ, գ. *Լուսաբացից առաջ, աքլորականչի ժամանակը։* Վարդն ի պա՛ցվի առավտըման խավխուսոց։

ԽԱՎԿԻԹ, գ. *Ջու։* Խավի խավկիթ, օցի ծո՛ւ *(Կճ.)։*

ԽԱՎԿՈՐ, գ. *Աչքի հիվանդություն, երբ ճրագի լույսով ոչինչ չեն տեսնում։*

ԽԱՎՆԵԼ, նբ. *Հավանել։* Էն աջլայիք ախչըկան խամ՚ևիցին, տարան, սաղ մընա խօր ոսկին։

ԽԱՎՈՂ *(նաև՝ Բմ.)*, **ԽԱԽՈՂ**, *Լիմ*, գ. *Խաղող։*

ԽԱՎՈՒ ԾԱ՛Ր։ *Հայոց ձոր։ Ծան. – Գավառակի տեղական պաշտոնական անունը* Խավասուր *էր։*

ԽԱՎՍԸՐՎԵԼ, կբ. *Հավասարվել։* Տափան տըվին կըռէթները մշրիցին, վա՛ռած արտը խավսըրցուցին։

ԽԱՎՏԷԽԱՆ ԱՆԵԼ, *1) Հավատքից հանել։ 2) Խաբելով ուրիշ բան անել տալ։*

ԽԱՎՔ[ց], վն. *Հթ. Լիմ*, գ. *Թռչուն։* Խավքե՛ր իմ բօստան ավիրին *(Հթ.)։* Խավքե՛ր ծո՛ւ կածեն *(Լիմ)։*

ԽԱՏԵԼ, կճ. *Լիմ*, չբ. *Սատկել։* Ինոր էծ խատավ *(Լիմ)։*

ԽԱՏԻԿ, ԽԱՏԻԿ[ց], *Հթ. Լիմ*, գ. *Խաշած ցորեն, կանեփ և այլ ընդեղեն, որ լցնում են կաթնատամ հանած երեխայի գլխին՝ մյուս ատամների հանելը արագացնելու համար։* Էրեխի կ՚ըլխուն խատիկ թա՛փին *(Վն.)։* Խատիկ՝ իփեն, լըցեն վըր կ՚ըլխուն *(Լիմ)։*

ԽԱՏԽԸՏԱԾ, նբ. *ած. Մաքրած, ջոկջոկած։*

* Ճա՛ղցի տըրուներ խատխըտած, *Մաքրած և չորանալու համար ջրաղացի դռանը փռված ցորեն։*

ԽԱՏԽԸՏՈՒՆ, *ած. Ծիծաղախիտ։*

ԽԱՏՆԵԼ, չբ. *1) Սպառվել։ 2) Ուտելի անասունը սատկել։* Սեվ խավ խատե *(Վն.)։ 3) Մեռնել։*

ԽԱՏՈՒԿ, *չբ. ած. Սատկած։* Կատուն խատուկ ի։

ԽԱՏՑՈՒՑԵԼ, ԽԱՏՑԸՆԵԼ, *նբ. 1) Վերջացնել։ 2) Մեռցնել, սպանել։*

ԽԱՐԱԲԱ, *ած. Ավերակ։* Ծեր ցըռան կով տո՛ւս էկավ ծեր խաւրաքից, ցեռով զաւրթըրեց ճըրճընած-ավլած փողան։

ԽԱՐԱՄ, *1) գ. Հարեմ։ Ծան. – Հնում բնակավայրերից քիչ հեռու գյուղական համայնքին պատկանող տուն էր կառուցվում, որտեղ առանձնանում էին կանայք՝ ամսականի օրերին և ծննդաբերության ժամանակ։ Նրանց սպասարկում էին մեծահասակ, փորձառու կանայք՝ տատմերնեըը։ Տղամարդը մուտք չուներ այդ տները։ Նրանց համար այդ տները պիղծ էին, հարամ, որից էլ հետագայում ծագել է հարեմ, կանանոցը, որը ընդունված էր բազմակնությունը պահպանած ժողովուրդների մոտ։ 2) Հթ. ած. Վատ, պիղծ, անմաքուր* Խաւրամ մառթ, խաւրամ կ'ինի *(Հթ.)*։

ԽԱՐԱՏԵԼ, *նբ. Լվացված ամանեղենը արևի տակ կամ կրակի վրա տաքացնելով չորացնել։* Պըղինձը խարատեցի։ *Ծան. – Հարբուխի, գրիպի (խըռընցավ) ժամանակ սպիտակեղենը խարատում էին թոնրի մեջ և տաք-տաք կապում հիվանդի գլխին։*

ԽԱՐԳՅԱԼԱ, *գ. 1) Վատ քայլող ձի։ 2) փխբ. Խոչընդոտ, անկանոնություն։*

ԽԱՐԵԼ, *չբ. Շփումից վերք առաջանալ։*

ԽԱՐՋԱ, *գ. Դիրվիշի հագուստ, մահմեդական կրոնավորի ֆարաջա։*

ԽԱՐԻՋԱՆ, *գ. Խարազան, մտրակ։*

ԽԱՐԻՍԱ, *գ. Հարիսա։*

ԽԱՐԻՍԱԿԸՌՃԻԿ, *գ. Հարիսա կոճելու փայտը։* Մէյ մէկու խարիսակըռճիկ չեն տա, տընից բարաքյաթ կըվերջանա։

ԽԱՐԻՐ, *թ. Հարյուր։*

ԽԱՐԽԸՆԾԻԿ, *գ. Մանրած և տապակած դմակ։*

ԽԱՐԽԻՋԱ, *Լիմ, գ. Հալած դմակից մնացած կտորները։*

ԽԱՐԿԵԼ, *վն. նբ. Բովել։* Ալուր խարկեց, վոր ճաշ իփի։

ԽԱՐՋ, *գ. Հարկ, տուրք։*

ԽԱՐՋԸԼԸՂ, *գ. Առօրյա մանր ծախսերի դրամ։*

ԽԱՐՍ, *գ. Հարս։* Խարս վէր ծիուն վի՛ր կըսմաթ։ Վոր ճըրաքը՝ ընցավ, պըստիկ խարս ճո՛չ պըրտուճըմ ճըխտից պէրան, ասաց՝ պըրտուճ մը մըթան, արժի կով մը կըթան։

ԽԱՐՍԽՈՒՐ, *գ. Հարսանյաց թափոր, հարսի տուն գնացող*

հարսանքավորներ։ Չում տանանա, չում տինինի, խարսխուրը կէրթաւ։

ԽԱՐՍՆԻՍ, *գ. Հարսանիք*։ Խարսնիս զի պիտի, խաչօխնին՝ խօրսումօրս։

ԽԱՐՓՈՒԽ, *գ. Հարբուխ*։ Խարփուխի վախտ կըփըղըշտան *(Կճ.)*։

ԽԱՐՕՐ, *գ. Արոր*։ Խարօրօվ վար կէնինք *(Կճ.)*։

ԽԱՑ, *գ. 1) Հաց*։ *Տեսակները՝* լավաշ, լօշ, թափթափա, փիթէ, պապաճիկ, դոչիկ, կլօճ, թափարիկ, մոխրիկ, կուտ, կտենի, տըմբրոզ, փայնաքէօշ։ Ցորէն խաց կուտոշ ունի։ *2) Ճաշ*։ *3) Նախաճաշ*։ *4) Հացահատիկ*։ Էս տարի խաց բօլ ի *(Վն.)*։

* Խաց ուտել, *Ճաշել*։ *Ծան. – Գյուղերում ճաշի հինգ անուն կա, իսկ քաղաքում՝ մեկ։ Առավոտյան տաք կերակուր էին ուտում, կեսօրին՝ հաց ու պանիր, երբեմն էլ թեյ, իսկ երեկոյան, երբ աշխատավոր տղամարդիկ տուն էին գալիս, նստում էին և հիմնավորապես ճաշում, ապա ծանրացած ստամոքսով պառկում-քնում։*

* Խացին հասնել, *Մահը չտեսնել, միայն հոգեհացին հասնել*։

* Խացփոր պԱնել, *Աշխատել առանց դրամի՝ անունդ ստանալով*։

* Կըտորըմ խացի տեր ի տԱրցե, *Քիչ թե շատ բարվոքվել է վիճակը*։

* Կիսած խացը պիթուն չի տԱռնա, *Չի ամբողջանա*։

* Տո՛ւ հալա շատ խաց ու պանիր պիտի ուտես, *Դեռ լիարժեք մարդ չես*։

* Քարից խաց կըխանի, *Շատ աշխատասեր, ճարպիկ ու ձեռներեց մարդ է*։

ԽԱՑԱՏՈՒՆ, *գ. Թոնրատուն, որտեղ հաց են թխում*։

ԽԱՑ-ԹԱՑ, *գ. Ուտելիք, ապրուստ*։

ԽԱՑԹՈՒԽ, *գ. Հացթուխ*։ Խացը խացթըխին տուր, խաց մէլ ավել տուր։

ԽԱՑԻ ՊԱՆԻՐ, *կճ.*, **ԽԱՑ-ՊԱՆԻՐ**, *բմ. Փխփերթ*։ Խացի պանրի սերմ կօճակի նըման ի *(Կճ.)*։

ԽԱՑԽԱՆ, *վն. գ. Մի ծայրը ճանկավոր, մյուսը թաթաձև, երկար ու բարակ մետաղյա ձող, որով հաց են պոկում ու հանում թոնրից*։ Խացթուխ խացխընօվ թօնրէն լավաշ կըխանէր *(Վն.)*։

ԽԱՓԻԱ, *գ. Ծպտյալ ոստիկան*։

ԽԱՓՆՈՒԹԵՆ, *գ. Խաբեբայություն*։

ԽԱՖՔ[3], *գ. Թռչուն*։

ԽԵԼ, *վն. Լիմ, չբ. Նայել*։ Կիրի, պե խեմ *(Լիմ)*։ Կընխէր շան լակոտներաց *(Վն.)*։

ԽԵԼԱՂՋԵՋ ԷԼՆԵԼ, *հափշտակվել, հիանալ, սքանչանալ գեղեցիկ տեսարան կամ իր դիտելիս։*

ԽԵԼԸՌԵԼ, *չբ. Գժվել։*

ԽԵԼԸՌՈՒԿ, *ած. Գժված, հիմար։* Խելըռուկի մէյն ի, ինոր վո՛վ ախչիկ կուտա։

ԽԵԼՔ^{3}ԱՄԱՂ ԷԼՆԵԼ, *Ուրախութիւնից խելքը կորցնել։* Քե տէսավ, խելքամաղ էլաւ։

ԽԵԼՔ^{3}Ի ՏՈՊՐԱԿ, *ած. գ. ծղր. Հիմար։*

ԽԵԽՏԸՎԱԾ, *ած. գ. Անեծք. սիրո և մերժման արտահայտութիւն, որ ուղղում էին աղջիկներն իրենցից տարիքով փոքր, սակայն համակրելի երիտասարդների հասցեին։*

ԽԵՄ, *նբ. Տեսնեմ, մեկ տեսնեմ։*

ԽԵՌ^{1}, *1) ած. Ըմբոստ, անհնազանդ։ 2) ած. Խենթ, ծուռ։ 3) գ. Ոխ, քեն։*

ԽԵՌ^{2} (ԻՐԻՍԵՑ), *Աստված պահի։*

ԽԵՌ^{3}, *գ. ած. Հերվընեկ, մեկ տարեկան քուռակ կամ հորթ։*

ԽԵՌԸԼԱԾ, *ած. Շատ քնելուց համարյա ուշաթափ եղած։*

ԽԵՌՆԱԿ, *ած. Ոխ պահող, քինախնդիր։*

ԽԵՌՆԻԿ, *տե՛ս* **ԽԵՌ^{3}**։

ԽԵՎԱԼ, *չբ. Հևալ։* Շուն լէզուն խանիր էր, կըխէվար *(Վն.)*։

ԽԵՎԽԸՎԱԼ, *Հթ. կճ. չբ. Հևալ։*

ԽԷ, *Լիմ, կ. Հետ։* Խէ(տ) խօր, խէ(տ) ինգիրներաց *(Լիմ)*։

ԽԷՋՆԵԼ, *Վն. նբ. Հեծնել։*

ԽԷԹԵԼ *(նաև՝ Հթ.)*, *նբ. Խայթել։*

ԽԷԹՈՒՆՉՔ^{3}, *Հթ. գ. Խայթոց։* Մէղրի դըզեզ խէթէց, խէթունչք^{3} մընաւց մատիս մէչ *(Հթ.)*։

ԽԷԺԸՌԵԼ, *չբ. Շշմել։*

ԽԷԺԸՌՈՒԿ, *չբ. ած. Շշմած։*

ԽԷԼՔԷ ԹԷԹԵՎ, *կճ. Թեթևսոլիկ։*

ԽԷԼՔԸՏ ՍԻՐԵՄ, *ծղր. Խելք չունես, հիմար ես։*

ԽԷԾԱԼ, *չբ. Պտուղից առատ լինել։* Ծառերը կըխէծան էս տարի։

ԽԷԾԵԼ, *գ. Հեծյալների արշավախումբ։* Քըրդի խէծելն (աշիրն) էկավ։

ԽԷԾԽԷՆ, *գ. Ծովային թռչուն։*

ԽԷԾՆԵԼ, *նբ. Հեծնել։* Էշ խէծնել մէյ ամոթ, էջնելն՝ էրկու։

ԽԷԾՈՑ, *գ. Ջյունապատ հարթ տարածություն, որի վրա փռում են չոր անասնակերը, որպեսզի ոչխարներն ուտեն կակուղ խոտ և ջուր խմելու կարիք չունենան։*

ԽԷՅՐԱԹ ԱՆԵԼ, *Լավություն անել, օգնել։*

ԽԷՇՐԱՆ, *մկ. Հարմար, հանգիստ (նստել)։*

ԽԷՍԱԲ, *գ. Հաշիվ։*

ԽԷՍՆԱՔʷԱՐ, *Վն. գ. Հեսան։* Խէսնաքʷարօվ տանայ կըսըրեն *(Վն.)։*

ԽԷՏ, *կ. Հետ, միասին։* Աշխար խէտ մյե չիկʷա, մենք խէտ ինոր էրթանք։

ԽԷՏ-ԽԷՏՈՒՆ, *մկ. Անմիջապես։*

ԽԷՏՈՎ, *Հթ. մկ. Այնուհետև։*

ԽԷՐ[1] *(նաև՝ Հթ. Լիմ) գ. Հայր։* Խօսքի տեղը վոր էկավ, խէրըտ էլ էլնի, չըխնայես։ Մալին տէր, վորթուն՝ խէր։ Խէրըս զըվարթ//աստղխօսօղ// մէջլըսի մարթ էր *(Վն.)։* *Ծան. – «Հայրիկ» ձևը կոչական է։* Հայրիկ, տուռ//տուռն պաց, մըտնեմ տուն *(Վն.)։*

ԽԷՐ[2], *գ. Բարիք, բարություն։*

ԽԷՐԱԽՈՏ, *ած. Հորը փոխարինող, հարազատ հոր մեռնելուց հետո այդպես էին որբերն անվանում հորեղբորը։*

ԽԷՐԱՄԵՌ, *ած. Անեծք. Հայրդ մեռնի։*

ԽԷՐԱՆՑ, *գ. Հարսի ծնողների տունը։*

ԽԷՐ-ԲԱՐԱՔՑԱԹ, *գ. Բարիք ու լիություն։*

ԽԷՐԵԼ-ԽԷՐՎԵԼ, *չբ. Օգտվել օգուտ տեսնել։*

ԽԷՐԸՋՄԱՆ, *կճ. մկ. Նախանցյալ տարի։*

ԽԷՐԸՋՆԱՄ, *տե՛ս* **ԽԷՐԸՋՄԱՆ։**

ԽԷՐԻՔ, *գ. Բավ, բավական։ Ծան. – Վանում տարածված էին հասարակ անուններից ծագած անձնանունները, ինչպես՝* Հերիքնազ, Վերջալույս, Բավէլաս, Անգին, Վոսկեհատ *և այլն։*

ԽԷՐԿ, *գ. Հերկ։*

ԽԷՐ-ՇԱՌ-ԱՍՏՎԱԾ, *Տերողորմյայի հատիկները գցելուն ուղեկցող բառեր։*

ԽԷՐՈՒ, *մկ. Անցյալ տարի։*

ԽԷՐՈՒԹԵՆ, *գ. Հայրություն։*

ԽԷՐՔʷՈՒՐ, *Բմ. գ. Հորաքույր։*

ԽԷՔԻՄ, *գ. Ինքնուս բժիշկ։*

ԽԸԲԼԻԿ, *գ. Դև, տնային սատանա։*

ԽԸՋԱԿ, *գ. Սահնակ։*

ԽԸՋԱՐ, *գ. Փայտե քառակուսի շրջանակի մեջ առնված մեծ սղոց՝ գերանը տախտակի վերածելու համար։*

ԽԸՋԱՐՋԻ, *գ. Մեծ սղոցով գերանը տախտակի վերածող արհեստավոր։*

ԽԸՋՄԱԹ, *գ. Առտնին ծառայություն։*

ԽԸՋՄԱԹ-ՔՑԱՐ, *գ. Սպասավոր։*

ԽԸՋՄԱԼԻ, *գ. Նաշ, դագաղ, որով մեռելները փոխադրում էին եկեղեցի։*

ԽԸՋՈՒՋ, *գ. Կալի մնացորդը, որ տալիս էին աղքատներին ու հավերին։* Կալէն ի՞նչ տէսա, խըզուզ քե պայի։

ԽԸԹՈՒՑ, *Լիմ, գ. Մեղվի, կրետի, կարիճի և այլ միջատների խայթոց։* Դընզէզ կընծեց, խըթուց մընաց մէչ իմ մատին *(Լիմ)*։

ԽԸԺԻ-ԲԸԺԻ, *գ. Լույսի և մթան խառնվելու հետևանքով իրերի հստակ չերևալը։*

ԽԸԺԻԿ, *գ. Փոքրիկ թռչունի տեսակ։*

ԽԸԺԽԸԺԱ ՅԱՐԱ, *Պղպջակավոր վերք։* Խըժխըժա յարէն ինի վէրէտ *(անեծք)*։

ԽԸԺԽԸԺԱՎՈՐ, *ած. Մաշկը պղպջացող վերքերով ծածկված մարդ։*

ԽԸԺՎԸԺԱԼ, *չբ. Միջատները եռուզեռ գալ։*

ԽԸԺՎԸԺՈՑ, *գ. Երեխաների աղմուկ։*

ԽԸՂ, *ած. Օտար, ուրիշ։* Խըղի խարսը խօրօտ կէլնի։ Խըղի աչքը վոր զի լոս տա, իմ աչկը կըխանեմ ու կըթաւլեմ։

ԽԸԼԸՍԵԼ *(նաև՝ Հթ.)*, *նբ. Վերջանալ, սպառվել, ավարտվել։* Թազբի մէչ ալուր խըլըսե, աղուն պիտի ճաղնց տանել։ Կէրծ խըլըսավ *(Հթ.)*։

ԽԸԼԸՍՆԵԼ, *նբ. 1) Վերջանալ, սպառվել։* Պէն խըլըսավ, էլ անելիք չըկէր *(Վն.)*։ *2) Պրծնել, ազատվել։*

ԽԸԼԸՍՈՒԿ, *նբ. ած. Նիհար մարդ։*

ԽԸԼԸՍՈՒՆ, *գ. Առավոտ։*

ԽԸԼԽԸԼԱԼ, *չբ. Ուտել առանց ախորժելու։*

ԽԸԼԽԸԼԵԼ, *նբ. Իրար ձեռքից խլել։*

ԽԸԼԽԸԼՈՒԿ, *նբ. ած. Ջճարվող իր, հազվագյուտ ապրանք։*

ԽԸԼՎԸԼԱԼ, *չբ. Աչքին պարզ չերևալ։*

ԽԸԼՎԸԼԻԿ, *1) գ. Շատ անհանգիստ փոքրիկ թռչուն։ 2) ած. Անհանգիստ, չարաճճի։*

ԽԸԼՖՈՒԿ, *ած. Ծերությունից ցնդած։*

ԽԸԽՄԵԼ, *նբ. 1) Կակղել։ 2) Թրջվելուց թուլանալ։* Ծեր տանտան պատ խըխմեր ի։

ԽԸԾԿԱՆ, *գ. Սափորի, կժի բերանակալ։*

ԽԸՂԷՂ *(նաև՝ Հթ. Լիմ)*, *գ. Տեղատարափ անձրև, հեղեղ։* Խըղէղի պէս իմ թաւփած արտըսունքը։ Խըղեղն էկավ, տարավ ինոր տունը։

ԽԸՂՃԱՄ, *գ. Խուլ, կզակի տակ գոյացող ներքին պալար։*

ԽԸՃԵԼ, *նբ. Մի կերպ, ստիպողաբար մոցնել։* Ախչըկան կըխըճեն օցի օդէն։

ԽԸՄ, *գ. Հիմք։*

ԽԸՄԱՐ, *Լիմ, կ. Համար։* Ձի խըմար, ախպօր խըմար, քե խըմար *(Լիմ)*։

ԽԸՄԲՐԵԼ, *չբ. Երկար նստելով հանգստանալ։*

* Սիրտ-սակատը խըմբրեց, *Վրեժը լուծելով՝ սիրտը հանգստացավ։*

ԽԸՄԽԸՄ, *ած. Քթի մեջ խոսող, ռնգախոս։*

ԽԸՄՈՐ, *վն. 1) գ. Հունցած ալյուր։ 2) ած. Կիսաեփ։* Խըմոր խաց, պաղլառճ, կուտապ ի *(վն.)։*

ԽԸՄՈՒԿ, *նբ. ած. Հարբած։* Հըմէն օր խըմուկ//սաւրխօշ կուկ՝էր տուն *(վն.)։*

ԽԸՆԴՄԸՆԴԱԼ, *չբ. 1) Ուրախ-ուրախ ինքն իրեն ժպտալ։ 2) Հեգնել։*

ԽԸՆԴԽԸՆԴԱՑՆԵԼ, *նբ. Շարունակ ծիծաղեցնել։*

ԽԸՆԴՐՈՒԿ, *գ. Հյուր բերելու համար ուղարկված ծառա կամ փոքր տղա։*

ԽԸՆՋԻԿ ԱՆԵԼ, *Կոտրատվել նազկտալ, սեթևեթել։*

ԽԸՆՋԻԿ-ՄԸՆՋԻԿ, *ած. Կոտրատվող, պչրվող։*

ԽԸՇԸՐՏՎԵԼ, *կբ. Փշուր-փշուր լինել, ջարդոտվել։*

ԽԸՇՄԱՐ, *վն. Լիմ, գ. Հենակ, որ դրվում է պատուղներով ծանրաբեռնված ճյուղի տակ։* Վոր խըչմար զնրկեն, խավող չի փըթի *(վն.)։*

ԽԸՉԽԸՉԱԼ, *հթ. չբ. Կչկչալ։*

ԽԸՊԱՐՏ, *ած. Հպարտ։*

ԽԸՊԼԻԿ, *ած. Շատ փոքր։*

ԽԸՋԹԱ, *գ. Ոսկերչական գործիք։*

ԽԸՌ, *գ. Մանկական խաղ։*

ԽԸՌԱԼ, *չբ. Խռմփալ։*

ԽԸՌԱՎԱԹ, *ած. Խռով, քեն պահող։*

ԽԸՌԸՄՓԱԼ, *չբ. Խռռալով քնել։*

ԽԸՌԸՆԴԱՏ, *1) գ. Միայն վառելու համար պիտանի անպետք խոտ։ 2) փխբ. ած. Անպետք, ապիկար (մարդ)։*

ԽԸՌԸՆՑԱՎ *(նաև՝ Հթ.)*, *գ. Հարբուխ։* Խըռընցավ քե պայի, չում խաւզար տարի։ Խըռընցավի վա՝խտ//կ՝ա՝խ կըփըռըշտան//կըփըռո՝տան *(վն.)։*

ԽԸՌԻԿ(Ց) ՏԱԼ, *վն. Վռնդել։* Խըմուկ մարթուն տընից//տընէն խըռիկ իտու *(վն.)։*

ԽԸՌԻՆՁ, *գ. Ջոր խոիվ։*

ԽԸՌԽԱ, *գ. 1) Արևելյան ոճի վերարկու։ 2) Հնոտի, ցնցոտի։*

* Խըռխա ի շերիֆ, *Մահմեդի վերարկուն, որ ժառանգաբար հասել էր օսմանյան սուլթաններին, և հագնում էին խալիֆները։*

* Նահատակի խըռխա, *1258 թվականին մոնղոլները, գրավելով Բաղդադը, ոչնչացրին Աբասյան վերջին խալիֆին ու նրա հազարատներին։ Եգիպտոսի մամլուկնե-*

րը Դամասկոս հասած երկու հոգևորականներից մեկին հայտարարեցին խալիֆի ժառանգորդ և նահատակված խալիֆի խըռխան գցեցին նրա ուսերին: Այդ խըռխան իբրև թե մարգարեից մնացած լինելու պատճառով մաշված էր: 1515 թվականին Օսմանյան սուլթանը գրավեց Կահիրեն և խըռխան գցեց իր ուսերին:

ԽԸՌԾԻԿ, **ԽԸՌԾԻԿ**[g], *Հթ.*, **ԽԸՐԾԻԿ**, *Կճ.*, **ԽԸՐԾԻԿ**[g], *Լիմ, գ. Տիկնիկ:* Ախչիկ խըռծիկ կըխաղէր *(Վն.)*: Ախչըկներ խըրծիկ' կըխաղէյն *(Լիմ)*:

ԽԸՌՆԸՑԱՎ *(նաև՝ Լիմ), գ. Հարբուխ:* Ցամս էլավ խըռընցավ: Խըռնըցավի վախտ կըփըռըշտան *(Լիմ)*:

ԽԸՌՆՈՒԿ, *ած. Պատրաստախոս, խոսքի տակ չմնացող:*

ԽԸՌՉԱԿ, *Վն. գ. Կոկորդ:*

ԽԸՌՉԸԿԵԼ, *նբ. Մխրճելով մտցնել, զոռով լցնել:*

ԽԸՌՉԸԿՈՒԿ, *գ. Դիֆտերիա:*

ԽԸՌՋԵԼ, *նբ. Ծախսել:*

ԽԸՌՏՈՒԿ, *ած. Վախեցած, խրտնած:*

ԽԸՌՖԱԾ, *ած. Ջառամած:*

ԽԸՌՖԵԼ, *չբ. Ծերությունից ցնդել:*

ԽԸՍԸՐ, *գ. Մատակ ձի:*

ԽԸՍԻՐ, *գ. Փախաթ:*

ԽԸՍՐԱՐ, *տե՛ս* **ԽԸՍԸՐ**:

ԽԸՎԼԸՌ-ՋԸՎԼԸՌ, *ած. 1) Խարգախ, խաբեբա: 2) Գող:*

ԽԸՏՎԼԸՏԱԼ, *չբ. Խայտալ:*

ԽԸՏԽԸՏՈՒՆ, *ած 1) Վետվետուն, բազմերանգ: 2) Գեղեցիկ:*

ԽԸՏՎԼԸՏՈՒՆ, *ած. Ջվարթ, թռվռուն, ժպտերես:* Իմ յար զանգ քոն խըտվըտուն:

ԽԸՏՐԱՑ, *մկ. Միասին:*

ԽԸՐԱՄԵՑ[1] *(նաև՝ Լիմ), գ. 1) Կեսօրվա ճաշ: 2) Ընթրիք:* Մենք' խըրամեց կուտենք' *(Լիմ)*: *3) Իրիկնապահ:* Խըրամէցին տուն խասանք' *(Հթ.)*: *4) Ուշացնելը, դանդաղելը:*

ԽԸՐԱՇԿ, *Հթ. գ. Հրաշք:*

ԽԸՐԷՇՏԱԿ, *գ. Հրեշտակ:*

ԽԸՐԽԻՐ, *ած. Շատ փխրուն:* Պնդղմրճը խըրխիր տո՛ւս չէկավ, չոր ի, զօռօվ կուտվի: Փէնդիր շաք'արը շատ խըրխիր ի, կօլայ կուտվի:

ԽԸՐԽԸՐԵԼ, *նբ. Փխրեցնել:*

ԽԸՐԿԵԼ, *նբ. 1) Ուղարկել: 2) Վռնդել (Հթ.):*

ԽԸՐՏՆՈՒԿ, *չբ. ած. Հանկարծակի ցնցված:*

ԽԸՐՈՒՍԿ, *գ. Գործածված օճառի փոքրիկ կտորտանք:*

ԽԸՐՑԸՆԵԼ, *չբ. Վախից հանկարծակի ցնցվել:*

ԽԻԱԼ, *գ. Երևակայություն:*

ԽԻԱՆԱԹ, *գ. Չար, չարիք:*

ԽԻԱՆԱԹՈՒԹԷՆ, *գ. Նենգություն։*

* Խիանաթութէն անել, *Նենգորեն վնաս հասցնել։*

ԽԻԱՐ, *գ. Վարունգ։*

ԽԻԱՔ^{3}, *գ. Կտավագործ, ջուլհակ։*

ԽԻՋԱՐ, *գ. Փայտե քառակուսի շրջանակի մեջ առնված մեծ սղոց՝ գերանը տախտակի վերածելու համար։*

ԽԻՋՆԱ ԽԱՎՈՂ, *Խիզանի խաղող, մեծապտուկ և սևաթույր։*

ԽԻԺ, *գ. 1) Խեժ, որ երեխաները հավաքում էին ծիրանի ու սալորի ծառերի վրայից և ուտում։* Ծառի խիժ կէրավ *(Կճ.)։ 2) Նոր ծնած անասունների առաջին կաթը։*

ԽԻԼ^{1}, *գ. Ծղոտի, փայտի, եղեգի բարակ տաշեղ, չոփ։* Էտա ավլից խիլըմ տուր, ատամներըս խորտեմ։

* Խիլ մը խոտ կուզի, *Շատ փոքր խնդիր ունի։*

* Խիլ տռնռնալ, *Սաստիկ հյուծվել, նիհարել։*

ԽԻԼ^{2}, *գ. Նոր ծնած անասունի առաջին կաթը։*

ԽԻԼԽՈՒՏՈՇ, *գ. Միայն վառելու համար պիտանի մացառ, չոր խոտ։*

ԽԻՄՆ, *գ. Հիմք։* Պատ վէր խըման, խիմն վէր քարին։

ԽԻՄՔ^{3}**Ա**, *գ. Կերպասի տեսակ, մետաքսեղեն։*

ԽԻ^{3}**ՅԷՐՕՐԹ**, *Լիմ, թ. Հինգերորդ։*

ԽԻՆԱ, *գ. Հինա։*

ԽԻՆԱԾ, *գ. Ջուլհակի պատրաստած հենքը, որ գործելու համար պետք է անցկացնել տորքի վրա։*

ԽԻՆԵԼ, *նբ. Հինել, գործել, հյուսել։*

ԽԻՆԾ, *գ. Խինձ, բուսատեսակ, որի կաթի պարունակող տերևները հում-հում ուտվում են։*

ԽԻՆՈՒԹ, *մկ. Վաղեմի, անցյալից։*

ԽԻՐՈՒՆ, *գ. Հերյուն։* Ջաւտանց՝ սիրուն, մոտանց՝ խիրուն *(այսինքն՝ ծակող, վանող)։*

ԽԼԱԹԻ ԽՆՁՈՐ, *Բելֆլորի նման խնձոր, որի պատվաստը հավանաբար Վան է բերվել Խլաթից։*

ԽԼԻՍՈՒՆ, *մկ. Առավոտյան։*

ԽՅԱՆՔ^{3}, *Շունչ, հանգ։* Խյանքն կըտրավ։

ԽՅԱՆՔ^{3}**ԱԿՏՈՐ**, *մկ. Շնչակտուր։* Պըռնվելուց ազատվե խյանքակտոր տուն խասե։

ԽՅԱՆՔ^{3} **ԱՌՆԵԼ**, *Շունչ առնել, հանգստանալ։*

ԽՅԵ, *կ. Հետ։* Խյե քե։

ԽՅԵՏ, *տե՛ս* **ԽՅԵ**։

ԽՆԱԶԱՆԴ, *ած. Հնազանդ:*

ԽՆԱՄԱԹՈՌ, *գ. Հարսի հոր դռան քարը, որի վրա նստած սպասում են աղջիկ ուզողները:*

ԽՆԱՄԱԽԱՐՍ, *գ. ած. Շատ ամաչկոտ և չխոսկան տղամարդ:*

ԽՆԱՄԱՊԱՉ, *գ. Հարսի տուն մտնելիս չամուսնացած տղաների՝ օրիորդներին անսպասելի բռնելը և համբուրելը:*

ԽՆԱՄԱՊԱՏԻՎ, *գ. Նշանդրեքից հետո հարսի ծնողների կողմից կազմակերպված հրավերք փեսայի մերձավորների համար:*

ԽՆԱՄԱՔՅԱՐ, *տե՛ս* **ԽՆԱՄԱԹՈՌ**:

ԽՆԱՆԱԼ, *չբ. Հինանալ:* Քո էտ շորը շատ ի խընացի// խինցե:

ԽՈՋԱՆ, *գ. Հնձված արտ:*

ԽՈԿՅԱԼ, *նբ. Հոգ տանել:*

ԽՈԿՅԵԽԱՆԳՅԻՍՏ, *գ. Հոգեհանգիստ:* Կատվու խըռխըռալն մըկան խոկյեխանգյիստն ի:

ԽՈԿՅԵՏԱՐՑ, *գ. Հոգեվարքի ժամանակ կարճատև ապաքինում:*

ԽՈԿՅԻ, *գ. Հոգի:* Վանա ծով ծէթ էլնի, չայիր-չիման ճրագյ էլնի: Մաջիդ-մադրասէն պատրուքյ էլնի, կյիշիր-ցերեկ խա վառվի, խուկյուտ թողութէն չէլնի:

* Խոկյի տալ, *Մեռնել:* Աստված խոկյիմ տըվե, չի կանա առնե:

* Խուկյոց խանել, *Հառաչել:*

ԽՈՂԿԱԼ, *գ. Կտավ, որի վրա բոված հող են լցնում և դնում օրորոցի մեջ՝ երեխայի տակ:*

ԽՈՂՇՈՐ, *Լիմ, գ. Տակաշոր:* Ծըծու խողշոր փոխի *(Լիմ)*:

ԽՈՊԱՆ, *ած. 1) Անմշակ հող: 2) Անբան, անտաշ, անկիրթ մարդ:*

ԽՈՌ, *ած. Ծուռ:* Խոռ-խոռ իրիշկալ:

ԽՈՌԾԸԿԵԼ, *նբ. 1) Թաղել, հողով ծածկել: 2) Սոխպողաբար կերցնել:*

ԽՈՍՏԻԿ, *գ. Վանքերին, սրբերին խոստացված ոչխար, դրամ և այլն:*

ԽՈՎ, *հթ. գ. 1) Զովություն: 2) Ստվեր:*

ԽՈՏ, *գ. 1) Հոտ, բուրմունք: 2) Խոտի տեսակներ՝* առվույտ, կորնգյան, կովու ճայտեկ, խաբբուկ, կառ, իշնուկաթուկ, չոր խոտ, մատնուկ, սեզ, փուշ, ամանկոտրուկ, պառվու մեզար, սարի սըխտոր, ախչըկուտակ, պառեզ:

ԽՈՐ, *1) ած. Խորունկ: 2) գ. Ջրհոր: 3) գ. Ոստայնի փոսը:*

ԽՈՐԱԳՅ, *գ. Կերակուր, ուտելիք:*

ԽՈՐԱԾ-ԽԵԽՏՎԱԾ, *ած. Անեծք. Թաղվելու արժանի:*

ԽՈՐԱՆԴԸՐ, *ած. գ. 1) Շատ*

խորը։ 2) Շատ խորը մտածող մարդ։ Խորանդըր իսան ի։ Քո խոկին խորանդր ի, խոկապահուստ պան պախած կէլնիս։

ԽՈՐԵԼ, *նբ. 1) Հորել։ 2) Թաղել։*

ԽՈՐԻՍ, *գ. Խորիզ։* Խորիս տիա մէչ խըմորին *(Վն.)*։

ԽՈՐԽՈՐՋԻԿ, *գ. Մանրած և տապակած դմակ։*

ԽՈՐԸՍՕՎ ՊԱՂԱՒՈՃ, *Վն. Գաթա։*

ԽՈՐՏԵԼ, *նբ. Մաքրել։* Օդէն խորտուկ ի։

ԽՈՒԴԲԻ, *ած. 1) Ամաչկոտ, համեստ։ 2) Ինքնասեր, ինքնահավան։*

ԽՈՒԼ, *Վն. գ. Ուռուցք։* Վէր պառվու վոտաց խուլ էր էլե տոյս *(Վն.)*։

ԽՈՒԼԱՄ, *գ. 1) Ծառա։ 2) Զինվոր։*

ԽՈՒԾՈՒԾ, *գ. Գորտնուկ։*

ԽՈՒԿ^{3}ՈՒ ԽԱՑ, *Լիմ, Հոգեհաց։*

ԽՈՒԿ^{3}ՈՒՏ, *գ. Հոգուտ։*

ԽՈՒՂ, *Վն. գ. Խրճիթ, հյուղակ։*

ԽՈՒՄ, *ած. Հում։*

ԽՈՒՄԱՐ, *1) ած. Ծուռ աչքերով։ 2) գ. Հարբեցուց հետո գլխացավ, թուլութիւն։*

ԽՈՒՄՍԵՐ, *Հթ. գ. Սեր։* Խումսեր զարկեք^{1}, կարաք^{1} խանեք^{1} *(Հթ.)*։

ԽՈՒՄՓ, *գ. Խումբ։*

ԽՈՒՆԱՐ, *գ. Շնորհք։*

ԽՈՒՆ ԽԱՆԵԼ, *Հարմարագույն լուծման հասցնել։* Որ չիր կանե քո սեր խանե խուն, ինչի՞ մըտար իմ մանկան էրուն։

ԽՈՒՆՁԿՈՒԼՈՒԼՈՒ, *գ. Խաչաձև փայտ կամ ցախավել, որ երաշտի ժամանակ երեխաները հնոտիք բարձած հեծնում և շրջում էին տնտետուն։ Մարդիկ ջուր էին թափում և թրջում նրանց «ձիերը», այն հավատով, որ անձրև է տեղալու չորացած դաշտերի վրա։*

ԽՈՒՅ, *գ. Վատ բնավորություն։*

ԽՈՒՅՈՏ, *ած. Վատ բնավորության տեր. մեծ մասամբ ասվում է ընտանի անասունների մասին։*

ԽՈՒՆԱՐ, *Բմ. Լիմ, ած. Խոնարհ։*

ԽՈՒՌ, Լիմ, *գ. Ոխ։* Խուռ ի պախե, քե կըսպանի *(Լիմ)*։

ԽՈՒՌԻԿ, *գ. Հռիփսիմե անձնանվան կրճատ ձևը։*

ԽՈՒՌՆԻ-ԽՐԵՂԵՆ, *ած. Հուրհրեղեն, շատ գեղեցիկ։*

ԽՈՒՌՍՕ, *գ. Հնձված, բայց դեռ խուրձ չկապած ցորեն, խոտ և այլն։*

ԽՈՒՌՑԿՈՒԼՈՒԼՈՒ, *տե՛ս* **ԽՈՒՆՁԿՈՒԼՈՒԼՈՒ**։

ԽՈՒՍԵԼ, *չբ. Աքաղաղը կանչել։*

ԽՈՒՏԱՂ, *հթ. գ. Տան ծառա։*

ԽՈՒՐ *(նաև՝ հթ.)*, *գ. հյուր։* Խըրու խարսի պես զարտըղված մեր իկ՝ին։

ԽՈՒՐԴԵԼ, *նբ. Մանրել։* Վոսկին քանիսով խուրդիցիր. խարիր ութ կուռուշով։

ԽՈՒՐԹԽԱՇ ԷԼՆԵԼ, *Ամբողջովին խաշվել։* Պաղնիսը շատ տայցուցիք՝, վոր խուրթխաշ էլել։

ԽՈՒՐՈՒՂՈՒ, *գ. Թոնրի մեջ ամբողջությամբ, առանց կտրատելու, խորովված գառ կամ ուլ։* Մեր խուրուղուն տըփինք՝ կ՝ետին, ուտինք՝-խըմենք՝ խետ մեր քեֆին։

ԽՈՒՓ, *գ. Կափարիչ։*

* Խուփն ինգի վէր ուր պուտկին, *Շատ հարմար ամուսիններ են։*

ԽՕԼԱՎԻՋ, *ած. Կարճավիզ։*

ԽՕԼԸՐԿԸՏԱԼ, *չբ. Վախեցնելու համար շեշտակի ու թարս նայել։*

ԽՕԼՎԱԹ, *ած. Սակավամարդ։*

ԽՕԿՈՒ ԽԱՑ, *կճ. Հոգեհաց։* Խօկու խաց տըվին մեռլի պատվին *(կճ.)*։

ԽՕՄ, *վ. Ոչ ապաքեն։*

ԽՕՆՋԱ, *գ. Փեսայի համար սկուտեղով բերվող նվեր։*

ԽՕՆՋԱՆ, *գ. Վարտիքի մեջքի կապ։*

ԽՕՆՋԱՆԸ ԹՕԼ, *Ամուսնուն դավաճանող կին։*

ԽՕՇԱԲ, *գ. Կոմպոտ, բառացի՝ քաղցր ջուր։*

ԽՕՇ-ԲԷՇ ԱՆԵԼ, *Քաղցր զրուցել, սիլի-բիլի անել։*

ԽՕՌՕՄ, *ած. Զվարթ։*

ԽՕՎ, *գ. 1) Ջով, հով։ 2) Ստվեր։* Խալիվորներ նըստեր ին պատի խովին *(վն.)*։

ԽՕՎԱԾ, *գ. Հովիվների կերակուր, սառն աղբյուրի մեջ ամանով դրված քաղցր կաթ։*

ԽՕՎԱՆ, *գ. Շատ տաք ջուրը փոքր-ինչ սառեցնելու համար լցվող սառը ջուր։*

ԽՕՎԱՆՑ, *գ. Նավարկությանը նպաստավոր քամի։*

ԽՕՎԱՐԴԱ, *ած. Ուտող-խմող, լոթի-փոթի, ծախսող, շռայլ մարդ։*

ԽՕՎԻՎ, *գ. Հովիվ։*

ԽՕՎԻՐԻԼ, *չբ. Հովհարել, հով անել։*

ԽՕՎՆԱԼ, *չբ. Հովանալ։*

ԽՕՏԱՂ, *կճ. գ. Տան ծառա։*

ԽՕՐԽՕՋԻԿ, *կճ. Բմ. գ. Հալած դմակից մնացած կտորները։* Տըմակ խալին, էլավ խօրխօզիկ *(կճ.)*։

ԽՕՐՈՐԴԻ, *ած. Հարազատ։*

ԽՕՐ-ՈՐՏՈՒԹԵՆ, *գ. 1) Հայրորդիություն, հորը քաշելը։ 2) Ազնիվ, առաքինի, ողջախոհ լինելը։*

ԽՕՐՈՒՆԹԸՐ, *կճ. ած. Խոր։*

ԽՕՐՔՍԸՐԱՆՔՍ, գ. *Հորաքրոջ ընտանիքը։*

ԽՕՐՔՍՈՒՐ, գ. *Հորաքույր։*

ԽՕՐՕԽՊԷՐ, գ. *Հորեղբայր։*

ԽՕՐՕՏ *(նաև՝ կճ. Լիմ)*, **ԽՕՐՈՏ**, *Հթ. ած. Գեղեցիկ։* Էն շա(տ) խորօտ ախչիկ ի *(Վն.)։* Էն ախչիկ՝ խորօտ ի *(Լիմ)։*

ԽՕՐՕՏԻԿ, *ած. Սիրունիկ։*

ԽՕՐՕՏԻԿ-ՄԸՐԸՏԻԿ, *ած. Սիրուն։*

ԽՕՐՕՏԿՈՒԹԵՆ, գ. *Գեղեցկություն։*

Ծ

ԾԱԹՐԻՆ, գ. *տե՛ս* ԾԷԹՐԷՆ։

ԾԱԼՊԱԿԱՍ, *ած. Փոքր-ինչ խենթ, ծալը պակաս։*

ԾԱԼՈՒԿ, *ած. Ծալված, դարսված։*

ԾԱՂ, *ած. Ջախ։*

ԾԱԽԵԼ, նբ. *1) Վաճառել։ 2) Գործը թարս, ձախ գնալ։*

ԾԱԾԱՂ, *մեկ. գ. Ծաղիկ։*

ԾԱԿԾԸԿՈՏ, *ած. Ծակոտկեն։*

ԾԱՂԿԱՃՈՒՐ, գ. *Ցորենը ծաղկած ժամանակ արտին տրվող ջուր։*

ԾԱՂԿԵԼ, չբ. *1) Բույսերի ծաղկելը։ 2) Վանա ծովակի երեսին ալյակներ երևալը։ 3) Արևը ծագել։* Արեվ ծաղկեց *(Վն.)։ Ծան. – Ծագել բառը բարբառում գործածական չէ։*

ԾԱՄԵՐԼԸՎԱ, գ. *Ծամերը լվանալը։*

ԾԱՄԹԵԼ, գ. *Ծամկալ, ծամերը կապելու թել։*

ԾԱՄԼԸՄՈՐԵԼ, նբ. *Ծամծմել։*

ԾԱՄԾԸՄԱՑՆԵԼ, չբ. *Խոսելիս դժվարությամբ բերանը բանալ։*

ԾԱՄՈՒԼՆԻԿ, գ. *Ծամերից կախվող հուլունքը։*

ԾԱՑ-ԾՈՒԿ, գ. *Բոլոր անկյունները, բոլոր թաքուն տեղերը։*

ԾԱՑՐՔՍ, գ. *Բրդի լավագույն և երկարուկ տեսակ։*

ԾԱՆԴԸՐ, *ած. 1) Ծանր։* Ծանդըր նըստի, վոր կիդըր կ՚ելաս։ *2) Հղի։*

ԾԱՆԴԸՐՄԱԿ, ԾԱՆԴԸՐՄԱԿՍ, *Լիմ, գ. Սյունից սյուն, ծառից ծառ պարանով կապած օրորոց։* Էրեխէն ծանդըրմակ ինե կըքընէր *(Վն.)։* Ճիժ կըտընեն ծանդըրմակի՚ մէչ *(Լիմ)։*

ԾԱՆԴԸՐՆԱԼ, չբ. *Հղի լինել։* Մեր խարս ծանդրացե։

ԾԱՆ ԾԱՂԻԿ, *Վն. Ջնծաղիկ։* Ծան ծաղիյ կ՚ուրնան ւառչին ծաղիյն ի *(Վն.)։*

ԾԱՆԾԸՂԱԾ, *ած. Ծերությունից քիչ ցնդած։*

ԾԱՆԾԸՐՎԵԼ, *չբ. Մաշվել:*

ԾԱՆԾՈՂԵԼ, *չբ. Ցնդել:* Վորտիա̈, արեա̈ իմ ծանծողած կ՚ըլօխըս տիր խող:

ԾԱՆՐԱԾԵՌ, *ած. 1) Պարտքը դժվարությամբ վերադարձնող: 2) Ապրանքի գինը դժվարությամբ վճարող:*

ԾԱՆՐԱՆԱԼ, *չբ. 1) Հղիանալ:* Ակռփջանեց խարս ծանրացեւ: *2) Լսողությունը թուլանալ: 2) Հնությունից մսին հոտ կպչել:* Միսը ծանրացեւ:

ԾԱՆՐԱՎՈՌ, *ած. Դանդաղաշարժ:*

ԾԱՊԱՆ, *գ. Թեքության վրա արհեստականորեն ստեղծված հարթություններ՝ ցանք կատարելու և ծառեր տնկելու համար:*

ԾԱՊԸԼՎԱՐԱԿԱՆ, *ած. Խենթ, ապուշ, թեթևսոլիկ:*

ԾԱՊԼԻ, *Վն. գ. Զագար:* Կ՚ինին ծապլիօվ լըցեց փարչի մէչ//փարչ ինէ *(Վն.)*:

ԾԱ̈ՌՋԱ̈ՐՏԱ̈Ր, *Վն.*, **ԾԱՌՋԱ̈ՐԹԱ̈Ր**, *Կճ. գ. Ծաղկազարդի տոնը:* Ծա̈ռզա̈րտըրին ծո̈ն էր տըրե *(Վն.)*: Ծառզա̈րթըրին կընա̈ցինք ժա̈մ *(Կճ.)*:

ԾԱՌԾԱԿՈՒԿ, *գ. Փայտփորիկ:* Ծառծակուկ ծառ կըծակա *(Կճ.)*:

ԾԱՌՆՈՑ, *գ. Պուրակ:*

ԾԱ̈ՎԱ̈Ր, *գ. Եփած, թեփը հանած, մանրած ցորեն:*

ԾԱՎՐԵԼ, *չբ. Խելքը փոքիր-ինչ կորցնել:*

ԾԱՐ, *գ. Ջիու մազ, որից պատրաստում են ծարէմաղ:*

ԾԱ̈Ր, *ած. Փափուկ, ոսկրազուրկ:*

* Ծա̈ր միս, *Ընդհանրապես ջիլ և ճարպ չպարունակող միս:*

ԾԱՐԷՄԱՂ, *գ. Ջիու մազից հյուսված մանր անցքերով ալյուրի մաղ:*

ԾԱՐԾԸՐՎԵԼ, *չբ. Հագուստը հնանալուց-մաշվելուց թել-թել դառնալ:* Խըրխետ ծարծըրիլ ի: Քա̈նց ծարէմաղ ծարծըրվես:

ԾԱՐՎԸՆԱԼ, *չբ. Ծարավել:*

ԾԱ̈Ք[3], *գ. 1) Կենդանու ձագ: 2) Մարդու ձագ, զավակ, եթե դեռ փոքր է: 3) Գոմշի ձագ: 4) Մի տարեկան մեղու:* Ծա̈ք՚ու մեղըր կուտե՞ս *(Վն.)*: *5) Թռչունի ձագ:* Խավք՚ի ծա̈ք՚ *(Վն.)*: *Ծան. – Հավի ձագին ասում էին ճուտ (Վն.): 6) Շալվարի ձագ:* Փանթալօնի ծաք՚: *7) Վարտիքի ձագ:* Դօնի ծաք՚:

ԾԵ *(նաև՝ Լիմ), դ. Ձեզ:*

ԾԵՌ, *գ. Ձեռք:* Մէյ ծեռ վոր չես կանա կըտրե, պիտի պաչես ու տընես կ՚ըլխիտ:

* Ծեռ առնել, *Ծաղրել:*

* Ծեռաց հետ գնալ, *Սեռական հարաբերություն ունենալ, անձնատուր լինել:*

* Ծեռը թեթև, *Հաջողակ:*

* Ծեռը խուփ, *Ժլատ:* Ծեռը խուփ կընիկ ի:

* Ծեռը ծեռաց տալ, *Միասին գործել:*

* Ծեռից կ'ըլ, *Ընդունակ լինել:*

* Ծեռից կընäց, *Մեռավ:*

* Ծեռն արնոտ ի, *Մարդ է սպանել:*

* Ծեռն էրկէն ի, *Իրավունքներ է բանեցնում:*

* Ծեռն էրկընցընել, *Մուրալ:*

* Ծեռով անել, *Կանչել:*

* Ծեռով-ոտով, *Ժրաջան:*

ԾԵՌԱԳՈՐԾ, *ած. Ասեղնագործ:*

ԾԵՌԱՑ, *մկ. Անմիջապես:*

ԾԵՌՔ[3], *գ. Հատ:* Մէյ ծեռք' շոր:

ԾԵՎԻՁ, *գ. 1. Գուլթանի մաս՝ ակոս ձևողը: 2. Կոշկակարի գործիք:*

ԾԷԹ[1], *գ. Ձեթ, բուսական յուղ:*

ԾԷԹ[2], *ած. Մանր:* – Քո աղը ծէ՞թ ի, թէ՞ պէտ ի: – Մայրիäկ, ծէթ չի, աղ ի, խա, խասկըցանք' աղ ի, համա ծէ՞թ ի, թէ՞ պէտ ի:

ԾԷԹԻԿ, *ած. Մանրիկ:* Ծէթկիկ ծäք'եր:

ԾԷԹԿԸՆԱԼ, *Վն. չբ. Մանրանալ:*

ԾԷԹԿԸՑՈՒՑԵԼ, *Վն. նբ. Մանրացնել:*

ԾԷԹՐԵԼ, *նբ. Մանրել:*

ԾԷԹՐԷՆ, *գ. Կանաչու տեսակ:*

ԾԷԹՈՒԿ, *Վն.*, **ԾԷՏՈՒԿ**[3], *Հթ.*, **ԾԸՏՈՒԿ**, *Բմ. գ. Մանր որդեր, որոնք լինում են մսի, լեշի վրա ճանճերի նստելուց հետո:* Ճանչեր ծէթուկ ին տըրե վէր մըսին *(Վն.):*

ԾԷՆ, *գ. Ձայն:*

* Ծէն ծ'ïï, *Ձայն չկա, խաղաղ է:*

* Ծէնը կ'ըլöխն իսկել, *Բարձրաձայն երգել կամ ճվճվալ:*

* Ծէն ունի, *Լավ է երգում:*

* Ծէն տալ, *Արթնացնել:*

ԾԷՆԾԸՆԵԼ, *Հթ. չբ. Ձայնել:*

ԾԷՆԾԸՆՈՑ, *գ. Աղմուկ-աղաղակ:*

ԾԷՆԾԸՆՎԵԼ, *կբ. Տարածվել (գաղտնիքը, լուրը):*

ԾԷՆՈՎ, *ած. Բարձր ձայն ունեցող:*

ԾԷՆՍ, *գ. Ողբ մեռելի վրա:*

ԾԷՐ, *գ. 1) Ծայր:* Չըվ́ի ծէր տոäւ զիկ *(Վն.): 2) Գագաթ:* Էլäվ// պäնցրացավ սարի կ'äկ'äթ//ծէր *(Վն.): 3) Գրչածայր:*

ԾԷՐԱՏԷՆ, *գ. Գութանի խուրիկ լուծի շղթան:*

ԾԸԼԸՆԳԱԼ, *չբ. Մետաղադրամը զանգի մեղմ ձայն հանել:*

ԾԸԼԸՆԳԱՑՆԵԼ, *նբ. Մետաղադրամը գցելով զանգի մեղմ ձայն հանել:*

ԾԸԼՐՓԱՑՆԵԼ, *նբ. Շրթունքներն իրար հպելով ձայն հանել:*

ԾԼԽԼՐԿԼՏԱԼ, *տե՛ս* **ԾԼԽԼՐՏԱԼ**։

ԾԼԽԼՐՏԱԼ, *չբ. 1) Ցավից տանջվել։ 2) Կրակը թույլ կերպով մխալ։*

ԾԼԽՄԼԽԱԼ, *չբ. Թույլ վառվել ծուխ ու մուխ տալով վառվել։*

ԾԼԾՂԱԼ *(նաև՝ Բմ.), չբ. Ծիծաղել։* Մօրքուրըս շատ կընծղծղէր *(Վն.)։*

ԾԼԾՂԿՏԱԼ, *չբ. Ժպտալ. ասվում է հատկապես փոքր երեխաների առաջին անգամ ժպտալուն։*

ԾԼԾՂԿՏՈՒՆ, *ած. Ծիծաղախիտ։* Ծընծղկտուն Վանայ ծով։

ԾԼԾՄԵԼ, *չբ. Քունը գլխին խնոցու՝ ծրծումի նման շարժվել։*

ԾԼԾՄԵՌ, *ած. գ. Ուրիշի կաթով սնվող թույլ, նիհար երեխա։*

ԾԼԾՄԵՐ, *գ. Ուրիշի երեխային ստինք տվող կին, ստնտու։*

ԾԼԾՈՒՄ, ԾԼԾՈՒՄ, *կճ. գ. Խնոցի։* Ծընծմի կարաք՝ *(Վն.)։*

ԾԼԿԱՆ ԱՆԳԱՃ, *Բմ. կճ.,* **ԾԼԿԱՆ ԱՆԿԱՃ**, *Հթ. Խխունջ։* Ծընկան անգաճ թաց տեղ կեղնի *(կճ.)։*

ԾԼԿԼԹԱԼ, *չբ. Ծղրտալ։* Պանցըր ծէնով, ծընկընլթալով կընչկընչաց։

ԾԼԿԸՌԹԵԼ, *նբ. Մաշկը փոքրինչ պլոկել։* Ուր մատ ծընկընթեց։ Մատըս ծընկընթավեր ի *(Վն.)։*

ԾԼՂՈՆ, *գ. Ծղոտ։* Ծընղոնից սալա գ՚կործին *(կճ.)։*

ԾԼՄԱ *(նաև՝ Լիմ), ած. Արևազուրկ, խոնավ տեղ։*

ԾԼՄԵԹ-Քª, *գ. Արցունքահոսութիւն՝ հիվանդ աչքերով արևի տակ փայլփլող ձյանը նայելիս։*

ԾԼՄԵՌ, *գ. Ձմեռ։*

ԾԼՄԸՌԹԻԿ, *Բմ. ած. Թեթևսոլիկ։*

ԾԼՄԸՌՆՈՒԿ, *ած. Մրգերի ձմեռային տեսակները։*

ԾԼՄԸՐԿՏԱԼ, *չբ. Մարմինը կոտրատվել մրսածութիւնից կամ քնից նոր աթնանալիս։*

ԾԼՄՐՈՒԿ, ԾԼՄՐՈՒԿª, *Լիմ, գ. Ձմերուկ։* Կէվորք՝ աղա ծընմրուկ պըռնե՞լ ի, Կոնկազի խայուն ասեք՝ մէյ սէլ խըրկի։ *Ծան. – Քիչ թե շատ ունևոր հայերը մեկ սայլ ձմերուկ ու սեխ (կըլօր) էին բերում, բաժանում երկու-երեք հարևաններով, պահում ներքնահարկում, իսկ երբ վերջանում էր, բոստանչուն հայտնում էին, և նա նորից մեկ սայլ ուղարկում էր։*

ԾԼՆԱՄԱՆ, *գ. Արգանդ։*

ԾԼՆԴՈՂԻԿ, *գ. Ձյուն թափելու թի, բաֆրիկ։*

ԾԼՆԵՐԹ-Քª, *գ. Առչկանի (իլիկի) գլխի երկաթե կեռը։* Ծընեռթք՝ շինողը մեռավ։

ԾԼՆԷՓՈՒԿ, *վն. կճ. գ. Ծնե-*

բեկ։ Ծընէփուկի տալըր ցողուն յեղով կըտապկեն *(Վն.)*։

ԾԸՆԾԸՆԱԼ, *նբ. Կաթկթել, ծորել։*

ԾԸՌԷՉՔ[3], *գ. Գութանի մաս։*

ԾԸՌԹԱՎԱՐԻ, *մկ. Խենթի նման։*

ԾԸՌԾԱԿ, *գ. Ջրի անցք, այգիները բաժանող պատերի մեջ փոքրիկ դռնակ՝ ջրի ընթացքը հսկելու համար*։ Ցես եմ նեղցե՞, թէ՞ ծըռծակն ի նեղացե *(Վն.)*։

ԾԸՌՄԱՆՋ, *տե՛ս Գութանի մասերը։*

ԾԸՌՄԸՌՏԿԵԼ, *նբ. Ծռմռել։*

ԾԸՌՈՏԵԼ, *չբ. Գժվել։*

ԾԸՌՎԵԼ, *չբ. Խելագարվել։* Դռրդից ծըռվավ *(Կճ.)*։

ԾԸՌՏԱԽՈՏ, *գ. Ուշ մաքրելու հետևանքով հավի մսի հոտը, ծերտահամ դառնալը։*

ԾԸՌՏՈՏ, *ած. 1) Ծերտով ապականված։ 2) փխբ. Անշնորհք ու խեղճ մարդ։*

ԾԸՎԱԼ, *չբ. Ուրախությունից կամ վախից ծվալ-ճչալ։*

ԾԸՎԸԾԵՂ, ԾԸՎԱՋԵՂ, *Լիմ, գ. Ջվածեղ*։ Ջօքանչ ուր փէսին ծըվըծեղով պատվեց // ծըվըծեղ կիրցուց// ծըվըծեղ իտուր *(Վն.)*։ Ծըվըծեղի սիրուն թավի կոթը կըլըկըլեն։

ԾԸՎԱՐԵԼ, *չբ. Պատսպարվել։* Ցերեկը յէլ ու մուտ անի, կ'իշերը քըն ծոց ծըվարի։

ԾԸՎԸՌԹԵԼ, *նբ. 1) Ծվատել։* Կատուն ճանկով կըծըվըռթի։ *2) Ճանկռել։*

ԾԸՎԸՍՏԱՆ, *գ. Խառն բնակչությամբ գյուղ Արտամետ տանող ճանապարհի վրա։*

ԾԸՎԻԿ-ԾԸՎԻԿ, *1) գ. Ծվեն, պատառ*։ Ծըվիկ-ծըվիկ էլավ մեր սերը։ *2) ած. Քրքրված, պատառ-պատառ եղած։*

ԾԸՐԸՆԿՏԱԼ, *չբ. Կրակը բորբոքվել։*

ԾԻ, *գ. Ձի։*

ԾԻԱԹԸՌՆՈՒԿ, *գ. Կարնվորա սարը Վերին Վարագին միացնող լեռնանցքը։*

ԾԻԹԽԱՆ, *գ. Ձիթհանք։*

ԾԻԹՐՈՆ, *տե՛ս* **ԾԷԹՐԷՆ**։

ԾԻԾ, *գ. 1) Ստինք։ 2) Ծառաբնի վրա գոյացած ուռուցք։*

ԾԻԾԱՂԿԸՏԱԼ, *չբ. Մաքրությունից սենյակի փայլփլելը։*

ԾԻԾԵԼ, *նբ. Ծեծել։*

ԾԻԾԵՌ, *տե՛ս* **ԾԸՆԵՐԹՔ**[3]։

ԾԻԾԿԸՎԵԼ, *կբ. Իրար ծեծել։*

ԾԻՑՎԵՐ, *գ. Ստինք, կուրծք։*

ԾԻՆ[1], *գ. Բծավոր վերք, Տիրամոր յարա։*

ԾԻՆ[2], *գ. 1) Ծնունդ։ 2) Անասունների տարիքը որոշելը։ 3) Խալ՝ մարմնի տարբեր մասերի վրա։*

ԾԻՎԵԼ, *նբ. Ձևել։*

ԾԻՏՈՒԿ, Կճ. *Մանր որդեր, որոնք լինում են մսի, լեշի*

վրա ճանճերի նստելուց հետո։ Մըսի վէրէն ծիտուկ ա տըրե *(կճ.)։*

ԾԻՐԱՆԻ, *վն. ած. Թերխաշ։* Ծիրանի ծո՛ւ *(վն.)։*

ԾԻՐԱՆԿԸՏԱԼ, *չբ. Կրակը լավ վառվել։*

ԾԻՓԵԼ, *նբ. Ծեփել։*

ԾՈ, *1) ձ. Կոչական արտահայտութիւն, ո՛վ դու։ 2) գ. Ամուսին։ Ծան. – Գործածվում էր ամուսնանուն դիմելիս և ստացել էր «ամուսին» բառի նշանակութիւնը.* ծոն էկավ, ծոն կընաց *և այլն։*

ԾՈՂ, *գ. Միրգ պոկելու երկար ու բարակ փայտ։*

ԾՈ՛Ր, *Հթ. գ. Հնձելիս գերանդու բերանից ընկած խոտի, ցորենի յուրաքանչյուր շերտը։* Մէ ծո՛ր gօրէն քաղիցի *(Հթ.)։*

ԾՈՐԾՈՐ, *գ. Մանրաձոր, փոքրիկ բլրակներով անհարթութիւն սարահարթի վրա։*

ԾՈՐՈՎԱՆՑ, *գ. Թրքաբնակ գյուղ Այգեստանից դեպի արևելք՝ Արճակ տանող ճանապարհի վրա։*

ԾՈՑՎՈՐ, *ած. Հղի։* Ծոցվոր կընիկ։

ԾՈՒՔ[1], *գ. Ձագ։*

ԾՈՒՔ[2], *գ. Վարտիքի մեջտեղում կարվող կտոր։*

ԾՈՒԿ, *գ. Ջուկ։*

ԾՈՒՆ, *գ. Ձյուն։* Աստված սար տիսե, նոր ի ծո՛ւն տըրե։ Ծո՛ւն իկի՛, վոր վոտըս կըմըզմըզա։

ԾՈՒԵԼ, *նբ. Ցորենը ափսեով քամուն տալով մաքրել թեփին ու փոշին։*

ԾՈՒԹ, *գ. Ձյութ։*

ԾՈՒՆԴԸՐ *(նաև՝ Լիմ), ած. Ծունր։* Քո՛ւնի՛ ծունդըր աղօթք արեց։

ԾՈՒՌ *(նաև՝ Հթ.), ած. 1) Խենթ։ 2) Քաջ։* Էսա մարթ ծուռ ի, սիրտ ախ չընկա *(վն.)։ 2) Ծուռ, թեք։*

ԾՈՒՌՄԸՏՔԱՆԻ, *ած. Միտքը ծուռ, վատ դիտավորություն ունեցող։*

ԾՈՒՌՏԻԿ, *ած. Ոտքերը ծուռ։*

ԾՕՂԻԿ, *գ. Միրգ պոկելու երկար ու բարակ փայտ։*

ԾՕՎԱՅԻՆ, *գ. Ծովից փչող քամի։*

ԾԸՎԾԸՎԱՆ ԱՉՔԵՐ, *Խոշոր աչքեր։*

ԾՕՎՈՒ ՔՅԱՄԻ, *Սովորական քամի, երբ կարելի էր նավարկել Վանա ծովակի վրա։ Ծան. – Նավավարները զանազանում էին չորս քամի՝ 1.* ծովու քամի, *2.* սուր քամի, *3.* եղանակ *և 4.* ֆըսթանով *(փոթորիկ), երբ ծով դուրս չէին գալիս։*

Կ

ԿԱԲԱ, *գ. Բրդե ծանր վերարկու։*

ԿԱԲԱԹԱՍԼԱԽ, *մկ. 1) Վայրիվերո։ 2) Հարևանցիորեն։*

ԿԱԲԱՀԱԹ, *գ. Հանցանք, մեղք։* Ինոր կաբահաթ մի պան չի։

ԿԱԲԱՌԹՄԻԾ ԱՆԵԼ, *1) Ուռճացնել, 2) Հպարտացնել։*

ԿԱԲԱՌՄԻԾ ԷԼՆԵԼ, *Ուռչել, հպարտանալ։*

ԿԱԲՋ, *գ. Փորի պնդություն։* Տարին տըսավէրկու ամիս ինոր փոր կաբզ ի։

ԿԱԲՈՒԹ, *ած. Սնանկ։* Չաղալն էլավ ղաբութ, վէրէն քաշեց կաբութ։

ԿԱԲՈՒԼ, *ած. Ընդունելի։* Խարս պիրին շատ պըստիկ ի, թէ ժուռ, թէ խասուն, մօ զի կաբուլ ի։

ԿԱԲՈՒՌԿԱ, *գ. 1) Ազդրի փափուկ միս։ 2) Այդ մսով պատրաստվող համեղ կերակուր, որի մեջ լցնում էին բրինձ, քիշմիշ, կարում ու եփում, ապա յուղով տապակում։*

ԿԱԴ, *1) գ. Հարկ։* Ծեր տուն քանի՞ կադ ի։ *2) մկ. Անգամ։* Քանի՞ կադ ասի։

ԿԱԴԱ, *գ. Փորձանք։* Շատ ասի, չըըլսեց, կադա էկավ կ'ըլխին։

ԿԱԴԱԼԱ, *Լիմ, գ. Երկու ունկով փոքր կարաս։*

ԿԱԴԱԼԻԿ, *գ. Մի տեսակ կճուճ։* Կանաչ կադալիկի յեղը պըոծեր ի։

ԿԱԴԱԽ, *Լիմ, գ. Ջուր խմելու ամաև։*

ԿԱԴԱՄ, *գ. Ուժ, կարողություն։* Կադամ չըմընաց վէրէս, էլ չէմ կանա քէլե։

ԿԱԴԱՄԼԻ, *ած. Ուժեղ, զորեղ։* Շատ կադամլի մարթ ի։

ԿԱԴԱՅԻՖ, *գ. Թել-թել խմորեղեն։* Չարչուց կադայիֆ ի պիրե։

ԿԱԴԻ, *գ. Դատավոր։*

ԿԱԴԻՖԱ, *գ. 1) Թավիշ ծաղիկ։ 2) Կտորեղենի տեսակ։*

ԿԱԴԸՐ, *գ. Արժանիք, նշանակություն։* Ինոր կադըր լավ կ'իտի։ Իր ոտով էկած խուր, կադըր չունի։

ԿԱՋ[1], **ԿԱԶ**, *կճ. Լիմ, ԿԱԶ, Հթ. գ. Սագ։*

ԿԱՋ[2], *գ. Շղարշ։* Խարսի իրես կազով ծածկած ի։

ԿԱՋԱԲ, *գ. Երկնային պատիժ, աստվածային բարկություն, փորձանք։*

ԿԱՋԱԹԱ, *գ. Լրագիր, թերթ։* Չում իրիկուն մըթին կազաթա կը կարտա։

ԿԱՋԱԹԱՉԻ, *գ. 1) Լրագրող։ 2) Լրագրավաճառ։*

ԿԱՋԱԼ, *Բմ., Հթ., Լիմ, գ. Ծառերից թափված աշնան դեղին տերևներ։* Կըրակի խամար կազալ կըժողվեմ *(Վն.)*։ Չոր կազալ թոնրի մէչ լավ պոց կուտա։

ԿԱՋԱՆ, ԿԱՋԱՆ, *կճ. Լիմ,* **ԿԱՋԱՆ,** *Հթ. գ. Կաթսա։* Կաձան պըղինձ կէլնի, խարիսան ճիչ պուտուկի մէչ կիփեն։

ԿԱՋԱՆՋԻ, *գ. Պղնձագործ։*

ԿԱՋԱՆՄԻՇ, *ած. Շահած, վաստակած։*

ԿԱՋԻՆՕ, *գ. Եվրոպական սրճարան։*

ԿԱՋՅԱՂԻ *(նաև՝ Լիմ), գ. Նավթ։*

ԿԱՋՆԻ ՏԱԿ, *Բմ. Կաթսայի մեջ մնացած կերակրի տականք։*

ԿԱՋՈՒԽ, *գ. Ցից։* Կազուխ ճըխտեց ինոր իտև։

ԿԱԹԱՐ, *գ. 1) Շարք, կարգ։ 2) Զվախաղ։* Կաթար դընել։ *Ծան. – Ձմռանը ձուն դնում էին աղի մեջ և ամիսներ շարունակ ամրացնում ձվի մի կողմը և մեծ զատիկի օրերին եկեղեցիների մոտ ձու էին խաղում։ Լավ ամրացված ձուն հարյուրից ավելի կարմիր ձու էր ջարդում։ Արարոց եկեղեցու հետևում, ուր հայերի պանթեոնն էր, բառոժին ջարդված հարյուր ձուն ծախում էին հինգ փարով, այսինքն՝ մեկ կոպեկով։*

ԿԱԹԵՂ, *գ. Կաթնեղեն։*

ԿԱԹԸՐ, *գ. Ջորի։*

ԿԱԹԻԿ, *գ. Լյարդի հիվանդություն։*

ԿԱԹԿԸԹԵԼ, *նբ. Կաթիլ-կաթիլ թափվել։* Քըրտինքը կըկաթկըթէր վէրից։

ԿԱԹ-ԿՈՒԹ, *գ. Կաթնեղեն։*

ԿԱԹՆԱԽՊԷՐ, *գ. Մեկ մոր կաթով սնված տարբեր մայրերի զավակներ։*

ԿԱԹՆԱԽՊԻՒՐ, *գ. Կաթնառատ աղբյուր։ Ծան. – Ժողովուրդը հավատում էր, որ ինչ-որ մի տեղ կար ոչ միայն մոր կաթն առատացնող, այլև ուղղակի կաթ բխեցնող աղբյուր։*

ԿԱԹՆԱՀՈՒՆՑ, *ած. գ. Կաթով պատրաստված, հունցված խմորեղեն։*

ԿԱԹՆԻՐԵՍ, *գ. Սեր։*

ԿԱԹՆՈՎ, *1) ած. Առատ կաթ տվող (կով, գոմեշ, ոչխար, այծ)։ 2) գ. Կաթով ու բրնձով պատրաստված ճաշ՝ սամիր։*

ԿԱԹՈՒԿ, *գ. Քամուց կամ շուտ ու շատ հասած լինելուց ինքնաբերաբար ծառերից թափված միրգ։*

ԿԱԹՕՎ ՎԸՌԻԿ[ց], *Հթ. Կաթնապուր։* Խիվանդ կաթօվ վըռիկ՝ կէրավ *(Հթ.)։*

ԿԱԺ, *գ. Թելի փաթույթ։*

Կ[ց]ԱԺ, *կճ. ած. Շեկ։*

ԿԱԼ, *գ. 1) Արմոիքի կալ։ 2) Արծաթագործի կամ ոսկերիչի խանութի թափոնների կալ։ Ծան. – Վանում արծաթագործի կամ ոսկերիչի խա-*

նութի կեղտը ավլում էին ու պահում պարկերի մեջ, և երբ մի քանի տարուց հետո բավականաչափ կեղտ էր հավաքվում, կալջին լվանում էր այդ կեղտը և մետաղային մնացորդը հալում բարձր ջերմութեան պայմաններում։ Հատուկ քուրա էր պատրաստվում անկիզելի կավից, չորս կողմից փուքսերով վառում էին փայտյա ածուխը, և կալջին հակում, ղեկավարում էր կալը։ Շիկացած հեղուկի երեսից սրբում, վերցնում էր քյըլքը, *որ գոյացած էր լինում ոչ ազնիվ մետաղներից։ Կալջին պետք է մեծ փորձի և համոտութեան տեր լիներ։ Վանում կային այդ արհեստին առնչվող ազգանուններ, որ վերջին տարիներին գրում էին* գիմ *տառով՝* Գալճյան։ *Քաղաքի հայտնի ընտանիքներից էին* Գալճյանները, *որոնց ազգանունը վանեցին արտասանում էր* Կալջյան։

ԿԱԼԱ, *գ. Բերդ։*

ԿԱԼԱԲԱԼԸՂ, *գ. 1) Ամբոխ, բազմութիւն։ 2) Ժխոր։*

ԿԱԼԱԹ, *գ. Ջանցանք։*

Կ՚ԱԼԱԽՆՈՒԿ, *ած. Պինդ։* Կալախնուկ շըրիթ *(Վն.)։*

ԿԱԼԱԾ, *նբ. ած. Փակված։*

ԿԱԼԱԾ-ԿԱՊԱԾ, *ած. Հագնված։*

ԿԱԼԱՄ, *գ. 1) Երեգնագրիչ։ 2) Փորագրիչ գործիք։ 3) Դեղդիր։*

* Կալմի տէր, *Գրագետ, եղեգնագրիչ բանեցնող։*

ԿԱԼԱՄՔԱԾ, *ած. Դեղդիրով քաշած։* Ընքվերը կալամքաշ ախչիկ։

ԿԱԼԱՄՔ՚ԱՐ, *գ. Փորագրող. Վանում շատ տարածված ոսկերիչներին օգնող և արծաթեղենի վրա փորագրութիւններ կատարող արհեստավորներ։*

ԿԱԼԱՄՔ՚ԱՐԵՆՔ, *գ. Կալամքարյանները։*

ԿԱԼԱՆ, *գ. 1) Թուրքերին հատկացված ղալիմ։ 2) Փեսայի կողմից աղջկա հորը վճարվող գլխագին։*

ԿԱԼԱՍ, *գ. 1) Պակասութիւն, թերութիւն։* Ինոնց ախչիկ անկալատ չի։ Անկալատ մէնակ Աստված կէլնի։ *2) Սխալ։*

ԿԱԼԱՍԻՔ, *գ. Կալսող անասունների ղույգ։*

Կ՚ԱԼԱՐ, *գ. Գալար։ Փորհարինքի պատճառած ցավը ստամոքսում և աղիքներում։*

ԿԱԼԲ, *ած. Կեղծ։*

ԿԱԼԲ, *Լիմ, ած. Ծույլ։*

ԿԱԼԲԱՂԱՆԳ, *ած. Կեղծարար, դրամանենգ, խարդախ։*

ԿԱԼԴԲՐԸՄ, *ած. գ. Սալահատակ։* Մեր փողան կալդըրըմ չի։

ԿԱԼԷՄԱՂ *(նաև՝ Հթ. Բմ. կճ.), գ. Մեծ անցքերով մաղ, որ գործածվում է ցորենը, գարին ծղոտից անջատելու համար։* Կալէմաղ ծակվավ *(Վն.)*։

ԿԱԼԷՄԱՍՏ, *գ. 1) Կալապտուղ։ 2) Կալից քահանայի, թռչունների և այլոց համար վերցվող բաժինը։*

ԿԱԼԸԲ, *գ. Կաղապար։*

Կ՚ԱԼԸՐԵԼ, *չբ. Գալարվել։* Փորըս կըկ՚ալըրի։

ԿԱԼԽԱՆ, *գ. Վահան։*

ԿԱԼԿԸԼՎԵԼ, *կբ. Փակվել, լցվել, ծածկվել։* Կալէմաղ կըկալկըլվի։

ԿԱԼՄԱԿԱԼ *(նաև՝ Հթ.)*, **ԿԱԼՄԱԿԱԼ**, *կճ. գ. Աղմուկ, վիճաբանութիւն։*

ԿԱԼՆԸՎԵԼ, *կբ. Փակվել, ծածկվել։* Յարէն կըկալնըվի։

Կ՚ԱԼՈՍ, *գ. Գալուստ։* Խյուս Կ՚ալոսենց կ՚ալոսը խատավ։

ԿԱԼՁԱ, *Բմ. գ. Ազդր։*

ԿԱԼՋԻ, *գ. Արծաթագործի խանութի փաթոնները հալեցնող։*

ԿԱԼՕ, *գ. Կարո, Կարապետ։*

ԿԱԼՕՇ, *գ. Կաշվե կամ ռետինից կրկնակոշիկ։*

ԿԱԼՕՇ-ՓՕԹԻՆ, *գ. Կրկնակոշիկն ու կոշիկը։*

ԿԱԼՖԱ, *գ. 1) Վարպետացու արհեստավոր։ 2) Ուսուցիչ։*

Կ՚ԱԽ, ԿԱԽ, *Հթ. գ. Ժամանակ, պահ։* Ծըծղալու կ՚ախ ատամներ կէրէվէն *(Հթ.)*։ Քէլէլու կ՚ախ կը թօփլէր *(Հթ.)*։ Էն կ՚ախ խասանք՚, վօր խաոսին տարան *(Հթ.)*։

Կ՚ԱԽՏԻ, *Լիմ, ած. Գաղտնի։*

Կ՚ԱԽՏԻԿ, *ած. Գաղտուկ։* Տընէն կ՚ախտիյ կընաց *(Վն.)*։ Կ՚ախտիկ ուր պան կանէր *(Վն.)*։

Կ՚ԱԽՏՈՒԿ, *Վն. ած. Գաղտնի։*

Կ՚ԱԿ՚ԱԹ, *գ. 1) Գագաթ։ 2) Գլուխ։* Չօո քո խօր կ՚ակըթուն։ Ինոր կ՚ակ՚աթ զարթրուն էր *(Վն.)*։

ԿԱԿԱԼՕԼՕ ԿԱՐՏԱԼՈՎ, *Խաբեբելով գործն առաջ տանելով։*

ԿԱԿԸԶԵԼ, *չբ. Կակազել։* Ախու կակըզեց *(Վն.)*։

ԿԱԿՂԱՆ, *գ. ած. Ոսկոր չպարունակող փափուկ միս։*

ԿԱԿՂԱՆԱԼ, *Վն. չբ. Փափկել։*

ԿԱԿՂԵԼ, *չբ. 1) Փափկել։ 2) փխբ. Մեղմանալ, զիջող դառնալ։*

ԿԱԿՂԸՆԱԼ, *տե՛ս* **ԿԱԿՂԱՆԱԼ**։ Խող կ՚ակղըցիր էր *(Վն.)*։

ԿԱԿՂԸՆԱՍԻ, *գ. Մածնաբրդոշ, որ թուրք պաշտոնյան հարկադրաբար պիտի ուտեր հայ գյուղացու տանը։ Ծան. – Թուրք պաշտոնյան հայ գեղջկուհուն հրամայում էր հավ մորթել ու տապակել, փլավ եփել։ Հայ գեղջկուհին պատասխանում էր, որ ոչինչ չունի, բացի* կակղընասիից։ *Ի*

վերջո պաշտոնյան կակղում էր ու համաձայնում ուտել իրեն անհայտ ու հետաքրքրող կակղընասին: *Պարզվում էր, որ դա սովորական մածնաբրդոշ է:*

ԿԱԿՈՒՂ *(նաև՝ Կճ.), ած. Փափուկ:* Կակուղ խաց, պա̈ոց *(Վն.):*

ԿԱԿՈՒՂ-ՏԱՏԱ, *ած. գ. Փափկասիրտ, կանացի տղամարդ:*

Կ̂ԱՀԻՄ, *Լիմ, ած. Ամուր:*

ԿԱՀՐԱՄԱՆ, *գ. Հերոս:*

ԿԱՂԱՄԱՐ, *գ. Թանաքաման:*

ԿԱՂԱՆԴ, *Վն. գ. Նոր տարի:* Կաղանդի խա̈մա̈ր ա̈մբրա̈վ, չամիչ, պընդո̈ւկ, գյո̈զ առան//առին *(Վն.):*

ԿԱՂՃԻՆ, *գ. Կավ, որից թոնիր և խեցեղեն էին պատրաստում ու թրծում: Ծան. – Վանում* կավ *ասելով հասկանում էին միայն* ցեխ:

ԿԱՂՊԱ, *գ. Պոռնիկ:*

ԿԱՂՊՈՒԹԵՆ, *գ. Պոռնկություն:*

Կ^{Յ}Ա̈Ճ, *գ. Գաջ:* Ծեր տուն կյա̈ճի՞ր ես:

ԿԱ̈ՄԱ̈, *գ. Դաշույն:*

ԿԱՄԱԶ, *ած. Բանսարկու:* Աստված ավիրէր կամազ մարթու տուն:

Կ̂ԱՄԱԶ, *Կճ.*, **ԿԱՄՄԱԶ**, *Հթ. ած. Անպիտան, հիմար:*

ԿԱՄԻՇ, *գ. Եղեգն:*

ԿԱՄԿԱԽ, *ած. Անվճռական, կամազուրկ:*

ԿԱՄՇԻ, *գ. Մտրակ:*

ԿԱ̈ՅԴԱ̈, *գ. Եղանակ, ձև:*

ԿԱ̈ՅԴԱ̈ԼԻ, *ած. Կարգ ու կանոնով:*

ԿԱՅԵՂ, *գ. Նավակ, մակույկ:*

ԿԱ̈ՅԹԱՆ, *գ. Երիզ, ծոպ:*

ԿԱՅԻԼ, *մկ. Հավան, համաձայն: Ծան. – Վանի բարբառում գործածվում է գլխավորապես* նա՞ կայիլես *ձևով, որ նշանակում է՝ հապա ի՞նչ էիր սպասում:*

* Կայիլ էլնել, *Գոհ մնալ:*

ԿԱ̈ՅԻՄ *(նաև՝ Հթ. Կճ.)*, **Կ̂ԱՅԻՄ**, *Կճ. ած. Պինդ:* Վորտեղ նըստես, էնտեղ կա̈յիմ կաց: Կա̈յիմ խող քյըլունգյօվ կըփորեն *(Վն.՛):*

* Կա̈յիմ կըճիր, *Առողջ և ամրակազմ մարդ:*

ԿԱՅԻՇ, **Կ̂ԱՅԻՇ**, *Բմ. գ. Գոտի:*

ԿԱՅԼԱ, *գ. Պարզ կերակրատեսակ:*

Կ̂Ա̈ՅԼԻ, *Լիմ, գ. Իր հյութի և յուղի մեջ տապակած միս, որ կճուճների մեջ պահում են որպես ձմռան պաշար:*

ԿԱՅԼՕՆ, *Հթ. գ. Ծխամորճ:*

ԿԱՅՂԸՉԻ, *գ. Մակույկավար:*

ԿԱՅՄԱ, *գ. Թղթադրամ:*

ԿԱՅՄԱԽ(Ղ), *գ. Եփած կաթի սեր:*

ԿԱՅՄԱԿԱՄ, *գ. 1) Գավառապետ: 2) Սպայական ստիճան (ասքյար, օնբաշի, չաուշ,*

միլաչիմսանի, միլաչիմ էվել, յուզբաշի, կայմակամ, բինբաշի, լիվա փաշա, փաշա, ֆերիկ, միրալայ, մուշիր)։

ԿԱՅՆԵԼ, *չբ.* *Կանգնել։*

ԿԱՅՆԱԹՄԻՇ ԱՆԵԼ, *Ջոդել միացնել։*

ԿԱՅՍԻ, *գ.* *Գյոկչա, սալորի քաղցր տեսակը։*

Կ՚ԱՅՏԵԼ, *չբ.* *Գանգատվել։*

ԿԱՅՐԻ, *ած.* *Ջատ։* Ինձնից կայրի։

ԿԱՅՖԱ, *գ.* *Սուրճ։*

ԿԱՅՖԱԽԱՆԱ, *գ.* *Սրճարան։*

ԿԱՆԱԼ, *չբ.* *Կարողանալ։* Էն պլաստիկ ի, չի կանա էտ պէն անել։

ԿԱՆԱՀԱԹ, *գ.* *Գոհունակություն։*

* ԿանաՀաթ անել, *Բավականանալ, գոհանալ։*

ԿԱՆԱՉԻԿ, *գ.* *Կանաչ լաքով պատած խեցեղեն աման։*

ԿԱՆԱՉ-ՄԱՏՈՏ, *գ.* *Կանաչ մեծ մողես։*

ԿԱՆԱՓ, *հթ.*, **ԿԱՆԱՄՓ**, *բմ. կճ. գ.* *Կանեփ։*

ԿԱՆԱՓԱ, *գ.* *Բազմոց։*

ԿԱՆԱՓՆՈՑ, *գ.* *Կանեփ ցանելու արտ։*

ԿԱՆԱՓՈՒՆ, *գ.* *Կանեփի գույն։*

ԿԱՆԱՓԱՏ, *Լիմ, գ.* *Կանեփ։*

ԿԱՆԱՖԻԼ, *գ.* *Մեխակ։*

ԿԱՆԱՖԻԼ, *բմ. գ.* *Քթի զարդ։*

ԿԱՆԱՆՉ-ԿԱՐՄԻՐ, *հթ. գ.* *Ծիածան։*

Կ՚ԱՆԳԱՏ, *Լիմ, գ.* *Գանգատ։*

Կ՚ԱՆԳԸՏՎԵԼ, *կճ. նբ.* *Բամբասել։* Խարս կիսրոչ մոտէն կըկ՚անգըտվի *(կճ.)։*

Կ՚ԱՆԿԸՏՎԵԼ, *չբ.* *Գանգատվել։* Ճընճղուկները թըռան կընաՁին պերթի տանիս կ՚անկըտվելու խաՀմար։

ԿԱՆԴԱԽՈՐԵԼ, *չբ.* *Ծերությունից ցնդել, ցնորել։*

ԿԱՆԴԱՐ, *գ.* *Ջափ։*

ԿԱՆԴԿԸԼՈՒՋ, *գ.* *Մեծ ու փոքր երեխաներ։*

ԿԱՆԵԼ, *նբ.* *Մանել։* Քանի՞ առչկան թել կանիցիր։

ԿԱՆԹ, *վն. կճ. գ.* *Ունկ։* Կըճուճի կանթ կոտրեր ի *(վն.)։* Ճըլօրի կանթ կոտըրվավ *(կճ.)։*

ԿԱՆԹԱՐ, *գ.* *Մեծ կշեռք, որով շուկայում սայլ են կշռում՝ վրայի ապրանքով։*

ԿԱՆ Կ՚ԱԼ, *1) չբ.* *Ջրոսնել։* Էն տեղեր, վոր տու կան կուկ՚ա։ Կընաց կան էկավ *(Լիմ) 2) նբ.* *Որոնել։* Շատ կան էկա, չըկ՚ընդա *(Լիմ)։*

ԿԱՆՃՐԱԿ, *գ.* *Կաթնատու հունդ։* Կանճըրկի ճաշ։

ԿԱՆՄԻՇ ԷԼՆԵԼ, *1) Համոզվել։ 2) Հասկանալ։*

ԿԱՆՋՕ, *գ.* *Ծովահավ, վանա ծովակի եզերքին ապրող հավանման թռչուն։*

ԿԱՇԱԹԵՎ, *հթ. գ.* *Ջղջիկ։* Կաշաթեվ կիշեր կը թըռնի *(հթ.)։*

ԿԱՇԱՂՈՒ, գ. *Ձիու քերոց։*

ԿԱՇԱՂԵԼ, նբ. *Կաշաղուով քորել անասունին։*

ԿԱՉԱԽՉԻ, ած. գ. *Մաքսախույս։*

ԿԱՊԱԼ, գ. *Որոշ պայմանով որոշ ժամկետում կատարվող գործ։*

ԿԱՊԱՐՈՒԿ, ած. *1) Շատ խակ միրգ։ 2) Չարաճճի երեխա։*

ԿԱՊՈՏ, ած. *Կապույտ։* Կապոտ էրկինք՝ *(վն.)։*

ԿԱՊՍՕԼ, գ. *Կոճգամ։*

ԿԱՊՏԱԺԵՌ, ած. *Կապտավուն։*

ԿԱՊՈՒԼ, գ. *Ճարմանդ, կոճակ։*

Կ՚ԱՌ, կճ. ած. *Խուլ։*

ԿԱՌԱՀՕՎ, գ. *Սաստիկ քամի։*

ԿԱՌԸՇԸՂ, ած. *Խառն։*

ԿԱՌՄԱԿԱՌԻՇ, ած. *Խառնիխուռն։*

Կ՚ԱՌՇԷԼ, ած. *Գարշելի։*

ԿԱՍԱԲ *(նաև՝ Հթ.)*, **ԿԱՍԱԲ**, կճ. *Լիմ*, գ. *Մսագործ։ Ծան. – վանեցու կարծիքով մսագործը հաստափոր չի լինում, որովհետև անընդհատ աշխատում է (վն.)։*

ԿԱՍԱԲԹՈՒՐԱ, գ. *Մսագործի մեծ դանակ։*

ԿԱՍԱԲԽԱՆԱ, գ. *Սպանդանոց։* Վոր սանահաթ սովրելն կոլայ էներ, կասաբխանի շընորը կասաբ կէլնին։

ԿԱՍԱՖԱԹ, գ. *Հոգս, մտատանջություն։* Մալով-մըրութ կ՚ինի կամ կասաֆաթի մեջ։

ԿԱՍ-ԿՈՒՌԱԹ, ած. *Շիփ-շիտակ, պատրաստի։*

ԿԱՍՏ ԱՆԵԼ, *Համարձակվել, հանդգնել։*

ԿԱՍՏԸՄ, գ. *Երդում։*

ԿԱՎ[1], գ. *Ցեխ։* Ինոր սօլ մընաց կավի մէչ *(վն.)։*

ԿԱՎ[2], գ. *Աբեթ։* Շուկի կավ։

ԿԱՎԱԶ, գ. *Պահապան, հյուպատոսների սպասավոր։*

ԿԱՎԱԼ, գ. *Սրինգ։*

ԿԱՎԱՆՕԶ, գ. *Թիթեղյա տուփ։*

Կ՚ԱՎԱՌ, գ. *Բանջարեղենի տեսակ։*

Կ՚ԱՎԱՌԻԿ, գ. *Վաղահաս ցորենի տեսակ։*

ԿԱՎԿՈՒԼԱ, գ. *Գինու կավե շատ փոքրիկ թաս, որով խմում էին հին և բուրավետ գինի։*

* Բըդրի լուսին մէրդ ես իկ՚ե, կավկուլա՝ քո քեռըստանք, *Լիալուսին՝ կլորիկ դեմքով մորդ ես քաշել, բուրմունքով՝ քեռինեըրիդ։*

ԿԱՎԸՌ, գ. *Մեկ տարեկան ոչխար։*

ԿԱՎՈՏԵԼ, նբ. *Ցեխոտել։* Վոտըս կավոտի։

ԿԱՎՈՒՐՄԱ, ԿԱՎՈՒՐՄԱ, *Բմ.*, **ԿԱՎՈՒՐՄԱ**, *Հթ.*, գ. *Իր հյութի և յուղի մեջ տապակած միս, որ կճուճների մեջ պահում են որպես ձմռան պաշար։* Կիհ՚տեր կավուրմա իփիցին *(վն.)։*

ԿԱՏԱՆ, գ. *Գզրար։*

ԿԱՏԻԿ, *գ. 1) Նավակատիք, կրոնական տոն, երբ պաս չէին պահում, սակայն միս էլ չէին ուտում. բավարարվում էին ձվով ու կաթնեղենով։ 2) Կատարինե կանացի անունը չունևորների համար դառնում էր* Կատիկ, *իսկ ունևորների համար՝* Կատարինե խաթուն։

ԿԱՐԱ, *ած. 1) Սև։ 2) Խենթուկ, խև։*

ԿԱՐԱԳՅՈՋ, *1) ած. Սևաչյա։ 2) գ. Խամաճիկով գործող թուրքական ժողովրդական թատրոնի գործող անձ։*

ԿԱՐԱԴԱՇ, *գ. Ծանրության կշռի չափ, քաղաքացիական օխկա, որ փոքր-ինչ ավելի էր մեկ կիլոգրամից։*

ԿԱՐԱ-ԽԱԲԱՐ, *գ. Սև լուր, գույժ։* Թակավոր էսա կարա-խաբար վոր կըլըսի, ախն ուր կըպըռնի։

ԿԱՐԱՍՈՎԴԱ, *գ. Սևամաղձություն։*

ԿԱՐԱՎՈԼ, *գ. Պահակ։*

ԿԱՐԱՐ, *գ. 1. Պայման, դաշինք։ 2. Բանտարկության վճիռ, որոշում։* Քսանի տարի կարար տըվին։

ԿԱՐԱՉԻ, *ած. Անզգամ, բոռբոռացող։*

ԿԱՐՈՒՐ, *գ. Մեծ ջվալ։* Արդի կարուր շըլկեր ի։

ԿԱՐԱՓՇԻԿ, *գ. Սև կատու։* Վա՛յ կարափշիկ, վա՛յ կարափշիկ, քո մէրն ուտի քո թըշիկ։

ԿՑԱՐԸՆՑԱՆ, *գ. Գարնանացան։*

ԿԱՐԻԲ[1], *ած. գ. Պանդուխտ։*

ԿԱՐԻԲ[2], *հթ.*, **ԿԱՐԻԲ**, *կճ. Լիմ, ած. Օտարական։*

ԿԱՐԿԱԲՈՒՐՈՒՆՈՒ, *գ. Ոսկերչական գործիք՝ սուր ծայրով թելքաշ։*

ԿԱՐԿԸՎԵԼ, *կճ. չբ. Ամուսնանալ։*

ԿԱՐ-ԿՈՒԹ, *գ. Կար։* Կի՛տեր կոլոնվել են մէյտեղ, կար-կութ կանեն, խարսնիս ի։

ԿԱՐՄԻՐ ՔՑԱՄԻ, *Մարմնի որոշ մասերի կարմրելն ու կարծրանալը։*

ԿԱՐՄՐԱԺԵՌ, *ած. Կարմրավուն։*

ԿԱՐՄՐԵՆԻ, *գ. ած. Խաղողի տեսակ։*

ԿԱՐՏԱՑՎՈՐ, *1) ած. Գրագետ, ընթերցասեր։* Կարտացվոր ի փէյդա էլէ կ՚ըլլիսիս։ *2) գ. Կախարդ, հմայող։*

ԿԱՐՔՑԵԼ, *նբ. Ամուսնացնել։* Ուրիշ կ՚եղից ախչիկ պիրին, ուրենց լաճուն կարքՙիցին։

ԿԱՐՔՑՎԵԼ, *չբ. Ամուսնանալ։*

ԿԱՐՕՍ, *գ. Մաղադանոս, պետրուշկա։*

ԿԱՓԱԹՄԻՇ ԱՆԵԼ, *Փակել, գոցել, ծածկել։*

ԿԱՓԱՂ[1] *(նաև՝ հթ.)*, **ԿԱՓԱՂ**, *կճ. գ. Կափարիչ։*

ԿԱՓԱՂ^{2}, *Բմ. գ. Ընկույզի, նշի, ծիրանի կորիզի պատյան։*

ԿԱՓԱՄԱ, *գ. Երկարուկ աթոռ, նստարան՝ նախատեսված 4-5 հոգու համար։*

ԿԱՓԱՄԱՋԻ, *գ. Ատաղձագործ, կափամա պատրաստող։*

ԿԱՓԱՄԱՋՅԱՆ, *գ. Ատաղձագործյան։*

ԿԱՓԼԱՆ, *գ. Ինձ, վագր։*

ԿԱՔԱՎ, *գ. Գուլթանի մաս։*

ԿԱՔԱՎՈՒ ՏՈՏԻԿ, *Բույսի տեսակ։*

ԿԱՖԱ, *գ. Գլուխ։*

* Ինոր խաՄմար կաֆեյտ ի բօշ, *Դրա համար է ձեր գլուխները դատարկ։*

ԿԱՖԱԴԱՐ, *ած. Մտերիմ, համախոհ գաղափարական։*

ԿԱՖԱՍ, *գ. Վանդակ։*

Կ^{9}ԵՂ, *գ. Գյուղ։* Կեղը կայնի, կէրանդի կըկոտրի։ Ակօն կ'եղ կըմընա *(Վն.)*։

Կ^{9}ԵՂԱԿԱՆ, *ած. Գյուղական։*

Կ^{9}ԵՂԱՄԷՋ, *գ. Գյուղի կենտրոն։* Բէնամուս էլա կ'եղամէչ։

Կ^{9}ԵՂՎԱՆՔ, *գ. Գյուղեր։*

Կ^{9}ԵՂԱՎԸՐԱ, *մկ. Գյուղականորեն, հարևանցիորեն։* Կեղավըրա շինեց-տըվեց, պիրին տուն։

ԿԵՆՈՎ-ԿԵՆԴԱՆԻ, *ած. Ողջ և առողջ։* Քանի վոր տո՛ւ ու ես կենով-կենդանի ենք՝, մէյ մէկու տերն ենք։

ԿԵՌԹ, *գ. Բույս, որի արմատից սարի ծամոն էին պատրաստում։* Կեռթէ ծամոն։

ԿԵՌԻԿ, *գ. Կոկորդ։*

* Կեռիկը կապվել, *Ախորժակից ընկնել։*

* Կեռիկը փայվել, *Պապանձվել։*

ԿԵՌԱԿԱՊՎԵԼ, *չբ. Ահից պապանձվել։*

ԿԵՍՐԷՐ, ԿԷՍՐԷՐ, *Հթ. գ. Սկեսրայր։* Կեսրէր ուր խարսին// խարսուն շատ կըխավէր// կուզէր// կըսիրէր *(Վն.)*։

Կ^{9}ԵՏ, *գ. Գետ։*

Կ^{9}ԵՏԻՆ, *գ. Գետին։*

ԿԵՐԿՈՒԽ, *ած. Շատ ուտելուց հիվանդացած։*

ԿԵՐՑԱՎ, *գ. Տիրամոր յարա՝ վերք, փտախտ։*

Կ^{9}ԷԼ, *գ. Գայլ։* Մարդըմ առանց փարայի, կ'էլըմ առանց ատամի։ Կէլն անօթութէնէ սար չէլնե, կասեն՝ կըշտութենէ կըպատռի։ Տէրովին տէրն ի տարե, անտէրին՝ կ'էլն։ Կէլն ու ոչխարը մէյ օր են ծընվե։

Կ^{9}ԷԼ-Կ^{9}ԱՁԱՆ, *գ. Գայլ-գազան։* ՏաՐցիր ի կ'էլ-կ'ազան։

Կ^{9}ԷԼ Ի ՑԻՆԵ, *Լիմ, Արև եղանակին տեղատարափ անձրև։*

Կ^{9}ԵԼՎԱՁ, *գ. Վանա ծովակի վրա հարավ-արևելքից փչող քամի։*

Կ^{9}ԵԼՈՒԿ, *գ. Բույս, որ փաթաթվում է ծառերին ու խեղդում։*

ԿԷԾԱԿ, *գ. Կայծակ։*

ԿԷԾԷԼԿԸՐԱԿ, *գ. Վառ կրակ։*

ԿԷԾԿԸԼՏԱԼ, *չբ. Կայծկլտալ։*

ԿԷԿԱԾ, *ած. Եռանկյունաձև։* Ցորենի կէկած ջըվալ շըլկել, ք՛առ-սուն մատ էրկէն թարանջէն էլնել ու թագիր շուռ տալ։

ԿԷԿԷՆ, *գ. Երեխայի ոտքի կանգնելը։*

Կ^ՅԷԾ, *ած. Գեջ, թաց։*

ԿԷՃԱԿ, *Վն. գ. Եռանկյունաձև պարկ։*

ԿԷՄԱՌ, *գ. Փայտյա կեռ կամ ճանկ, որ կապում են թոկի ծայրին և ձգում թոկը՝ բեռ բարձելիս։* Կէմառ չըվըլնի ծէր կէ-ղէր *(Կճ.)։*

Կ^ՅԷՄԷՇ, *Լիմ, գ. Գոմեշ։*

Կ^ՅԷՇ, *ած. Գեշ։* Էշն ինչ կ՛իտի՝ կ՛էշն ինչ ի։ Կ՛էշ օրըդ էսօր էլնի։

ԿԷՍԻԿ, *գ. ած. Քաղցր սալոր։*

ԿԷՍ ՉՎՓ, *Լիմ, գ. Հացահատիկ չափելու փայտե աման։*

Կ^ՅԷՐԱԿՈՒԼ, *Լիմ, գ. Կերակուր։*

Կ^ՅԷՐԱՆ, *գ. Գերան։*

Կ^ՅԷՐԷԶՄԱՆ, *գ. Գերեզման։* Կ՛էրէզմընի ք՛ար կէնդանանոց կըպիրին։ *Ծան. – Վանում շինաքար չկար։ Բերդապարսպի համար, ինչպես պարզել է գերմանացի գիտնական Լեման Հաուպտը, ուրարտացիները քարը ծովով բերել են Մանազկերտից։ Վանեցին տունը կառուցում էր հում աղյուսով, իսկ գերեզմանաքարը բերում էր Հայոց ձոր գավառակի Կենդանանանց գյուղի քարհանքներից։*

Կ^ՅԷՐԷԶՄԱՆԱՏՈՒՆ, *Վն., գ. Գերեզմանատուն։* Մեռելոցին կիհ՛տէր կընացին կ՛էրէզմանատուն *(Վն.)։*

Կ^ՅԷՐԷԶՄԸՆՈՑ, *տե՛ս* **Կ^ՅԷՐԷԶՄԱՆԱՏՈՒՆ**։

ԿԷՐԸՆԴԻ, **Կ^ՅԷՐԸՆԴԻ**, *Հթ., գ. Գերանդի։*

ԿԷՐ-ՉԸԿԷՐ, *Լինում է, չի լինում։*

ԿԷՕՐՕՎՐԵԼ, *նբ. 1) Գորովել։ 2) Քաղցրությամբ համոզելով ճանապարհել։ 3) Երեխաների սիրտն առնել։*

ԿԸԴԻ՛-ԿԸԴԻ՛, *ձ. Այծ, ոչխար կանչելու ձայնարկություն։*

ԿԸԴԻ ՏԱԼ, *Կճ.*, **ԿԸԴԻ-ԿԸԴԻ ՏԱԼ**, *Լիմ, Խուտուտ տալ։*

ԿԸԴԻԿ, *գ. Խուտուտ, խտղտոց։*

* Կըդիկ անել, ***Խուտուտ տալ։*** Ընթի տակ կըդիկ կանէր, կըծըծղացուցէր։ Կըդիկ մի անե, չեմ կանա չըծըծղա։

ԿԸԴՐԱՆՈՑ, *գ. Կշռաքար, տասներկու նուկի։*

ԿԸՁ, *գ. Թուրք օրիորդ։*

ԿԸՋԱՐԹՄԱ, *գ. Ճաշատեսակ, նման եվրոպական բիստրոգանի (բառացի՝ աղջիկ, մի՛ ավելացնի)։*

КՊԸՋԵԼ, *նբ.* Գզել։

ԿԸՋԿԸՋԵԼ, *հթ. նբ.* *Պատառոտել։* Էտա անտէր շուն իմ ֆըստանի փեշ կըզկըզեց *(Հթ.)*։

ԿԸՋՄԸՋՏԱԼ, *չբ.* Կաղկանձել։

ԿԸՋՎԵԼ, *չբ.* Կռանալ։

ԿԸՋՏԻԿ, *գ.* Փոքր երեխայի չոր կղկղանք։

ԿԸԹԱՆ, *ած. գ.* Կաթնատու *(կով, էգ գոմեշ)*։ Տանը չորս կըթան կէր։

ԿԸԹԽԱ, *գ.* Բաժակ, գավաթ։ Ծով քե կ'ինի, գյամին քե կըթխա, տոռ լից, տոռ խըմի, աստված քե կուտա։ *Ծան. – Ասում էին նրան, ում գործերը շատ հաջող էին ընթանում։*

ԿԸԹՈՑ *(նաև՝ Հթ. Կճ. Լիմ)*, *գ.* Կըթոց առեց//առավ, կընաց բէր. կընաց, վոր կօվ ու վըչխըրներ կըթի *(Վն.)*։ Կըթոց առավ, կընաց կօվ կըթի *(Կճ.)*։ Կըթօց կըլօրավ, կաթ թաւփավ *(Հթ.)*։ Կըթոց վիրու, կ'ընաւ կօվ կըթի *(Լիմ)*։

ԿԸԹՈՒԿ, *նբ. ած. գ.* *1) Արդեն կթված կով, գոմեշ, ոչխար։ 2) Բերքը հավաքված այգի։*

ԿԸԹՈՒՆ, ԿԸԹՈՒՆ, *Բմ. գ.* *Ընկույզի միջուկ։* Քո ուտածը նուշ, շաքար, գոռզի կըթուն։ Գոռզի կըթնօվ ու մեղրօվ կոզինախ կըշինեն *(Վն.)*։

ԿԸԺԱԼ, *չբ.* *1) Կոկորդային ձայներ հանել։ 2) Ականջը շշել, կանչել։*

ԿԸԺԿԸԺԱԼ, *տե՛ս* ԿԸԺԱԼ։

ԿԸԺՈՑ, *գ.* Աղմուկ, ժխոր։

ԿԸԺԸՐԿՏԱԼ, *չբ.* *Խառնիխուռն ձայներ հանել։*

ԿԸԺԸՐԿՏՈՑ, *չբ.* *Խառնիխուռն ձայներ, ժխոր։*

ԿԸԺՎԸԺՈՑ, *գ.* *Խառնակ ձայներ։*

ԿԸԼԱԹ ԽԸՆՁՈՐ, *Խլաթի խնձոր, նման բելֆլորին։*

ԿԸԼԱՅԿՈՒՆ, *ած.* *Կլայեկած, անագազօծած աման։*

ԿԸԼԱՎ, ԿՓԸԼԱՎ, *կճ. ած.* Գեր։ Կըլավ վոչխար//վոխչար, կըլավ մարթ *(Վն.)*։

ԿԸԼԱՎՆԱԼ, *չբ.* *Գիրանալ, չաղանալ։* Կընիկըտ կըլավցեր ի։

ԿԸԼԵՊ, *վն. գ.* Կեղև։ Փաթաթէզի կըլեպ *(Վն.)*։

ԿԸԼԸԳՕԶԻ, *հթ. գ.* *Գլուխկոնծի։* Խօտի վըրէն կըլըգօզի տըվեց *(Հթ.)*։

ԿԸԼԸԴԱ, *գ.* *Գլխարկի, գդակի կապ, որ անցնում է ծնոտի տակով։*

ԿԸԼԸՂ, *գ.* *1) Հագուստ։ 2) Կերպարանք, տեսք։*

ԿԸԼԸՂՍԸԶ, *ած.* *1) Վատ հագնված։ 2) Վատ տեսքով։*

ԿԸԼԸՂ-ԿԻԱՖԱԹ, *գ.* *Հագուստ-կապուստ, արդուզարդ։* Թակավորն ուր կըլըղ-կիաֆաթ կըփոխի։

ԿԸԼԸՄԲՕԶ *(նաև՝ Լիմ)*, **ԿԸԼԸՄԲԻՋ**, *հթ. գ.* Ճակնդեղ։

Կըլըմբօզ կըխաշեն, կուտեն *(Վն.)*: ***Ծան.*** – *Այգեստանում սպիտակ ճակնդեղ չի եղել:*

ԿԸԼԸՆԴՐԷԿ, *ած. 1) Ողորկ: 2) Գեր ու սիրուն երեխա:*

ԿԸԼԸՆԴՕՋ, *ած. Ճաղատ, անմազ:*

ԿԸԼԸՋ, *գ. Թուր:*

ԿԸԼԹԿԸԼԹԱԼ, *չբ. 1) Նեղվիզ ամանից ջուր խմելիս ձայն լսվել: 2) Կերակուրը եփվելիս, խմորը թթվելիս ձայն արձակել:*

Կ³ԸԼԽԱՎԱՐ, *գ. Արտի գլխի վար:*

Կ³ԸԼԽԱԿՈՐԻ, *գ. Բույսի տեսակ:*

ԿԸԼԿԸԼԻԿ, *գ. Նեղվիզ ջրաման, փարչ:*

ԿԸԼՈԾ, *Հթ.*, **ԿԸԼՕԾ**, *Լիմ, գ. Բաղարջ:*

ԿԸԼՈՐԵԼ, *Վն. նբ.* Քյար կըլորիցին, պիրին տան ա̈ռա̈ճ *(Վն.)*:

ԿԸԼՈՐՎԵԼ, *կբ. Գլորվել:* Կըլորվէ̈ խուփ, կընդե պուտուկ:

Կ³ԸԼՈՒԼԻԿ, *գ. Քյուֆթա:*

ԿԸԼՈՒՉ, *գ. Փոքր երեխա:*

ԿԸԼՑՈՒՑԵԼ, *Հթ. նբ. Կուլ տալ:*

ԿԸԼՊՈԿԵԼ, *նբ. Կեղևել:* Փա̈թա̈թէզ կըկըլպոկեն: Փա̈թա̈թէզ կըլպոկիա̈, տիա̈ սեղնին: Իփի, կըլպոկի, տիր սեղանին: ***Ծան.*** – Կըլպոկել *հիմնականում ասվում է ձեռքով մաշկահան անելուն, իսկ* կըճպել՝ *դանակով կամ ձեռքով մաշկահանելուն:*

ԿԸԼՎԱՏ, *ած. Թլվատ, թոթով:*

Կ³ԸԼՕ̈Խ, *գ. Գլուխ:* Կ³ըլօ̈խն անցավալ չեն տընի ավիտրանի տակ: Կ³ըլօ̈խը եղի, ճամբխու տիր: Կ³ըլօ̈խ տազ ի, մախչա կուզի: Կ³ըլօ̈խըտ կըկոտրեմ, խաթրըդ չեմ կոտրի:

* Կ³ըլօ̈խն առնել ու փախչել, *Հուսահատությունից գնալ, կորչել:*

* Կ³ըլօ̈խը լըվալ, ***Խաբել:***

* Կ³ըլօ̈խը ծանրացիր ի, *Հիմարություններ է անում, որ պատժեն, գլխատեն:*

* Կ³ըլօ̈խից ծէռ ք³աշել, *Մահն աչքն առնել:*

* Կ³ըլօ̈խին ծո̈ւն տըրեց, *Փորձանք բերեց գլխին:*

* Կ³ըլօ̈խը կ³ըլօ̈խի, *Միասնաբար, խորհրդակցելով:*

* Կ³ըլօ̈խ հըմէն ք³արի զա̈րնել, *Ամեն միջոցի դիմել:*

* Կ³ըլօ̈խին նըստել, ***Բռնանալ:***

* Կ³ըլօ̈խովս շատ պա̈ն ի ընցէ, *Ամեն բան տեսել եմ:*

* Կ³ըլօ̈խ պահել, *Դասալքել, իրեն փորձանքից հեռու պահել:*

* Կ³ըլօ̈խ չեմ կանա ք³որե, *Բոլորովին ժամանակ չունեմ:*

* Կ³ըլօ̈խը սանդը տըրնել ու ծիծել, *Աղաչել-պաղատելով զահլա տանել:*

* Կըլօխ տանել, *Զանձրացնել, Հոգնեցնել։*

* Կըլխից տո՛ւս տալ, *Շաղակրատել։*

* Կըլխին տալ, *Ծեծել։*

* Կըլօխ տայցի, *Հարբել է։*

ԿԸԼՕՃ, *գ. Չեկած խմորից եփված հաց, որ հատկապես թխում են Ջրաղացում՝ նոր աղացված ալյուրից։*

ԿԸԼՕՐ[1], *գ. Սեխ։ Ծան. – Վանում բուծվող սեխն Արարատյան դաշտում կոչվում է* ջարջառ։ Կարապետ աղա, կըլօր-ծըմրո՛ւկ պըրծեր ի, Կուկազի խայուն ասեմ մէյ սէլըմ էլ ճամբխի։

ԿԸԼՕՐ[2], *ած. Կլոր։* Կըլօր ծըմրո՛ւկ *(Վն.)։*

ԿԸԼՕՐԷԿ, *գ. Տանձի տեսակ։*

ԿԸԽՏԻԿ, *ած. Շատ գեր, փոքր երեխա։*

ԿԸԽՏՈՐ, *գ. Կաշի դաբաղելու գխտոր։*

ԿԸԾԵԼ, *Վն. նբ. Խայթել։* Դըզէզ կըծեց *(Վն.)։*

ԿԸԾԷԾ, *գ. Նախանձ։*

ԿԸԾԻԿ ՏԸՆԵԼ, *Փախչել։* Էտ բասի վէրէն կըծիկ տըրեց *(այդ գրույցի պահին փախավ)։*

ԿԸԾՂԵԼ, *չբ. Յորենի և գարու արտերը խիստ հասունանալով չորանալ, հատիկները թափթփվել։* Հունձ ա՛նկընցե (վէրէն ընցե), արտեր կըծղիր են (կըծղե)։

ԿԸԾՎԸԾԱԼ, *չբ. Մրմռալ կծու տաքդեղից, սոխից, սխտորից։* Վոր սոխ չես կիրե, հապա ի՛նչի՞ կըկըծվըծաս։ Սոխից ինոր աչկեր կըկըծվըծին *(Վն.)։*

ԿԸՃԱ, *գ. Թրքուհի։*

ԿԸՃԱՏ, *գ. ած. Փոքր, կիսատ մոմ, ավել, մորուք և այլն։* Կըճատ ավլով զա՛րզամի տուն կավլի։ Եսիր տա՛ռնամ քյո էտ կըճատ մուրուսին։

ԿԸՃԸՄԹԵԼ, *Լիմ, նբ. Կճմթել։* Թեվ կըճըմթեց, տեղ կապուտսավ *(Լիմ)։*

ԿԸՃԻԿ, *գ. 1) Շատ փոքր աման։ 2) Մետաղադրամ հավաքելու հատուկ աման։*

ԿԸՃԻՐ, *ած. Ամրակազմ։* Կա՛սաբ կըճիր կէյնի *(Վն.)։*

ԿԸՃԼԵՏԻԿ, *գ. 1) Շորի փոքր կտոր։ 2) Շատ կարճ շոր։*

ԿԸՃՄԸՏԵԼ, *Վն. նբ. Կճմթել։* Թեվ էնըսկըա՛ կըճմըտիր էր, վոր տեղ կապտիր էր *(Վն.)։*

ԿԸՃՊՈՐԵԼ, *նբ. Փորփրել։* Ի՞նչ մարդ ի, առտվընէ ականջ կըկըճպորի։

ԿԸՄԸՇԵԼ, *չբ. Խնայել, ափսոսալ։*

ԿԸՄՈՒՆՔ, *գ. Քիմք։*

ԿԸՆԱ՛Լ, *Վն. չբ. Գնալ։* Կընա՛ց խարսնիս *(Վն.)։*

ԿԸՆԱՄԻՇ ԷԼՆԵԼ, *Պարտավորվել։*

ԿԸՆԱՐԻՖ ՏԱՆԾՈ, *ած.* *Գնա+հարիֆ (անփորձ, ազնիվ, միամիտ, տխմար) մարդ։*

Կ՝ԸՆԱՐՓՈՒԿ, *գ.* *Հոտավետ ծաղիկ, գինարբուկ։*

ԿԸՆԳՅԱԼ, *չբ.* *Մի քիչ քնել։*

ԿԸՆԳՅՈՒԽ, *գ.* *Կնգուղ։*

ԿԸՆԴԵԼ, *նբ.* *Գլուխը խուզել։*

Կ՝ԸՆԴԵԼ, *նբ.* *Խմորը գունդ-գունդ անել։*

Կ՝ԸՆԴԼԻԿ, *ած.* *Գեր, սիրուն երեխա։*

ԿԸՆԴԸԼԻԿ՝Ց ՏԱԼ, *Լիմ,* *Գլուխկոնծի տալ։* Ճըժեր կընդըլիյ կուտան *(Լիմ)։*

ԿԸՆԴԸՆԵԼ *(նաև՝ Հթ.)*, **Կ՝ԸՆԴՆԵԼ**, *Լիմ,* **ԿԸՆԴՆԵԼ**, *Վն., նբ.* *Գտնել։* Կորուկ՝ կ՝ան կընդաւ *(Հթ.)։* Կօվ կուրիսիր էր, կ՝ընդա *(Լիմ)։* Կօվ կուրիսիր էր, մօշի մէչ կընդան *(Վն.)։*

ԿԸՆԻԿ, *գ.* *Կին։* Շէն կէնէր մեր տընիկ, անուշ կէնէր մեր կընիկ։ Մարթ-կընկա մէչ մէյ պիտի էլնի զանգ՝ակ, մէկէլը՝ պա՝մբակ։ Պառավ կընիկ, ջահէլ իրիկ, ինչըխ շուն վէր պաղին աղանձ ուտի։

ԿԸՆԻՔՄ ԱՌՆԵՄ, *Մի քիչ քնեմ։*

ԿԸՆՔԻԿԸՄ, *գ.* *1) Մի կյանք։ 2) Մի պահ քուն առնելը։*

ԿԸՇԵԼ, *նբ.* *Քշել։*

ԿԸՇԼԱ, *գ.* *1) Բառացի՝ ձմեռանոց։ 2) Զորանոց։*

ԿԸՇՊԵԼ, *նբ.* *Կշտամբել։*

ԿԸՇՏԱՀԱՄ, *ած.* *Ծղր. Կուշտ լինելու պատճառով կերակրին դրված անուն։*

ԿԸՊԵԼ, *նբ.* *1) Կպչել, զօդվել։ 2) Վառվել։* Փէտը թաց էր, համա կըպավ։ Կընիկ էլա՛վ, ճըրաք՝ կըպուց։

ԿԸՊՆԵԼ, *Վն.* *չբ.* *Կպչել։* Փուշ կըպիր էր ինոր փէշին։

ԿԸՊՉԱՆ, *գ.* *Վառելու ընթացքն արագացնող չոր խոտ, տաշեղ, կյազ, փաչավրա, յուղոտ կամ ձեթոտ լաթ։*

ԿԸՊՈՒԿ, *չբ.* *ած.* *1) Միացված։ 2) Կպած։ 3) Վառված։* Սօբէն *(=վառարան)* կըպուկ ի՛։

ԿԸՊՈՒՑԵԼ, *նբ.* *1) Սոսնձով որևէ բան միացնել։ 2) Վառարանը, թոնիրը, մոմը վառել։*

ԿԸՊՕՑ, *Հթ.* *գ.* *Կաթսայի մեջ ձնացած կերակրի տականք։* Պուտկի կըպօցի խա՛մա՛ր ճըժեր կըռվան *(Հթ.)։*

ԿԸՌԱԼ, *ած.* *1) Հարուստ։ 2) Թագավոր։*

* Կըռալ կըտրել, *Հարստանալ։* Էտ մարթ կըռալ կըտրեց։

ԿԸՌԱԼ-ԿԸՌԿԸՌԱԼ, *չբ.* *Ագռավը, կռունկը քանիցս կանչել։*

ԿԸՌԱՆԱԹ, *գ.* *Կլարնետ։*

ԿԸՌԱՅԱՂ, *գ.* *Քառաստունոտանի երևակայական գազան։*

ԿԸՌԷԹ, *գ.* *Հողի կոշտուկ։*

Անձրև էկավ, կըռէթն ինգի քարի դարդ կանի։

ԿԲՌԸՄ, *գ. Զարդոսկի։*

ԿԲՌԸՆԹԱ, *ած. Շատ ծեր, ամեն պահ մահվանը մոտ։* Էլեր ենք կըռընթա, մեր մէյ վոտ կ'էրէգմընի մեչ ի։

ԿԲՌԸՆԿԱՆ ՎԱՆՔ, *Կռունկի վանք։ Վանից Աղթամար տանող ցամաքային ճանապարհին գտնվող մի բարձրադիր վանք, որի կանթեղի ձեթը, ըստ ավանդության, սպառվում է, սակայն մի կռունկ հեռվից ձեթ է հասցնում, և վանքի եկեղեցին լուսավորվում է։ Ծան. – Վասպուրականի մյուս հայտնի վանքերն էին՝ Աղթամարա Սուրբ Նշան, Լիմ կղզու վանքը՝ Սուրբ Գևորգ եկեղեցիով, Կտուց կղզու վանքը՝ Սուրբ Կարապետի եկեղեցիով, Առտեր կղզու վանքը՝ Սուրբ Աստվածածնի եկեղեցիով, Սալնապատի կամ Սուրբ Գրիգորի վանքը, Վարագա վանքը, Կարմրավորա վանքը, Կարմրակ վանքը, Տիրամոր վանքը, Եղիշեի գերեզմանի վրա կառուցված Ջաղար Սուրբ Նշան վանքը, Հոգվոց վանքը, Փութկի Սուրբ Գևորգի վանքը, Սորադերի վանքը (Արծրունիների նախկին Էջմիածինը), Դերնկա վանքը, Նախավկայի վանքը, Թադեի վանքը, Բարդուղիմեոսի վանքը, Մեծ Օփի վանքը Արճեշում և Խեգ վանքը Հայոց ձորում։ Քաղաքում գործում էին առաջնորդանիստ Սուրբ Նշան եկեղեցին (Քաղաքամեջում), Հայկավանքի, Անգյուսներա, Սուրբ Հակոբի, Արարուց և Նորաշենա եկեղեցիները։*

ԿԲՌԸՆՁԿԸՏԵԼ, *նբ. չբ. Թելը, մազը խառնել։*

ԿԲՌԹԱՆ, *գ. Թուխս։* Կըռթանն ճետ կըխանա *(Կճ.)*։

ԿԲՌԹԻԿ, *Հթ. գ. Կռճիկ։* Ճիժ կըռթիկ կուտէր *(Հթ.)*։

ԿԲՌԹԿԲՌԹԻԿ, *ած. 1) Լավ եփած ու չորացած հաց, որ ատամի տակ կըռթ-կըռթ ձայն է հանում։ 2) Տնական պաքսիմատ։*

ԿԲՌԻԿ, *գ. Ագռավ։* Որ աստված կըռկան ծէն լըսի, վ'ըրտէվըրին ծո՛ւն կըտընի։

ԿԲՌԻՆՁ, *Լիմ, ած. Գանգուր։* Ծամեր կըռինձ ի *(Լիմ)*։

ԿԲՌԿԵՐԵՆ, *գ. ած. Ագռավերեն, Վանում տարածված ծածկալեզուներից մեկը։ Ծան. – Կային նաև ճընճըղկերեն, գորտերեն, բըլբուլերեն։ Ամեն ձայնավորից առաջ ագռավի, ճնճղուկի, գորտի կամ սոխակի ձայնին համապատասխանող երկու բաղաձայն հնչյուն էր ավելաց-*

վում, և բառը երկարում էր։ Ձմեռվա երկար գիշերներին նստում էին քուրսու շուրջը և բլբլացնելով նորանոր ծածկալեզուներ հորինում։ Տարածված էր նաև թարսերեն, երբ բառը վերջից էին արտասանում։

ԿԸՌՃԱՆԱ, *գ. Մոմակալ, փոքրիկ աշտանակ։*

ԿԸՌՃԷԼ, *գ. ած. Տարօրինակ ատամներ ունեցող մարդ։* Շունը ընես, ատլավոր կըռճէլ։

ԿԸՌՃԵՄ, *գ. Վատ աղացված արմտիքի թեփ։*

ԿԸՌՃԻԿ, *գ. Փափուկ ոսկոր։*

ԿԸՌՃՈՆ[1], *գ. 1) Խոտի կոշտ մասեր, որոնք անասունը չի կարողանում ուտել և թողնում է մսուրի մեջ։ 2) փխբ. Մեծ հրավերքից մնացած ուտեստ։*

ԿԸՌՃՈՆ[2], *Լիմ, գ. Կրակ անելու կպչան։*

ԿԸՌՃՈՒԽ, *ած. Փոքրիկ, սիրուն։*

ԿԸՌՃՈՒԽԻԿ, *գ. ած. Հաջող կարված և շատ հարմար նստած հագուստ։*

ԿԸՌՄԱ, *ած. Դարսավոր, պլիսե։*

ԿԸՌՄԵԼ, *չբ. 1) Թմրել։* Վոտըս կըռմեր ի։ *2) Կուչ գալ։*

Կ՚ԸՌՆԱԿ, *վն. գ. Գրտնակ։*

ԿԸՌՆԱՆԿՕՏ, *գ. Կրիա։* Կըռնանկօտ ուշիկ կէթա՝ *(Բմ.)։*

Կ՚ԸՌՆԷԼ, *գ. Ձեռնաքարշ սայլակ։*

ԿԸՌՉԱԼ, *չբ. Հոդերը կոտրվելու ձայն հանել։*

ԿԸՌՎԸՑՈՒՑԵԼ, *նբ. Կռվեցնել։* Տըրկըցի կընիկ էնքան արավ, չում խարսին ու կեսրոչ կըռվըցուց։

ԿԸՌՏԱՆ, *1) ած. Ներքինացված։ 2) գ. Կրտած գոմեշ, որ հեզանում է և դառնում բանող անասուն։*

ԿԸՌՏԵԼ, *նբ. Ներքինացնել։*

ԿԸՌՈՒԹ, *գ. Հասկ։* Ցօրնի կըռթըներ կըթաւփեն *(Կճ.)։*

ԿԸՌՈՒՆՁ, *Վն. Կճ. ած. Գանգուր։* Էրեխի մազեր կըռունձ// քանքուր են *(Վն.)։*

ԿԸՌՈՒՆՁ-ԿԸՌՈՒՆՁ, *ած. Գանգուր, գռուզ մազեր։*

ԿԸՌՕՆ, *գ. Կերպաս։*

ԿԸՍԱ ԱՆԵԼ, *Պատմել։* Ամեն մէյ իր կ՚ըլխուն կ՚ացած կըսա կանի։

ԿԸՍԱՆ, *Վն. թ. Քսան։*

ԿԸՍՄԱԹ, *գ. Բախտ։*

ԿԸՍՄԱԹ, *Հթ.*, **ԿՀԸՍՄԱԹ**, *Կճ.*, **ՀԸՍՄԱԹ**, *Լիմ, գ. Հասանելիք հաջողութիւն։*

ԿԸՎԿԸՎԱԼ, *չբ. Հավը, կաքավը կանչել։*

ԿԸՎԿԸՎՈՑ, *գ. Հավի, կաքավի կանչը։*

ԿԸՏԱԿ, *գ. Գդակ։*

ԿՀՏԵՆԻ, *գ. Թոնրի կողից թափված և կրակ ու մոխրի*

մեջ այրված-եփված գունդ հաց, որ կերցնում էին օրիորդներին ու հարսներին, որպեսզի նրանց աղիքներում քիչ գազ գոյանար։

ԿԸՏԷԼ, ԿԸՏԵԼ, *հթ. գ.* Գդալ։ Ուղտ կտէլո՞վ կըճըրեն։

ԿԸՏԸՄ, *դ. կենտ, մի, մեկ հատ։*

ԿԸՏԸՐՎԵԼ, *չբ. Միսը, բանջարեղենը կիսաեփ մնալու հետևանքով պնդանալ ու շատ դժվարությամբ եփվել։*

ԿԸՏԸՐՏՎԵԼ, *կբ. 1) Կարատվել։ 2) Մորմոքել։* Էտ վոր լըսի, ջանըս կըտըրտվեց։

ԿԸՏԻԿ ԱՆԵԼ, *չբ. Խուտուտ տալ։*

ԿԸՏԻՐ *(նաև՝ Լիմ), գ. Ոչխարի հոտ։* Խոչխարի կըտիր տաշտ կարաձա *(Լիմ)*։

ԿԸՏԿԸՏ, *գ. Հավերին կանչելու ձայն։*

ԿԸՏԿԸՏԱԼ, *հթ. չբ. Կչկչալ։*

ԿԸՏՐԵԼ, *հթ. 1) նբ. Հատել։ 2) նբ. Թալանել։ 3) չբ. Փսորվել։ 4) նբ. Ջրկել։* Ինոր խացից պիտի կըտրէր *(Վն.)*։

ԿԸՏՈՐ-ԿԸՏՈՐ ԷԼՆԵԼ, *1) Շատ նազուտուզ անել, կոտրատվել, սեթևեթել։ 2) Անեծք. կտոր-կտոր լինել։*

ԿԸՏՎԵԼ, *չբ. Ոջիլ ջարդել։*

ԿԸՏՐԱՄԱՆ, *գ. Կտուրի վրայով առչկան մանող կին։*

ԿԸՏՐՈՑ, *գ. Պատանեկան խաղ։*

ԿԸՏՐՈՒԿ, *ած. 1) Վճռական։ 2) Սրամիտ։ 3) Բանիմաց։*

ԿԸՏՈՒՑ ՀԱՆԵԼ, *Գործի սկիզբը դնել։*

Կ՚ԸՐԱԽԿԱԼ, *գ. Եկեղեցու գրակալ։*

ԿԸՐԱՂ, *հթ., Կ՚ԸՐԱՂ, կճ. Լիմ, մկ. 1) Մի կողմի վրա, դուրս։ 2) Շուրջը։*

ԿԸՐԱՄՈՒԽԻՐ, *գ. Թոնրից արտաքնոցները տարվող մոխիր։ Ծան. – Արտաքնոցները փակ շինություններ էին, որոնք հետևի կողմից բացվում էին սալահատակված փոսի վրա։ Արտաքնոցում դրվում էր սրտաձև անցքով սալաքար, որի երկու կողմերում լցվում էր մոխիրը։ Պետքը հոգալուց հետո երկու բահ մոխիր էր թափվում սրտաձև անցքի մեջ։ Մոխրի և մարդկային կղկղանքի, այսպես կոչված գիշերային ոսկու խառնուրդը լավագույն պարարտանյութն էր դառնում և բարեբեր դարձնում վանի՝ ցանքի համար ոչ այնքան պիտանի հողը։*

ԿԸՐԱՑՏԱՐՈՑԻԿ, *գ. Կրակտարոցիկ, վանի պատանիների սիրած խաղ։*

ԿԸՐԱՐ, *գ. 1) Պայման, դաշինք։ 2) Բանտարկության որոշում, վճիռ։*

Կ՚ԸՐԵԼ, *նբ. Գրել։*

ԿԸՐԸՐԱ, ԿԸՐԻՐԱ, *Հթ. Լիմ, գ. Կրիա։* Տըղէյներ կըրըրա ին պըրոնե *(Վն.)։* Ճըժեր կըրիրա են պըրոնե *(Լիմ)։*

* Կըրըրէն ուր կօտից փա՛խս ի, *Կրիան իր պատյանից հրաժարվո՞ւմ է, այսինքն՝ քարացած սովորութ֊յունից դժվար է հրաժարվել։*

Կ՚ԸՐԿԵԼ, *նբ. Գրկել։*

ԿԸՐԿԷՆԻ, *Վն. գ. Բաղարջ։*

ԿԸՐԿԸՋԱԼ, *չբ. Թռչունները ձայն հանել, դայլայլել։*

ԿԸՐԿԸՏԱԼ, *չբ. Ցավ զգալ։* Ծեռներըս կըկըրկըտան։

ԿԸՐԿԸՏԵԼ, *չբ. Ոսկորը սաստիկ ցավել։*

ԿԸՐԿԸՐԱԼ, *չբ. Բարձրաձայն ծիծաղել։*

ԿԸՐԿՈՒՏ, *գ. Ոսկրացավ, հոդացավ։*

ԿԸՐՄԸՋԻ, *ած. Կարմիր։*

ԿԸՐՆԱՆԿՕՏ, *Բմ. գ. Կրիա։*

ԿԸՐՑԱՆՑ, *ած. Գրագետ։* Մեր Արթէնն էլ կըրյանց ի, համա չըկարա զի քաշե։

Կ՚ԸՐՈՂ, *գ. Գրող, հոգեառ հրեշտակ։*

Կ՚ԸՐՈՑ-ՊԸՐՈՑ, *գ. ած. 1) Մտավորական։ 2) Գործնական մարդ։* Նա կ՚ըրոց-պըրոց ի, ինոր պէն մի խարցուցե։

ԿԸՐՎԸՐԱԼ, *չբ. 1) Կաքավը դայլայլել։ 2) Ուրախանալ։*

Կ՚ԸՐՏՆԱԿ, *գ. Գրտնակ։*

ԿԸՐՈՒԿ, *նբ. ած. Տեղափոխված, փոխադրված։* Ալուրը հըմէն կըրուկ ի։

ԿԸՑԻՊ, *ած. Դժվար ջարդվող։* Գուզ կըցիպ ա *(Կճ.)։*

ԿԸՑՄԵԼ, *Հթ. չբ. Ցրտից մատները կուչ գալ։*

ԿԻԾԵՊ, *Հթ. Լիմ, գ. Մանր որդեր, որոնք լինում են մսի, լեշի վրա ճանճեր նստելուց հետո։*

ԿԻՐԻՐԱ, *գ. Կրիա։* Ճըժեր կիրիրա պըռնին *(Կճ.)։*

ԿԸՃՈՒՃ, *Վն. գ. Յուղի, պանրի, ղավուրմայի միջին չափի աման։* Սաթօն կըճուճի մէչ յեղ ու պանիր կըպախէր *(Վն.)։*

Կ՚ԸՆԴՆԵԼ, *Լիմ, նբ. Գտնել։*

Կ՚ԸՌՏԸՆԱԿ՚, *Հթ. գ. Գրտնակ։*

Կ՚ԸՏԵԼ, *Լիմ, գ. Գդալ։*

ԿԻԱՄԱԹԻՆ, *ած. 1) Հավիտյան։ 2) Չլինելիք։*

ԿԻԴԸՐ, *գ. 1) Կշռաքար, տասներկու նուկի։ 2) Լիտր, 12 նուկի, նախկին 400 գրամը. ամեն մի նուկին համարյա հավասար է մեկ կիլոգրամի։*

ԿԻԼ, *գ. Փափուկ քար, որ գործ էր ածվում լվացքի, մանավանդ ձեռքերը լվանալու ժամանակ։*

ԿԻՄԱ, *գ. Ծեծած, մանր կտրատած մսից պատրաստված կերակուր։*

ԿԻՄԱ-ԿԻՄԱ, *ած. Պատառ-պատառ։* Կիմա-կիմա կանեն, մեծ պրտուճ ականջ կըթողնեն։

ԿԻՅՄԱԹ, *գ. Արժեք, գին։*

ԿԻՅՏԵՐ, *գ. Կանայք։*

ԿԻՆԵԼ, *չբ. Վիճակվել, ստացվել։* Քյե կինի շինել իմ ժամ *(դու պիտի կառուցես իմ եկեղեցին)։*

ԿՅԻՆԻ, *գ. Գինի։* Կյինուց էլա̈ծ քյացախ սայթ կէլնի։ Կյինի չունես, կյինու կարասն ի՞նչ կանես։

ԿՅԻՆՁ, *գ. Գինձ։*

ԿԻՇԽԵԼ, *չբ. Համարձակվել, իշխել։*

ԿԻՍՏԱԽԱՄ, *գ. Կիսով չափ դատարկ կարասի անախորժ հոտ։*

ԿԻՍՐԱՐ, *Վն. գ. Արտատեր և արտում աշխատող շինական, որոնք կիսում էին ստացված բերքը՝ դառնալով կիսրար։* Կիսրարներ պերքյ խալալ կէս կանին *(Վն.)։*

ԿԻՏՆԱԼ, *նբ. Գիտենալ։*

ԿԻՏՆԱՎՈՐ, *գ. Գիտնական։*

ԿԻՏՈՍԻԿ, *ած. Շատ գիտուն, սոփեստ։*

ԿՅԻՐ, *գ. Նամակ։* Կյիր էկավ։

ԿԻՐԱՅՄՈՒՏ, *գ. Շաբաթ երեկո։*

ԿԻՔՅ, *ած. Պինդ, ամուր։* Կի՞քյ կապիցիր։

ԿՅԱ̈Զ, *գ. Կպչան ծառայող փշատերև բույս։ Կա երկու տեսակի կյազ՝* կարմիր կյա̈զ *և* թըստան կյա̈զ։ Տըկլոզ քյամկով կյա̈զ կըկրես։

ԿՈԴՐԱԹ, *գ. Կարողություն, հարստություն։*

ԿՈԶԱԿ, *գ. Ջոխ։* Խավըրծըլի կոզակ *(միջուկն ուտվում է)։*

ԿՈԶԲԱՆԴ, *գ. Նորափեսայի պարեգոտ։*

ԿՈԶԿԵԼ, *նբ. Ջոխը մաքրել, կլպել։*

ԿՈԹ, *Հթ. գ. Ծղոտ։* Ցօրնի կօթեր կանեն հա̈րթ *(Հթ.)։*

ԿՈ̈ԹԻ, *Հթ. ած. Ծույլ։*

ԿՈԹԸՂՔՈՒՆ, *ած. Հուժկու, թիկնավետ (մարդ)։*

ԿՅՈ̈Լ, *Հթ. 1) ած. Գոլ։* Կյո̈լ ճո̈ւր։ *2) գ. Տաքություն։ 3) գ. Գոլորշի։*

ԿՈԼԱՅ, *ած. Հեշտ։*

ԿՈԽԿԸՌԺԵԼ, *նբ. Կոխոտել, տրորել։*

ԿՈԾ, *ած. 1) Գոց, փակ։* Տո̈ւռը կոծ ի։ *2) Անգիր արած։* Տա̈սը կոծ ի արե։ *Ծան. – Այսինքն՝ գիրքը գոցել, փակել է, դասը կարդացել է։*

ԿՈԾԵԼ *(նաև՝ Լիմ)*, *նբ. Փակել։* Տո̈ւռ կոծիա̈, տիա̈ *(Լիմ)։*

ԿՈԿՈԺԻԿ, *գ. Փոքր շերեփ։*

ԿՈԿՈՒԿ, *նբ. ած. Հարթված։* Տախտակը կոկուկ ի։

ԿՅՈ̈Ղ, *ած. գ. Գող։* Կյո̈ղը կյո̈ղից կյո̈ղցավ, աստված վէրէն զարմա-

ցավ։ Կ՚ողը չամչընա, կ՚ող ասողը կամչընա։

ԿՈՂԱԿ, *գ. Վանա գետակնեբում ապրող ձուկ։*

ԿՈՂ-ԿՈՒՇՏ, *գ. Շրջապատ, շրջակայք։*

Կ՝ՈՂՆԱԼ, *նբ. Գողանալ։* Կ՚ողցած սապոնը շոտ կըտըրորվի։

ԿՈՂԻՆՁ *(նաև՝ Լիմ)*, *գ. Կորիզ։* Ծիրնի կողինձ *(Վն.)*։ Տանձի կողինձ *(Վն.)*։ *Ծան. – Ձմերուկի և սեխի սերմ։* Ծըմրո՚ւկի սերմ *(Վն.)*։

ԿՈ՚ՂՏՈ՚ՒԿ՝, *հթ. ած. մկ. Գաղտնի։*

ԿՈՂՔԱՎԵՐ, *գ. Ամանի տեսակ։*

ԿՈՃ[1], *գ. Ծառի արմատ, որն ամբողջութեամբ հանվում էր և օգտագործվում որպես վառելիք, որովհետև վառելիքը Վանում շատ սուղ էր։ Շրջապատում անտառ չկար, վառելափայտը նավով բերում էին ծովակի հարավային ափերից և վաճառում* չագրակով։

ԿՈՃ[2], *գ. Կորիզ։* Ծիրնիա՛ կոճ *(Բմ.)*։

ԿՈՃԵԼ, *նբ. Հունցել։* Խմորը զոռով կոճիցինք։

ԿՈՃՂԷՋ, *գ. Գետնախնձորի տարատեսակ, որ նույնպես ուտվում էր հում-հում։*

ԿՈՄԲՈՒՌՆՕ, *ած. մկ. Կոշտ ու պռոշտ, կոշտ ու կոպիտ։*

ԿՈՆ[1], *վն. գ. Հնձելիս գերանդու բերանից ընկած խոտի, ցորենի յուրաքանչյուր շերտը։* Մէյ կո՚ն խոտ *(Վն.)*։

ԿՈՆ[2], *գ. Մեծ վրան։*

Կ՝ՈՒՆ *(նաև՝ Լիմ)*, *գ. Գույն։* Ախչիկ ամօթից կըկարմըրի, կ՚ո՚ւն կուտա, կ՚ո՚ւն կառնի։

ԿՈՆԴԻԿ, *գ. ած. Քիստ չունեցող ցորենի տեսակ։*

Կ՝ՈՒՆԸՍԿ՝ՈՒՆ, *ած. Գույնզգույն, խայտաբղետ։*

ԿՈՇԿԵԼ, *վն. նբ. Կոճակել։* Խալվի կօփչաներ կոշկեց *(Վն.)*։

ԿՈՉ, *հթ.*, **ԿՕՉ**, *Լիմ, գ. Արու ոչխար, խոյ։*

ԿՈՊԸՌՆԱՏ, *ած. Բիրտ, կոպիտ, անտաշ։*

ԿՈՌԱԴԱՐ, *ած. Անտեր, անտոհմ։ Ծան. – Քրդերեն բառացի՝ որևէ զանցանքի համար տոհմից մերժված, վտարված։ Վանում գործածվում էր որպես անեծք։ Բառացի իմաստը մոռացութեան մատնված լինելու պատճառով տարածված էր նաև* կոռադար ուտիս *ձևը։*

ԿՈՌԱԿՈՒՏՈՇ, *1) գ., ած. Ջարութեյունից կոտոշը մի տեղ խփած ու ծռած (անասուն)։ 2) ած. Ըմբոստ, անհնազանդ։*

ԿՈՌԿ՝ԸԼՈՒԽ, *ած. գ. Դավ նյութող անձ։*

ԿՈՌԻ, *գ. Կալսելու համար պարանով իրար կապված մի*

քանի անասուն, որոնք շրջան են գործում կալի մեջ։

ԿՈՌԾԵԼ, *նբ. Ծածկելու նպատակով որևէ իր կամ ման շուռ տալ։* Կաղամլիկը կոռծեց պլաստիկ պուտուկի վէրէն։

Կ՚ՈՌԾԵԼ *(նաև՝ Հթ.), նբ. Հյուսել։*

Կ՚ՈՌԾԸԼԻ, *գ. Փայտածուխ։*

ԿՈՌՃ, *Հթ. կճ. Լիմ, գ. 1) Կեղև։* Ծառի կոռճ, փայթաթէզի կոռճ *(կճ.)։ 2) Ընկույզի, նշի, ծիրանի կորիզի պատյանները (կճ. Լիմ)։* Գըզի կոռճ թաւփեց *(կճ.)։*

Կ՚ՈՌՏ, *գ. Գորտ։* Կոռտան իրես թըք՚իցին, ասաց՝ փառք քեզ, ասպաւած, անծրև կուկ՚ա։

ԿՕՌՏԸՆՈՒԿ՚, *Հթ. գ. Գորտնուկ։*

Կ՚ՈՎԵԼ, *նբ. Գովել։* Կովիցին Լալուխան, էլաւ, քաքեց պատխատ։ Տէրն կ՚ովեց, թոռաղ, փախիա, էլըն կ՚ովեց, աառ, փախիա։

ԿՈՏ, *կճ. Լիմ, գ. Հացահատիկ չափելու փայտե աման։* Կօտօվ ցօրէն չաւփին *(կճ.)։*

ԿՈՐ, *ած. Կույր։ Ծան. – Երբ կույրը խեղճ ու համեստ մարդ էր, ասում էին, օրինակ,* տեր Մարկ՚ըրենց կորը *կամ* կոր Վարտան, *իսկ երբ կույրը իրեն համեստ չէր պահում, ասում էին* քյօռ։ *Բայական ձևը՝* կուրանալ։ Տաւրպընի լաճ կուրցավ։

ԿՈՐԴԻՆ, *տե՛ս* ԾԷԹՐԷՆ։

ԿՈՐԹ, *ած. Պինդ (հողի մասին)։*

ԿՈՐԾԵԼ, *վն. կճ. նբ.։ Նույնն է՝* **ԿՈՌԾԵԼ**։ Վըլացուկ ամըհ՚տեր կործեց արեվի տակ, վոր չորնան *(վն.)։*

ԿՈՐԿՈՏ, *վն. գ. Թրջած, թեփը ծեծելով հանած ցորեն։* Ծաւվարն ու կորկոտ ցորնից կըշինեն *(վն.)։*

ԿՈՐՃ, *վն. գ. Նույնն է՝* **ԿՈՌՃ**։ Գ՚ոզի կորճ *(վն.)։*

ԿՈՐՎԵԼ, *Բմ. չբ. Կքել։*

ԿՈՐ ՊՈ՚Ւ, *վն.,* **ԿՕՐ ՊՈՒ**, *Լիմ, գ. Բու։* Կոր//քո՚ոռ պո՚ւն ցէրէկ պաւն չի տիսնա *(վն.)։*

ԿՈՐՑԸՆԸՆԷԿ, *գ. Ցին, գիշատիչ թռչուն։*

Կ՚ՈՑ, *ած. Փակ։* Կո՚ոց պէրան ճանճ չի մըտնե։

ԿՈՓ, *գ. Մուրճի տեսակ։*

ԿՈՒ *(նաև՝ Հթ. Կճ.), գ. Խոշոր եղջերավորների կղկղանք։* Նախիր ընցավ, փուղոց կույօվ զաւրտըրեց *(վն.)։* Տավրի, էշի, ծ՚իու կու *(կճ.)։* Փաւգյաղ *(=գոմ)* հըլին կու ի *(Հթ.)։ Ծան. – Վառելափայտի սակավության և թանկության պատճառով կուն օգտագործվում էր ոչ թե որպես պարարտանյութ, այլ որպես վառելիք։ Կուից պատրաստում էին փթիր և տառթ ու վառում թոնրի մեջ։*

Վառարանում (սօբա) վառում էին միայն փայտ։

ԿՈՒԲԱ, *գ. 1) Գմբեթ։ 2) Պատշգամբ։* Քյոշկի կուբից կապի *(=պատշգամբից ձայն կտա)։*

ԿՈՒԲԱՅ, *Բմ. գ. Այժմյան ոճի տանիք։*

ԿՈՒԲԲ, *գ. Ջյուխ։* Կըբրե կարաս։

ԿՈՒԲԲԻ, *ած. Սև։* Բըլբուլն ասաց կուբրի խավքուն։

Կ՚ՈՒՋ ԱՆԵԼ, *Հանցավորի նման լուռումունջ նստել։*

ԿՈՒՋԻԿ, *կճ. ած. Կորամեջք։*

ԿՈՒՋԼԱՆ *(նաև՝ Լիմ) ած. Կուզ։* Կուզլան պառավ *(Վն.)։* Քյամակ՝ կուզլան ի *(Լիմ)։*

Կ՚ՈՒԹԱՆ, *գ. Գութան։ Ծան. – Գութանի ամբողջ կազմը կոչվում է սարվածք՝* Լըծենք սարվածք, էրթանք կութան։

* Կութնի ակներ, *Իրարից բարձր ու ցածր և փոքր ու մեծ երկու անիվներ։*

* Կութնի առատամ (խոփտուն), *Գութանի մաս, որի վրա ամրացված է խոփը։*

* Կութնի բնադա, *Գութանի լծերին կապվող հաստակուռ երկաթե շղթա։*

* Կութնի էշ, *Գութանի փոքրինչ երկար ու կորացած, ծուռ փայտ։*

* Կութնի թուր, *Գութանի էշի և առատամի միջև ընկած փայտ։*

* Կութնի լուծ, *Ջույգ եզների կամ գոմեշների պարանոցին դրվող ամուր փայտ։*

* Կութնի խարազան, *Գութանի էշի ամրացման տեղը։*

* Կութնի խոփ, *Հողը պատռող երկաթ։*

* Կութնի կաքավ, *Գութանի տախտակն ամրացնող լեզվաձև փայտ։*

* Կութնի ձևիչք, *Խոփի առջևի երկաթը։*

* Կութնի ճամբարակ, *Գութանի մասերն իրար կապող կաշվե փոկ։*

* Կութնի մաճն ու ծոմանճը, *Ղեկաձև փայտ, որ մաճկալը բռնում ու ղեկավարում է վարը։*

* Կութնի ոտն ու ոտնախպերը, *Էշն ու առատամն իրար միացնող փայտ։*

* Կութնի սամի, *Երկաթե կամ շիմշատ փայտե երկու ամուր ձող, որ հագցնում են եզների կամ գոմեշների վզին և կապում լուծին։*

* Կութնի սըռնի, *Մաս, որի ծայրերին ամրացված են անիվները։*

* Կութնի տախտակ, *Խոփի պատռած հողը շրջող տախտակ։*

Ծան. – Վանի հողը պինդ էր և վարուցանքի համար դժվարին։ Վարը կատարվում էր 3-5 լուծով, այսինքն՝ վեցից մինչև տասը գոմեշներով ու

եզներով։ Առաջին լուծը կոչվում էր ամոլ, *որին պետք է լծված լինեին ուժեղ գոմեշներ։ Առաջին լուծի վրա նստող մշակը կոչվում էր* ամոլվար։ *Երկրորդ լուծը կոչվում էր* սարծիլ, *երրորդը՝* ուժտուն, *չորրորդը՝* խուրիկ, *հինգերորդը՝* խաղնառաջ։ *Տարբեր դաշտերում վարը տարբեր խորությամբ պիտի կատարվեր, և ամեն գավառակ կամ գյուղախումբ իր վարպետն ուներ, որը տվյալ վայրին համապատասխան խորությամբ վար անող խոփ էր պատրաստում։*

ԿՈՒԹԻ *(նաև՝ Հթ.),* **ԿՈՒԹԻ,** *կճ. Լիմ, գ. Արկղ, տուփ (ծխախոտի, զարդեղենի)։*

Կ՚ՈՒԹՆԱԾ, *նբ. ած. Հերկած և վարած արտ։*

ԿՈՒԹՆԻ, *ած. Մետաքսյա։* Խարսըն արժան ի կութնի դէօշկի, Բուրսայի պէրցի։

ԿՈՒԼՈՒԼՈՒ, *գ. Երեխաներին պատուհասվող կապույտ հազ։*

ԿՈՒԼՈՒՂ, ԿՈՒԼԼՈՒՂ, *գ. Ծառայություն։*

ԿՈՒԿՈՒ, *Բմ. գ. Կկու։*

Կ՚ՈՒՀԱՋ, *գ. Թանկարժեք կտորեղեն։*

ԿՈՒՀՈ՛Ւ-ԿՈՒՀՈ՛Ւ, *ձ. Հավերին կամ շներին կանչելու ձայնարկություն։*

ԿՈՒՀՈՒՌԻԿ, *գ. Աղաման, կավե փոքրիկ աման։*

ԿՈՒՄԱՆԱՅՈՎ, *մկ. Ընկերակցությամբ։ Ծան. – Շատ էր տարածված կումանայով՝ հավասար դրամ դնելով վարագա վանք գնալը և խնջույք անելը։ Կումանան հավանաբար առաջացել է «կոմունա» բառից, մանավանդ որ այդ երևույթը տարածված էր ազատագրական շարժմանը զինվորագրված գաղափարական երիտասարդության մեջ։*

ԿՈՒՄԱՇ, *գ. Մետաքս։*

ԿՈՒՄԱՐ, *գ. Բախտախաղ։*

ԿՈՒՄԱՐԲԱԶ, *գ. ած. Բախտախաղով տարված խաղամոլ։*

ԿՈՒՄԲԱՐԱ, *գ. Հրթիռ, ռումբ։*

ԿՈՒՄԿՈՒՄԱ, *գ. Օղու փոքրիկ բաժակ։*

ԿՈՒՄԲԱ, *գ. Մանկական խաղ։ Ծան. – Պնակաձև կավը՝ կումբան ուժգին զարկում է գետնին, պնակի միջի օդը պատում է պնակը ու ցրում կավը։*

ԿՈՒՄՓԱՍ, *գ. Կողմնացույց։*

ԿՈՒՅԱԽՈՑ, *գ. Կուի հոտ։* Ինորից կույի խոտ կուկա՛, Նա գյուղացի է, շինական, վըռըշիկ։

Կ՚ՈՒՅՆՈՑ, *գ. Գոգնոց։*

ԿՈՒՅՈՒՄՋԻ, *գ. Ոսկերիչ։*

ԿՈՒՅՈՒՄՋԻԲԱՇՅԱՆ, *գ. Ոսկերչապետյան։*

ԿՈՒՆԱՐԿ, *գ. Կուի՝ անասունների աղբի աղբանոց։*

ԿՈՒՆԴԱՒԽ, *կճ. գ. Բարուր։* Ճըժի կունդաւխ պաւցեց *(կճ.)։*

ԿՈՒՆԴՈՒԿԸԾԻԿ, *ած. Ահից կամ հիվանդութիւնից կուչ եկած։*

ԿՈՒՆԴՈՒՄԻՍ, *գ. Գիրացած և անշարժութեան դատապարտված։*

ԿՈՒՆԴՈՒՌԱ *(նաև՝ կճ.)*, **ԿՈՒՆԴՈՒՐԱ**, *կճ., գ. Շատ ամուր, բարձրակրունկ, սրաքիթ ծանր կոշիկ, որ հագնում էին հատկապես քրդերը։* Քըրթերաց կիհ՝տեր լէն կունդուռա կըխայնեն *(Վն.)։* Թաւժա խարսին կունդուրա խաքուցին *(կճ.)։*

ԿՈՒՆԴՈՒՌԱՋԻ, *գ. Կունդուռա կարող, կոշկակար։*

ԿՈՒՆԻԿ, *գ. Կունարկ, անասունների աղբի կուտակման վայր։*

Կ՚ՈՒՆՔ՚, *գ. Մի պահ քնելը։*

ԿՈՒՇ *(նաև՝ Հթ.)*, **ԿՈՒՇ**, *կճ. Լիմ, գ. 1) Թռչուն։* Կըշէր թըռան, էկան *(կճ.)։ 2) Աղեղնափայտ։*

ԿՈՒՇԹՈՒՅԻ, *գ. Աղվամազ, փետուր։*

ԿՈՒՇՏ, *1) ած. Կերած-խմած։ 2) մկ. Քով, մոտ։* Էրէխէն մօր կուշտն ի։

ԿՈՒՌ, *գ. 1) Թև։ 2) Բազուկ։ 3) Ազդր։* Խաւի կուռ տոռւր զիկ։

ԿՈՒՌԹ, *Բմ. գ. Ումպ։* Մէ կ՚ուռթ ճոռր խըմեց *(Բմ.)։*

ԿՈՒՌԻԿ, *գ. Գինու կավե թաս։*

ԿՈՒՌԿՈՒՇՈՒՄ, *գ. Հրացանի, ատրճանակի գնդակ։*

ԿՈՒՌՄԻՇ ԱՆԵԼ, *Լարել։* Սըխաթ կուռմիաշ արա, վոր պանի։

ԿՈՒՌՆԱՋ, *ած. Խորամանկ։*

ԿՈՒՌՈՓ, *գ. Կուի մեծ գունդ։*

ԿՈՒՌՈՒԽՉԻ, *գ. Հանդի պահակ։*

ԿՈՒՌՈՒՇ, *գ. Դրամի միավոր։*

ԿՈՒՌՕ, *գ. Քրդի տղա։*

ԿՈՒՌՕՆ, *գ. Կերպաս։*

ԿՈՒՍՈՒՐ, *գ. Թերութիւն։* Էտ շորը կուսուր չունի։

ԿՈՒՍՓ, *գ. Կտավատի դիրտը՝ ձիթհանքում ձեթը հանելուց հետո։*

ԿՈՒՎԱԹ, *գ. Ուժ։*

ԿՈՒՎԱԹԼԻ, *ած. Ուժեղ։*

ԿՈՒՎԱԹՍԸՋ, *ած. Անուժ, թուլլ։*

ԿՈՒՏ, *գ. 1) Թռչունների կեր։* Մեր տուն կուտ կուտի, տըրկըցի տուն ծոռ կածի։ *2) Տանձի, խնձորի, սերկևիլի և այլնի կորիզ (կճ.)։* Ծըմէրկի կուտ, ծիրանի կուտ *(կճ.)։ 3) Դրամ։* Էտա մարթ կուտ չունի ուր ծեռ *(Վն.)։ 3) Թոնիրն ընկած և մոխրի մեջ խանձվելով եփված հաց (Հթ.)։*

ԿՈՒՏ[2], *Հթ. գ. Կալի հացահատիկի տականք։*

ԿՈՒՏԱՊ, գ. *Մեջը ոսպ ու սոխ դրած բոքոն։*

Կ՚ՈՒՏԻԿ, գ. *Վարդապետի կամ քահանայի գլխարկ։*

ԿՈՒՏՈՇ *(նաև՝ Հթ. Լիմ)* գ. *Եղջյուր։* Կօվու կուտոշներաց մէյն ինգ՚իր// ընգ՚իր էր *(Վն.)։*

ԿՈՒՐԲԱԹ, գ. *Պանդխտութ՚յուն։* Ուր յար-յաթաղ կըժողվի, կըկապի ծիու թարք՚, թաւրկ դունիա կանի էս աշխըրին, կերթա կարիք-կուրբաթ։

ԿՈՒՐԲԱՆ, գ. *Մատաղ։* Կուրբան էլնեմ իմ լաճուն։

ԿՈՒՐԲԱՆ ԲԱՅՐԱՄԻ, *Մահմեդականների տոն։*

ԿՈՒՐԻՍ, *ած. Կորած։* Էտ փարէն, վոր տըվիր, կուրիս չի։

ԿՈՒՐԻՍԵԼ *(նաև՝ Հթ. Բմ.)*, **ԿՈՒՐՍՎԵԼ**, *Բմ. նբ. չբ. Կորցնել, կորչել։* Կընաց կուրիսավ վէր ուր տան։

ԿՈՒՐԿՈՏ, գ. *Կորկոտ։* Անխամ, անխոտ, ալնի կուրկոտ։

ԿՈՒՐՏԻԿ, գ. *Բաճկոնակի նման անթև կարճ վերնազգեստ։*

ԿՈՒՐՈՒՋՈՒ, գ. *Բողկանման մանր պալարներով քաղցր բույս։*

ԿՈՒՑ, գ. *Բուռ։* Մէյ կուց կուտ թաւլ խաւերաց։ Մէ կուց ճաւր, մէ կուց ցօրէն *(Կճ.)։*

ԿՍԱՆ, *Վն. թ. Քսան։*

ԿՕՋ, գ. *Թղթախաղի հաղթական թուղթը։*

ԿՕԼ[1], գ. *Վն. Բութ մատի և ցուցամատի միջև եղած բացվածքը։* Իմ կօլ շա պըստիկ ի *(Վն.)։*

ԿՕԼ[2], գ. *Խաղողի որթի ճյուղերը։*

ԿՕԼԱԼՈՒՆ, *ած. Օսլայած։*

ԿՕԼԱՅ, *ած. Հեշտ, դյուրին։*

ԿՕԼԹՈՒՂ *(նաև՝ Հթ.)*, գ. *Թևատակ, անութ։*

ԿՕԼՋԻ, գ. *1) Արտերի պահակ։ 2) Մաքսանենգներին ստուգող։*

ԿՕԼՕՆ, գ. *Դեզ, կույտ, շեղջ։*

ԿՕԼՕՆԵԼ, *նբ. Դիզել, հավաքել։* Վըռազ-վըռազ սեղան պաց արին, մեր տուն-տըրկեց, պաըրեկամ ու խընամիք՚ մրչման պես աչխփոց կ՚ելա էկան, կօլօնվան։

ԿՕԽԵԼ, *Հթ. 1) նբ. Տրորել։ 2) նբ. Խոթել, մտցնել։ 3) չբ. Առաջանալ (մութը)։*

ԿՕԽԸՐՃԵԼ, *Լիմ, նբ. Տրորել։*

ԿՕԽՊԷՍ, *Բմ. Լիմ, գ. Կողպեք։*

ԿՕԽՏՈՒԿ, *Կճ. ած. Գաղտնի։*

ԿՕԾՕԾ, *Բմ. գ. Գորտնուկ։*

ԿՕԿՌՕՇԱՆԱԼ, *չբ. Մեծամտանալ, պարծենկոտ դառնալ։*

ԿՕԿՕԼ, *Կճ. ած. Անպոչ։*

Կ՚ՕԿ՚ՎԵԼ, *Հթ. չբ. Երես առնել։*

ԿՕԿՕՆ, գ. *Մեկ. Գլուխ։*

ԿՕՂԻՆՁ, *Հթ.. գ. Կորիզ։*

ԿՕՆԱԽ, **ԿՕՆԱԽ**, *Կճ. Լիմ, գ. Հյուր։*

ԿՕՆԴԱԽ, գ. **ԿՕՆԴԱՆԽ**, *Հթ.*, **ԿՕՆԴԱՆԽ**, *Լիմ 1) Խանձարուր։* Կօնդանխ պանց, տես՝ լանճ ի, թէ՞ անչիկ՝ *(Հթ.)։ 2) Հրացանի խզակոթ։*

ԿՕՆԴՈՒՐԱ, *Բմ., գ. Շատ ամուր, բարձրակրունկ, սրաքիթ ծանր կոշիկ, որ հատկապես հագնում էին քրդերը։*

ԿՕՆՈՒՇՄԻՇ ԷԼՆԵԼ, *Տեսակցել, զրուցել։*

ԿՕՉ, ԿՕՉ, *կճ. գ. Խոյ։*

ԿՕՉԱՂՈՒԹՈՒՆ, *կճ. գ. Քաջություն։*

ԿՕՊԱԼ, *գ. Մահակ։*

ԿՕՋԱՄԱ, *ած. 1) Մեծ, խոշոր։ 2) Փարթամ։ 3) Հաղթ։*

ԿՕՌ[1], *1) գ. Ձեռնափայտ։ 2) ած. Կոր, կորացած, թեքած։*

ԿՕՌ[2], *Հթ. Լիմ, գ. Փայտյա կեռ կամ ճանկ, որ կապում են թոկի ծայրին և նրանով ձգում թոկը՝ բեռ բարձելիս։* Կօռ կընա պէ, պէռներ կապենք՝ *(Հթ.)։*

ԿՕՌՎԵԼ, *1) չբ. Կռանալ։ 2) կբ. Ծռվել։*

ԿՕՌՏԻԿ, *գ. Կանացի անթև հագուստ։*

ԿՕՌՈՒԿ, *ած. Ծռված։* Էտա փէտ կօռուկ ի։

ԿՕՌՕՎԱ, *գ. Սալորի լավաշ, որ ձմռանը գործածվում էր կերակրի մեջ շլորաչրի փոխարեն։ Ծան. – Թթու սալորը եփում էին և մածուցիկ վիճակում լցնում սկուտեղի մեջ, չորացնում։*

ԿՕՎԻԿ *(նաև՝ Լիմ)*, **ԿՕՎԻԿ**[ց], *Հթ. գ. Ձագար։* Կօվիկ՝օվ կինի լըցեց կուլիկի մէչ *(Հթ.)։*

ԿՕՎՈՒ ՃԱՅՏԵԿ, *Բույսի տեսակ։*

ԿՕՏ[1], *Վն. գ. Հացահատիկ չափելու փայտե աման։* Մէյ կօտըմ ցորեն տըվի փոխ *(Վն.)։*

ԿՕՏ[2], *գ. 1) Գլուխ, գանգ։ 2) Արմտիքի չափ, մեկ չափի քառորդը։ 3) Կրիայի, ոստրեի պատյանը։*

ԿՕՏԻԿ[1], *կճ. գ. Ջուր խմելու կավե աման։* Խողէ կօտիկօվ ճիւր կըխըմենք *(կճ.)։*

ԿՕՏԻԿ[2], *կճ. գ. Գոտի։* Կօտիկ շորից էր *(կճ.)։*

ԿՕՏԻԿ[3], *գ. Փայտե կամ պղնձե բարակ շրջանակ, որ կանայք դնում էին գլխին՝ լաչակի վրա։*

ԿՕՏՈՇ, *Հթ. գ. Եղջյուր։*

ԿՕՐԴՕՆ, *գ. Ոսկյա կամ արծաթյա շղթա՝ կանանց վզից, ժամացույցից և այլ իրերից կախելու համար։*

Կ[ց]**ՕՐՈՎՐԵԼ**, *նբ. Սփոփել, սիրտն առնել։*

ԿՕՓՉԱ, *գ. Կոճակ։*

Հ

Հ՛ԱԲԱ, *Լիմ, գ. Կապա։*

ՀԱԴԼԷ, *գ. Պարեղանակ։* Ես հադլէ, տո՛ւ հադլէ, հապա պան վո՛վ պանի։

ՀԱԴՐԱ, *գ. 1) Ընծա, պարգև։ 2) փխբ. Անախորժություն։*

ՀԱԶ ԱՆԵԼ, *Ախորժել, համակրել։*

ՀԱԶԸՐ, *ած. Պատրաստ։*

ՀԱԶԸՐԼԸՂ, *գ. Հրավերքի պատրաստություն։*

ՀԱԶԸՐՎԵԼ, *չբ. Պատրաստվել, հագնվել-զարդարվել։*

ՀԱԹԱԹԱ, *գ. Սպառնալիք։* –Հաթաթա տալ, *Սպառնալ։*

ՀԱԼ, *գ. Վիճակ, դրություն։* Ինոր հալ-վախտը լավ ի։ Ասեմ՝ չէլնե, չասեմ՝ չէլնե, մօլօրվիր եմ մէչ իմ հալին։

ՀԱԼԱ, *մկ. Դեռ, տակավին։*

ՀԱԼԱԼԱ, ՀԱԼԱ-ՀԱԼԱ, *եղ. 1) Դեռ տեսե՛ք։ 2) Ի՛նչ եք սպասում։*

ՀԱԼԲԱԹ, *եղ. Իհարկե, անշուշտ։* Հալբաթ մեր դօրն կուկա։

ՀԱԼԲՈՒՔԻ, *շ. Մինչդեռ, սակայն և այնպես։*

ՀԱԼԻՄԱՆ, *ած. Հեզ, խոնարհ։*

ՀԱԼԿԱ, *գ. Օղակ։*

ՀԱԽ, *գ. 1) Իրավունք։ 2) Վարձատրություն։* Կանա՞ս իմ հախէն կա՞ս։

ՀԱՀԱՆՁ, *եղ. Ահա, ահավասիկ։*

ՀԱՂ, *տե՛ս ՀԱԽ։*

ՀԱՄԱ, *շ. Բայց, սակայն։* Արի ծուռ նըստենք, համա դուզ խօսինք։

ՀԱՄԱՄ, *գ. Բաղնիք։*

ՀԱՄԱՄՉԻ, *գ. Բաղնեպան։*

ՀԱՄԱՆ, *մկ. Իսկույն, անմիջապես։* Համան արեա՛, տո՛ւր։

ՀԱՄԲԱԼ, *գ. Բեռնակիր։*

ՀԱՄՇԱՐԻ, *գ. Հայերնակից, համաքաղաքացի։*

ՀԱՅԱ, *գ. Ամոթ, պատկառանք։*

ՀԱՅԱՍԸՋ, *ած. Անպատկառ, անամոթ։* Հայյասըզին մէչն ի։

ՀԱՅԲԱ, *գ. Խուրջինն ուսին կամ գրաստի վրա դնելու երկկողմանի բրդե պարկ։*

ՀԱՅԴԵ, *ձ. Վե՛ր կաց, շարժվի՛ր, դե՛։*

ՀԱՅԴԵՊՐԷ, *մկ. Անմիջապես, իսկույն, առանց հետաձգելու։* Հայդեպրէ պյուրգուն արին։

ՀԱՅԻՖ, *եղ. Ափսոս։*

ՀԱՅԿԱՐԱ, *գ. Աղաղակ, գոչյուն։*

ՀԱՅԿԱՐԱՋԻ, *ած. Աղաղակող, ճչան, աղմկարար։*

ՀԱՅ-ՀՈՒՅ, *ձ. Բացականչություն։*

ՀԱՅՎԱՆ, ՀԱՅՎԱՆ, *Լիմ, գ. Անասուն, շուն, կատու և այլն*

մտնում են հա̈յվա̈ն *համկացության մեջ:* Ինոր կըսան կ'ըլօխ հա̈յվա̈ն կէր *(Վն.)*: Չի քըսան խա(տ) հա̈յվան կա *(Լիմ)*:

ՀԱՆ, *եղ. Ահավասիկ, ահա:*

ՀԱ̈ՆԳ^{3}Ա̈ՄԱ̈, *գ. Պարագաներ:* Էտրա հա̈նգ'ա̈մէն ուրիշ հա̈նգ'ա̈մա̈ ի:

ՀԱՆՋ, *Նույնն է՝ ՀԱՆ:*

ՀԱՇԱՆ, *գ. Կալատեղ բերված հնձած արմտիք:* Սէլէրն էկան, հաշանը պերին:

ՀԱՋԱԹ, *գ. 1) Գործիք: 2) փխբ. Առնանդամ:* Ինոր հաջաթ ուրիշ պա̈ն ի *(շատ մեծ է)*:

ՀԱՋԻ, *գ. Մահտեսի, մըղդըսի, մուխսի:*

Հ'ԱՌԷԾ, *Լիմ, մկ. Առջև:*

Հ'Ա̈ՌԻՔ, *Կճ.*, **ՀԱ̈ՌԻՔ^{3}**, *Հթ. գ. Առաստաղ:* Հ'ա̈ռիք մըրոտ ի *(Կճ.)*:

ՀԱ̈ՌՁԸՆԷԿ, *Հթ. գ. Առաջնեկ:*

ՀԱՍԸԼ, *գ. Առաջ գալը, արդյունք տալը:*

ՀԱՍԼԻ, *մկ. Վերջապես:*

ՀԱՎԱ, *գ. Օդ, եղանակ:*

ՀԱՎԱԴԻՍ, *գ. Ավետիս, բարի լուր:*

ՀԱՎԱԺՈՐ, *գ. Կարմիր արմատ ունեցող բույս:*

ՀԱՎԱՐ ԱՆԵԼ, *Օգնության կանչել: Ծան. – Վանում տարածված էր վարժապետ Խաչատուր Լեռնյանի «Տարվա տասներկու ամիսները» բանաստեղծությունը, որտեղ փետրվար ամսվա համար ասված էր. «Փետրվար՝ փետեր հավար...», այսինքն՝ վառելափայտը վերջանում է.*

ՀԱՎԱՐԱՋԻ, *ած. Անտեղի օգնության ճիչ արձակող, անտեղի տագնապ հարուցող:* Ախչիա̈, դու հավարաջի ե՞ս:

ՀԱՎԱՓԸՇԱՆԳ, *գ. Հրթիռ:*

Հ'ԱՎԸԼՆՈՐԹ, *Լիմ, ած. Ավելորդ:*

ՀԱՏ-ԲՈԻՏ, *գ. Դեռևս չբուսած աշնանացան, երբ հատիկները մնում են ձյան տակ՝ գարնանը բուսնելու համար:*

ՀԱՐԱԿԱՇ, *Կճ. մկ. ած. Կիսաբար, կիսովի:* Հարակաշ կըպա̈նին, ստացած խավասար կըկիսին *(Կճ.)*:

ՀԱՐԱՄ, *գ. տե՛ս* **ՀԱՐԵՄ**:

ՀԱՐԱՄՋԱԴԱ, *ած. Վատորակ մարդ, տմարդ:*

ՀԱՐԱՐԱԹ, *գ. Տապ, մարմնի բարձր ջերմություն:* Հարարաթի մէչ կըվա̈ռվի խիվանդը:

ՀԱ̈ՐԱ̈Ք^{3}Ա̈Թ, *գ. Ուժ, կարողություն:*

ՀԱՐԵՄ, *ած. Պիղծ վայր, կանանոց: Ծան. – Հնում բնակավայրերից քիչ հեռու օթևաններ էին շինվում, որտեղ կանայք գնում էին ամսականի օրերին և ծննդաբերելու ժամանակ: Տղամարդու համար դա հարամ, անմաքուր վայր*

էր, որտեղ նա իրավունք չուներ ոտք դնելու։ Հարէմում սպասարկում էին միայն տարեց կանայք։ Բազմակնության տարածման հետ կանանոցը կոչվեց հարեմ՝ պիղծ վայր, տուն, որտեղ տղամարդը, անգամ տերը, իրավունք չուներ մուտք գործելու։ Վանում թուրքերը մեծ հարէմներ չունեին և սևամորթ ներքինիներ չէին պահում։ Կանանոց դարձած հարէմները ղեկավարում էին հիմնականում երկրորդ կանայք։ Առաջին կինը մեծ մասամբ անզոր էր կառավարելու հարէմը։

ՀԱՐԹ, գ. *Հարդ։* Հարթը քոն չի, հարթամանը խո քո՞ն ի։

ՀԱՐԹԱՄԱՆ, գ. *Հարդանոց։*

ՀԱՐԻՖ, ած. գ. *1) Անփորձ, միամիտ մարդ։ 2) Ազնիվ ընկեր։ 3) Տխմար։*

ՀԱՐԿԱՎՈՐ, գ. *Ջուգարան։*

ՀԱՐՑԱՆՈՂԱՑ, գ. *Հարցնողներին, հետաքրքրվողներին։ Ծան. – Նամակները վերջանում էին «ամենայն հարցանողաց շատ պարև» վերջաբանով։*

ՀԱՓ ԱՆԵԼ, *Բերանը լայն բաց անել և միանգամից կուլ տալ մեծ կտորը։*

ՀԱՓՍ, գ. *Բանտ։*

ՀԱՖԹԱԼԸՂ, գ. *Շաբաթավարձ։*

ՀԷ՛Յ ԳԻԴԻ ՀԷ՛Յ, ձ. *Բացականչություն, ո՛, ո՛հ։*

ՀԷՅՎԱ՛Խ, ձ. *Ավա՛ղ։*

ՀԷՅՐԱՆ ԷԼՆԵԼ, *Զմայլվել, սքանչանալ։*

ՀԷՉ, *1) դ. Ոչինչ։ 2) մկ. Բնավ։*

ՀԷՍԱԲ, գ. *Հաշիվ։*

ՀԷՍԷ, գ. *Ժառանգության բաժին։*

ՀԷՐՎԱՐ, մկ. *Աշխատանքի ավարտի ժամանակը, երեկոյան։* Օրը հէվարի ի։

ՀԷՐ *(նանև՝ Լիմ)*, գ. *Քարայր։* Կըմըտնեն հէրիմ մէչ։

ՀԷՐԱՆ, գ. *Կալսվածը քամուն տալը՝ քյառէշտով հացահատիկը հարդից առանձնացնելու համար։*

Հ՛ԷՐԿՆՈՒԹԵՆ, Լիմ, գ. *Երկարություն։*

ՀԷՐՍ, գ. *Բարկություն, ցասում։*

ՀԷՐՍԼԱՄԻՇ ԷԼՆԵԼ, *Բարկանալ։*

ՀԷՐՍՈՏ, ած. *Բարկացկոտ։*

ՀԷՐՍՕՏԵԼ, *հթ.*, **ՀԵՐՍՈՏԵԼ**, *Բմ. չբ. Բարկանալ։*

Հ՛ԷՐԹԻՍ, կճ., **ՀԷՐԹԻՍ**, *հթ.* գ. *Երդիկ։* Հ՛էրթըսից մուխ կըլնի *(կճ.)։*

ՀԷՐՏՈՒՄ, *հթ.* գ. *Երդում։*

Հ՛ԷՔԻ, *Բմ.* գ. *Այգի։*

ՀԷՔՄԱԹ, գ. *Սքանչելիք։* Էսըս-կընա հէքմաթի պան, մարդ իսա ոյչ տիսե, ոյչ լըսե։

ՀԷՕԴԱ, *գ. 1) Բառացի՝ սենյակ: 2) Գյուղերում ախոռների մի անկյունում շինված բարձրություն՝ սաքու՝ գյուղական ակումբ, որտեղ ձմռան երկար գիշերներին հավաքվում էին գյուղացիները և լսում աշուղների երգն ու նվագը, հեքիաթասացների կամ քաղաքից եկած մարդկանց պատմությունները:*

ՀԷՕՌԱՆԱԼ, *չբ. Փարթամորեն աճել, բայց անպտուղ մնալ:*

ՀԷՕՔ, *գ. 1) Օգնություն: 2) Հնձի ժամանակ գյուղացիների միմյանց օգնելը, հէօք գնալը:*

ՀԸԼԻՆ, *Հթ.*, **Հ'ԸԼԼԻՆ**, *Լիմ, ած. Լիքը:* Ջըվա̈լ հըլին ցօրեն ի *(Հթ.)*:

ՀԸՄԷՆ, *գ. Ամեն, ամենքը:* Հըմմէն օր էծու խոնն ի պա̈ց, մէյ օր էլ մաքուու խոնն էնի պա̈ց:

ՀԸՆԴԻՅԱՄԱՆ, *գ. 1) Հնդկաստան: 2) փխբ. Շատ հեռու վայր:* Կըընա̈ց խաասավ Հընդիյաման:

ՀԸՆԴՈՒԽԱՎ *(նաև՝ Կճ.) գ. Հնդկահավ:* Հընդուխավ բա̈կ ման կուկյա̈ *(Կճ.)*:

ՀԸՆԹԵԼ, *նբ. Անթել, անթատակ առնել, թևի տակ առնել:*

ՀԸՆԹԻՏԱԿ[8], *Հթ.*, **ՀԸՆԹԻ ՏԱԿ**, *Կճ. գ. Թևատակ:* Գ'իր հընթի տակ կընա̈ց վա̈րժա̈տոն *(Կճ.)*:

ՀԸՆԹՐԻՍ, *Վն. Հթ. գ. Ընթրիք, երեկոյան ճաշ:* Իրիկուն նըստան հընթրիսի *(Վն.)*:

ՀԸՆՈՒԿ, *գ. Ծառի, որթատունկի հնացած արմատներ, որ հավաքում և գործածում էին որպես վառելիք:*

ՀԸՐՍՈՏԵԼ, *Կճ.*, **ՀԸՐՍՈՏՎԵԼ**, *Լիմ, տե՛ս* **ՀԷՐՍՕՏԵԼ**:

ՀԻԼԱ, *գ. Նենգություն, խարդախություն:*

ՀԻԼԱՋԻ, *ած. Նենգ, խարդախ:*

ՀԻԼԱՋՆՈՒԹԵՆ, *գ. Նենգություն, խարդախություն:*

ՀԻԿ[8]**Ի**, *Հթ. գ. Այգի:*

(Հ)ԻՄԱՆՍԸՋ, *ած. Անհավատ:*

ՀԻՄԴԱՏ, *գ. Օգնության հասնելը:*

(Հ)ԻՆԳԷՐ, *Բմ. գ. Ընկերք:* Կօվ ծընեց, (հ)ինգէր տըրթկա խեա էկավ, ինգա̈վ *(Բմ.)*:

ՀԻՇՈՒՆՑ, *Հթ. գ. Հայհոյանք:*

Հ'ԻՐ՜ԸՐ ՏԱԼ, *Կճ., Շարժել:* Քար տէղից հ'իրա̈ր տըվեց *(Կճ.)*:

ՀՅՈՒ-ՀՅՈ՛Ւ, *ձ. Անհամաձայնություն արտահայտող բացականչություն:*

ՀՅՈՒՆԹ, *գ. Անութ, թևատակ:*

ՀՅՈՒՋՈՒՄ, *գ. Հարձակում:*

ՀՅՈՒՔԸՄ, *գ. Վճիռ:*

ՀՅՈՒՔԸՄ ԱՆԵԼ, *Իշխել:*

ՀՅՈՒՔԸՄ ԿԸՏՐԵԼ, *Վճիռ արձակել, վճռել:*

ՀՈԼ, *գ.* *Գնդակախաղ։*

ՀՈԼՏՈՒՆ, *գ.* *Հոլ խաղալու վայր։*

ՀՈՆ, *գ.* *Հնձվորներից յուրաքանչյուրի տեղամաս, տարածք, որի չափը որոշում էր հնձվորների ավագը՝ հոնածը։*

ՀՈՆԱԾ, *գ.* *Հնձվորների ավագ, որի հոնը ամենալայնն էր։*

ՀՈՆԱԾ-ԱԽՊԵՐ, *գ.* *Հնձվորների ավագին անմիջապես հաջորդողը։*

ՀՈՆԱԾ-ՊՈՉՐԱՐ, *գ.* *Առավել երիտասարդ և անփորձ հնձվոր, որի հոնը ամենանեղն էր։*

ՀՈՐԹԿԸՆԹՈՂ, *գ.* *Հորթերը կաթից կտրելը։*

ՀՈՒՄԱ, *գ.* *Տիֆ։*

ՀՈՒՄԱՅՈՒՆ, *տե՛ս* **ՀՈՒՄԱ**։

ՀՈՒՆԱՐ, *գ.* *Շնորհք։*

ՀՈՒՇՏ ԷԼՆԵԼ, *Խրտնել, վախենալ։* Ճիչ խարս տուն էկավ թէ չէ, հըմէնին հուշտ արավ, փախցրեց։

ՀՈ՞ՒՍ, *գ.* *Որտեղի՞ց։* Իմ ախպոր խաւմար կընիկ հո՞ւստ ճարեմ։

Հ՚ՈՒՍՏԸԿԵԼ, *Բմ. նբ.* *Հյուսել։*

ՀՈՒՐԻ-ՄԱԼԱՔ, *գ.* *ած.* *Սևաչյա գեղեցկուհի, որ անդրաշխարհյան կյանքում երջանկացնում է հերոսացած մահմեդականին։*

ՀՈՒՐԻԿ, *գ.* *Գութանի չորրորդ լուծը։*

ՀՈՒՐՈՒԾ, *Հթ. գ.* *Այլ, ուրիշ։*

ՀՕ՛-ՀՕ՛, *ձ.* *Կով, տավար քշելու ձայնարկություն։*

ՀՕՅՆԱՐ, *գ.* *Պարի և երգի եղանակ։*

ՀՕ՛Շ՛, *ձ.* *Ձին, էշը առաջ վարելու ձայնարկություն։*

ՀՕՏ, *կճ. գ.* *Խաղողի մատերից էտած ճյուղերը, որոնք օգտագործում են որպես վառելիք։* Խավողի հօտ *(կճ.)։*

ՀՕՏԱՂ, *վն. գ.* *1) Անասուն պահող։ 2) Գութանի լծին նստող։*

ՀՕՔ՝ Կ՝ԱԼ, *Օգնել։*

ՀՕՔՈՒՏ, *Հթ. գ.* *Օգուտ։*

Ձ

ՁԻ, *Լիմ, դ.* *Ինձ։* Ձիյ մէ խաւտ ծի կա *(Լիմ)։*

Ղ

ՂԱԲՈՒԼ, *ած. Ընդունելի։*

ՂԱԴԱ, *գ. Ցավ, նեղություն։*

ՂԱԴԻ, *գ. Դատավոր։*

ՂԱԴԸՐ, *գ. Արժանիք, նշանակություն։*

ՂԱԶ, *գ. Սագ։* Քե գիղի ղազ ենք պիրե, լէզուն գյազ ենք պիրե *(հարսանիքի օրը հարսի մասին սկեսրոջն ուղղված երգից)։*

ՂԱԶԱԼ, *գ. Տերև։*

ՂԱԶԱՆ, *գ. Կաթսա։*

ՂԱԶԱՆՉԻ, *գ. Պղնձագործ։*

ՂԱԹԸՐ, *գ. Ջորի։*

ՂԱԼԱԲԱԼԸՂ, *գ. Աղմուկ, իրարանցում։* Ղալաբալղից հազ չեմ անե։

ՂԱԼԱԹ, *գ. Ջանցանք։* Էլ վոչ մէյ ղալաթ չեմ անի։

ՂԱԼԲ, *ած. Կեղծ։*

ՂԱԼԲԱՂԱՆԳ, *ած. գ. Կեղծաբար, դրամանենգ, խարդախ։*

ՂԱԼՄԱՂԱԼ, *գ. Աղմուկ, ժխոր։*

ՂԱՀՐԱՄԱՆ, *գ. Հերոս։*

ՂԱՂՊԱ, *ած. գ. Պոռնիկ։*

ՂԱՄԱՋ, *ած. Բանսարկու։*

ՂԱՄԻՇ, *գ. Եղեգն։*

ՂԱՄՇԻ, *գ. Մարակ։*

ՂԱՅԹԱՆ, *գ. Երիզ։*

ՂԱՅԻՄ, ՂԱՅԻՄ, *կճ., ած. Ամուր, պինդ։*

ՂԱՅԻՇ, ՂԱՅԻՇ, *կճ. գ. Գոտի։* Ղայիշ կաշվից էր *(կճ.)։*

ՂԱՅՖԱ, *գ. Սուրճ։*

ՂԱՅՖԱԼԹԻՆ, *գ. Սուրճով նախաճաշ։* Մէյ խատ ղայֆալթին անենք։

ՂԱՅՖԱԽԱՆԱ, *գ. Սրճարան։*

ՂԱՅՖԱՋԻ, *գ. Սրճարանատեր։*

ՂԱՆԹԱՐ, *գ. Մեծ կշեռք, որով շուկաներում բարձված սայլ են կշռում։*

ՂԱՆՄԱՋ, *ած. Հիմար, չհասկացող։*

ՂԱՆՋԸՂ, *ած. Լիրբ, անպատկառ։*

ՂԱՇԱՆԳ, *ած. Սիրունատես, վայելչատես։* Շատ ղաշանգ ջահել ի։

ՂԱՉԱԽ, *գ. ած. Ավազակ, անօրեն։*

ՂԱՌԹ, *գ. ած. 1) Տարիքով անասունի դժվարությամբ եփվող միս։ 2) Շատ հնացած հաց։*

ՂԱՍԱԲ, *գ. Մսագործ։*

ՂԱՎ, *գ. Աբեթ։*

ՂԱՎԱԼ, *գ. Սրինգ։*

ՂԱՎՈՒՐՄԱ, *կճ. գ. Իր հյութի և յուղի մեջ տապակած միս, որ կճուճների մեջ պահում են որպես ձմռան պաշար։* Ծըմըռվա խամար ղավուրմա կանեն *(կճ.)։*

ՂԱՐԱՉԻ, *ած. Անզգամ, բոռբոռացող։*

ՂԱՒԻԲ, *գ. ած. Պանդուխտ։*

ՂԱՓԱՂ, *գ. Կափարիչ։* Ղափաղ իտիր վէր պուտկին *(Վն.)*։

ՂԵՎԱՆԴ, *գ. Թեքութեյան վրա արհեստականորեն ստեղծված հարթութեյուններ՝ ցանք կատարելու և ծառեր տնկելու համար։*

ՂԷՅՐԱԹ, *գ. Կորով։*

ՂԷՅՐԱԹԼԻ, *ած. Առույգ, ուժեղ։*

ՂԷՅՐԱԹՈՎ, *Նույնն է՝ ՂԷՅՐԱԹԼԻ։*

ՂԷՋԱՂ, *ած. Եռանկյունի։*

* Ղէջաղ իրիշկալ, *Խեթ նայել։*

ՂԸԺԲԸԺԱԼ, *չբ. Վխտալ։*

ՂԸԺՎԸԺԱԼ, *չբ. Խառնակ ձայներ հանել։*

ՂԸԺՎԸԺՈՑ, *գ. Ժխոր, աղմուկ։*

ՂԸԼԹՂԸԼԹԱԼ, *չբ. Կերակուրը եփվելիս, խմորը թթվելիս ձայն արձակել։*

ՂԸՄԸՇԵԼ, *չբ. Խնայել, ափսոսալ։*

ՂԸՇԼԱ, *գ. 1) Բառացի՝ ձմեռանոց։ 2) Ջորանոց։*

ՂԸՌՃԻԿ, *կճ. գ. Կռճիկ։* Ճիժ ղըռճիկ կուտի *(Կճ.)*։

ՂԸՍՄԱԹ, *գ. Բախտ։*

ՂԸՍՐԱԽ, *գ. Ջամբիկ։*

ՂԸՐԱՂ, *մկ. Մի կողմ։* Խօր մօր կըռվի կ'ելնէ տըղէն ղըրաղ կայնեց։

ՂԸՐՈՒՇ, *գ. Դրամի միավոր։*

ՂՈՒԼԱՄ, *գ. 1) Ծառա։ 2) Զինվոր։*

ՂՈՒՄԱՐ, *գ. Բախտախաղ։*

ՂՈՒՄԱՐԲԱԶ, *գ. ած. Բախտախաղով տարված խաղամոլ։*

ՂՈՒՇ[1], *գ. Թռչուն։*

ՂՈՒՇ[2], *գ. Աղեղնափայտ։*

ՂՈՒՇԹՈՒՅԻ, *գ. Աղվամազ, փետուր։*

ՂՈՒՌՈՒՄՍԱՂ, *ած. Անբան, ապիկար։*

ՂՕԼԱՅ, *ած. Հեշտ, դյուրին։*

ՂՕՆԱՂ, *գ. Հյուր։* Ղօնաղը ղօնաղից հաւզ չանե, տանտէրն էլ՝ էրկըսեն։

ՂՕՉ, *գ. Խոյ։*

Ճ

ՃԱԹ, *գ. Ցնցոտի։*

ՃԱԹԼԵԽ, *գ. Քուրջ, գզգզված հնամաշ շոր։*

ՃԱԹՈՑ, *ած. Ցնցոտիներ հագած։* Ճաթոտ խալըվներով էրթաւմ կայնեմ թակավորու տուռ։

ՃԱԹՌՈՑ, *ած. Քնձռոտ, արհամարհելի։*

ՃԱԹ-ՃՈՒԹ, *գ. Ցնցոտիներ, հինումին շորեր։*

ՃԱԼԱԽ, *գ. Քրդերի՝ թաշկինակին փոխարինող շապիկի*

երկարած թևը, որը ծալում, խցկում էին թևքի մեջ։

ՃԱԼԱՔ-ԲԱԼԱՔ, *ած. Խայտաբղետ։*

ՃԱԽ, *գ. Ջիթաճրագի տակի կավե պնակը։*

ՃԱԽԱՊԷՐԱՆ, *ած. 1) Լայն ու ծուռ բերան ունեցող։ 2) Վատաբանող, հերյուրող։*

ՃԱԽԵԼ, *նբ. չբ. Բերանը ծռել։*

ՃԱԽՐԱԿ, ՃԱԽՐԱՅ, *վն. գ. Ճախարակ։* Ճախրակով թել կըմանեն *(Վն.)։* Ճախրայ մանող *(Վն.)։*

ՃԱԽՐԱՄԱՆԻԿ, *գ. Մի տեսակ փոքրիկ թռչուն։*

ՃԱԿ, *գ. Ջենք։*

ՃԱԿԸՏՆՈՑ, *գ. Ջարդոսկիներով զարդարված կանացի ասեղնագործ կամ ոսկեթել գլխակապ։*

ՃԱՂԱՑ, *գ. Ջրաղաց։ Ծան. – Ջրաղացի մասերն էին՝* ճըրտուն, ալըրտուն, վագ, տըժոխքի տո՛ւռ։ Ճո՛ւրն իկ՛ե ճաղա՛ցն ի տարե, տո՛ւ ինգ՛եր ես չախչախ կըփընտռես։ Ճաղա՛ց առանց ճըրի աղուն չի աղա։

* Ճաղչի թօզ, *Լիմ, Ջրաղացի շուրջբոլորը նստած ալյուրի փոշի։*

* Ճաղչի կըլօճ, *Վն. Բաղարջ։* Կըլոճ//կըրկէնին առանց խորըսի կիփեն *(Վն.)։ Ծան. – Այս խմորեղենը թխում էին ջրաղացում, առանց թթխմորի և աղի՝ ջրաղացի թոնրի մեջ։*

* Ճաղչի ուղում, *Լիմ, Փայտյա հարմարանք, որի միջով ջուրը, սրընթաց վայր հոսելով, պտտեցնում է ջրաղացի անիվը։*

* Ճաղչի քա՛ր կըռանել, *Ջրաղացքարն ատաՃնավորել։*

ՃԱՄԱՍՈՒԽ, *գ. Սայլի մաս։*

ՃԱՄԲԱ՛Խ *(նաև՝ Կճ.),* **ՃԱ՛ՄԲԱ՛Խ**, *Վն. Հթ. Բմ. գ. Ճանապարհ։* Ճա՛մբա՛խ մօշի մէչօվ կէրթէր *(Վն.)։* Ճամբա՛խ մեր գ՛եղի միչօվ կէ(ր)թա՛ *(Կճ.)։* Էտա ճա՛մբըխօվ կընա՛ցիր ի մեր տուն *(Հթ.)։*

ՃԱ՛ՄԲԱՐԱ՛Կ, *Վն. գ. Լծափայտը կապելու կաշվե թոկ։*

ՃԱ՛ՄԲԻԽԵԼ, *նբ. Ուղարկել։*

ՃԱ՛ՄԽԵԼ, *նբ. Ճանապարհ դնել, ուղևորել։*

ՃԱՄՊԱՐԱԿ, *գ. Լծափայտը կապելու կաշվե ամուր թոկ։*

ՃԱՅՏԻ, *գ. Ճակատի։*

ՃԱՆ, *գ. 1) Վեգ։* Էրեխէք՝ ճան կըխաղին *(Վն.)։ 2) Բարձիկով ասեղնագործության կախովի մաքոք։*

* Ճանը ճուկ ի, *Գործը հաջող է։*

ՃԱՆԳ, *Բմ.,* **ՃԱՆԳ**^{ը}, *Հթ. գ. Բուռ։*

ՃԱՆԳԸՌԻԿ^{ը}, *Հթ. գ. Փոցխ։*

ՃԱՆԿԸՌԹԱՆ, *ած. Ճանկռող։* Մեր կատուն ճանկըռթան ի։

ՃԱՆԿԸՌԹԵԼ, նբ. Ճանկռել, եղունգներով վնաս հասցնել:

ՃԱՆՇՆԱԼ, Լիմ, նբ. Ճանաչել:

ՃԱՆՑՎՈՐ, գ. ած. Ճանաչ, ծանոթ մարդ:

ՃԱՇ, գ. Ալյուրից, երբեմն էլ աղացած կորկոտից (և ոչ ձավարից) ջրով կամ բաց արած ըռբով (դոշաբով) պատրաստված ճաշ (ռուսական՝ կաշա), որ վրան յուղ, իսկ պաս օրերին՝ ձեթ լցնելով ուտում էին: Ծան. – Վանում տարածված ճաշերն էին՝ մածնէ թան, չորթընէ թան, թանխյուս, քյալագյոշ, վոոշ, վոսպնէսպաս, մսով ճաշ՝ վրան բրդած սիրկիվիլ, խընծӧր կամ փӓթӓթէգ, սամիր, խարիսա, փӓչӓ, ծӧնկ (միայն տառեխ), ծվածեղ, պըրընձէ փըլավ, ծӓվրի փըլավ՝ ձիթով կամ յուղով, չամչով կամ ամբրաբով պըրընձի փլավ, ափրոչ, տօլմա, մըխլա, բոռանի կանաչ ֆասուլիայի, դըդմի, կանաչ պատըրնջանի, կյալյա, չըխըրթմա, քյանբաբ, յախնի, քյուլբոստի, կաբուսկա, ինչպես նաև պարչայիս ոսպ, գյըլոլ պӓյլӓ, ֆասուլիա (միայն խոշոր, սպիտակ, ուրիշ գույնի և մանր տեսակներ Վանում չկային):

ՃԱՇՈՑ, գ. Ճաշի ժամ, կեսօր:

ՃԱՇՔ, գ. Արտը կամ պարտեզը ջրելու ժամանակահատված: Ծան. – Յուրաքանչյուր քյահրեզի ջուր բաժանվում էր 120 ճաշքի. մեկ ճաշքը ճաշքատիրոջն իրավունք էր տալիս մայիս, հունիս, հուլիս ամիսներին ամիսը երկու անգամ երեք ժամով այգին ջրել: Ճաշքը պարսկերեն թասի-միս-ի թարգմանությունն է: Ժամացույցի չգոյության պայմաններում նուրբ անցք ունեցող պղնձե թաս էր դրվում դեպի արտը կամ այգին հոսող ջրի վրա: Ժամանակի ընթացքում այդ նուրբ անցքից ջուրը կամաց-կամաց լցվում էր թասի մեջ և խորասուզում այն: Դա տեղի էր ունենում ժամանակի մեկ միավորի՝ երեք ժամվա ընթացքում: Ճաշք ջուր ունենալ նշանակում էր 15 օրը մեկ տվյալ քյահրեզի ջուրը այգու վրա կապելու իրավունք ստանալ:

ՃԱՇՔԱՏԵՐ, գ. Այս կամ այն քյահրեզի ճաշք ունեցող, աղբյուրի ջրի փայատեր:

ՃԱՊԱԼԵՂ, ած. մկ. Երեսնիվայր գետին փռված:

ՃԱՊԱՂ, Լիմ, ած. Կճատ քիթ:

ՃԱՊՂԵԼ, չբ. Ճապաղել:

ՃԱՊԸՂՎԵԼ, չբ. Տարածվել, ցրվել (հեղուկը): Կերակուրը թափվեց, ճապըղվեց սեղանին:

ՃԱՎ', գ. Խցանի կապ:

* Ճավերը պարզել, փխբ. Իրավունքներ բանեցնել:

ՃԱՎ^{2}, *գ. Ճակնդեղի տերև:*

ՃԱՎԵՐ, *տե՛ս* **ՃԱՎ**^{2}*:*

ՃԱՎԻԿ, *Բմ. տե՛ս* **ՃԱՎ**^{2}: Բ'ա̈զուկի ճավիկ թըլթո̈ւ տըրինք *(Բմ.):*

ՃԱՐԵԼ, *նբ. Դժվարությամբ ձեռք բերել:*

ՃԱՐ-ՃԱ̈ՄԲԱ̈Խ, *գ. Միջոց, ելք:* Ճար-ճա̈մբա̈խ չըմընա̈ց, վոր չըխարցուցի:

ՃԱՐ-ՃԱՐԱՆՔ, *գ. Հնարավորություն:*

ՃԱՐՄԱՐ, *գ. Կալի գործիք, ջարջառ:*

ՃԱ̈ՐՏԵԼ, *նբ. Ջարդել:* Փէտ ճա̈րտեց:

ՃԱՐՈՒԿ^{1}, *գ. Գոտի:*

ՃԱՐՈՒԿ^{2}, *ած. Գտնված:*

ՃԵՂ, *Բմ. գ. 1) Կոճիկ: 2) գ. Ձիղ: 3) ած. Ձլուտ, ամուր:* Ճեղ փետ, միս, հաց:

ՃԵՂ-ԾԱՄՈՆ, *1) գ. Ձփսորվող ծամոն: 2) փխբ. ած. գ. Ուրիշի օձիքին կպչող մարդ:* Ճեղ-ծամոն տա̈րցավ ու կըպավ իմ յախէն:

ՃԵՂՎԵՐ, *գ. Ազդր:*

ՃԵՂՔՈՒԿ, *նբ. ած. Ճեղքված:*

ՃԵՆՃ, *գ. Ճարպ:*

ՃԵՆՃԵ, *ած. Ճարպյա:* Ճենճե մոմ:

ՃԵՆՃՈՏ, *ած. 1) Ճենճով կեղտոտված: 2) փխբ. Ողորմելի, թշվառական:*

ՃԵՆՃՈՏՎԵԼ, *չբ. կբ. Ճարպոտվել, կեղտոտվել:*

ՃԵՆՃՈՒԿ, *գ. ած. Վաղահաս տանձի տեսակ:*

ՃԵՆՃԸՌԹԱՆ, *ած. Տաք:* Ճենճըռթան արև:

ՃԵՏ, *գ. Վառեկ:*

ՃԷԼԱՏ-ՓՈԼԱՏ, *ած. Կիսատված, պակասեցված:* Ամանը ճէլատ-պոլատ ի:

ՃԷՆՋ, *Վն.,* **ՃԵՆՋ**, *Լիմ, տե՛ս* **ՃԵՆՃ**: Իծու ճէնջօվ մըրսածի մէչկ կըտըրորեն *(Վն.):* Էծու ճենջ կանեն սապոն *(Լիմ):*

ՃԷՐ, *գ. ած. Պարզկա, անամպ օր:*

ՓԱԳՅԱՂ, *հթ. գ. 1) Գոմ: 2) Ախոռ:*

ՓԱԹ, *մկ. Անգամ:* Մէյ փաթ: Սըխաթիդ զընջիլը քանի՞ փաթ ի: *Ծան. – Կանանց ժամացույցի շղթան պետք է մի քանի փաթ լիներ:*

ՓԱԹԱ, *գ. Ոչ-ոքի, խաղի մեջ հավասար լինելը:*

ՓԱԹԱԹԷՋ, *գ. Կարտոֆիլ:* Օղորմի փաթաթէզ պիրոզի խօր խոկուն:

ՓԱԹԹՈՑ, *գ. Մահմեդականի գլխի կապ:*

ՓԱԹԻՇԱՀ, *գ. Թուրքական սուլթան, թագավոր: Ծան. – 1453 թվականին Պոլիսը գրաված սուլթան Մեհմեդն արժանացել է փաթի «նվաճող» կոչմանը: Այդ փաթիից էլ առաջացել է փաթիշահ տիտղոսը:*

ՓԱԹԻՍԿԱ, *գ. Սպիտակ նուրբ կտավ:*

ՓԱԹՈԹ, *գ. Փաթույթ:*

ՓԱԹՈՒԹԵԼ, *հթ.*, **ՓԱԹՈՒԹԵԼ**, *լիմ, նբ. Փաթաթել:*

Ափրաղ *(=տոլմա)* փաթուԹենք *(հթ.):* Կիհուտեր խավողի թըփօվ տօլմա փաթուԹիցին *(վն.):*

ՓԱԹՎՈՌՈՍ ԷԼՆԵԼ, *Շատ քծնել, ստորաքարշություն անել:*

ՓԱԹՈՒԹՎԵԼ, *չբ. 1) Իրար փաթաթվել:* Խավողի պարունակը փաթուԹվիլ է վէր ծիրնի ծառին: *2) փխբ. Քծնել:*

ՓԱԼԱԲԵՂ, *ած. Խիտ և երկար բեղ ունեցող:*

ՓԱԼԱԽՕՏ, *գ. Մարգագետնի փափուկ խոտ:*

ՓԱԼԱՆ, *գ. Համետ:* Պառավ իշուն թաքա փալա՞ն:

ՓԱԼԱՆՎԵԼ, *չբ. Շատ շոր հագնել:* Ծըմեռ վոր էկավ, ես կըփալանվեմ:

ՓԱԼԱՍ, *գ. 1) Քուրջ, ցնցոտի: 2) Լիմ, Կարպետ:* Փալաս կըթալեն քուրսու վըրէն *(Լիմ):*

ՓԱԼԹՈ, *գ. Եվրոպական վերարկու, սաքո:*

ՓԱԼԿԸՏԱԼ, *չբ. Թավալվել փոշու կամ կանաչ խոտի մեջ:*

ՓԱԼՅՈՒԼԵԼ, *նբ. Շաղախել:*

ՓԱԼ ՏԱԼ *(նաև՝ հթ.), Թիկնել, փռվել:* Իրիկու փալ տըվե պարցին, նըստե *(հթ.):*

ՓԱԽԱՎԱՆՆԳ, *ած. Շաղակրատ, դատարկապորտ:*

ՓԱԽԸՐ, *գ. 1) Բառացի՝ ժանի: 2) Պղնձեղեն:*

ՓԱԽԸՐՋԻ, գ. *Պղնձագործ։*

ՓԱԽԸՐՓԱՐԱ, գ. *Պղնձագրամ։*

ՓԱ՞ԽՍ *ի, Հրաժարվո՞ւմ է։* Կըրըրան իր կօտից փա՞խս ի։

ՓԱԽՈՒԿ, *ած. 1) Պատժից ազատված, փախած։ 2) Փախցրած, գողացված։ 3) Թեթևակի խենթ, խև։* Փախուկի մէյն ի։

ՓԱՀՐԷՋ, գ. *Թուրքի ծոմապահութիւն։*

ՓԱՄՓԱԼ, գ. *Բահի կոթն ամրացնելու փոքրիկ սեպ։*

ՓԱՄՓՈՒՍԻԿ, *ած. Քնքուշ։*

ՓԱՅ, գ. *Մաս, բաժին։* Իմ փայը տըվեաք։

ՓԱՅԱԽ, *Բմ.*, **ՓԱՅԱԽ**, *Լիմ*, գ. *Փարախ։*

ՓԱՅԴԱ ԱՆԵԼ, *Հնարել, ի հայտ բերել։*

ՓԱՅԴՕՍՏ, գ. *Աշխատանքի ավարտ։*

ՓԱՅԷՆ, գ. *Էշի, ձիու, ջորու թրիք, որ չորացնում և ախոռում փռում են անասունների տակ։*

ՓԱՅԼԱՄԻՇ ԱՆԵԼ, *Հասանելի չափով բաժանել։*

ՓԱՅԼԵՎԱՆ, գ. *Լարախաղաց։*

ՓԱՅԽԻ ԽԱՐՋ, *նախ. Ախոռի արժանի, անասուն։*

ՓԱՅՆԱՔՕՇ, գ. *Ձեթով պատրաստված պաստուց բաղարջ։*

ՓԱՅԼՎԵԼ, *կբ. Փակվել։* Փայվանք՝, մընաւցինք՝։

ՓԱՅՏԱՓՕՐԻԿ[8], *Հթ.գ. Փայտփորիկ։*

ՓԱՆԹԱԼՕՆ, գ. *Տաբատ, նեղ շալվար։* Հեքիաթի հերոսը ամըր կանի *(կհրամայի)*, պիրել կուտա քաոսուն ծեռք՝ լաճու խաւլաւ, սաթրա *(սաթրազարդ)* փանթալօն, քաոսուն խատ շըմշիր *(լայնաբերան)* թուր, քաոսուն խատ պողպըտի կալխուն *(վահան)*, քաոսուն կամա *(դաշույն)*, քաոսուն ջուխտ նալչալ-ջըզմա *(պայտավոր երկարաճիտ կոշիկ)։*

ՓԱՇ *(նաև՝ Լիմ), Հաստ պարան, որ բարձած ցորենը մանեժով ամրացնում է սայլի վրա։* Սէլի փաշ *(Լիմ)։*

ՓԱՇԱ, գ. *Գեներալի աստիճանին հավասար զինվորական աստիճան։*

ՓԱՇԱՓՈՐԹ, գ. *Անձնագիր։ Ծան. – Անձնագիր հանում էին միայն երկրից դուրս մեկնելիս։*

ՓԱՉԱ *(նաև՝ Լիմ)*, **ՓԱՉԱ**, *Հթ. գ. Խաշ։* Քէռմամայի տուն փաչա կէրանք՝ *(Հթ.)։* Տավրի փաչա կուտե՞ս *(Վն.)։*

ՓԱՉԱՓԸՌԱ, գ. *Ձնջոց, սրբիչ։*

ՓԱՌԱ-ՓԱՌՉԱ, *ած. Կտոր-կտոր, պատառ-պատառ։*

ՓԱՌԽԱՋ, գ. *Պղնձե դույլ։*

ՓԱՌՓԱՌ *(նաև՝ Հթ. կճ. Լիմ),*

գ. Դանդուռ։ Փառփառի թըթու *(Կճ.)*։ Փառփառի թուրշի, պըռվածկ *(Վն.)*։

* Փառփըռան սերմ, *1) Արագ աճող գերդաստան։ 2) Ամեն տարի ծննդաբերող, զույգ բերող կին։*

ՓԱՌՓԱՐ, *գ. Բարբառ։*

ՓԱՌՉ, *գ. Սափոր։* Արաճըդ կավին փառչըմ ճո՛ւր էլ խէրիք ի *(ծաղրական արտահայտություն մեկի շինարարական աշխատանքի նկատմամբ)*։

ՓԱՌՉԱ, *գ. Կտոր, պատառիկ։*

ՓԱՌՉԱԼԱՄԻՇ ԱՆԵԼ, *Կտրատել, մասնատել։*

ՓԱՍԲԱՆԴԱ, *ած. 1) Հնացած, ժանգոտված։ 2) Տգեղ (աղջիկ)։*

* Էդ փասբանդին խառջիցի՞ր, *Տգեղ աղջիկդ ամուսնացրի՞ր։*

ՓԱՍԼԱՄԻՇ ԷԼՆԵԼ, *Ժանգոտել։*

ՓԱՍԽ, *գ. Ժանգ։*

ՓԱՍԽՈՏ, *ած. Ժանգոտ։*

ՓԱՍՈՏԵԼ, *չբ. Ժանգոտել։*

ՓԱՐԱ, *գ. Դրամ։*

ՓԱՐԱ ԱՆԵԼ, *Օգտակար լինել, օգուտ տալ։*

ՓԱՐԱՏԵԼ, *նբ. 1) Վանել, ցրել, հեռացնել։ 2) Ծննդկանի վրա երկրորդ օրը քահանայի կողմից «Փարատեա՛ զցավս» կարդալ։* Խաա՛, տէրտէրն ինկե՛, փարատեր ի։

ՓԱՐԱՏԻԿ, *գ. Թոնրի կողերը մաքրելու շոր։ Ծան. – Հինուվին շորեր ամուր կապում էին ձողի ծայրին և թոնրի կողերը մաքրում էին ածուխ դարձած հացի մնացորդներից, որից հետո զարկում լավաշը։*

ՓԱՐԳՅԱԼ, *գ. Կարկին։*

ՓԱՐԴԱԽՏ, *գ. 1) Հղկում։ 2) Երկրորդ անգամ ածիլելը։*

ՓԱՐԴԻՍԱԲԱԽ, *գ. Նարգիզ։*

ՓԱՐԴԻՍՕ, *գ. Եվրոպական ոճի ամառային վերարկու։*

ՓԱՐԻՇԱՆ, *ած. Թշվառ, խեղճ։*

ՓԱՐՉ, *կճ.,* **ՓԱ՛ՐՉ,** *Լիմ, գ. Ջուր խմելու աման։*

ՓԱՐՎԱՋ, *գ. Շրջանակ։*

ՓԱՐՓԱՌ, *տե՛ս* **ՓԱՌՓԱՌ։**

ՓԱՓԱՋ, *գ. Տերտեր, քահանա։*

ՓԱՓԱԽ, *Վն. գ. Մորթե գլխարկ։ Ծան. – Վանում թաղիքե գլխարկին ասել են քլօղզ, իսկ մորթե գլխարկին՝ փափախ (Վն.)։*

ՓԱՓՈՒՋ, *գ. Հողաթափ, մուճակ։*

ՓԱՖՕՌ, *գ. Շոգենավ։*

ՓԵՄ, *գ. Բեմ։*

ՓԵՆՋԱՐԱ, *գ. Պատուհան։* Առնակային մարթասպան ազա՛տվեց, փենջարից իրիշկողը կազայի *(փորձանք)* մէչ ինգա՛վ։

ՓԵՌ, *գ. Լորձ։*

ՓԵՌԿԵ ՄԱՂ, *Մանր ծակոտկեն մաղ։*

ՓԵՌՈՏ, *ած. Լորձունքոտ։*

ՓԵՐԹ, *գ. Կեղծ ոսկի։*

ՓԷԼՔԸՏԱԼ, *չբ. Փայլփլել։* Մատընիք արէվու տակ կըփէլքըստա *(Կճ.)։*

ՓԷԼՔԸՏԱԼ, *չբ. Փայլել, պապղալ։*

ՓԷԿՈՒԱՏ, *ած. Անատամ։*

ՓԷՂԱՄ, *Հթ. գ. Եգիպտացորեն։*

ՓԷՂԱՎԱՆԳ, *ած. Շաղակրատ, դատարկապորտ։* Փէղավանգին մէյն ի, ինոր խոսքին վո՛վ կըխավատա։

ՓԷՅԴԱ ԱՆԵԼ, *Հնարել, լույս աշխարհ հանել։*

ՓԷՅԴԱ ԷԼՆԵԼ, *Հայտնվել, երևան գալ։* Կասին, օր մէյ խատ թազա թակավոր ի փէյդա էլել։

ՓԷՅՂԱՄԲԱՐ, *գ. Մարգարե։ Ծան. – Քրիստոնեական մարգարեների անունը տալիս ասում էին* մարքարէ, *իսկ Մահմեդ մարգարեին չկամութիյամբ ասում էին* փէյղամբար։ *Մահմեդին երբեք մարգարե չէին անվանում։* Ինոնց փէյղամբարն ասել ի։

ՓԷՆԴԻՐ, *1) գ. Պանիր։ 2) ած. փխբ. Փխրուն։ Ծան. – Վանի բարբառում կար միայն* պանիր *բառը, իսկ շատ փխրուն կոնֆետի տեսակին ասում էին* փենդիր շաքար։

ՓԷՇ, *Վն. գ. Քղանցք։* Փէշ կառնէր կ՚ետին *(Վն.)։*

ՓԷՏԱՏ, *Հթ. Կճ. գ. Քլունգ։* Փէտատօվ խող կըփորենք *(Կճ.)։*

ՓԷՏՌԱԾ, *Վն. ած. Անպոչ։* Փէտռած խավ կուրուսիր էր *(Վն.)։*

ՓԷՏՓՕՐԻԿ[8], *Լիմ, գ. Փայտիփորիկ։*

ՓԸՋԼԻՆՔ[8], *գ. Լորձ։* Փըզլինք՝ կըթափի ճըժու պէրնից *(Կճ.)։*

ՓԸԹԻՐ *գ. 1) Վն. Ջվաձև կարտած, պատի վրա չորացվող անասնաղբ։ 2) Կճ. Լիմ, Ախթար։* Փըթիրօվ թունիր վառենք՝։

ՓԸԼԸՍԱԼ, *Հթ. չբ. Սայթաքել։*

ՓԸԽԸԽԵԼ, *Լիմ, չբ. Երեսը կարմրել (մանավանդ հիվանդագին ջերմությունից)։*

ՓԸԼՈՒՇ, *Բմ. գ. Ճմլած խաղողի մնացորդ, որից օղի են քաշում։*

ՓԸԼՓԸԼԱԼ, *չբ. Փայլել։*

ՓԸԼՓԸՍԱԼ, *չբ. Շլացուցիչ փայլել։*

ՓԸԼՕԼ, *գ. Դդումով բորանի։ Ծան. – Վանում դդումից մուրաբա չեն եփել։ Վանի դդումը համեղ չի եղել։ Դդումը աղքատի կերակուր է եղել կամ անասնակեր (Վն.)։*

ՓԸԽՐԵԼ, *նբ. 1) Փխրուն դարձնել։ 2) Մեկին համոզել, փափկացնել։*

ՓԸՂՁԿԵԼ, *չբ. Սիրտը խառնել։*

ՓԸՄՓՅՈՒՍ, *ած. Քնքուշ, փափուկ։*

ՓԸՆԹՈՐ, *ած. 1) Սուտ, կեղծ։*

2) Խառնակ, խառնափնթոր։

ՓԸՆՉԵԼ, *չբ. Անկանոն շնչել։*

ՓԸՆՉՓԸՆՉԱԼ, *չբ. Շարունակ մեղմ փնչալ։*

ՓԸՆՏՐՏՏԵԼ, *չբ. Որոնումներ կատարել։*

ՓԸՇԱՄՂԵԼ, *չբ. Սոսկալ, սարսափահար լինել, սարսռել։*

ՓԸՇԸՐԿԵԼ, *նբ. Մարգակի՝ տանիքի գերանների վրա շարվող ուռենու ճյուղերի վրա փռված եղեգները ցեխով ծածկել։*

ՓԸՇԻ՛-ՓԸՇԻ՛, *ձ. Կատու կանչելու ձայնարկություն։*

ՓԸՇՄԸՏԵԼ, *չբ. Փշաքաղվել։*

ՓԸ՛ՇՏ, *ձ. Կատու քշելու ձայնարկություն։*

ՓԸՇՏԱ՛, *ձ. Կատու քշելու ձայնարկություն։*

ՓԸՇՏԵԼ *(նաև՝ Հթ.)*, *նբ. Նախատել, կարգի հրավիրել։*

ՓԸՇՐՈՒԿ, *1) գ. Հասարակ կերակրատեսակ։ 2) նբ. ած. Ջարդված, փշրված։*

ՓԸՇՈՒՄ, *ած. մկ. Քիչ։* Փըշում մընաց, որ խասնենք տեղ *(Կճ.)*։

ՓԸՇՈՒՐՄ, *վն. ած. Մի քիչ։* Փըշուրըմ պանիր տոաու *(Վն.)*։

ՓԸՇՕ, *գ. մնկ. Կատու։*

ՓԸՇՕ՛-ՓԸՇՕ՛, *ձ. Կատու կանչելու ձայնարկություն։*

ՓԸՉԵԼ, *վն. չբ. Նվագել։* Ջուռնա կըփըչէր *(Վն.)*։

ՓԸՌԸՑՆՔՏԱԼ, *չբ. Փռշտալ։*

ՓԸՌԸՆԳՏԱԼ, *տե՛ս* **ՓԸՌԸՑՆՔՏԱԼ**։

ՓԸՌԹԱԼ, *չբ. Բռնկվել։*

ՓԸՌԹՆԵԼ, *չբ. 1) Պոկվել։ 2) Ազատվել։ 3) Ճողոպրել։ 4) Հորդել։*

ՓԸՌՈԽՔ^{3}, *գ. Ոխ։* Կաձար ինոր վէրէն փըռոխք՝ ունէր *(Վն.)*։

ՓԸՌՔԵՐ, *գ. Ծոպեր։*

ՓԸՌՔՎԵԼ, *չբ. Երեսնիվայր փռվել։*

ՓԸՌՔՎԸՑՈՒՑԵԼ, *նբ. Գետին տապալել։* Կաձողին մէյ զանելով կետին կըփըռքվըցուցի։

ՓԸՌՕԴ, *գ. ած. Բողոքական։*

ՓԸՌՕԴԱՐԱՆ, *գ. Բողոքականների շրջանակ, որ գտնվում էր Ավօյի տաճարի (բլրի) մոտ՝ շուրջ կես կիլոմետր տարածքով։*

ՓԸՍԱԿ, *գ. Պսակ։*

ՓԸՍԱՅՎԵԼ, **ՓՍԱՅՎԵԼ**, *վն. չբ. Ամուսնանալ։* Միրզոյենց տըղէն փըսայվէ, խօրօ(տ) խարսըմ ի պիրե ուրենց//ուրանց տուն *(Վն.)*։

ՓԸՍԻԿ, *գ. 1) Շատ փխրուն խնձորի տեսակ։ 2) Կատվի ձագ։*

ՓԸՍՈՐՎԵԼ, *չբ. Կտրվել, փչանալ։* Ծամոնը պէրնիս մէչ փսորվեց։

ՓԸ՛Ս-ՓԸ՛Ս, *ձ. Կատու կանչելու ձայնարկություն։*

ՓԸՍՏԱԼ, *կճ. չբ. Սայթաքել։*

ՓԸՏԸՌՏԵԼ, *Բմ. նբ. Որոնել։*

ՓԸՏՈՒԿ, *չբ. ած. Փտած։* Կէրանը փըտուկ ի։

ՓԸՐՉ *գ. Ճակնդեղի տերև։* Պաձկի փըրչ տապկին, կէրան *(Կճ.)*։

ՓԸՐՓԸՇԵԼ, *չբ. Կակղել։*

ՓԸՐՓՈՒՌ, *Լիմ, գ. Լորձ։* Ծիյան պէրնից փըրփուռ կըթաւփի *(Լիմ)*։

ՓԸՐՓՕՇ, *գ. ած. Կակուղ հող։*

ՓԸՑԸԽՆԵԼ, *չբ. Հյուսվածքը, գործվածքը մաշվելուց քանդվել։*

ՓԸՖԻԿ, *գ. Հասարակ կերակրատեսակ։ Ծան. – Նոր շինված խեցեղեն ամանը ջնարակում էին նաև մեջը* փըֆիկ *եփելով։*

ՓԻՆՉ, *Վն. գ. Սեպ։*

ՓԻՍ, *Վն. ած. Անմաքուր, պիղծ։*

ՓԻՏԵԼ, *Բմ. նբ. Փետրել։*

ՓԻՏՈՒՐ, ՓԻՏՈՒՌ, *Հթ. գ. Փետուր։* Կըռկէ փիտուրներ սեվ կէլնի(ն) *(Վն.)*։

ՓԻՏՐԱԹԱՓ, *գ. Փետուրները թափվելը։* Խավեր բիթոն փիտրաթաւփ էլան։

ՓՈԼԱՆԴ, *գ. Ադամանդ։*

ՓՈԽԻՆԴ, *գ. Խորիզ։* Կաւտի մէչ փոխինդ տուիր *(Կճ.)*։

ՓՈԽՆԱԿ, *գ. Առաջին կնոջ մահվանից հետո նրան փոխարինող երկրորդ կին։*

ՓՈԽՍՐԱՐ, *գ. Մանված բամբակը փոխող անձ։ Ծան. – Ջուլհակների համար բամբակ իրենց տներում մանում էին աղքատ որբևայրի կանայք։ Մանողներին կշռելով բամբակ հանձնողը և կշռելով ստացողը կոչվում էր* փոխսրար։

ՓՈՂ, *գ. 1) Դրամ։ 2) Դուդուկ, սրինգ։* Չօբան ուր փող կըփըչէր *(Վն.)*։ Փող փըչող Կարոն ժամու տըրան նըստած ի օրնիփուն։

ՓՈՂՔՅԱԴԱՐ, *գ. Կանացի գլխանոց, ծածկոց։*

ՓՈՆԹ *(նաև՝ Լիմ)*, *գ. Փոթ, անհարթություն նոր կարված զգեստի վրա։*

ՓՈՇԻ, *Վն. գ. Ալյուրի փոշի։ Ծան. –* Փոշի *իմաստի համար գործածում էին* թօզ։

ՓՈՐՑՎՈՐ, *ած. Հզի։*

ՓՈՐ-ՓԸՍՈՐ, *գ. Որովայն։*

ՓՈՒՋ *(նաև՝ Հթ.)*, *գ. Փուքս։*

ՓՈՒԹԱԿ, *գ. Քուրա, հալոցք, կաղճին կոչվող հատուկ կավից պատրաստած հալոցք, որով կալ էին անում։*

ՓՈՒԹԿԱ ՍԸՊ Կ՚ԵՎՈՐՔ՚Ց, *Փութկա սուրբ Գևորգ, վանք՝ Եզերով սարի հարավային լանջին, որ ծառայում էր որպես իջևանատուն Մոկաց աշխարհից վան գնացողների համար։ Ծան. – Եզերով*

սարը դժվարանցանելի լեռնանցք ուներ։ Տարբեր ազգերի ուղևորներ իջևանում էին վանքում և սպասում նպաստավոր եղանակի։ Նրանք արթնանում էին Վանքի աքաղաղի կանչից։ Վանքի Փութիկա անունը ժողովուրդը կապում էր պուտուկ բառի հետ։ Ասորերենում փութակ նշանակում է «իջևանատուն, պանդոկ»։ Ըստ ժողովրդական ավանդության՝ պուտուկ-դագաղը և պուտուկանման կավե դագաղում գտնվող սրբի մարմինը ևս լույս էին արձակում։

ՓՈԻԼ, գ. *Նկարադրշմ, մարկա։*

ՓՈ̈Ի, գ. *Գետի, ծովի քանդված եզր։*

ՓՈ̈Ի՛Ն, *հթ. ած. Անհամար, բյուր։*

ՓՈ̈ԻՍՔ^{Ց}Ո̈Ի, գ. *Ծոպ։*

ՓՈՒՂՈՑ, ՓՈՒՂՈ̈Ց, *հթ. կճ. գ. 1) Արտաքնոց։ 2) Աղբանոց։*

ՓՈՒՆՋ, գ. *Ջերմօդի։ Ծան. – Հայ վաճառականները սիրում էին մի քանի տեսակ օդի իրար խառնել-փնջել։ Հավանաբար հայերեն փունջ-ն է Եվրոպայում դարձել պունշ։*

ՓՈՒՇԻ, գ. *Կերպասե ծոպավոր թաշկինակ, որ կապում են գլխին, գլխարկի շուրջը։* Տանը չըկա թանի փոշի, կ'ըլլիսին կապել ի խաս փուշի։ Փերթ ի, քե էլնի, ամա տո՛ւ փուշին թա՛լ։ *Ծան. – Այսպես էր կանչում տուժողը, երբ գողը պոկում էր նրա ճակատի զարդոսկին։*

ՓՈՒՇՏ, *ած. Սրիկա, իգամոլ։*

ՓՈ՛ՒՇՏ, *ձ. Կատու քշելու ձայնարկութիւն։*

ՓՈՒՉԱԽ, գ. *Ջմելի, ձեռքի փոքրիկ դանակ։*

ՓՈՒՉԻԿ, *Վն. գ. Միզապարկ։* Ինոր փուչկի մէչ քա՛ր կա *(Վն.)։*

ՓՈՒՉՔ^{Ց}, գ. *Մաս։*

ՓՈՒՉՔ^{Ց} ԹԱԼԵԼ, *Վիճակ գցել։ Ծան. – Բաժանելիքը նախ բաժանում են հավասար մասերի, ապա վիճակ գցում։*

ՓՈՒՌԹԸԿԵԼ, *Լիմ, նբ. Փետրել։* Կընիկ' խավ փուռթընկեց *(Լիմ)։*

ՓՈՒՌԹԻԿ, գ. *Շան, կատվի մազ։*

ՓՈՒՌԹԸԿԵԼ, *նբ. Շներն ու կատուներն իրար գզելով միմյանց մազահան անել։*

ՓՈՒՌԹՔ ՀԱՆԵԼ, *տե՛ս* **ՓՈՒՌԹԸԿԵԼ**։

ՓՈՒՌՎԱՐ, *հթ. գ. Բուրվառ։*

ՓՈՒՐԹԸԿԵԼ, *Բմ. նբ. Փետրել։*

ՓՈՒՑԵԽ, *կճ. գ. Փայծաղ։*

ՓՈՒՔ, գ. *Ձյունախառն քամի։*

ՓՕՋՄԻՇ ԱՆԵԼ, *Փչացնել։*

ՓՕԹԻԿ, գ. *Եվրոպական ոճի կոշիկ։*

ՓՕԼԻՍ, *գ. Քաղաքային ոստիկան:*

ՓՕԾԵԽ, *Լիմ, գ. Փայծաղ:*

ՓՕԿԷՄԱՂ, *Լիմ, գ. Մեծ անցքերով մաղ:*

ՓՕՂԱՆ, *գ. Փողոց:*

ՓՕՂՈՑ, *Կճ. գ. 1) Աղբանոց:* Խավեր փօղոց քըջեջ կանեն *(Կճ.)*: *2) Զուգարան (Կճ.)*: Ճիժ կընայց փօղոց *(Կճ.)*:

ՓՕՂՊԱՏ, *Լիմ, գ. Օճիք:* Քյօ փօղպատ պայց ի *(Լիմ)*:

ՓՕՂՕՔ, *գ. Բողոք:*

ՓՕՆՏՈՒՌ, *գ. Փողոցի վրա բացվող դուռ:* Փօնտըռան ճռաճ ճըրճընիլ, ավլի՛լ ես:

ՓՕՇԻ *(նաև՝ Հթ. Կճ.)*, *գ. 1) Մոխիր:* Փօշին թօրվընից խանինք *(Կճ.)*: *2) Հթ. Թոնրի մոխիր: 3) Կերակուրը, հատկապես թանապուրը թանձրացնելու ալյուր:*

ՓՕՇԻՆԱ, *գ. Փողոցներից հավաքված նուրբ հողափոշի, որ փռում էին հողե կտուրներին՝ կաթելու դեմն առնելու համար:*

ՓՕՇՄԱՆ ԷԼՆԵԼ, *Զղջալ:* Աչկեըրտ աղեյ խան տըղէյներաց վէրէն, վերջ փօշման կէլնես, փարա չանե *(օգուտ չի ունենա)*:

ՓՕՇՏ, *գ. Փոստ:*

ՓՕՇՏԱԽԱՆԱ, *գ. Փոստատուն:*

ՓՕՌ, *գ. Կանացի հագուստի բոլորածալ:*

ՓՕՍՏ *(նաև՝ Հթ.)*, *գ. Էժանագին մորթի:*

ՓՕՍՏԸ ԽԱՆԵԼ, *Շատ տանջել:*

ՓՕՐԹԱ ՋԱՆԵԼ, *Հպարտ-հպարտ քայլել:*

ՓՕՐԹՈՒԳԱԼ, *գ. Նարինջ:*

ՓՕՐՈՎ, *Հթ.ած. Հղի:* Փօրով կընիկ' *(Հթ.)*:

ՓՕՐ-ՓՕՇՄԱՆ, *մկ. Խորապես զղջացած:* Փօր-փօշման էկավ տուն:

ՓՕՐՓՕՇ, *գ. 1) Չնստած հող, ալյուր: 2) Փքուն խմոր:*

ՓՕՐՓԸՇՆԵԼ, *չբ. 1) Փքվել, ուռչել:* Խըմոր փօրփըշներ ի: *2) Շատ չորանալ:* Փօղանը փօրփըշներ ի, ճըրճընվել կուզի:

ՓՕՐՕԶԱ, *գ. Փիրուզ: Ծան. – Ուրբաթ առվի դաշտում ընկած էր մի մեծ սպիտակ քար, որ ժողովուրդը կոչում էր Փօրօզք'ար:*

ՓՕՑԵԽ, *Հթ. տե՛ս* **ՓՕԾԵԽ**:

ՓՕՔՐՈՒԹ, *մկ. Փոքր հասակից:*

Ք

ՔԱԼ, *ած. Անհաս։* Քալ խընձոր *(Կճ.)։*

ՔԱԼԻԼԷԱ, *գ. Գալիլեա։ Ծան. – Վարագա սարի ամենաբարձր գագաթներից մեկը՝ Երուսաղեմի Գալիլեա գագաթի համաբանութեամբ։ Երիտասարդները գիշերով բարձրանում էին Քալիլէա գագաթը, որպեսզի առավոտյան՝ արևածագին, կարողանան գոնե մեկ ակնթարթով տեսնել Մասիսը և կուշտ լաց լինել։ Դա նրանց հաջողվում էր միայն անամպ օրերին։*

ՔՙԱՄԱՔՙԱՇ, *գ. ած. Քամուց փչացած արմտիք։* Քամաքաշ gորեն։

ՔԱՆՈՆ, *գ. Տավիղի հայկական տեսակ։*

ՔԱՆՑԱՆԱԿ, *գ. Գանձանակ։*

ՔԱՆՔՈՒՐ, *վն. ած. Գանգուր։*

ՔԱՐԱԼԷԽԵԼ, *Բմ. նբ. Քարկոծել։*

ՔԱՐԿԸՃԻԿ, *Բմ. գ. Քարկտիկ։*

ՔԱՇԻ, *գ. Պարսկաստանի Քաշան քաղաքում պատրաստված գեղեցիկ սափոր։*

ՔԱՌՆԻԿ, *գ. Գառնիկ անձնանուն։*

ՔԱՐԿԻՃ, *գ. Կրունկի վրա գոյացող թարախոտ կոշտ վերք։* Քարկիճ ա էլե տոտի տակ *(Կճ.)։*

ՔԱՐՈՒԿ, *վն. գ. Քարկտիկ։* Քարուկ խիյ խատ կըլոր, ծէթ քարօվ կըխաղան *(Վն.)։*

ՔԱՑԱ, *գ. Կաստա, երկաթե դրամարկղ։*

ՔԵ, *Լիմ, դ. Քեզ։* Կուզի քե *(Լիմ)։* Քե(զի) կըթըփեմ *(Լիմ)։*

ՔԵՐՈՑ, *գ. Հացհան, եփված լավաշը թոնրի կողից պոկելու և հանելու գործիք։*

ՔԷՋԱԲ, *գ. Ծծմբաթթու։*

ՔԷՋԱՐ, *գ. Կալի մնացորդ։*

ՔԷՐԻԿ, *գ. Ակիշ։* Տաշտի խըմոր քէրիկօվ քէրեց *(Կճ.)։*

ՔԷԹԸՐ, *ած. Ծուռ, թեք (հատկապես պատ)։*

ՔԷԹԸՐՎԵԼ, *չբ. Ծռվել, թեքվել։*

ՔԷԹՐԱՉԱՆԱ, *ած. Ծնոտը ծուռ։*

ՔԷԹՐԱՊԷՐԱՆ, *ած. 1) Բերանը ծուռ։ 2) Շատախոս։*

ՔԷԹՐԱՎԻՋ, *ած. Վիզը ծուռ։*

ՔԷՅՌԸՍՏԱՆ, *գ. Քեռիների ընտանիքը։*

ՔԷՇԻՇ, *գ. Քահանա։*

ՔԷՕՂՔՙ, *գ. Քող։*

ՔԷՕՆԹԻԿ, *ած. Կեղտոտ, անպետք։*

ՔԷՕՏԻ, *ած. 1) Անդամալույծ։ 2) Թշվառական։*

ՔԷՕՇԿ, *գ. 1) Պատշգամբ։ 2) Պալատ։*

ՔԷՕՒՓԱ, *գ. Երեխա։*

ՔԷՕՓԱԿ, *1) գ. Շուն։ 2) ած. հյհ. Շնացող։*

ՔԷՕՓՕՂԼԻ, *գ. հյհ. Շուն, շանորդի։*

ՔԷՕՔª, *գ. Արմատ։* Քէօքլըտ կըտըրվի։

ՔԷՖ, *գ. Ուրախություն, խնջույք։*

ՔԸԹՈՑ, *վն. գ. Ջամբյուղ։* Քութոցի մէչ շաւրդաղուկ, խավող, մէկ էլ թուզ կէր *(վն.)*։

ՔԸՑԻՊ, *կճ. ած. Ժլատ։*

ՔԸՑՄԵԼ, *չբ. Ձեռքի կամ ոտքի մատները ցրտից ու մրսելուց կուչ գալ։* Ձ'եռաց մատերրս քըցմե *(կճ.)*։

ՔԷՖՈՎՆԱԼ, *չբ. Խմիչքից տրամադրությունը բարձրանալ։*

ՔԷՖՈՎՈՒԹԵՆ, *գ. Զվարթ տրամադրություն։*

ՔԸԼՄԸՋՈՐԵԼ, *նբ. Վարպետորեն խաբել։* Կըլօխը քըլմըզորեց, ճամբխեց։

ՔԸԼՄԸՍՏՈՐԵԼ, *նբ. Խաբելով ճանապարհ դնել։*

ՔԸԼՔª, *գ. Արծաթ հալելու ժամանակ շիկացած հեղուկի երեսին օտար մետաղներից գոյացած կեղտ։*

ՔԸՆԱՋՂԵՉ, *ած. Քունը գլխին։*

ՔԸՆԱԽԱՐԱՄ, *ած. Քունը խանգարված։*

ՔԸՆԹՈՒԿ, *գ. Կերած տանձի, խնձորի մնացորդ։*

ՔԸՇ ԱՆԵԼ, *Հավերին քշել։*

ՔԸՇԱ՛-ՔԸՇԱ՛, *ձ. Հավ վանելու ձայնարկություն։*

ՔԸՇՏԵԼ, *նբ. 1) Ծառի, հատկապես բարդու ներքևի ճյուղերը կտրատել, որպեսզի բնից դերան ստացվի։* Մընկոյին կանչեք՛, վոր ծառեր քըշտի։ *2) Թևքերը և փեշերը վրա հավաքել։* Շորերըս քըշտած ճո՛ւր կանեի։

ՔԸՇՏՈՒՆ, *ձ. Դեպի տուն։ Ծան. – Այսպես էին ասում երեխաները, երբ մութն ընկնելիս դադարեցնում էին խաղը և տուն գնում։*

ՔԸՇՈ՛Ւ-ՔԸՇՈ՛Ւ, *ձ. Ջի, էշ կանչելու ձայնարկություն։*

ՔԸՇՔԸՇԵԼ, *չբ. Շներին գրգռել մեկի վրա։*

ՔԸՌԹՈՒՆՑԿª, *գ. Այրված կաթի նստվածք։*

ՔԸՌԻԿ, *գ. ած. Բարձրորակ ցորեն։*

ՔԸՌՈՒՍԻԿ ՏԱՆՁ, *Բմ. Վայրի տանձ։*

ՔԸՍ ԱՆԵԼ, *Շներին գրգռել մեկի վրա։*

ՔԸՍՎԵԼ, *չբ. Քծնել։*

ՔԸՎՐԵԼ, *կճ. չբ. Հայհոյել։*

ՔԸՐԱՎ, *գ. Գրավ։*

ՔԸՐԱՎԱԹ, *գ. Փողկապ։*

ՔԸՐԱՎԷԹ, *գ. Հաստ տախտակ։*

ՔԸՐԹՈՇ, *ած. Տգեղ։* Քըրթոշ ախչիկ։ Դէլ չէր էլեր տաշտ դըմբոց, շոտըմ էլավ թորվան քըրթոշ։

ՔԸՐԹՈՑ, *գ. Հացհան, եփված լավաշը թոնրի կողից պոկելու և հանելու գործիք։*

ՔԸՐՇԱ, *գ. Եղիրճ, ձյան երեսին գոյացած հաստ շերտ, որի վրա հնարավոր է տրեխով կամ վըռըշիկով քայլել՝ չթաղվելով ձյան մեջ։ Ծան. – Վանում ձմռանն առատ ձյուն էր տեղում, և ձյան շատ հաստ շերտով ծածկվում էին արտերն ու այգիները։ Երբ ձյունը դադարում էր, պայծառ արև էր լինում, որից ձյան վերին շերտը հալվում էր, իսկ գիշերը սառչում՝ ձյան երեսին գոյացնելով սառույցի բարակ շերտ, որ կոչվում էր* քըրշա *կամ* եղիրճ։

ՔԸՑՄԵԼ, *չբ. Մատները ցրտից ընդարմանալ։* Մատներըս քըցմիր են, կճլըմ չեմ կանա պըռնե *(Վն.)։*

ՔԸՑՄԱԾ, *չբ. ած. 1) Ընդարմացած (մատներ)։ 2) փխբ. Անճարակ,ձեռքից բան չեկող (կին)։*

ՔԻԲԱՐ, *ած. Հպարտ, պատվախնդիր, ազնվաբարո։*

ՔԻՇԷՐՎԱ ՇԱՌՎԱՌ, *Չղջիկ։* Քիշէրվա շառվառ քիշեր կըթըռնի *(Կճ.)։*

ՔԻՇՄԻՇ, *գ. Չորացրած խաղողի ամենաքաղցր տեսակը։*

ՔԻՍ, *գ. Հացաբույսերի վարս, մազ։*

ՔԻՐԵԼ *(նաև՝ Կճ.), նբ. 1) Քերել։ 2) Կճ. Անասունը մորթելուց հետո մորթին հանել։*

ՔԻՐԷՋԽԱՆԱ, *գ. Գաջի գործարան։*

ՔԻՐՈՒՉՔ, *Լիմ, գ. Կաթսայի մեջ մնացած կերակրի տականք։*

ՔՅԱ, *ձ. Կոչական բառ։* Քյա, էտա տո՞ւ ե՞ս։ *Ծան. –* Քյա-*ն գործածվում էր կանանց դիմելիս՝* քյա կընիկ, *իսկ ամուսնուն դիմելիս ասում էին՝* ծօ՜, մարթ։

ՔՅԱԲԱԲ, ՔՅԸԲԸԲ, *հթ. գ. Խորոված։* Էշ կըղաղեն, տո՞ւ կ'իտես թէ քյաբա՞բ կիփեն։ Իշու մըսից քյաբաբ չելնե, չէ՜, ամա իշու կ'ընից քյաբաբ էլ կէլնի, խարանիս էլ վէրէն։

ՔՅԱԹԸԲ, *գ. Քարտուղար, գրագիր։*

ՔՅԱԼԱ, *1) գ. Գլուխ։ 2) ած. Գլխավոր, մեծ։* Քյալա խաթուն, խաց պեռ, ուտեմ։

ՔՅԱԼԱԳՅՈՋ, *1) ած. Բառացի՝ աչքը գլխին։ 2) գ. Հեքիաթային միաչքանի հրեշ։*

3) ած. Խաբեբա: 4) ած. Ճարպիկ, հնարագետ:

ՔՅԱԼԱԾ, *ած. 1) Կտրիճ: 2) Կայտառ, վառվռուն:*

ՔՅԱԼԱՎԷՐ, *1) ած. Լայն, մեծ:* Քյալավէր պէրան: *2) Մեծ պատռվածք շորի վրա:*

ՔՅԱԼԲԱԹԻ, *գ. Աքցան:*

ՔՅԱԼԽՕԴ, *ած. 1) Հին: 2) Փչացած: 3) Ավերված:*

ՔʷԱԽԱՆԱ, *գ. Քահանա:*

ՔʷԱԽՑԸՐ, *ած. Քաղցր:*

ՔʷԱԽՑՐԱՐՈՒՆ, *ած. Համակրելի:*

ՔʷԱԾ, *ած. Քած:*

ՔʷԱԿԵԼ, ՔʷԱԿԵԼ, *Լիմ, նբ. Քանդել:* Թիլի խանգʷորց քʷակեց *(Վն.):* Էտ մարթ իմ տուն կըքʷակի *(Լիմ):*

ՔʷԱԿՈՌ *(նաև՝ Լիմ), գ. Աթար, պատի վրա չորացրած փթիր:*

ՔʷԱԿՈՒԿ, *նբ. Քանդված:* Խին տուն զաթի քʷակուկ ի:

ՔʷԱՀԼԱՆ, *գ. Նժույգ:*

ՔʷԱՀՐԷԶ, *գ. Արհեստական աղբյուր, որ հանում էին քանքանները՝ ստորերկրյա ջրերը բարձրացնելու և ոռոգմանը ծառայեցնելու համար:*

ՔʷԱՂ, *Հթ. գ. Հունձ:* Ծան. – *Այգեկութին ասում էին* կութ, կիթ *(Վն.):*

ՔʷԱՂԱՔʷ, *գ. Քաղաք:*

* Շեն անուն վէր ավեր քʷաղքʷին, *Որևէ մեկին ծաղրելու համար հաճախակի գործածվող արտահայտություն:*

ՔʷԱՂԵԼ, *նբ. Քաղել:*

ՔʷԱՄԱԿ *(նաև՝ Հթ.), գ. Կռնակ, մեջք (գոտկատեղին ասում են մէշկ):*

* Քʷամակ ունի, *Ջորեղ պաշտպան ունի:*

ՔʷԱՄԱՐ, ՔʷԱՄԱՐ, *կճ. գ. Գոտի:* Խաս քʷամար: Տըղամարթու քʷամար, կընոչ//կընգʷա քʷամար մէճկի շալ, կաշվի քʷամար, առծըթի քʷամար *(Վն.):* Քʷամար արծըթից էր *(Կճ.):* Ծան. – *Վանում գործած գոտի չեն կապել, այլ կաշվե, արծաթե կամ ոսկյա (Վն.):*

ՔʷԱՄԲԱԽ, *ած. Ավերակ:* Քʷամբախ էլնի քʷո տուն-տեղ:

ՔʷԱՄԵԼ, *նբ. Քամել:*

ՔʷԱՄԻ, *գ. Քամի:* Քʷամու պէրածն քʷամին էլ կըտանի:

ՔʷԱՄԻԼ, *ած. Կատարյալ:* Քʷամիլ մարթ:

ՔʷԱՄՈՏ, *գ. Քամի օր:*

ՔʷԱՄՈՑ, *Լիմ, գ. Մածնի տոպրակ:*

ՔʷԱՑՇՈՐ, *Վն. գ. Տակաշոր:* Էրեխի քʷայշոր փոխի՛ *(Վն.):*

ՔʷԱՆԱՐ, *գ. Եզր:* Առվի քʷանրով կընաա:

ՔʷԱՆԱՖ, *Վն. ած. Ստոր, չնչին:*

ՔʷԱՆԴԱԼ, *գ. Փոս, խանդակ։*

ՔʷԱՆԴԵԼ, *նբ. Քանդել։*

ՔʷԱՆԴԻՐ, *հթ. գ. Պարան։*

ՔʷԱՆՑ, *կ. 1) Քանց։ 2) Բացի։ 3) Նման։* Քանց մյե։ Ախը քանց մախ դէն ի։

ՔʷԱՆՔʷԱՆ, *գ. Գետնուղի փորելով արհեստական աղբյուր՝ քյահրեզ պատրաստող արհեստավոր։*

ՔʷԱՃԵԼ, *հթ. նբ. 1) Ձգել։ 2) Քարշ տալ։ 3) Ատամը հանել։ 4) Կտրել տանել։ 5) Նկարել։ 6) Ծխել։ 7) Վն. Թորել։ 8) Կշռել։*

ՔՅԱՃԿԱ, *գ. Հարիսայի տեսակ, որի մեջ միսը չի քայքայվում։*

ՔʷԱՃԿԷԿ, *վ. Երանի թե։* Քաշկեկ էտ պան էլնի։ Քաշկէկ կնար տուն։

ՔʷԱՃՄԸՃՎԵԼ, *չբ. 1) Ամաչելով, քաշվելով կծկվել, անհամարձակ լինել։ 2) Ծերությունից դեմքը կնճռոտվել։*

ՔʷԱՃՈՐ, *գ. Երեխայի տակաշոր։*

ՔʷԱՃՔԸՃՈՐԵԼ, *նբ. Քաշքշել։*

ՔʷԱՉԱԼ, *ած. Ճաղատ։*

ՔʷԱՌ, *ած. Խուլ։* Քառ խալիվոր *(Վն.)։*

ՔʷԱՌԱԿԱՆՋ, *ած. Խուլ։*

ՔʷԱՌԱՍՏԱ, *գ. Ատաղձ, փայտանյութ։*

ՔʷԱՌԱՍՏԱՋԻ, *գ. Ատաղձագործ։*

ՔʷԱՌԷՃՏ, ՔʷԱՌԷՃՏ *(նաև՝ Հթ. Լիմ), գ. Եղան։* Խոտ քառէշտով կըպարցէր վեր սէլին *(Վն.)։* Քառէշտ խօտերու մէչ կորավ *(Հթ.)։* Քառէշտով կալ կանեն *(Լիմ)։* Քառէշտով հէրան արեց։

ՔʷԱՌԹԱԹՈՃ, *գ. Մեծ մողես։* Քառթաթոշ պորտ տըվիր//տըվեր էր արեվուն, կըտահնէր *(Վն.)։*

ՔʷԱՌԻ, *կճ. գ. Քեռի։*

ՔʷԱՌԿԱՊ ԱՆԵԼ, *վն. Թելը հանգուցել։*

ՔʷԱՌՍՈՒՆ, *թ. Քառասուն։*

ՔʷԱՍԱ, ՔԱՍԱ, *կճ. գ. Կավե խոր աման։* Շատ շյոք էր, մէչ քառսա մածուն կէրա, խովցա։ Ինչ վոր պըրտիս ուրիշի քառսէն, կուկա քո կըտէլ։

ՔʷԱՍԱԴ, *ած. Ջունևոր, նեղված։*

ՔʷԱՍԱԴԱՆԱԼ, *չբ. Աղքատանալ։*

ՔʷԱՍԱԴՈՒԹԵՆ, *գ. Չքավորություն։*

ՔʷԱՍԻԲ, *ած. Աղքատ։*

ՔʷԱՎԳԻՐ, *գ. Փրփրաքաշ, փրփրահավաք։*

ՔʷԱՎՈՐ, *գ. Կնքահայր։* Տէրտէր էրեխին իտուր քառվորի ծեռ *(Վն.)։*

ՔʷԱՎՈՐԱԿԻՆ, ՔʷԱՎՈՐԿԻՆ, *գ. Կնքամայր։* Քառվորկին մըկըրտած էրեխի շորեր խայցուց *(Վն.)։*

ՔՅԱ̈ՎՈՐՏԱՆՔ, *գ. Քավորի տնեցիներն ու մոտիկ բարեկամները, որոնք մասնակցում են հարսանիքին։*

ՔՅԱ̈Ր[1], *գ. Քար։* Քʲա̈րն ուր տեղ ծանդըր ի *(այսինքն՝ օտարության մեջ աննշան կորչում են, իսկ հայրենիքում արժևորվում)։*

ՔՅԱ̈Ր[2], *Վաստակ, օգուտ, շահ։* Էտ պա̈նի մէչ քʲա̈ր ունի՞։

ՔՅԱՐԱ ԱՆԵԼ, *Օգուտ տալ։* Քյարա չարավ։

ՔՅԱՐԱԼԵԽ ԱՆԵԼ, *նբ. Քարկոծել։* Շան քʲարալեխ արին *(Վն.)*։ Ծիրնի ծառ քʲարալեխ արին *(Վն.)*։

ՔՅԱ̈ՐԱՄԱԹ, *գ. Ուժ, կարողություն։* Քʲո քʲա̈րամաթն էտ ի, չկարցար փետի վէրէն։

ՔՅԱՐԱՓՈՍԻԿ, *գ. Մանկական խաղի տեսակ հողի հետ։*

ՔՅԱ̈ՐԱՓՈՒՌ, *գ. Կաշառք։*

ՔՅԱ̈ՐԲԱՐ, *գ. Սաթ։*

ՔՅԱ̈ՐԳՅԱԽ, *գ. Փայտե շրջանակ ասեղնագործելու համար։*

ՔՅԱ̈ՐԷ ՔՐԻՉ, *Քարե տախտակի վրա գրող քարե գրիչ։*

ՔՅԱ̈ՐԷ ՏԱԽՏԱԿ, *գ. Սև քարի շերտ, որի վրա գրում էին քարե գրիչով, ապա հեշտությամբ ջնջում և նոր բան գրում։*

ՔՅԱՐԿԻԾ, *Վն. Հթ. գ. Թարախոտ կոշտ վերք կրնկին։*

ՔՅԱՐԿԸՏԻԿ, *գ. Մանկական խաղ։*

ՔՅԱՐԿԸՏՈՑ, *Վն. գ. Թարախոտ կոշտ վերք կրնկին։*

ՔՅԱ̈Ր-ԾԱՐ ԱՆԵԼ, *Ամեն միջոցի դիմել, ամեն դուռ ծեծել։*

ՔՅԱ̈ՐԾԻԿ, *գ. Թռչունների երիկամունք։*

ՔՅԱ̈ՐՈՎ ՔՅԱ̈ՐԱՏԱԿ ԷԼՆԵԼ, *1) Քարկոծվել։ 2) Անեծք. տունդ քանդվի և քարերի տակ մնաս։*

ՔՅԱ̈ՐՍԻՐՏ, *ած. Քարասիրտ, անողորմ։* Էրկու քʲո̈րդ մէյ քʲա̈րվան, էրկու կընիկ մէյ դիվան։

ՔՅԱ̈ՐՎԱՆ, *գ. Քարավան։* Շուն խաչի, քʲա̈րվանն ընցնի։

ՔՅԱ̈ՐՎԸՆՋԻ, *գ. Քարավանող։* Քʲա̈րվընջու էթա̈լ-կʲա̈լը չէն խարցուցի, վաստակ կըխարցուցեն։

ՔՅԱ̈ՐՈՒՓՈՍ, *ած. Քարքարոտ, խորդուբորդ։*

ՔՅԱ̈ՓԱՆԱԿ, *գ. Հովվի թաղիքե վերարկու։*

ՔՅԱ̈ՔՅԱՇՈՐ *գ. Տակաշոր։* Ծըժի քʲա̈քʲաշոր վըլա̈գ *(Կճ.)*։

ՔՅԱ̈ՔՅԱ̈ԿԵՐ, *ած. գ. Վախկոտությունից քծնող և բացասական այլ հատկություններով բնորոշ ստոր անձ։*

ՔՅԱ̈ՔՅԱՊԵՐԱՆ, *ած. Հայհոյող, բերանը միայն հայհոյանքով բացող։*

ՔՅԱ̈ՔՅՈՒԼ, *գ. Ճակատի վրա կախված մազափունջ։*

ՔᵊՃՔՎՈՌ, *ած. Խեղճ, թշվառական:*

ՔᵊՃՖԹԱՌ, *ած. Պառավ:*

ՔՅԱՖԻԼ, *գ. ած. Երաշխավոր:*

ՔՅԱՖԻՐ, *ած. Անողոք, դաժան:*

ՔՅԱՖՈՒՐ, *ած. Բազմաթերթ և բուրավետ (վարդ):*

ՔᵊԱՖՔᵊ, *գ. Հալվող յուղի, եփվող մսի երեսի քափ:*

ՔᵊԵԹԸՐ, *ած. 1) Ծուռ, թեք:* Կ'ըտանկըտ ք'եթըր ի, դըզի՛ *(Վն.): 2) Լիմ, Շիլ:*

ՔᵊԵԹՐՈՇ, *ած. Ծուռ, թեք:*

ՔՅԵՂԸՐԹԵԼ, *նբ. Քերելով ճանկռոտել:*

ՔᵊԵՊԸՌՆԵՄ, *վ. Ենթադրենք:*

ՔᵊԵՌԱՇԱ, *գ. Մորական պապ:*

ՔᵊԵՌԱՆՔ, *գ. Քեռու ընտանիքը:*

ՔᵊԵՌԿԻՆ, *գ. Քեռակին:*

ՔᵊԵՌՄԱՄԱ, *հթ. գ. Մոր մայր, տատ:*

ՔᵊԷԼԵԼ, *չբ. Քայլել:*

ՔᵊԷԼԷԽ, *գ. Հոգեհաց:* Կյազյր ուր մեռելի//մեռլի խոկ'ոյ խյամյր ք'էլէխ տըվեց//պյաժնեց *(Վն.):*

ՔᵊԷԼՔ, *գ. Քայլվածք:*

ՔᵊԷՄՈՒՌ, *հթ. գ. Ածուխ:*

ՔᵊԷՇՄԱ, *հթ. գ. Ջուգարան:*

ՔᵊԸԲԸՍԵԼ, *նբ. Սեղմելով, հրելով տեղավորել տոպրակի, ջվալի, այբա-խուրջինի մեջ:*

ՔᵊԸԲԸՍՈՒԿ, *նբ. Լիքը, լեցուն:*

ՔᵊԸԲՐԻԹ, *գ. Լուցկի:*

ՔᵊԸՋՈՒԽ, *ած. Թզուկ, գաճաճ:*

ՔᵊԸԼՔ, *գ. Արծաթագործի խանութի թափոնների կալի ժամանակ ստացված մաքուր արծաթի վրա տերևակալած կեղտ:*

ՔᵊԸԽ, *մնկ. ած. Կեղտոտ:*

ՔᵊԸՄՈՒՆ, *դ. Քոնը:*

ՔᵊԸՆՈՍ ԿՅԱԽ, *Քնելու ժամանակը:*

ՔᵊԸՆՈՑ ԿᵊՃԽ, *գ. Քնելու ժամանակը:* Ք'ընոց կ'յախն ընցիր ի, ճժեյր:

ՔᵊԸՆՈՒԿ, *չբ. ած. Քնած:*

ՔᵊԸՌԱ, *ած. Քարոտ, քարքարոտ:* Ճյմբյախ չի, ք'ար ու ք'ըռա ի:

ՔᵊԸՌԸՍՏԱԼ, *չբ. 1) Թեթևակի հպվել:* Էկավ, ք'ըռըստալով ընցավ: *2) Կաշառք խոստանալ:* Մի ք'ըռըստայ, տեսնենք: *3) Ակնկալել, սպասել:* Կովը տ'ե, կաթը ք'ըռըստայ *(կովը տե՛ս, որ նրանից ստացվող կաթն էլ ակնկալես):*

ՔᵊԸՌԸՍՏՈՑ, *գ. Հպման մեղմ ձայն:*

ՔᵊԸՌՆԱԾ *(նաև՝ Լիմ), Ծաղկատար:* Ինոր իրես ծաղիյ խանելուց ք'ըռնած էր մընյացե *(Վն.):* Իրես ք'ըռնած ի *(Լիմ):*

ՔᵊԸՌՆՈՒԿ, *հթ. ած. Ծաղկատար:*

ՔᵊԸՌՏԸՆԵԼ, *չբ. Քրտնել:*

ՔᵊԸՌՏՆՈՒԿ, *չբ. մկ. Քրտնած:* Բալէս ք'ըռտնուկ էկավ տուն:

ՔՅԸՌ-ՔՅԱՇ, *մկ. Մի կերպ քայլելով, ոտքերը հազիվ հետը տանելով։*

ՔՅԸՌ-ՔՅԸՌԱԼ, *չբ. Հռհռալ։*

ՔՅԸՐԱ, *գ. Վարձ։*

ՔՅԸՐԱՄԻԹ, *գ. Կղմինդր։*

ՔՅԸՐԱՎԱԹ, *վն. գ. Սպիտակ, օսլայած, շարժական օձիք։* Ստամբօլա ինկե, քըրավաթ կըտընի *(վն.)*։

ՔՅԸՐԳՅԱԽ, *գ. Քարգահ։*

ՔՅԸՐԳԸԼԽՈՒՆ, *ած. Քարգահի վրա աշեղնագործված։*

ՔՅԸՐԵՂԱՆ, *գ. Կավե լայնաբերան աման։ Ծան. – Վանում և Վանի որոշ գյուղերում ասում էին* քյասա։

ՔՅԸՐԹՈՑ, *վն. գ. Մի ծայրը ճանկավոր, մյուսը թաթի ձևով երկար մետաղյա բարակ ձող, որով հաց են պոկում ու հանում թոնրից։*

ՔՅԸՐՅԱՋԻ, *գ. 1) Վարձակալող։ 2) Փոխադրող։*

ՔՅԸՐ-ՔՅԸՐՎԵԼ, *չբ. Տանջվել, չարչարվել։*

ՔՅԸՖՐԵԼ, *չբ. Հայհոյել։*

ՔՅԻԾԵՓ, *ած. 1) Դժվար ջարդվող ընկույզ, կաղին և այլն։* Քյիծեփ գյոզ։ *2) փխբ. Ժլատ, կծծի։*

ՔՅԻՍԻԿ, *գ. Քասակ։*

ՔՅԻՐԵԼ, *Լիմ, նբ. 1) Քերել (տաշտ)։ 2) Քորել։*

ՔՅՈ, *գ. Քո։* Կընա պըռնի քյե խնամի, վոր քյո պոչին նըմանի։

ՔՅՈ ՏԱՅՎԵՐԵՎ, *Ամեն բան, թաքցրածն ու չթաքցրածը, ունեցած-չունեցածը։*

ՔՅՈՆԹԱԼ, *չբ. Շունը տռփոտել։*

ՔՅՈՌ, *Հթ. գ. Ցեխ։*

ՔՅՈՐ, *գ. 1) Քոր։ 2) Քույր։* Քորն էրթավավ ախպօր արվով, ախպերն ասաց քյոր չունեմ։ Էն ինչ չես ուզե քըրոչըտ, կուզես տալոչըտ։ *3) փխբ. Ծեծ։* Ջանը քյոր կուզի։

ՔՅՈՐԵԼ, *նբ. Քորել։*

ՔՅՈՐՎԵԼ, *կբ. 1) Քորվել։ 2) փխբ. Ծեծվել։*

ՔՅՈՐՓԱ, *ած. Փոքր (երեխա)։*

ՔՅՒՔՅ, *Հթ. գ. Արմատ։*

ՔՅՈՒԹՈՒԿ, *գ. Կոճղ, հատկապես ընկուզենու բուն, որից շիլիֆ էին հանում։*

ՔՅՒՒԼ, *գ. Մոխիր։*

ՔՅՈՒԼԱԽ, *գ. Գլխարկ։*

ՔՅՒՒԼԱԾ, *Լիմ, գ. Ծղոտ։*

ՔՅՈՒԼԲԱՍՏԻ, *գ. Խորոված։*

ՔՅՈՒԼՖԱԹ, *գ. Ընտանիք, կինն ու երեխաները։*

ՔՅՈՒՄԲԵԹ, *գ. Գմբեթ։* Քյանի կեր, պատանք չըկեր, վոր մեռավ, քյումբեթ կապեցին։

ՔՅՈՒՄՈՒՆ, *դ. Քոնը։* Տու իմըս կյիտես, ես քյումունը, տէրտէրը՝ մեր էրկըսուն։

ՔՅՈՒՆ, *գ. Քուն։* Տըղի քյուն տարավ։

ՔՅՈՒՆՃ-ՊՈՒՃԱԽ, *գ. Անկյուններ:* Քյունճ-պուճախ չըթողեց, իրիշկավ, պյանըմ է չըկընդավ:

ՔՅՈՒՇՏԻԿ, *գ. Գոտեմարտ:*

ՔՅՈՒՌԱԿ, *գ. Քուռակ:*

ՔՅՈՒՌՍԻ, *գ. Քառակուսի ցածլիկ սեղան, որի տակ դնում էին փայտածուխի կրակով լեցուն, մոխրով ծածկած կրակարան՝ մանղալ, սեղանի վրա մեծ վերմակ էին փռում ու շուրջը բոլորած՝ ոտները մեկնում էին քյուռսու տակ ու ձմռանը տաքանում:*

ՔՅՈՒՖԹԱ, *գ. Կոլոլակ:*

ՔՅՈՒՖՈՒՐ, *գ. Հայհոյանք:*

ՔՅՈՒՖՈՒՐԲԱԶ, *ած. Հայհոյաբերան:*

ՔՅՕԹԱԿ, *գ. Ծեծ:*

ՔՅÖԼ, *Լիմ, ած. Դժվար ջարդվող (ընկույզ, կաղին և այլն):* Գյոզ ք՚öլ ի, կըթուն տոնս չիկյա *(Լիմ):*

ՔՅՕԼՕՋ, *Վն. գ. Թաղիքե գլխարկ:*

ՔՅՕՄՈՒՐ *(նաև՝ Բմ.)*, **ՔՅÖՄՈՒՐ**, *Լիմ, գ. Փայտածուխ:* Քյօմուր լըցու վէր կըրակին *(Վն.):* Քյօմուր լից կըրակի վըրէն *(Բմ.):* *Ծան. – Վանում քարածուխ չկար:*

ՔՅՕՇՕ, *գ. Անկյուն:*

ՔՅՕՌ, *ած. Կույր:*

ՔՅՕՌԱՖԱԻՄ, *ած. Կռահելու մեջ կույր, հիմար, ապիկար:*

ՔՅՕՌ-ՓՕՇՄԱՆ, *ած. Ուշ զղջացած:*

ՔՅՕՍԱ, *ած. Անմազ:*

ՔՅՕՍԱԼԱ, *գ. Ներբանի կաշի:* Ինոր իրեւ ք՚օսալա ի, ինոր ծեռից պըռծնել կէլնի:

ՔՅÖՔՅ, *Վն. Բմ. Լիմ, գ. Արմատ:* Ծառի ք՚öք խորն ի կընացե *(Վն.):*

ՔՅՕՔՅԵԼ, *նբ. Լարել:*

ՔՅÖՔՅ ՏԱԼ, *Արմատակալել:* Խավողի մատ ք՚öք՚ ի տըվե:

ՔՅÖՔՅ ՔՅԸՑԵԼ, *Լիմ, Արմատակալել:* Էս ծառ ք՚öք՚ ի ք՚ըցե *(Լիմ):*

ՔՈ՜Ի, *ձ. Թռչուն քշելու ձայնարկություն:*

ՔՈՒՄԵԼԱՍՏԻԿ, *գ. Ռետին:*

ՔՈՒՆՋ, *գ. Անկյուն (Կճ.):* Ավել դ՚ըրուկ ի դ՚ըռան քունջ:

ՔՈՒՆՋ-ՊՈՒՃԱԽ, *գ. Տան ամենամթին տեղերը:*

ՔՈՒՂ, *Կճ. գ. Թռչունների ստամոքս-պարկ, որտեղ հավաքվում է կերած կուտը:* Խավլի քուչ տոպրտակ ա, պան չի կէրե *(Կճ.):*

ՔՈՒՌԻ՛-ՔՈՒՌԻ՛, *ձ. Քուռակ կանչելու ձայնարկություն:*

ՔՈՒՖԸՐ, *Կճ.*, **ՔՈՒՖՈՒՐ**, *Բմ. գ. Հայհոյանք:* Պապին քուֆըր կէնի *(Կճ.):*

ՔՕԼ, *գ. 1) Անտառ: 2) Մացառուտ: 3) Թփերի արմատ:*

ՔՕԼՕՋ, *Հթ. գ. Թաղիքե սրածայր տաք գդակ:*

* Քոլոզ դընել գըլխին, *Խաբել ու ճամփու դնել։*

ՔՕՄԻՍԻԱ, գ. *Որոշակի տոկոս եկամուտ վաճառականին՝ ծառայության համար։*

ՔՕՄԻՍԻՆՋԻ, գ. *Վանեցի վաճառականների լիազոր Պոլսում։*

ՔՕՄԻՍՕՆՋԻ, *տե՛ս* ՔՕՄԻՍԻՆՋԻ։

ՔՕՄԻՍՕՆՋՈՒԹԵՆ, գ. *Վանեցի վաճառականների՝ Պոլսում լիազորություն անելը։*

Ծան. – Վանի վաճառականները Պոլսում ունեին իրենց լիազորը՝ քօմիսինջին, որին հանձնարարում էին գնումներ կատարել և ապրանքն ուղարկել Վան։ Այդ ծառայության համար նրանք որոշ տոկոս (քօմիսիա) էին ստանում։ Քօմիսինջիները պետք է անվանի ընտանիքի զավակ և ազնիվ լինեին։ Այդպիսին էր, օրինակ, հայտնի թարգմանիչ Վահե Միքայելյանի (Թերլեմեզյանի) հայրը՝ Միքայել Թերլեմեզյանը՝ «Չէ՛, չի լինիր» տարածված բանաստեղծության հեղինակը։

ՔՕՆԹԻԿ(Յ), *վն. ած. Անպետք, կեղտոտ, վատ։*

ՔՕՌՊԻԻ, *հթ.,* **ՔՕՌ ՊՈՒՎ,** *կճ. գ. Բու։* Քօռ պուվ ցիրեկ չի տըսնա *(կճ.)։*

ՔՍՕՐՕՇՊԱԹ, *վն. գ. Չորեքշաբթի։*

ՔՍՕՐՕՔՍԸՇՊԱԹ, *տե՛ս* ՔՍՕՐՕՇՊԱԹ։

ՔՍՕՔՍՌՈՋԱՆԱԼ, *չբ. Հպարտանալ քիթը վեր տնկել։*

O

ՕԴԱ, գ. *1) Բառացի՝ սենյակ։ 2) Գյուղերում՝ ախոռների մի անկյունում շինված բարձրություն՝ սաքու՝ գյուղական ակումբ, որտեղ ձմռան երկար գիշերներին հավաքվում էին գյուղացիները և լսում աշուղների երգն ու նվագը, հեքիաթասացների կամ քաղաքից եկած մարդկանց պատմությունները։*

ՕԴԱԲԱՇԻ, գ. *Սենեկապետ, խանի՝ իջևանատան սենյակները վարձու տվող։*

ՕԴԱԲԱՇՈՒԹԵՆ, գ. *Սենեկապետություն։*

ՕԹԱԿ *(նաև՝ Բմ. Լիմ),* գ. *Սանդի թաք։*

ՕԼԱՄ, գ. *Զրի աշխատանք, պարհակ։*

Ö ԼՐԵԼ *(նաև՝ Հթ. Կճ.),* նբ. *Ոլորել։*

ՕԼՈՒՂ-ՉՕՃՈՒՂ, գ. *Երեխաներ, զավակներ։*

ՕԼՕԽՆԵԼ, նբ. *Նետել։*

ՕԽԷՇ, ձ. *Բավականություն արտահայտող բացականչություն։*

ՕԽԿԱ, գ. *Ծանրության չափ, մոտավորապես մեկ կիլոգրամ։ Ծան. – Կար պետական օխկա, որ կոչվում էր դրամդաշ, և փոքր-ինչ պակաս էր կիլոգրամից, կար նաև քաղաքացիական օխկա, որ կոչվում էր* կարադաշ. *դա փոքր-ինչ ավելի էր մեկ կիլոգրամից։*

ՕԽՆԵԼ, *Հթ. Կճ. նբ. Օրհնել։*

ՕԽՆԻՔ, *Կճ. գ. Օրհնանք։*

ՕԽՏԱՆԱՍՈՒՆ, *Լիմ, թ. Յոթանասուն։*

ՕԽՏԸ, *Լիմ, թ. Յոթ*

ՕՂԻՍ, գ. *Աղյուս։*

ՕՂՈՐԹ, *Կճ. ած. Ճիշտ։*

ՕՂՕՂԵԼ, *Հթ. նբ. Ողողել։*

ՕՂՕՐՄԱԾԻԿ, *ած. Հանգուցյալ։*

ՕՃՕՌՔ[ց], գ. *Թոնրատան առաստաղ։*

ՕՅՄԱ, գ. *Քղանցք։* Շորի օյմէն ի՛էրկէն ի *(Բմ.)։*

Օ՛ՇՏ, ձ. *Շուն վանելու ձայնարկություն։*

ՕՌՕՍՊԻ, *Վն. գ. Շնացող (կնոջ վերաբերյալ)։*

ՕՐԹԱ, գ. *Կենտրոն։*

ՕՐԹԻԿ, *Կճ. գ. Հորթ։*

ՕՐԽՆԵԼ, *նբ. Օրհնել։*

ՕՐԽՆԷՔ[ց], գ. *Օրհնություն։*

ՕՐԽՆՈՒԿ, *նբ. ած. Օրհնված։*

ՕՐՇՆԱՆՔ, *Բմ. գ. Օրհնանք։*

ՕՐՇՆԵԼ, *Բմ. նբ. Օրհնել։*

ՕՐՊԷՎԷՐԻ, գ. *Այրի։* Օրպէվէրին ճըժէրին տըժար պախեց *(Կճ.)։*

ՕՐՕԽԿԵԼ *(նաև՝ Կճ. Լիմ)*, *նբ. Ուղարկել։*

ՕՐՕԽԿՈՒԿ, *նբ. ած. Ուղարկված։*

ՕՐՕՃԱԼ *(նաև՝ Բմ.)*, *չբ. 1) Որոճալ։ 2) Ուտել։* Տըղի պատճառ, մոր օրօճալ։

ՕՐՕՃԿԸՏԱԼ *(նաև՝ Կճ. Լիմ)*, *չբ. Հորանջել։*

ՕՐՕՇԿԸՏԱԼ *(նաև՝ Հթ.)*, *տե՛ս* ՕՐՕՃԿԸՏԱԼ։

ՕՐՕՓԵԼ, *նբ. Եռացող հեղուկը շերեփով վերցնել ու նորից լցնել ամանի մեջ, որպեսզի հեղուկը եռալիս չփրփրի ու չթափվի։*

ՕՐՕՓՏԵԼ, *նբ. Լավաշ թխելուց առաջ փայտի ծայրին ամրացված լաթով տաք թոնրի կողերը հիմնավորապես մաքրել։*

ՕՑ, գ. *Օձ։* Օցը վէր ճըրին խարամ *(խայթ)* չունե։ Պաղ օց վոր տայցուցիր, դաշ քե կըկըծի։

Ö ՔՑ ԿՑՒԼ, *Օգնել։*

ՕՔՅՈՒՔ, գ. *Եզ։*

* Օքյուզի մէյ, *նխտ. Անհասկացող, հաստակող ու դանդաղաշարժ մարդ։*

Ֆ

ՖԱՋԼԱ, *ած.* *Ավելորդ։*

ՖԱԼ, *գ.* *Գրքացուցիչ։*

ՖԱԼԱԳ, *գ.* *1) Երկինք, երկնակամար։ 2) փխբ. Բախտի անիվ, կյանքի հարափոփոխություն։ Ծան. – Վանում Չախրի ֆալագ էր կոչվում ուրարտացիների շինած լաբիրինթոսը Ջրմփ-գրմփ Մաղարայի սարի վրա՝ հյուսիսարևելյան կողմում։*

ՖԱԼՋԻ, *գ.* *Գրքաց։*

ՖԱՅԴԱ, *գ.* *Օգուտ։* Էլ նա ֆայդա, կընաց վոր կընաց։

ՖԱՅԴԱԼԻ, *ած.* *Օգտակար։*

ՖԱՅԴԱՍԸՋ, *ած.* *Անօգուտ։*

ՖԱՅԻՋ, *գ.* *Տոկոս։*

ՖԱՅՀՄ, *գ.* *Կոահում։*

ՖԱՅՀՄԵԼ, *չբ.* *Կոահել։*

ՖԱՅՄ, *Լիմ, գ.* *Հասկացողություն։*

ՖԱՅՏՈՆ, *Լիմ, գ.* *Կառք։*

ՖԱՆԱՐ *(նաև՝ Լիմ), գ.* *Լուսարձակ, լապտեր։*

ՖԱՆԴ, *Լիմ, գ.* *Ձև, եղանակ։*

ՖԱՆԵԼԱ, *գ.* *Տաք ներքնաշոր։*

ՖԱՆՖԱՌ, *գ.* *Փողոցային նվագախումբ։*

ՖԱՌԱԽ, *ած.* *1) Ջվարթ։ 2) Բացօթյա։ 3) Զովասուն։*

ՖԱՌԱԽԼԱՄԻՇ ԷԼՆԵԼ, *1) Ջվարթանալ։ 2) Մաքուր օդ շնչել։*

ՖԱՌԱՋԽԱՆԱ, *գ.* *Աղբանոթ, աղբը հավաքելու գոգավոր թիակ, խանքյանդազ։*

ՖԱՌԿԵՆ ԷԼՆԵԼ, *Խելքի ընկնել, խելքի գալ։*

ՖԱՍ, *գ.* *Ծոպավոր կարմիր գլխարկ, որ ներկայումս կրում են միայն արաբական երկրներում։*

ՖԱՍՈՆ, *Լիմ, գ.* *Տեսք, կերպ։*

ՖԱՍՈՒԼՅԱ *(նաև՝ Հթ. Լիմ), գ.* *Լոբի։* Կանաչ ֆասուլյէն կըխաշեն ու կըտապկեն *(Վն.)։* Վայն կանաչ ֆասուլյա ուտելու ադաթ չըկար *(Վն.)։* Ֆասուլյէն մըսի խէտ կիփեն *(Լիմ)։* Սըֆտակ¹ ֆասուլյա իփեք¹, ուտենք¹ *(Հթ.)։*

ՖԱՐԱՂԱ, *վ.* *Իբրև թե, ենթադրենք, զորօրինակ։*

ՖԱՐՂ, *գ.* *Տարբերություն։*

ՖԱՐՂԱ, *վ.* *Թեկուզ և։* Ֆարղա ասի, դու էլ ավատացիր։

ՖԱՐԿ, *գ.* *Տարբերություն։*

ՖԱՐՄԱՆ, *գ.* *Հրամանագիր, հրովարտակ։*

ՖԵՍ, *գ.* *տե՛ս* **ՖԱՍ**։

ՖԵՐՄԱՆ, *տե՛ս* **ՖԱՐՄԱՆ**։

ՖԷԼ, *գ.* *Հնարք։*

ՖԷԼ-ՖԱՆԴ, *գ.* *Խորամանկություն։* Ինչ ֆէլ-ֆանդ վոր պանեցրեց, քյարա չարեց։

ՖԼԹԻԼ, *գ.* *Պատրույգ։*

ՖԼԹ-ՖԼԹԱԼ, *չբ.* *Հուզմուն-*

քից սիրտը տրոփել: Էտ խաբարի վէրէն սիրտը ֆըթֆըթաց:

ՖԸԼԱՆ, *գ. Այսինչ*:

ՖԸԼԱՆՔՅԱՍ *(նաև՝ Լիմ)*, *գ. Այսինչ*, *ոմն*: Տըղեյներ կյարտայը՛ կէրթյան, թէ ֆըլանքյասներաց պէս ըստեղ-էնտեղ լիպոզ-լիպոզ ման կուկ'յան:

ՖԸԼԱՆ-ՖԸՍՏԱՆ, *գ. Ոմն*:

ՖԸՆԴԸԽ, *Բմ. գ. Կաղին*:

ՖԸՇԱԼ, *չբ. Օձը սուլել*: Օցը ֆշալով կըզարկի:

ՖԸՇԱՆԳ, *գ. Փամփուշտ*: Ֆըշանգով իզարկ, սպանեց ծոււ Մուրոյին:

ՖԸՇՆԱ, *գ. 1) Բալ: 2) Բալենի*: Ֆըշնէն իկուց խան թալ տո՛ւս, ֆուկարի ոտ՝ տընից:

ՖԸՌ, *գ. Ումպ*: Մէյ կում//ֆըռ ճո՛ւր//չայ խըմեմ *(Վն.)*: Ֆըռ՝ խինգ փարա: *Ծան. – Ֆըռ-ը երբեմն ասվում է կատակով*:

ՖԸՌԱԼ, *չբ. Պտտել, գըռռնել*: Արթունը չի ֆըռա քընած մարթու իտև:

ՖԸՌԱՆ, *ած. Ջրասար*:

ՖԸՌԵՆԿԻ, *ած. Ֆրանսիական*:

ՖԸՌԸԼԴԱՂ, *գ, Խարդախություն*:

ՖԸՌԸԼԴԱՂՋԻ, *ած, Խարդախ*:

ՖԸՌԸՆՉԻ, *գ, Հացագործ*:

ՖԸՌԹԸՆԱ, *գ. Փոթորիկ*: Ֆըռթընա ի, գյամի ծով չէնի:

ՖԸՌԹՕՆԱ, *Հթ. գ. Ալեկոծություն, ալեբախություն*:

ՖԸՌԻԿ *(նաև՝ Բմ.)*, **ՖԸՌԻԿ**[3], *Հթ. գ. Հող*: Ֆըռիկ ուր տեղ կըֆըռէր *(Վն.)*:

ՖԸՌԻՉ, *Կճ. գ. Հող*: Ֆըռիչ կըֆըռա մէ տեղ *(Կճ.)*:

ՖԸՌՈՆ, *գ. Փուռ*:

ՖԸՌՉԱ, *գ. 1) Խոզանակ*: Ֆըռչով շորերը սրպեց, տո՛ւս էկավ, կընաց: *2) Վրձին*:

ՖԸՌՍԱՆԳ, *գ, Պատեհություն*: Մըկա ֆըռսանգը մերն ի:

ՖԸՌՖԸՌԻԿ, *գ. Հող*:

ՖԸՐՍԱՆԳ, *տե՛ս* **ՖԸՌՍԱՆԳ**: Էտ պյան անելու խամար ֆըրսանգ ի պետք':

ՖԸՍՏԱՆ, *գ. Շրջազգեստ*:

ՖԸՍՏԸՂ, *գ. Պիստակ*: Վան ֆըստըղ չըկա, տըրսից կըպիրեն, կըծախեն:

ՖԸՐԱՆԿԱԽՏ, *գ. Սիֆիլիս*:

ՖԻԴԱՆ, *Լիմ, գ. Հայ հայդուկ*:

ՖԻԴԱՅԻ, *տե՛ս* **ՖԻԴԱՆ**: Ֆիդայիները սարերից ցած իջան:

ՖԻԹԻԼ, *գ. Պատրույգ*: Ֆիթիլը մուր ի պըռնի, ծէրը կըտրի:

ՖԻԼ, *գ. Փիղ*:

ՖԻՆՋԱՆ *(նաև՝ Լիմ)*, *գ. Սուրճի փոքրիկ բաժակ*: Ղայֆէն ֆինջանով կըխըմեն:

ՖԻՐԱՐ, *գ. Փախստական*: Էնկյանդար արին, վոր տընից փախավ, ֆիրար ինգ'ավ:

ՖՈՒԿԱՐԱ, *ած. Աղքատ, մուրացիկ*: Ծեռը կարճ ի, ֆուկարի մէյն ի:

ՖՈՒՐԿՈՒՆ, գ. *Ֆուրգոն*։ Բուռնազի ֆուրկուն էկավ։ *Ծան.* – *Իգդիրցիները ռուսական արդյունաբերական ապրանքներն ու նավթը դրոգով էին Վան բերում։ Նրանցից մեկի դրոգը Վանում կոտրվում է։ Իգդիրցին շատ էժան գնով դրոգը ծախում է Բուռնազյան Գևորգին (Բուռնազի Գևոյին)։ Այս մարդը նորոգում է դրոգը և բանեցնում։ Վանում ընդամենը երկու ֆուրգոն կար՝ ամերիկացիներինը և շվեյցարական՝ գերմանացիներինը։ Նրանց ֆուրգոնների անիվները ռետինե շրջանակ ունեին և աղմուկ չէին հանում։ Բուռնազի Գևոյի դրոգը, որ վանեցին անվանում էր Բուռնազի ֆուրկուն, աղմուկով լցնում էր շրջապատը և զայրացնում անաղմուկ փողոցի սովոր վանեցուն։*

Բուռնազի Գևոյի ֆուրկունի մասին կա մի երգ, որն ունի հետևյալ պատմությունը։

Կըռկե Տիքրանը հայտնի ոսկերիչ էր՝ բանաստեղծ Տիգրան Ամիրջանյանի փեսան։ Շատ կատակաբան, կենսուրախ մարդ էր և պնդում էր, որ ինքն է հնարել այդ երգը, որ Վանում ամենից ավելի տարածված երգն էր 20-րդ դարի սկզբին՝ մինչև 1915 թվականը։ Փաստը իսկապես տեղի է ունեցել այսպես։ Վանեցիները սիրում էին ընտանիքով Վարագ գնալ։ Մեծ ընտանիքի տեր Կըռկե Տիքրանը վարձում է Գևոյի ֆուրկունը, որպեսզի տան մեծ ու փոքրին էլ տեղավորի կառքի մեջ։ Սակայն ուղևորությունն անհաջող է անցնում։ Դրան ի հեճուկս նա հնարում է այս երգը, որպեսզի անվանարկի Բուռնազի Գևոյի ֆուրկունը։ Սակայն ոսկերիչ Կըռկե Տիքրանի համար աշխատող փորագրիչները (կալամքյարներ)՝ Դավիթ և Հովհաննես Տեր-Հովհաննիսյան եղբայրները, որոնցից Դավիթը նույնպես սրամիտ մարդ էր, ասում էին, որ իրենք են հնարել այդ երգը, որովհետև Կըռկե Տիքրանն այլևս կիրճ՝ փորագրական աշխատանք չէր տալիս իրենց և գտել էր ավելի էժան փորագրություն անողի։ Հաստատ չեմ կարող ասել, թե ով է երգի առաջին տարբերակի հեղինակը, սակայն հաստատ գիտեմ, որ շուրջպարի ժամանակ շարունակ սրբագրվում, խմբագրվում ու լրացվում էր երգը։ Այստեղ զետեղում ենք այդ երգը նաև որպես բարբառային նմուշ։

Ուրպաթ առտու աղօթըրնին
Ասինք՝ էրթանք Վանից իկ՝ին,
Մեր խուրուզուն տըփենք՝ կ՝ետին,
Ուտենք՝-խըմենք՝ խյետ մեր ք՝էֆին։

Կըռկէ Տիքրան ափալ-թափալ
Կընաց խասավ Խաչի փողան,
Էստեղ թըռավ, էնտեղ թըռավ,
Արաբաջի Կէվօն կընդավ։

Պաՙրի լուս ք՝ե, Կ՝էվօրք՝ աղա,
Ասու պաՙրին, Տիքրան աղա,
Խէր էլնի, ի՞նչ կա, ասա,
Քո՝ արաբէն կուտա՞ս քյըրա։
Թողզ արաբէն ես ք՝ե ծառա։

Ծիանքըմ ունեմ թևավոր խավք՝,
Արաբէս ի խրեղէն կառք՝,
Բազար արին ք՝առսուն կուրուշ,
Խաթրիդ խաՙմաՙր քըսան կուրուշ։
Խաՙբաՙր արա թող խաՙզըրվեն,
Չում մըշակներ ծիանք՝ ճըրեն։

Կիյտեր պիրին պերքն ու պաՙրին,
Էկան լըցվան մէչ արաբին,
Արաբաջի Կ՝էվօն զօռեց,
Բօլի փողան մէչ լաՙր քըշեց։

Կ՝ընաՙցին, խաՙսաՙն Ավօյի տաՙր,
Ռաստ էկավ մէչ ճիՙչ ք՝անդաՙլ,
Արին-չարին չում խանիցին,
Արաբի թաՙք՝աՙռն էլ կոտրիցին։

Շալէ թելով պատրուսիցին,
Իրենց ճաՙմպաՙխ պըռնին կընաՙցին։
Էկան խաՙսաՙն Ուրպաթ առուն,
Ուր մոռցիր ին խետ կէս ճաՙմպխուն։
Մարթ ճաՙմպիցին, կընդաՙն, պիրին,
Պիրին կապին իտեվ արաբին,
Էն էլ արին պեռն արաբին։

Արաբաջի Կ՝էվօն զօռեց,
Կարնըվորա ճաՙմպաՙխ պըռնեց,
Կ՝յընաՙցին խաՙսաՙն Բօրօզաք՝ար։

Դէ, էլեաՙք՝, էճեաՙք՝, վոր ես քըշեմ,
Քարեր ժողվեք՝ ճաՙմպխու վէրվէն,
Չպեյպիկվի իմ արաբեն,
Էն ծին կըխատնի, տայաղ կացեք՝։

Օրն իրիկուն վերճնայ կ՝աՙխ,
Արաբէն մընաՙց գ՝օ կէս ճաՙմպաՙխ,
Աստղերն էլաՙն, լուսին ինկավ,
Խըրեղէն կառք՝ էլ չէրէվցավ։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍՈՒԹԱՍԱՆ

Կէլնի չէլնե մէյ թակավոր։ Էսա թակավոր ուր յերկրի մէչ ջուաբ կուտա. «Վով էնըսկընա՜ սուԹըմ ասի, վոր ասեմ՝ սո՛ւԹ ի, իմ թակավորուԹնի կէս կուտամ ուր (ինոր)»։

Խօվիվըմ կուկ՛ա՜, կասի.

– Թակավո՛ր ապրած կէնա(ս), իմ խէր կօռըմ ունէր, վոր էսա-տեղից կըպարզեր, յերկինք՛ ինե աստղեր կըխառնէր։

– Կէլնի՛,– կասի թակավոր,– իմ պապիկն էլ չիբուխըմ ունէր. մէյ ծէր կըտընէր ուր պէրան, մէկէլ ծէր կպարզէր, արիվուց կըկըպու-ցէր։

– ՍուԹասան ուր կ՛ըլըծխ ք՛որէլօվ կէրԹա՜ (կէԹա՜ տո՛ւս)։

Մէյ Թա՜րզի կուկ՛ա՜, կասի.

– Ներօղ մընա(ս), թակավո՛ր, յես շոտ պիտի կ՛ի, ա՜նկ՛ընցա։ Էրէկ շատ անձրեվ էկավ (իրե), կէծայներ զա՜րկին (զա՜նին), էր-կինք՛ ճըղվավ, կընա՜ցեր ի կարկըտնէլու։

– Խա՛, լավ ես արե,– կասի թակավոր,– ամա աղէկ չիր կար-կըտնե, էս առտուն մէյ ք՛իչ անձրեվ Թա՜փավ։

Էսան էլ կէրԹա՜ (տո՛ւս)։

Ախք՛ատ (անկուտ) շինականըմ կուկ՛ա՜ ներս՝ կօտ ընԹատակ (ընԹի տակ) տըրուկ։

– Տո՛ւ ի՞նչ կուզես, ա՛յ մարԹ,– կըխառցուցի թակավոր։

– Ջի (ձի, ձիկ) մէյ կօտ վոսկի ես պառք՛, իկիր եմ (վոր) տանեմ (էկա՝ տանեմ)։

– Մէյ կօտ վոսկի՞,– կըզարմանա թակավոր։– ՍուԹ կասես, յես ք՛ե վոսկի պառք՛ չեմ։

– Վոր սուԹ կասեմ, թակավորուԹնիտ կէս տո՛ւ։

– Ջէ՛, աղորԹ (դո՛ւզ) կասես,– (ուր) խոսկ կըփոխի թակավոր։

– ԱղորԹ կասեմ՝ մէյ կօտ վոսկին տո՛ւ։

«Վասպուրական» հայրենակցական միության անմիջական մասնակցությամբ և հովանավորությամբ հրատարակվել են հետևյալ աշխատությունները

ա) «Վան-Վասպուրականի հերոսամարտը – 75 (ժողովածու)» (կազմող՝ Հակոբ Փափազյան), Երևան, «Հայաստան» հրատ., 1990, 127 էջ:

բ) Վարազդատ Հարությունյան, «Նախնեաց ոտնահետքերով. ուղեգրություն», Երևան, 1995, 56 էջ:

գ) Նորա Մելիքյան, «Ուխտագնացություն դեպի Վան (ճանապարհորդական նոթեր)», Երևան, «Հույս» հրատ., 1995, 50 էջ:

դ) Մկրտիչ Խերանյան, «Ձայն տուր, ո՛վ ծովակ» (խմբ. Վարուժան Մնացականյան), Երևան, «Զանգակ-97» հրատ., 2000, 384 էջ:

ե) Կալիփսե Սոլախյան, «Թեժ մարտերը Վանի քաղաքամիջում (մասնակցի հուշերից)», Երևան, «Զանգակ-97» հրատ., 2000, 94 էջ:

զ) Արտաշես Սոլախյան, «Բանտային հուշեր (Վանի կենտրոնական բանտի զնդան, 1914 թ. նոյեմբերի 14-ից – 1915 թ. փետրվարի 14)», Երևան, «Զանգակ-97» հրատ., 2002, 135 էջ:

է) «Եղեռնը վան-վասպուրականցիների հուշերում» (կազմող, խմբագրող և ծանոթագրող՝ Նորա Մելիքյան), Երևան, «Զանգակ-97» հրատ., 2003, 152 էջ:

ը) «Ճարտարապետ Մանվել Կապուտիկյանի ոդիսականը» (խմբ. Վարազդատ Հարությունյան), Երևան, «Մուղնի» հրատ., 2005, 63 էջ:

թ) Ասքանազ Վարդանյան «Շուշանց. հուշապատում հայրենի բնօրրանի մասին» (խմբագրել, լրացրել և հրատարակության է պատրաստել Նորա Մելիքյանը), Երևան, «Դար» հրատ., 2007, 108 էջ:

ժ) Ծիծաղում են վանեցիները (կազմողներ՝ Վարազդատ Հարությունյան և Նորա Մելիքյան), Երևան, «Զանգակ-97» հրատ., 2006, 196 էջ:

ժա) «Հայաստանի մայրաքաղաքները: Գիրք I, Վան: Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (7-9 հոկտեմբերի 2010 թ.) նյութերի ժողովածու: Կազմող, խմբագիր և ներածության հեղինակ Հարություն Մարության: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2013, 352 էջ:

Նշումների համար

Նշումների համար

Նշումների համար

Նշումների համար

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՉՅԱՆ

ԲԼՈՒՂՐՂՆ
ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ

Աշխատասիրությամբ
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆԻ

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70×100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 17 տպ. մամուլ

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ-ի տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

Հարություն Գևորգի Թուրշյան (1900-1978)

Ծնվել է Վանում: 1915 թ. հուլիսին Թուրշյանների ընտանիքը գաղթում է Արևելյան Հայաստան, ապա՝ Թիֆլիս: Այստեղ նա ուսումը շարունակում է Ներսիսյան դպրոցում: Սարդարապատի հերոսամարտի օրերին աշխատում է շտաբում՝ որպես գրագիր: 1931-54 թթ. աշխատում է «Խորհրդային/Սովետական Հայաստան» օրաթերթում՝ որպես ոճաբան և թարգմանիչ: 1940-60-ական թթ. Հ. Թուրշյանը ձեռնարկում է ռուս դասական մի քանի հեղինակների երկերի թարգմանությունը (Վ. Բելինսկի, Ա. Գերցեն, Մ. Գորկի):

Հ. Թուրշյանը երկար տարիներ ջանասիրությամբ զբաղվել է հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությամբ: 1947 թ. «Հայ-հաբեշական առնչությունները VII դարից մինչև XX դարը» թեմայով ատենախոսություն է պաշտպանում, ստանում պատմական գիտությունների թեկնածուի աստիճան:

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող բառարանը հեղինակն ավարտել է դեռևս 1959 թ.: Աշխատության ներածությունում նա գրում է. «Կազմելով սույն բառարանը՝ ես ունեցել եմ միայն մեկ նպատակ: Իմ ծննդավայրը, որ հազարամյակներ շարունակ շողշողացել է ոչ միայն հայոց պատմության մեջ, այլև դրանից էլ շատ առաջ, այսօր սոսկ երազ ու հուշ է դարձել նրա հարազատ զավակների համար: Նրա լավագույն գրական գոհարները, որոնք ուրույն տեղ են գրավում հայ բանահյուսության մեջ, վանեցու ներկա սերնդին հասկանալի դարձնելու համար լրացուցիչ բացատրության կարիք ունի: Վանեցին այսօր կա ու բազմանում է, և այս բառարանը Վանի հուշարձանն է, այդ ժողովրդի բազմերանգ լեզվի հուշարձանը»:

А П
103420

ԿՈՒԹԱՆ, գ. Գութան: Ծան. – Գութանի ամբողջ կազմը կոչվում է սարվածք՝ *Լըծենք սարվածք, էրթա՛նք կ'ութան:*

* *Կ'ութնի ակներ,* Իրարից բարձր ու ցածր և փոքր ու մեծ երկու անիվներ:
* *Կ'ութնի առափամ (խոփփոն),* Գութանի մաս, որի վրա ամրացված է խոփը:
* *Կ'ութնի բնադա,* Գութանի լծերին կապվող հաստակուռ երկաթե շղթա:
* *Կ'ութնի էշ,* Գութանի փոքր-ինչ երկար ու կորացած, ծուռ փայտ:
* *Կ'ութնի թուր,* Գութանի էշի և առատամի միջև ընկած փայտ:
* *Կ'ութնի լուծ,* Զույգ եզների կամ գոմեշների պարանոցին դրվող ամուր փայտ:
* *Կ'ութնի խարազան,* Գութանի էշի ամրացման տեղը:
* *Կ'ութնի խոփ,* Հողը պատռող երկաթ:
* *Կ'ութնի կաք'ավ,* Գութանի տախտակն ամրացնող լեզվաձև փայտ:
* *Կ'ութնի ձևիչք,* Խոփի առջևի երկաթը:
* *Կ'ութնի ճամբարակ,* Գութանի մասերն իրար կապող կաշվե փոկ:
* *Կ'ութնի մաճն ու ծռմաճը,* Ղեկաձև փայտ, որ մաճկալը բռնում ու ղեկավարում է վարը:
* *Կ'ութնի ոփն ու ոփնախպերը,* Էշն ու առատամն իրար միացնող փայտ:
* *Կ'ութնի սամի,* Երկաթե կամ շիմշատ փայտե երկու ամուր ձող, որ հագցնում են եզների կամ գոմեշների վզին և կապում լուծին:
* *Կ'ութնի սըռնի,* Մաս, որի ծայրերին ամրացված են անիվները:
* *Կ'ութնի փախփակ,* Խոփի պատռած հողը շրջող տախտակ:



ISBN 978-5-8080-1311-7